



ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

(Երևան, 2023, նոյեմբերի 2-3)

ԵՐԵՎԱՆ

ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2023

INSTITUTE OF LANGUAGE AFTER R. ACHARYAN OF NAS RA
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА НАН АР

ISSUES ON ARMENIAN LANGUAGE HISTORY

PROCEEDINGS OF THE INTERNATIONAL CONFERENCE

(Yerevan, 2023, November 2-3)

ПРОБЛЕМЫ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

МАТЕРИАЛЫ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ

(Ереван, 2023, 2-3 ноября)

Yerevan 2023

Ереван 2023

ՀՏԴ 811.19'0(082)
ԳՄԴ 81.51-03g43
Հ 282

Հրատարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Բ. Գ. Պ. Վ. Լ. Կատվայան

Խմբագրական խորհուրդ՝

Բ.Գ.Պ. Վ.Լ. Կատվայան (նախագահ), Բ.Գ.Պ. Լ.Շ. Հովհաննիսյան,
Բ.Գ.Թ. Գ.Մ. Մխիթարյան, Բ.Գ.Թ. Ն.Մ. Միմոնյան

Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ: Միջազգային
Հ 282 գիտաժողովի նյութեր (Երևան, 2023թ., նոյեմբերի 2-3).- Եր.: ԳԱԱ ԼԻ
հրատ, 2023.- 180 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2023 թ. նոյեմբերի 2-3-ին Երևանում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի կազմակերպած միջազգային
գիտաժողովի զեկուցումները: Ներկայացվող նյութերն ընդգրկում են հայոց լեզվի
պատմության տարբեր փուլերի և խնդիրների առնչվող հարցեր: Ժողովածուն օգտակար
կլինի հայոց լեզվի պատմության ուսումնասիրության տեսական ու գործնական հարցերով
հետաքրքրվողներին, նաև՝ ուսանողներին:

ՀՏԴ 811.19'0(082)
ԳՄԴ 81.51-03g43

ISBN 978-9939-9305-5-8
ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2023

ՀԱՅԵՐԵՆԻ Ը ՁԱՅՆԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ

DOI: 10.54412/93055-2023-5

Կատվայան Վիկտոր

բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
առաջատար գիտաշխատող. victorkatvalyan@mail.ru

Բանալի բառեր. ձայնավոր, բաղաձայն, վանկ, շեշտ, հնչույթ, հնչյունափոխություն, բնութագիր:

Հայերենի Ը ձայնավորը հաճախ է գրավել հետազոտողների ուշադրությունը ինչպես իր հնչյունաբանական, այնպես էլ հնչույթաբանական առանձնահատկություններով: Դիտարկվել են այս հնչյունի արտաբերական, ֆիզիկական, գործառական-դիրքային հատկանիշները, պատմական զարգացման յուրահատկությունները, առնչությունը հնչյունափոխական իրողություններին և այլն: Հնչյունի արտաբերական բնութագիրը տրվել է ըստ արտասանության ժամանակ լեզվի ուղղահայաց և հորիզոնական դիրքավորման: Ըստ այդմ՝ Ը-ն միջին շարքի միջին բարձրության ձայնավոր է: Նկատվել է, որ Ը-ի արտասանության ժամանակ բերանի բացվածքը միջին աստիճանի է, ըստ լեզվի դիրքի՝ այդ ձայնավորը չի կարելի դասել ոչ առաջին շարքի, ոչ էլ հետին շարքի ձայնավորների թվին: Լեզվի միջին մասում էլ ոչ մի բարձրացում չի երևում, և այս ձայնավորը հաճախ անվանում են խառը կամ չեզոք շարքի ձայնավոր¹: Մեր կարծիքով՝ նման բնութագրումից կարելի է բխեցնել, որ Ը-ն ինչ-որ իմաստով «չեզոք» հնչյուն է, և պատահական չէ, որ խոսողները հաճախ նոր բառ կամ միտք արտահայտելուց առաջ, իրենց կամքից անկախ, արտասանում են ը ձայն, որը, սակայն, լեզվի հնչյուն չէ, այլ ուղղակի խոսքին ուղեկցող, խոսքի մեջ որևէ դեր չունեցող ձայն: Ի դեպ, խոսակցական լեզվում, բարբառներում կան նման այլ ձայներ, որոնք լեզվի հնչյուններ չեն, բայց արտահայտում են խոսողի վերաբերմունք, ինչպես՝ ծ ժխտման ձայնը, /ւ համաձայնության ձայնը, 222 դժգոհության ձայնը և այլն: Ասվածի հետ որոշակի կապ ունի նաև այն իրողությունը, որ հայերենի որևէ բաղաձայն առանձին արտասանվելիս միշտ ուղեկցվում է ը ձայնով:

Ըստ ֆիզիկական բնութագրի՝ Ը-ն ձայնավորների մեջ ամենից թույլ և կարճ հնչյունն է² և շեշտակիր վանկում երբեք չի հանդիպում: Այս առումով կարևոր է նաև փաստել, որ Ը-ն միավանկ բառերում (բացառությամբ ձայնարկությունները և ըստ, ընդ նախդիրները) չի գործածվում:

¹ Տե՛ս Ա. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, էջ 158:

² Տե՛ս նշվ. աշխ., էջ 159:

Հետաքրքրական են Ը հնչյունի հատկապես գործառական-դիրքային առանձնահատկությունները: Լեզվաբանները կարևորել են այս ձայնավորի գործածության սահմանափակումները բառի բոլոր դիրքերում: Արձանագրվել է, որ բառասկզբում Ը-ն հանդիպում է միայն *ւ, ն* ձայնորդներից առաջ, *ըստ, ընդ* բառերում: Թե՛ Հ. Աճառյանը, թե՛ Մ. Աբեղյանը (ինչպես նաև այլ լեզվաբաններ) համարում են, որ բառասկզբում Ը լսվում, բայց չի գրվում *սկ, սպ, ստ, գբ, գգ, գդ, շտ* և այդ կարգի այլ կապակցություններից առաջ, այլ լեզվաբաններ այդ դիրքում Ը-ի գործածություն չեն ընդունում: Մեզ համար ընդունելի են Աճառյանի և Աբեղյանի փաստարկները (բաղաձայնով ավարտվող բառից հետո Ը-ն հստակ լսվում է՝ *մարդն սպասում է*, լսվում էր նաև գրաբարում, որը հաստատում են քերականական իրողությունները՝ *ստասցես*)³: Նկատենք, որ հետազոտողները չեն փորձել պարզել, թե բառասկզբում Ը-ն ինչու է հանդես գալիս հատկապես վերոնշյալ դեպքերում: Նախ դիտարկենք *ն, մ*-ից առաջ եղած դիրքը, որը իրացվում է *ընդ* նախորդում և դրանով կազմված բառերում (ընդառաջ, ընդարձակ), այլ ձևերում՝ *ընդակեր, ընծա, ընձյուղ, ընտիր, ընթացք, ընկեր, ընկնել, ընկալել, ընկղմվել*, նաև՝ *ըմբիշ, ըմբոստ, ըմբռնել, ըմպել*: Իրականում այստեղ դիրքը չի հատկանշվում միայն ռնգայիններին նախորդելով, այլ՝ հիմնականում ռնգայինով սկսվող *բաղաձայնական խմբին* նախորդելով, ընդ որում՝ բաղաձայնական խմբի բաղադրիչները որպես կանոն կազմավորման նույն տեղն ունեն (*մբ, մպ* և *նդ, նտ, նթ, նծ, նձ*): Հետաքրքրական է, որ բառի որևէ դիրքում այս խմբերում ռնգայինից հետո Ը հանդես չի գալիս (բացառությամբ հոդառության դեպքերի), դրանք միշտ սերտ են արտասանվում, ուստի բառասկզբում ևս նրանց միջև, այսինքն՝ ռնգայինից հետո, Ը-ի գործածությունը չէր բխի լեզվի արտաբերական յուրահատկություններից: Եվ քանի որ բառասկզբի բաղաձայնական խումբը առանց ձայնավորական հենարանի արտասանվել չէր կարող, ուրեմն Ը-ն, իբրև ձայնավորական հենարան, պիտի նախորդեր հիշյալ խմբերին: Այդպես է նաև *ըղձալ* բառի պարագայում. հայերենում *ղձ* խմբի ներսում որևէ դիրքում Ը-ի արտասանություն չի արձանագրվում: *Նկ* խմբից առաջ Ը-ի դրսևորվելու հիմքը այլ է: Հայերենում այդ խումբը կարող է ընդմիջվել Ը-ով, և այս դեպքում բաղաձայնական խմբին Ը-ի նախորդելը պայմանավորվում է բառի պատկերն ու իմաստը պահպանելու, այսինքն՝ հնչույթաբանական նպատակով: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Ա. Խաչատրյանը բերում է *ընկար-նրկար* բառագույգի օրինակը, երբ Ը-ի դիրքով բառերը տարբերակվում են ըստ իմաստի⁴: Հետևում է, որ այս պարագայում Ը-ն ունի հնչույթի արժեք: Այդպես է և այն դեպքերում, երբ բառամիջում Ը-ի առկայություն-բացակայությունը փոխում է

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, էջ 79, Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 6, էջ 270-271:

⁴ Տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 58-59:

բառիմաստները, ինչպես՝ *բազմակրնություն-բազմակնություն*: Ինչ վերաբերում է բառասկզբում *գ,ս,շ* շփականներով և պայթականներով կազմավորված խմբերին, ապա այս դեպքում կարևոր է այն հանգամանքը, որ հիշյալ շփականները ձայնավորական հենարան կարող են ունենալ ինչպես իրենց սկզբում, այնպես էլ իրենցից հետո, հետևաբար այսպիսի խմբերում ևս Ը-ի դիրքը պայմանավորված չէ արտաբերականորեն, այլ ունի բառի պատկերը և իմաստը ամբողջացնելու գործառույթ (սըպաս-ըսպաս), ուրեմն նման դեպքերում ևս Ը-ն ունի հնչույթի գործառույթ: Բառամիջի դիրքում Ը-ի դրսևորումները, բացառությամբ սակավ դեպքերի, պայմանավորված են հայերեն խոսքի կառուցման օրինաչափություններով, և ինչպես նկատել է Մ.Աբեղյանը, հայերենում «բառերի բաժանումը վանկերի՝ պատահաբար չի առաջ գալիս, այլ մի բնական երևույթ է և հիմնված է արտաշնչության ընդհատումի կամ թուլացումի վրա, իսկ վերջինս կախված է իրարուց տրոհվող հնչյունների տեսակից»⁵: Այնպես որ, պետք է նկատի ունենալ, որ հայերենում որևէ բաղաձայն չի կարող առանձին արտասանվել առանց ձայնավորական հենարանի: Այլ է վիճակը բառի մեջ, երբ առկա են արտասանական որոշակի պայմաններ, և բաղաձայնից հետո Ը-ի կարիք չկա, ինչպես՝ *արդեն, հաստիք, հարցնել, պետք, փաստ*: Այլ դեպքերում՝ բառի մեջ հնչող Ը-ն ուղղակի ձայնավորական հենարանի դեր է կատարում (դուստըր, մըկըրտել, ըսկըսել, կորընթարդ, ձեռընտու): Պատմական դիտանկյունով հարցը քննելիս պետք է նկատել, որ Ը հնչյունը հայերենի տարբեր փուլերում ունեցել է գործառական տարբեր դրսևորումներ: Գրաբարում և միջին հայերենում Ը-ն բառավերջում բացառված էր (ձիշտ է՝ միջին հայերենում Ը-ն ավելի գործածական դարձավ), և միայն աշխարհաբարյան շրջանում, Ը-ի՝ որոշիչ հոդի գործառույթով պայմանավորված, այդ ձայնավորի գործածությունը հնարավոր դարձավ նաև բառավերջում: Այս դեպքում արդեն Ը-ն սկսեց հանդես գալ հնչույթային լիարժեք դերով՝ գիտակցվելով և գործածվելով իբրև ինքնուրույն ձևույթ: Ա.Խաչատրյանը, դիտարկելով բաղաձայնական խմբերում Ը-ի դրսևորումները, կատարում է կարևոր դիտարկում. ըստ նրա՝ այստեղ կարելի է տեսնել հայերենի հնչույթային համակարգի զարգացման մի օրինաչափություն, երբ հնչույթային կազմը համալրվում է ներքին միջոցների օգտագործումով, և դիրքային տարբերակը ձեռք է բերում ինքնուրույն հնչույթի արժեք⁷: Եվ իսկապես, նկատելի է, թե ինչպես ձայնային միավորը իր նախնական՝ զուտ արտաբերությամբ պայմանավորված գործածությունից աստիճանաբար անցում է կատարում իմաստաբանորեն պայմանավորված դերի՝ ձեռք բերելով հնչույթի արժեք: Ա.Խաչատրյանը հնչույթաբանական տեսակետից 3 գործառույթ է վերագրում Ը-ին. ա) որպես

⁵ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 78:

⁶ Տե՛ս նաև Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 59-60:

⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 58-59:

ինքնուրույն հնչույթ, բ) որպես չեզոքացած (հերթագայվող) ձայնավոր՝ հիմնականում փոխարինելով *ու* և *ի* ձայնավորներին շեշտագուրկ դիրքերում, գ) որպես ձայնավորական հենարան բաղաձայնական կուտակումների ժամանակ⁸: Նման մեկնաբանությունը, կարծում ենք, լիարժեքորեն է ներկայացնում Ը-ի դիրքը արդի գրական արևելահայերենում:

Դիտարկենք նաև *ը*-ի առնչությունները հնչյունափոխական իրողություններին: Հայ լեզվաբանության մեջ, սկսած Մ. Աբեղյանից, նշվում է, որ *ի*, *ու* ձայնավորները, շեշտից զրկվելով, վերածվում են Ը-ի. «Ձայնափոխությամբ էլ այս Ը ձայնավորը ծագում է լիաձայն Ի, Ու, երբեմն և ուրիշ ձայնավորներից, երբ վերջիններս անշեշտ մնալով՝ թույլ են արտաբերվում՝ *սիրտ, սըրտի, գիր, գըրել*: Այսպես և ուրիշ բառերի մեջ այս Ը ձայնավորը պատմականորեն ծագում է անշեշտ վանկերի Ի, Ու, Ա, Ե, Ո ձայնավորներներից՝ իբրև հետևանք սրանց թույլ արտաբերության»⁹: Հ.Աճառյանը նման դեպքերում խոսում է *ի*, *ու* ձայնավորների կրճատման մասին¹⁰: Ա.Խաչատրյանը, ինչպես վերևում տեսանք, իրավացիորեն խոսում է շեշտագուրկ դիրքում *ի*, *ու* ձայնավորների՝ *ը*-ով փոխարինվելու մասին: Եվ իրոք, հիշյալ ձայնավորների շեշտագրկման արդյունքում ոչ թե դրանք մի դեպքում ընկնում են և մյուս դեպքում դառնում *ը*, այլ բոլոր դեպքերում էլ ընկնում են, և արտասանական շղթայի պահանջով, արտաբերական յուրահատկություններով պայմանավորված՝ դեպքերի մի մասում իբրև ձայնավորական հենարան հանդես է գալիս *ը*-ն:

Ձայնավորների հնչյունափոխության հետ կապված՝ հայ լեզվաբանության մեջ բավարար ուշադրության չի արժանացել հետաքրքրական մի իրողություն: Նշվել է, որ և՛ գրաբարում, և՛ արդի գրական հայերենում միավանկ բառերի մի մասում բառասկզբի *ի*, *ու* ձայնավորները շեշտագրկվելով հնչյունափոխվում են (իդձ, ինչ, ունչ, ունդ, ումպ), իսկ այլ դեպքերում՝ ոչ (ուրթ, իժ, իլ): Այդ հանգամանքը նկատել է դեռևս Հ.Աճառյանը. «*Ի* և *ու* անշեշտ մնալով կրճատվում են, սակայն բառասկզբում բաց վանկում մնում են, ինչպես՝ *իժ-իժի, ուրթ-ուրթի*»¹¹: Երևույթը որևէ կերպ չի մեկնաբանվել, որովհետև չի նկատվել Ը-ի գործառական մի կարևոր առանձնահատկություն: Լեզվաբանները համարել են, որ հայերենի բոլոր ձայնավորները կարող են առանձին վանկ դառնալ: Ըստ Մ.Աբեղյանի՝ հայոց լեզվի մեջ վանկային են միայն ձայնավորները, որոնք մենակ ևս կազմում են առանձին վանկ, ինչպես *ա, օ/ո/, է/ե/, ի, ու, ը*¹²: Իրականում ասվածը ճիշտ է *ա, է, ի, ո, ու* ձայնավորների համար, բայց ոչ Ը-ի համար: Թե՛ գրաբարում, թե՛ արդի գրական արևելահայերենում Ը ձայնավորը ինքնուրույն, առանց բաղաձայնի գուգորդման վանկ չի կազմում. այն

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 63:

⁹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 65-66:

¹⁰ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 593:

¹¹ Նույն տեղում:

¹² Տե՛ս Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 74:

որևէ այլ ձայնավորի նախորդել չի կարող և չի կարող նախորդել մեկ բաղաձայնի: Ահա թե ինչու՝ *ութ, ուժ, իժ, իլ, իր* բառերի *ի*-ն չի հնչյունափոխվում, որովհետև դրան փոխարինելու դեպքում *Ը*-ն պիտի հայտնվեր իր համար անկարելի դիրքում՝ մեկ բաղաձայնից առաջ: Այդպես նաև գրաբարյան *ինն* թվականի հոլովման ժամանակ *ի>ը* հերթագայություն երկու բաղաձայններից առաջ տեղի ունենում էր (ըննի, ըննից), իսկ մեկ բաղաձայնից առաջ՝ ոչ (ինունք): Նույն այդ հիմքով են բացատրվում որոշ բարբառներում ցուցական դերանունների հնչյունափոխական յուրահատկությունները: Այսպես, Բայազետի բարբառում *էսի, էնի* դերանունների թեք ձևերում տեղի է ունենում *տ,դ*-ի ներմուծում, ձևավորվում է բաղաձայնական խումբ, որից առաջ շեշտազրկված *է*-ին փոխարինում է *ը՝ ըստու, ընդու*: Մինչդեռ Վանի բարբառում դերանվանական այդ ձևերում բաղաձայնական խումբ չի ձևավորվում, և *է*-ն դառնում է *ի՝ իտր, ինր*:

Այսպիսով, մենք համամիտ ենք Ա.Խաչատրյանի հետ այն հարցում, որ հայերենում *ը*-ն միշտ չէ, որ հանդես է գալիս իբրև հնչույթ: Մյուս կողմից՝ առաջարկում ենք գրական արևելահայերենի *Ը* ձայնավորը բնութագրելիս նշել նաև հետևյալը.

1. *Ը*-ն միավանկ բառում հանդես չի գալիս (բացի ձայնարկությունները).
2. Ի տարբերություն հայերենի մյուս ձայնավորների՝ *Ը*-ն ինքնուրույն վանկ չի դառնում.
3. Բառասկզբում *Ը*-ն մեկ բաղաձայնից առաջ հանդես չի գալիս:

Օգտագործված գրականություն

Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Ե., 1974, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 848 էջ:
 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ. 6, 1971, 845 էջ:
 Ա. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 220 էջ:

Katvalyan Viktor - About the Vowel Ը of the Armenian Language. - The vowel sound of the Armenian language Ը deserves attention both for its phonetic and phonological features. Phonologists observed articulatory, physical, functional-positional characteristics of this sound, features of historical development, attitude to the realities of sound change, etc. But it seems some realities have escaped their view. The observations lead to the conclusion that the following should also be noted when characterizing the Ը vowel of literary Eastern Armenian: 1. Ը does not occur in a monosyllabic word (except for interjections), 2. Unlike

other vowels of the Armenian language, Է does not appear as a separate syllable, 3. At the beginning of a word, Է cannot appear before one consonant.

Keywords: Vowel, Consonant, Syllable, Stress, Phoneme, Sound Change, Characteristic.

Катвалян Виктор - О гласном звуке Է армянского языка. - Гласный звук армянского языка Է заслуживает внимания как своими фонетическими, так и фонологическими особенностями. Фонологи наблюдали артикуляторные, физические, функционально-позиционные характеристики этого звука, особенности исторического развития, отношение к реалиям звукоизменения и т. д. Но, похоже, некоторые реалии ускользнули от их внимания. Наблюдения позволяют сделать вывод, что при характеристике гласной Է литературного восточноармянского языка следует также отметить следующее: 1. Է не встречается в односложном слове (кроме междометий), 2. В отличие от других гласных армянского языка, Է не выступает как отдельный слог, 3. В начале слова Է не может проявляться перед одной согласной.

Ключевые слова: Гласная, согласная, слог, ударение, фонема, звукоизменение, характеристика.

ԳՈՅԱԿԱՆԻ ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻՆ ԱՌՆՉՎՈՂ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

DOI: 10.54412/93055-2023-11

Մխիթարյան Գայանե

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. gayane.mkhitaryan@lang.sci.am

Բանալի բառեր. Գոյական, քերականական կարգ, հայերեն, հնդեվրոպական լեզու, սեռերի տարանջատում, հնագույն հայերեն, կոգնիտիվ լեզվաբանություն:

Գոյականի սեռի քերականական կարգը հայերենին բնորոշ չէ, սակայն իբրև հնդեվրոպական լեզու հայերենը պետք է որ այն ժառանգեր նախալեզվից: Վաղնջական ժամանակներում մարդիկ բոլոր առարկաները բաժանում էին շնչավորների և անշունչների: Ըստ Աճառյանի՝ «...անշունչները չեզոք բառեր էին, իսկ շնչավորների մեջ ներառում էին արական և իգական բառերը»¹: Այս քերականական կարգը բնորոշ է հնդեվրոպական շատ լեզուների, և այսօր էլ դրսևորվում է ինչպես երեք (արական, իգական, չեզոք), այնպես էլ երկու (արական, իգական) սեռերով: Հետազոտողները նշում են, որ հնդեվրոպական նախալեզվում սեռը միանգամայն հասկանալի էր խոսողի համար և կարիք չկար այն արտահայտելու որևէ նշանով կամ վերջավորությամբ²: Սեռերի տարանջատումը (կին-տղամարդ, տղա-աղջիկ, արու-էգ) բնորոշ է մարդկության զարգացման ավելի ուշ շրջանի³: Օտար հայագետ Պոլ Ֆեթթերը որպես գոյականի սեռի առկայություն արձանագրում է «Վահագնի ծնունդը» երգի առաջին տողը. *Երկնէր երկին, երկնէր էւ ծովն ծիրանի*: Ըստ Ֆեթթերի՝ *երկին*-ը արական, իսկ *երկիր*-ը իգական սեռի գոյականներ են, քանի որ երկինքը արձև է արարում, իսկ երկիրը անձրևն ընդունում է: Ասածը հաստատելու համար վկայում է հնդեվրոպական այլ լեզուներում առկա որոշ փաստեր՝ գերմաներենում երկինքը՝ *der Himmel*, արական սեռի գոյական է, իսկ երկիրը՝ *die Erde*՝ իգական⁴: Հին հունարենում *երկիր*-ը ևս իգական սեռի գոյական էր: Այսօր արդի հունարենում, օրինակ՝ *կողի* բառը չեզոք սեռի է, իսկ երբ նշում ենք Կիպրոս, Հռոդոս, Կոս, Չակինտոս կամ այլ կղզիների անվանումներ, որոնք արական վերաջավորություն ունեն, այդուհանդերձ դրանք բոլորը իգական սեռի են, թեպետ չունեն հունարենի իգական *η* կամ ավերջավորությունը: Պատճառն այն է, որ հին հունարենում, ինչպես արդեն նշվեց,

¹Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Ե., 1957, էջ 274:

²Հ.Աճառյան, նշվ.աշխ., էջ 291-292: Benj. Wheeler, The Origin of Grammatical Gender, The Journal of Germanic Philology, vol. 2, N4(1899), p. 528-529. <https://www.jstor.org/stable/27699089>

³ Benj. Wheeler, p. 532. <https://www.jstor.org/stable/27699089>

⁴Հ. Աճառյան, նշվ.աշխ., էջ 293:

երկիր-ը իգական սեռի գոյական է⁵: Կարելի է ասել, որ սեռերի դասակարգումն ունի նաև իմաստային, գործառական, նաև ճանաչողական դրսևորում:

Հետաքրքիր է նաև, որ Ա. Մեյեն ևս հակված է այն մտքին, որ հայերենը՝ որպես հնդեվրոպական լեզու, չէր կարող շրջանցել սեռի քերականական կարգը: Ըստ նրա՝ սեռի հետքերը պահպանվել են գրաբարում *-ի* վերջավորությունն ունեցող որոշ գոյականների հոլովման զուգահեռ ձևերով՝ *ւոյ* և *եայ*: Ընդ որում՝ *ւոյ* -ն բնորոշ էր արական սեռի գոյականներին, իսկ *եայ-ն*՝ իգական, օրինակ՝ *որդի-որդւոյ, որդւոց, մաքի-մաքեաց, այրի-այրեաց*: Հ.Աճառյանը, ընդունելով Մեյեի կարծիքը, բերում է նաև այլ օրինակներ. պտղատու ծառերի անվանումները ևս հոլովվում են *եայ*-ով՝ *արմաւենի-արմաւենեաց, եղէնի-եղէնեաց*, կամ՝ ասորի բառը «մարդ» իմաստով հոլովվում է արականաձև՝ *ասորւոյ*, իսկ որպես երկրի անվանում՝ իգականաձև՝ *ասորեաց*⁶:

Անդրադառնալով հնդեվրոպական և սեմական լեզուներում գոյություն ունեցող քերականական սեռին՝ Է.Ադայանը ևս ընդունում է, որ հնագույն հայերենը ունեցել է գոյականի սեռի քերականական կարգ, բայց 5-րդ դարում հայերենը արդեն կորցրել էր այն⁷: Սուրբ գրքի թարգմանության ժամանակ (ասորերենից թե հունարենից) մեր հոգևոր այրերը արական և իգական սեռերի իմաստ արտահայտող բառերի փոխարեն գործածել են *լիս* (išša) և *այր* (iš): «Սա թող կոչվի išša, որովհետև iš-ից կազմւեցաւ», - գրված է Ծննդոց գրքի երբայերեն բնագրում (Ծն., Բ, 23), իսկ հայերեն Աստվածաշնչում կարդում ենք. «Սա կոչեցի կին, զի յառնէ իւրմէ առաւ»:

5-րդ դարից հետո հունաբան դպրոցի քերականները հունարենի օրինակով արական և իգական բառերի համար առանձին ձևեր են ստեղծում: Հ.Աճառյանը որպես օրինակ է բերում Տիմոթեոս Կուզի հայերեն թարգմանությունից. «Մի տեր, մի հաւատ, մի մկրտութիւն», որում *մի* բառի արականը «եզ» է, իգականը՝ «մու», իսկ չեզոքը՝ «մի»: Հունաբան հայերենի շրջանում են ստեղծվել *-է, -իա, -իթա* վերջավորությունները, նաև իրանական ծագման *-ուհի*-ն⁸: Է-ն հունարեն *η*-ն է՝ Գայիանէ, Հռիփսիմէ, Նունէ: Սրանց նմանությամբ կազմվում են և *սէ, նէ* դերանունները՝ *սերա, ներա* ձևերով: Ավելի ուշ Պետրոս Դուրյանը պետք է գրեր «Նէ», «Ներա հետ» բանաստեղծությունները. «Համբոյր մը առի ներանէ... Նէ զ'իս իր քով նըստեցուց... Նէ հեռացաւ ինձմէ ըսաւ՝ «Բաւ սիրեցի քեզ, մնաս բարեաւ»⁹:

-Իա-ն ևս հունարենից է (-ia)՝ Սոֆիա, Եվպրաքսիա, Եվդոքիա: Նման ձևով են կազմվել նաև *ընտանիայ* «ազգականուհի», *թոռնիայ* «աղջիկ թոռ» բառերը:

⁵Школа греческого языка “Пифагор”, Определение рода в греческом языке. <https://mariamatsouka.blogspot.com/2012/09/6.html>

⁶Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 293-295, 298:

⁷Է. Ադայան, Լեզվաբանության ներածություն, Ե., 1967, էջ 358:

⁸Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 309:

⁹Պ. Դուրյան, Երկեր, Ե., 1981, էջ 32, 50:

Ասորերենից հայերենին է անցել *իթա*-ն (-itā): Մ.Գրքում գործածվում է *տալիթա* -ն, որ նշանակում է աղջիկ (Մրկ. Է, 41):

Իրանական *-ուրհի* ձևից հայերենում կազմվել են *Ջարուհի*, *Համագասպուհի*, *Տաճատուհի* և այլ բառեր: *-ուհի* ածանցով կազմվում են նաև հասարակ անուններ՝ *թագուհի*, *երանուհի* և այլն: Նորայր Բյուզանդացին և Հայկազյան բառարանը վկայում են, որ դրանք հետդասական շրջանի բառեր են, իսկ *թագուհի*-ն իրանական փոխառություն է, ինչպես *թագ*-ը և *թագաւոր*-ը¹⁰: Պետք է արձանագրել, որ հետա-գայում *-ուհի*-ն ընկալվում է իբրև առանձին բառ, օրինակ՝ Աբրահամ Կրետացու «Պատմութիւն Նատրշահի» երկում. «Արձակեաց գուհիքն իւր», «Եւ իւր ուհեաց տեղն եղեգնեայ»¹¹: Անշուշտ, դա լեզվում չամրագրվեց, ինչպես չարմատավորվեց նաև *իթա* անվանումը:

Հայերենում գոյականի սեռի դրսևորումներ են *-դուխտ*, *-անուշ*, *-ուշ*, *-ուհի* վերջավորությամբ բառերը: Հաճախադեպ է *-ուհի*-ն, որով կազմվում են ինչպես հատուկ, այնպես էլ հասարակ անուններ: *-Անուշ* և *-ուշ* բաղադրիչները ավելի քիչ են գործածվում: Սակավ գործածություն ունի հատկապես *-դուխտ*-ը: Ընդ որում՝ *անուշ* բաղադրիչով անուններ են կազմվում հատուկ և հասարակ գոյականներից՝ Օրինակ՝ *Սահականուշ*, *Երվանդանուշ*, *Վեհանուշ*, *Լիանուշ*, *Սիրանուշ*: *-ուհի* ածանցին հոմանիշ *-ուշ*-ը *անուշ*-ի կրճատ տարբերակն է՝ *Թագուշ*, *Մանուշ*, *Հրուշ*, *Մարգուշ*: Ակնհայտ է նաև *-ուշ*-ի փաղաքշական իմաստը: *Դուխտ*-ը «դուստր» իմաստով հատուկ անուն է կազմում միայն հատուկ գոյականներից՝ *Հայկանդուխտ*, *Շահանդուխտ*, *Որմիզդուխտ*, *Խոսրովիդուխտ*, *Օհանդուխտ* և այլն: *Դուխտ*-ը այսօր, սակայն, գործածական չէ:

-ուհի-ով կազմվող անունները կարող են արտահայտել ինչպես **գրադմունք՝ դերասանուհի**, **երգչուհի**, **բանաստեղծուհի**, **բժշկուհի**, **ուսուցչուհի**, **տարբեր հարաբերություններ՝ բարեկամուհի**, **ազգականուհի**, **ընկերուհի**, **հայրենակցուհի**, այնպես էլ **ազգության անվանում՝ հայուհի**, **իտալուհի**, **հնդկուհի**, **ֆրանսուհի** և այլն, **սակայն ընդունելի չեն՝ ռուսուհի**, **կուբայուհի**, **չուքչայուհի**: *-ուհի*-ն չի գործածվում նաև քաղաքների, գյուղերի անվանումների հետ՝ **երևանուհի**, **գավառուհի**, **գյումրուհի**, **փարիզուհի**, **հռոմուհի** և այլն:

Հայերենում իգական հատուկ անուններ են կազմվում ածականներից և գոյականներից՝ *Ազնիվ*, *Անգին*, *Աննման*, *Խոնարհ*, *Պայծառ*, *Սիրուն*, *Արև*, *Գոհար*, *Աղավնի*, *Մանուշակ*, *Քնար*, *Փիրուզ*:

Անուններ կան, որ ընդհանուր են արական և իգական սեռերի համար, ինչպես՝ *Արշալույս*, *Արծվիկ*, *Վարդ*, *Նուբար* և այլն: Բառավերջի հնչյունով են տարբերվում *Կիմ-Կիմա*, *Գաբրիել – Գաբրիելա*, *Արեգ – Արեգի*:

¹⁰ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 305:

¹¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 306:

Գոյականի սեռի կարգը հետազոտողներին հետաքրքրում է հատկապես այն տեսանկյունից, թե ինչպես է այն անդրադառնում ճանաչողության վրա, այսինքն՝ սեռի վերագրումը գոյականին կամայական կամ տարերային բնույթ ունի, թե՞ պայմանավորված է ինչ-ինչ հատկանիշներով: Եվ արդյոք գոյականի այս կամ այն սեռին պատկանելն ազդում է իրերի մասին ունեցած մարդկանց պատկերացումների վրա: Գոյականի քերականական սեռի և ճանաչողության հարաբերությունը, կարծում ենք, պայմանավորված է լեզուներում և մշակույթներում բնական ու քերականական սեռերի վերաբերյալ պատկերացումների բարդ ու բազմակողմանի կապերով: Որքան էլ անտրամաբանական թվա անշունչ առարկային սեռի կարգի վերագրումը, այնուամենայնիվ չի բացառվում, որ նախալեզվում կարող էին լինել ինչ-որ հիմնավորումներ, որոնք աշխարհի գերբնական կամ միստիկ ընկալման համակարգում ունեին որոշակի տրամաբանություն, որը հետո մոռացվել կամ անհետացել է¹²: Ըստ Աճառյանի՝ հնդեվրոպական նախալեզվում շատ բառեր, որոնք իգական սեռի վերջավորությունն չունեին, ժամանակի ընթացքում աստիճանաբար ստանում են -ā, -yā, -ia: Որպես օրենք, սակայն, դա էլ լիարժեք չի կարելի համարել, քանի որ լեզուներում կան բառեր, որոնք արական են, բայց ունեն նման վերջավորություն, օրինակ՝ լատ. Agricola«երկրագործ», հուն. Δεσποτα «բռնակալ», իսպ. poeta «բանաստեղծ», monarca «ինքնակալ»,ռուս. пара, дядя¹³: Հին հունարենում(նաև արդի հունարենում) գոյականի սեռը երեքն է՝ արական, իգական և չեզոք՝ համապատասխան վերջավորություններով. արական՝ -ο, -ος, -ης, -ας, իգական՝ -η, -α, չեզոք՝ -το, -ί, -ο, -μα, սակայն գոյականներին կցվում են նաև սեռը տարբերակող հոդեր, որոնք ևս հոլովվում են գոյականների հետ: Այս տեսանկյունից համեմատելի էգերմաներենը, որը ևս ունի գոյականի սեռի քերականական կարգ և հոդերի հոլովման համակարգ՝ արական, իգական, չեզոք՝ Der, Die, Das: Ռուսերենի հետ հունարենը կարելի է համեմատել միայն սեռային հատկանիշներով, քանի որ ռուսերենը չունի հոդեր: Օրինակ комната- իգական, стол - արական, окно-չեզոք սեռի գոյականներ են: Հունարենում որոշ դեպքերում, սակայն, քերականական սեռը չի համապատասխանում իրողությանը. տղա, աղջիկ բառերը հունարենում չեզոք սեռի են՝ το κορίτσι - աղջիկ / տո կո՛րիտսի/, το αγορά - տղա /տո ագորի՛/¹⁴:

Գոյականների արական և իգական ձևերը ընտանեկան և ազգակցական ոլորտում կամ զբաղմունքային բառապաշարում արտահայտվում են տարբեր անուններով: Օրինակ՝ կան ա/ **ընդհանուր անուններ՝ դպրոցական, երիտասարդ, պատանի, տնօրեն, խնամի, բարեկամ** և այլն, բ/ **միայն արական անուններ՝ աներ,**

¹² Harry E. Foundalis, Evolution of Gender in Indo-European Languages, 2002. <https://langev.com/pdf/foundalis02evolutionOf.pdf>

¹³ Հ.Աճառյան, նշվ.աշխ., էջ 292:

¹⁴ И.П.Хориков, Учебник греческого языка, Москва, 2006, с. 40.

Նաև՝ <https://www.greekpod101.com/blog/2020/05/17/guide-to-greek-grammatical-gender/>

փեսա, եղբայր, տեգր, գորավար, թագավոր, ասպետ, իշխան, սկսրայր և այլն, **գ/ միայն իգական անուններ՝ աղախին, դուստր, հարս, բամբիշ, հարճ, վարձակ, տատ, տիկին, օրիորդ** և այլն:

Առանձնանում են նաև կենդանիների սեռերը տարբերակող անվանումները. **ա/ ընդհանուր անվանումներ՝ աղվես, գայլ, փիղ, շուն** և այլն, **բ/ էգերին տրվող անվանումներ՝ կով, մատակ, մաքի, մարի** և այլն, **գ/ արուններին տրվող անվանումներ՝ աքաղաղ, ցուլ, խոյ, նոխազ, շահեն, վարուժան** և այլն:

Կենդանիների անունները արական և իգական տարբերակում են ստանում, եթե այդ կենդանիները տնտեսության մեջ էական նշանակություն ունեն, օրինակ՝ *եգ – կով, հավ – աքլոր, խոյ – մաքի*: Մինչդեռ տնտեսության մեջ որևէ արժեք չունեցող կենդանիների անվանումները նման տարբերակում չունեն, իչպես՝ *գայլ, արջ, աղվես, առյուծ*¹⁵:

Ի հաստատումն այն դրույթի, որ քերականական սեռը զգալի ազդեցություն ունի առարկաների մասին մեր պատկերացումների վրա, ներկայացնենք մի քանի հետաքրքիր դիտարկում: Անշուշտ տարօրինակ է լիմոնի արու և էգ տարբերակումը: Ըստ Աճառյանի՝ պոլսահայ բարբառում ընդունված իրողություն է դա. եթե լիմոնի ծայրը ուռուցիկ է, կոչվում է «արու», իսկ եթե ծայրը հարթ է, կոչվում է «էգ»: Հարգի է, անշուշտ, էգ լիմոնը, որի հյութն ավելի առատ է և հյութեղ, իսկ արու լիմոնը չոր է, հյութը քիչ¹⁶: Երաժշտագիտական գրականության մեջ ևս դիտարկումներ կան որոշ նվագարանների *մանչ* և *աղջիկ* լինելու մասին: Օրինակ կիսագնդաձև ծնծղաները, որոնք սրածայր բռնակով են, կոչվում են *մանչ*, իսկ շրջանաձև մետաղե բռնակով ծնծղաները՝ *աղջիկ* կամ *ծնծղուկ*¹⁷:

Այսպիսով, քերականական կարգերը առանձին կամ տարանջատված իրողություններ չեն, այլ պայմանավորված են մեր ճանաչողությամբ և ազդում են սովյալ առարկայի մասին մեր ունեցած պատկերացումների վրա: «Առաջին անգամ սեռորոշ վերջավորությունները կցվեցին ածականների վրա, - գրում է Աճառյանը. - ածականները գործածվելով գոյականների հետ ցույց էին տալիս նրա սեռը: Այնուհետև այդ վերջավորությունները անցան գոյականներին, իհարկե, դրանց մի մասին¹⁸»:

Տրամաբանական է, որ առաջին հերթին հատկապես լեզվում են արտացոլվում իրական աշխարհի տարատեսակ երևույթներն ու առարկաները՝ արտահայտելով իրենց բնորոշ հատկանիշները, առնչություններն ու հարաբերությունները. վերջիններս էլ, բնականաբար, մեր մտածողության մեջ բաժանվում են որոշակի հասկացական կարգերի:

¹⁵ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 280:

¹⁶ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 279:

¹⁷ Հ. Պիկիչյան, Ծնծղա. նվագարան և մոզական գործիք, *Պատմա-բանասիրական հանդես*, N 2-3, 1992, էջ 216-217:

¹⁸ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 291-292:

Պոլսականի սեռի քերականական կարգի հետազոտությունը կարևոր է ոչ միայն լեզվական նյութի քննության տեսակետից: Լեզուն մարդու իմացական-հասկացական գործունեության ամենաբնորոշ դրսևորումներից է, ուստի և լեզվական միավորների ուսումնասիրության հատկապես *ճանաչողական* մոտեցումները հնարավորություն են ընձեռում պարզելու, թե մարդն ինչպես է բացահայտում իրեն շրջապատող աշխարհը, ինչ սկզբունքներով է համակարգում տարբեր առարկաների տարաբնույթ կապերին ու փոխհարաբերություններին վերաբերող իրողությունները: Արդի ժամանակներում գոյականի սեռի քերականական կարգին վերաբերող հետազոտությունները բավականին շատ են, դրանք կրում են հիմնականում «գենդերային» անվանումը:

Բոլոր դեպքերում սեռի քերականական կարգի ակունքները լեզվի ներսում են և զարգացման ինչ-որ փուլում բնական սեռը լեզվում հավելյալ դրսևորումներ է ձեռք բերում¹⁹: Չի բացառվում նաև, որ սեռի ծագումը պայմանավորված լինի լեզվի հասարակական տարբերակներով, մասնավորապես տղամարդկանց և կանանց լեզվում գործածվող վերջավորությունների և ընդհանուր առմամբ նաև խոսքի տարբերություններով:

Հարցի քննությունը, կարելի է ասել, սպառված չէ, քանի որ լեզվաբանական նոր ուղղությունները նոր հնարավորություններ են ընձեռում հարցը քննելու այլ դիտանկյուններից. ներառել հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության, նյարդալեզվաբանության, ճանաչողական կամ կոգնիտիվ լեզվաբանության, մշակութաբանության հետազոտություն մեթոդները՝ իհարկե դրանց համադրելով արդեն իսկ եղած ուսումնասիրությունները:

Mkhitaryan Gayane - Facts Related to the Grammatical Category of Noun Gender in Armenian. - The grammatical category of noun gender is not typical for the Armenian language, but as an Indo-European language, Armenian had to inherit it from its parent language. Researchers note that the genus in Proto-Indo-European languages was fully understood and did not need to express it with any signs or endings. The separation of the sexes (woman-man, boy-girl, man-woman) is characteristic of the late period of human development.

Grammar rules are not separate or discrete facts, but are conditioned by our knowledge and influence our understanding of the subject. The gender of a noun is of particular interest to researchers from the point of view of how it affects cognition, i.e., is the assignment of gender to a noun arbitrary or spontaneous in nature, or is it determined by some characteristics? And does the gender of a noun affect how people think about things? Can be assumed that the connection between the grammatical gender of a noun and its cognition is due to complex and multifaceted connections between ideas about natural and grammatical gender in languages and cultures.

¹⁹ MuhammdH.Ibrahim, Grammatical Gender: Its Origin and Development, Mouton, 1973, p. 79. <https://dokumen.pub/grammatical-gender-its-origin-and-development-9783110905397-9789027924490.html>

Studying the grammatical category of gender of a noun is important not only from the point of view of studying linguistic material. Language is one of the most characteristic manifestations of human cognitive activity, so the peculiarities of cognitive approaches to the study of linguistic units make it possible to find out how a person cognizes the surrounding world. Currently, there are quite a few studies related to the grammatical category of noun gender. The discipline of gender linguistics or linguistic gender research is a component of interdisciplinary gender research. In general, the origins of the grammatical category of genus are within the language, and at a certain stage of development the natural gender acquires additional manifestations in the language. It is also possible that the origin of the genus is determined by social variants of the language, in particular by differences in the endings used in the language of men and women, as well as in speech in general.

It can be said that the study of the question is not exhausted, as the new linguistic directions give new opportunities to consider the question from other perspectives to include research methods of general linguistics, psycholinguistics, neurolinguistics, cognitive linguistics and cultural science, naturally combining existing research with them.

Keywords: Noun, Grammatical gender, Armenian language, Indo-European language, Division of the tribe, Old Armenian language, Cognitive linguistics.

Мхитарян Гаяне - Факты, связанные с грамматической категории рода существительных в армянском языке. - Грамматическая категория рода существительного не характерна для армянского языка, но как индоевропейский язык армянский должен был унаследовать ее от праязыка. Исследователи отмечают, что род в протоиндоевропейских языках был полностью понятен и не было необходимости выражать его какими-либо знаками или окончаниями. Разделение полов (женщина-мужчина, мальчик-девочка, мужчина-женщина) характерно для позднего периода развития человечества.

Грамматические правила не являются отдельными или дискретными фактами, а обусловлены нашим познанием и влияют на наше понимание данного предмета. Род имени существительного представляет особый интерес для исследователей с точки зрения того, как он влияет на познание, т. е. является ли присвоение рода существительному произвольным или стихийным по своей природе или же оно определяется какими-то характеристиками? И влияет ли род существительного на то, как люди думают о вещах? Мы считаем, что связь между грамматическим родом существительного и его познанием обусловлена сложными и многогранными связями представлений о естественном и грамматическом роде в языках и культурах.

Изучение грамматической категории рода существительного важно не только с точки зрения изучения языкового материала. Язык является одним из наиболее характерных проявлений познавательной деятельности человека, поэтому особенности когнитивных подходов к изучению языковых единиц дают возможность выяснить, как человек познает окружающий мир. В настоящее время проводится довольно много исследований, связанных с грамматической категорией рода существительного. Это гендерная лингвистика или лингвистическая гендерология - научное направление в составе междисциплинарных гендерных исследований. В целом, истоки

грамматической категории рода находятся внутри языка, и на определенном этапе развития естественный род приобретает в языке дополнительные проявления. Не исключено также, что происхождение рода определяется социальными вариантами языка, в частности различиями в окончаниях, употребляемых в языке мужчин и женщин, а также в речи в целом.

Можно сказать, что исследование вопроса не исчерпано, поскольку новые лингвистические направления дают новые возможности рассмотреть вопрос с других позиций: включить исследовательские методы общей лингвистики, психолингвистики, нейролингвистики, когнитивной лингвистики и культурологии, естественно сочетая с ними уже существующие исследования.

Ключевые слова: Имя существительное, грамматический род, армянский язык, индоевропейский язык, разделение родов, древнеармянский язык, когнитивная лингвистика.

Հովհաննիսյան Լավրենտի

բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
գլխավոր գիտաշխատող. inslang@sci.am

Բանալի բառեր. բարբառ, Ղարաբաղի (Արցախի) բարբառ, գործիական հոլով, հոլովական *-ալ*/ վերջավորություն, գրաբար, հնաբանություն, եզերական բարբառ:

Ղարաբաղի (Արցախի) և Մեղրու բարբառներում գործիական հոլովը կազմվում է *-ալ*/ ձևությամբ: Այս յուրահատկության վերաբերյալ կան մի շարք դիտարկումներ:

«Բազմաթիվ գավառականների մեջ առհասարակ անունները գործիական չունեն. չի ասվում Գրիգորով, Հարությունով, դրա փոխարեն գործածվում են Գրիգորի հետ, Հարությունի հետ: Ղարաբաղի բարբառը սակայն ազատ կերպով կարող է թե՛ մեկը, և թե՛ մյուսը գործածել. այսպես՝ Կիլիքյավ, Թիւնավ»¹:

Մեղրու բարբառում գրեթե բոլոր միավանկ և բազմավանկ բառերը, հոլովվող դերբայները, բացի ենթակայականից, բաղաձայնով վերջացող տեղանունները գործիականում ստանում են *-ալ*²:

-Ալ-ը ընդհանուր է բոլոր տեսակի հոլովումների համար³:

Ինչպես տեսնում ենք, գործիական հոլովի *-ալ*-ով կազմությունները տարաբնույթ են՝ բնորոշ Արցախ-Սյունիքի տարածքների բարբառներին ու խոսվածքներին, ուստի առարկելի է այն դրույթը, ըստ որի բարբառային բառերի գործիական հոլովի *ալ*-ը «ոչ թե գրաբարի *ալ*-ից է առաջանում, ինչպես ոմանք կարծում են, այլ մեր այժմյան սովորական *ալ* վերջավորությունից, որի *ա* ձայնը հաջորդ *լ*-ի պատճառով դարձել է *ա*»⁴: Նույն կարծիքին է նաև Էդ. Աղայանը:

Կարծում ենք բարբառային *-ալ*-ը հնաբանություն է՝ բնորոշ եզերական բարբառներին: Այս իրողությունը հաստատում է նաև մեծանուն գիտնականը՝ Հ. Աճառյանը. «Մեսրոպի ժամանակ մեր այսօրվա *ալ* գրության տեղ գործածվում էր *ալ*»:

Մեսրոպը Սյունյաց երկրում և սյունեցոց համար գրելով Ավետարանն ու Մաշտոցը, բնական է, որ սյունեցոց բարբառով էլ գրեց. արդ՝ Սյունյաց բարբառում

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ե., 1957, հ. III, էջ 643:

² Է. Աղայան, Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 128:

³ Ա. Մարգարյան, Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 126:

⁴ Հ. Աճառյան, նույն տեղում:

սինչն ախօր *նլ/չկա*, այլ սիշտ *աւ* է հնչվում ուստի Մեսրոպն էլ գործածել է *ալ/կ* ոչ բնավ *նլ*»:⁵

Hovhannisyan Lavrenti – About Instrumental Case of Karabakh (Artsakh) Dialect. – In the dialects of Karabakh, Artsakh, and Meghri, the instrumental case is formed with the case ending *-av*. The article presents some observations regarding this feature, according to which the instrumental case with the ending *-av* is an archaism.

The dialects of the Artsakh-Syunik region have various types of archaisms that are characteristic of the border dialects.

Keywords. Dialect, Karabakh (Artsakh) Dialect, Instrumental Case, Case ending *-ալ/(-av)*, Grabar, Archaism, Border Dialects.

Оганесян Лаврентий – О творительном падеже карабахского (Арцахского) диалекта. - В Карабахском (Арцахском) и Мегрийском диалектах творительный падеж образуется падежным окончанием *-ав*. В статье представлен ряд наблюдений относительно этой особенности, согласно которым творительный падеж с окончанием *-ав* является архаизмом.

Диалекты Арцахско-Сюникского региона имеют различные типы архаизмов, характерные для приграничных диалектов.

Ключевые слова: Диалект, карабахский (арцахский) диалект, творительный падеж, падежное окончание *-ալ/(-ав)*, грабар, архаизм, приграничные диалекты.

⁵ Հ. Աճառյան, Հայոց գրերը, Ե., 1984, էջ 478: Այս աշխատությունը հեղինակի կողմից պատրաստվել է տպագրության 1935թ., բայց ինչ-ինչ պատճառներով չի հրատարակվել (ն.ս. 3):

ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻ
«ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱԻՐԷՆՍՊՐՈՒԹԻՒՆ» ԵՐԿՈՒՄ

DOI: 10.54412/93055-2023-21

Դիբարյան Նարինե

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան.
narine.dibaryan@ysu.am

Բանալի բառեր. Դավիթ Վարդապետ, «Կանոնական արեւնստրուֆին», XI-XII դդ., բառապաշար, իրավագիտական և կրոնական եզրույթներ, ստուգաբանություն, բառակազմություն:

Միջնադարի հայոց մատենագրության մեջ առանձնահատուկ տեղ ունի Դավիթ վարդապետ Ալավկա Որդու մատյանը՝ «Կանոնական արեւնստրուֆինը»: Միջնադարյան մատենագրության մեջ իրավագիտակցությանը և օրենստրուֆինը վերաբերող այս կարևորագույն երկը՝ Ալավկա Որդու կանոնագիրքը, լեզվաբանական տեսանկյունից ուսումնասիրության գրեթե չի ենթարկվել: Օրենսգրքի լեզուն, ինչպես իրավագիտորեն նշել է Դավթի կրտսեր ժամանակակիցներից Վարդան Արևելցին, «դիրահաս» է: Այն միջակա դիրք է գրավում գրաբարի և միջին հայերենի միջև, որը թույլ է տալիս բացահայտել մի գրական լեզվից մյուսին անցնելու ընթացքը: Լեզվի այդպիսի համաձուլվածքը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեպետ Ալավկա Որդին ապրել և գործունեություն է ծավալել միջնադարում, սակայն ստացել է հիմնավոր հոգևոր կրթություն, արժանացել վարդապետի կոչման, իսկ ուսումը և գիտությունը զարգանում էին հոգևոր կենտրոններում, վանական դպրոցներում և համալսարաններում, որտեղ իշխում էր ոսկեդեմիկ մայրենին՝ հին հայերենը: Այնինչ Ալավկա որդին հայերենի մասնագիտական բառապաշարի և գործառական ոճերի կայացման ու հարստացման տեսանկյունից մեծ գործ է կատարել: Մեր այս քննության նպատակն է բացահայտել *օրենք*, *կրոն* նշանակող իմաստային դաշտերի այն բառերը, որոնք կիրառության մեջ է դրել Դավիթ Ալավկա Որդին՝ կազմելով իր «Կանոնական արեւնստրուֆինը»:

Մարդկանց փոխհարաբերությունների հնարավորինս անվտանգ կարգավորումը, աստիճանակարգության, կենսագործունեության ոլորտների սահմանումը բոլոր ժամանակներում եղել են հասարակության հիմնախնդիրներից մեկը, որի լուծման համար ստեղծվել է կրոնը՝ հավատալիքների և նախապաշարմունքների ամբողջությունը՝ օրենք-պատվիրանների իր նախնական ենթահամակարգերով: Իմաստային այս կարևոր դաշտերի բառերի ծագումնաբանության հետազոտումը թույլ է տալիս վեր հանել հայկական ինքնության կայացման հիմքերից մեկը՝

հայերի լեզվամտածողության մեջ հնդեվրոպական նախալեզվից եկող կրոնական և օրենսդրական պատկերացումների զարգացման ուղղությունները, ազդեցությունները: Մինչ «Կանոնական արեւնսդրութեան» բառապաշարի՝ մեզ հետաքրքրող իմաստային դաշտի միավորների քննությունը անդրադառնանք Դավիթ Ալավկա Որդու վերաբերյալ բանասիրական աղբյուրներին, որովհետև դրանք ուղղորդող նշանակություն ունեն լեզվական փաստերի գիտական դասակարգման և նկարագրության համար:

Դավիթ Ալավկա Որդու կյանքի և գործունեության մասին սուղ փաստեր են պահպանվել, դրանք ամփոփ հիշատակված են «Մատենագիրք Հայոց»-ի ԺԶ հատորում: Նրա ծննդյան և մահվան թվականները հստակ չեն: «Մատենագիրք Հայոց»-ում նշված է, որ ծնվել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գանձակ քաղաքում ենթադրաբար 1065 թվականին: Իսկ Ա. Աբրահամյանն իր «Դավիթ Ալավկա որդու կանոնները» ընդարձակ ուսումնասիրության մեջ կարծում է, որ Ալավկա Որդին ծնվել է 12-րդ դարի 70-80-ական թվականներին: Աներկբա է, որ նա եղել է բազմակողմանի կրթված, ուսյալ այր: Դավթի գործունեության հիմնական ուղղություններն էին աստվածաբանությունը և մանկավարժությունը, նա ունեցել է վարդապետի աստիճան: Ժամանակակիցների հիշատակությունները վկայում են, որ Ալավկա Որդին ազդեցիկ և հեղինակավոր գործիչ է եղել. «...Կիրակոս Գանձակեցին նրան անուանում է «սուրբ լուսաւորիչ», իսկ ուշ շրջանի մատենագիր Ազարիա վարդապետ Սասնեցին՝ «կանոնատառ սուրբ վարդապետն Դաւիթ»¹: Սուրբ վարդապետ Դավթի հեղինակության և ազդեցիկ լինելու մասին է վկայում այն փաստը, որ նրա միջնորդությամբ է Ամենայն Հայոց կաթողիկոսությունը համաձայնել, որ Աղվանից կաթողիկոսական գահին հաստատվի Գագիկ եպիսկոպոսը: Ինչպես նշեցինք, մահվան ստույգ թվականը ևս վերականգնված չէ. Ա. Աբրահամյանը ենթադրում է, որ Դավիթ Ալավկա Որդին մահացած պետք է լինի 1139 թվականին, քանզի Դավիթ Ալավկա Որդին Աղվանից կաթողիկոսի համար իր հայտնի միջնորդությունը կատարել էր 1138 թվականին²:

«Կանոնական օրենսդրութիւն»-ը սկսվում է «Նախադրութիւն» կոչվող հատվածով, որին հաջորդում են ՌԷ (97) հոդվածները: Իրավունքների այս ժողովածուի գրման տարեթիվը 1138 թվականն է: Միջնադարյան տարբեր աղբյուրների վկայությամբ՝ մատյանն անմիջապես տարածում է գտել հայկական տարբեր գավառներում՝ դառնալով հասարակական-իրավական կյանքի կարգավորման ուղեցույց: Ալավկա Որդու մատյանը ձեռագրերում ունի նաև հետևյալ նախադուրը. «Դաւիթ վարդապետ Ալավկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմարս և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն

¹Մատենագիրք Հայոց, ԺԶ հատոր, Եր., 2012, էջ 675:

²Տե՛ս Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկաորդու «Կանոնները» (Ուսումնասիրություն և բնագիր), Էջ-միածին, 1952 սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 49:

ի քաղաքէն Գանձակայ»: Հենց այս մեջբերմամբ է Կիրակոս Գանձակեցին անդրադառնում այս կանոնագրքին: Դավիթ Վարդապետի ուսումնասիրողներից Կ. Կոստանյանը կասկածահարույց է համարում այս նախաբանի պատկանելությունը հեղինակի գրչին՝ ենթադրելով, թե դա Կիրակոս Գանձակեցու բարձր գնահատանքն է: Կ. Կոստանյանն իրավացիորեն նշում է. «Թուի թէ այս վերտառութիւնը Դավթի գրչից ելած չէ, որովհետև հազիւ թէ նա իրեն ներեր գրել «գեղեցկայարմարս և պիտանացու» իւր կանոնների ճակատին. այդ համապատասխան չէր լինիր հին վարդապետների բնաւորեալ համեստութեանը»³:

Դավիթն իր մատչանում համակարգում է միջնադարի այն հիմնական կանոնները, որոնք վերաբերում էին քաղաքացիական, ամուսնական և ընտանեական, ինչպես նաև քրեաիրավական հարաբերությունների բնագավառներին: Նրա աշխատության շնորհիվ մենք ծանոթանում ենք միջնադարյան հայ կենցաղին, մարդկանց վարք ու բարքին, այդ շրջանում տարածված հիմնական հանցատեսակներին և պատժամիջոցներին: Առանձին կանոններ կան, որոնք վերաբերում են քրիստոնեական եկեղեցու արարողակարգերին և տոներին, ընդսմին՝ Դավիթ օրենսդիրը մանրամասն անդրադառնում է հեթանոսական հավատքի պահպանված բազմաթիվ իրողությունների, հատկապես՝ հմայությունների և տարաբնույթ կախարդությունների: Նրա կանոնագիրքը հարուստ նյութ է ընձեռում՝ ծանոթանալու միջնադարյան հայ կյանքի ինչպես առաջընթացին, այնպես էլ վարքի վատթար դրսևորումներին, տարածված արատներին: Պետական մակարդակով Դավթի կանոնադրությունը ընդունված չի եղել, սակայն փաստ է, որ այն զգալի տարածում և կիրառում է ունեցել համայնքներում, վանքապատկան տարբեր շենքերում:

«Կանոնական արևնսդրութիւնը» կազմելիս Դավիթ Ալավկա Որդին օգտվել է տարբեր աղբյուրներից, առաջնայինը Աստվածաշունչ մատչանն էր, ապա՝ 5-11-րդ դար ընկած ժամանակահատվածում գործող հայ կանոնական և սովորութական իրավունքի մատչանները, մեր մատենագիրների՝ հատկապես փիլիսոփաների և դավանաբանների երկերը, ինչպես նաև բանահյուսական հարուստ նյութերը, որտեղ արտացոլված էր ժողովրդական արժեհամակարգը՝ հնագույն հավատալիքներով ու նախապաշարմունքներով:

Այժմ անդրադառնանք մեր ուսումնասիրության առարկա *օրենքի և կրոնի* իմաստային դաշտերի բառապաշարի ծագումնաբանությանը: Դավիթ օրենսդրի ապրած ժամանակաշրջանում օրենքը և կրոնը չէին տարանջատվում, դրանք իշխանության ընդհանուր համակարգի բաղկացուցիչներ էին: Հր. Աճառյանի բնորոշմամբ՝ «Կրոնի և կրոնական իշխանության հետ կապված էր օրենքը, հակառակ արդի հասկացողության, ուր օրենքը և դատաստանը աշխարհականացած՝

³ Կ. Կոստանյան, Դավթ վարդապետ Ալավկայ որդի, Ազգագրական հանդես, ԺԵ գիրք, Թիֆլիս, 1907, էջ 63:

քաղաքական իշխանության ձեռքն են անցել, այս բանը ցույց են տալիս լատ. lex «օրենք» և jus «իրավունք» բառերը, որոնց համագործը վեդայական հնդկերենում և զանդկերենում կրոնական անձանոթ բառեր են»⁴:

Ուսումնասիրելով Ալավկա Որդու օրենսգրքում վկայված իրավական և կրոնական դաշտերի բառային միավորները՝ տեսնում ենք, որ արմատների զգալի մասը բնիկ է, իսկ դրանցով կազմված կառույցները կենսունակ են հայերենի հետագա շրջաններում: Մեր առանձնացրած բնիկ բառերը հետևյալն են՝ *աղանդ, աղալթք, աղտեղեալ, ամենակալ, այրեցող, անասնագետ, անէծք, անիծանել, անիծեալ, անիծիչ, անիրաւ, անխոտելի, անմեղ/անմեղություն, անյոյս/անյոյսություն, անսուրբ, աստուածածնություն, աստուածամարտ, աստուածային, արատաւոր, արարիչ/արարչություն, արբեցող, արբեցություն, արուագետ/ արուագիտություն, բարի, գինըմպուք, գինըմպություն, գող/գողություն, երդմնահար, երդնուլ, երդումն, երեց, երկնային, երկնաւոր, գատիկ, իրաւ, իրաւապետ, խաչ, խաչահան, խաչահանու, խափանել, խոտելի, ծնդրադրություն, ծնդրածություն, ծննդություն, ծունդր/ծուննդր, կաշառք, կեանք, կրօն, կրօնաւոր, հաղորդ, հաղորդել, հայր, հեզ, հերձուածող, հոգի, մատաղ, մատաղամիս, մատնել, մատնեալ, մատնողք, մարդասէր, մեղաւոր, մեղուցեալ, մեղսաքաւիչ, մեղք, մեռեալ, մկրտել, մկրտություն, մոլեցուցանել, մոլորություն, մոլություն, յայտնություն, յանցանք, յանցաւորություն, յարբեցություն, յարություն, յոյս, նախանձ, շնալ, շնացող, շնություն, ողորմություն, ողջախոհություն, որկրամոլություն, ուրանալ, ուրացություն, չար, չարագործ, պիղծ, պիղծեալ, պղծեալ, պղծել, սէր, սուրբ, սպանանել/սպանել, սպանանող, սպանեալ, սպանող, սպանություն, սպառնալ, սպառնալիք, սրբել, սրբություն, վերաքաւություն, տաւն, տէր, տէրունեան, քաւեալ, քէն, քինախնդիր, օծել, օծեալ:*

Քննությունը սկսենք վերնագրի մաս կազմող **կրօն** բառից, որից բաղադրված **կրօնաւոր** բառը ևս հանդիպում է բնագրում: *Կրօնը* բացատրվում է որպես «կարգ, կանոն, վարք, օրենք, սովորություն, վարդապետություն, հաւատք»⁵: Ըստ Հր. Աճառյանի՝ այն կազմված է *կիր* (կրել) արմատից՝ *-օն* մասնիկով: *Կիր* բառի ծագման վերաբերյալ Հր. Աճառյանը տարբեր լեզվաբանների մի շարք վարկածներ է թվարկում, սակայն հստակ եզրակացության չի հանգում: Մենք ավելի հակված ենք Գ. Չահուկյանի առաջարկված տարբերակին, ըստ որի՝ այն բնիկ հնդեվրոպական բառ է՝ հնիւ.***g^wer-** «ծանր» արմատից⁶:

Ինչպես կրոնական բովանդակություն ունեցող այլ գործերում, այստեղ ևս առկա է **առնել-արարել** բայի կատարյալի հիմքից (*արար*) կազմված բառերով արտահայտված հակադրություն՝ **արարիչ-արարած**.*Այլ հեթանոսք n ՚չ ընտրեցին*

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 2013, էջ 19:

⁵ Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1926, էջ 685:

⁶ Տե՛ս Գ.Չահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 407:

զԱստուած ունել ի գիտութիւն բնական, ճանաչել **զԱրարիչն եւ զարարածս**, այլ դարձան պաշտեցին **զարարածս եւ ոչ զԱրարիչն**, որ է արհնեալ յաշտեանս⁷:

Այս երկու բառերի արմատը Հր. Աճառյանը բխեցնում է **առնել** բայից, որն ունի հետևյալ նշանակությունները՝ «անել, գործել, կատարել, ստեղծել, վերածել, շինել»⁸: Կատարյալի հիմքը *արար*-ն է, հրամայական ձևը՝ *արա՛*, որոնք ցույց են տալիս, թե բուն արմատը *ար*-ն է, որից՝ կրկնությամբ *արար*:

Արարիչ առհասարակ ընդունված է կոչել Աստծուն: Դավիթ Վարդապետն իր օրենագրքում կիրառել է *Աստուած* բառի մեծ թվով հոմանիշներ՝ *Աստուած, Արարիչ, Ամենակալ, Ամենակարող, Տէր, Տեառն Իսրայելի, Հայր, Հեզ, Մարդասէր*:

Հոմանշային շարքը կազմող բառերի մեջ գերակշռում են բնիկ ծագում ունեցողները՝ *Աստուած, Արարիչ, Ամենակալ, Տէր, Հայր, Հեզ և Մարդասէր*. մյուսներին կանդրադառնանք հաջորդիվ՝ ըստ ծագման աղբյուրի:

Աստուած բառի ստուգաբանական պատմությունը բավական հարուստ է. *Աստ* արմատը սկզբնապես համարվում էր իրանյան *azda*-ի իմաստային զարգացումը հայերենում, սակայն Գ. Ջահուկյանի իմաստաբանական և ծագումնաբանական հետազոտությունն ապացուցում է, որ *աստուած* բառը բարդություն է, որի երկու արմատներն էլ հայկական են. *աստ*-ը ծագում է «ամրություն, ուժ, զորություն» արմատի *աստիւ* տիպի մի ձևից և *ած* արմատից, որը հին հայերենում ուներ «բերել» իմաստը, այս արմատը հետագայում ձեռք է բերել ածանցային կիրառություն: Գ. Ջահուկյանի վերականգնմամբ, *-ած* ածանցը հնում ունեցել է ներգործական արժեք, ինչպես գթած(գթացող) և ողորմած(ողորմացող) ձևերում, ուստի *աստուած*-ը կարող էր նշանակել հաստող, ստեղծող, ըստ էության՝ ուժ և զորություն բերող: Ուշագրավ է Վ. Համբարձումյանի վերականգնումը, որը դարձյալ բառի հնդեվրոպական ծագումն է հաստատում, բայց Վ. Համբարձումյանն այն համարում է հնդեվրոպական դիցարանի գերագույն աստուծո անվան հայկական տարբերակ, որն իմաստային ընդլայնմամբ հասարակ անուն է դարձել: Ըստ այդմ՝ **աստուած** բառի հիմքում *Տուած* դիցանունն է, որը հնդեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի («լուսի», հետագայում՝ «աստծո») անվան հետ է կապված⁹: Հավելենք, որ այս բառի ձևիմաստային կառույցը բացատրում է վաղնջահայերենի բառակազմական հիմնական օրինաչափությունները:

Անցնենք հոմանշային շարքի հաջորդ բառին: Հր. Աճառյանը **տէր** բառի համար տալիս է այս բացատրությունը՝ «տէր, մեծ, իշխան, գլխաւոր, յատկապէս նաև՝

⁷ Մատենագիրք Հայոց, ԺԶ հատոր, էջ 680:

* Այսուհետ բնագրային հղումները կտրվեն շարադրանքում. մեր սկզբնաղբյուրն է Մատենագիրք հայոց, ԺԶ հատոր, Եր., 2012, էջ 627-726:

⁸ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 261:

⁹ Առավել մանրամասն տե՛ս Ն. Դիլբարյան, Կրոնի և հավատալիքների իմաստային դաշտին պատկանող բառերը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի գրաբար բնագրում// Հայագիտության հարցեր, Եր., 2021, էջ 209:

Աստուած»¹⁰: *Տէր*-ը՝ աստծու նշանակությամբ, վկայված է նաև մյուս բառարաններում:

Ծագում է ***տի-այր** ձևից, ավելի հինը՝ ***տէայր**, որ կազմված է **տէ-** և **այր** «մարդ» բառերից: *Տի* ձևից ունենք նաև *տիկին*, *տիեզերք* բառերը, որոնք հուշում են, որ այն նշանակում է «մեծ», սակայն ծագումը անձանոթ է: Գ. Ջահուկյանը *տի-* ձևի համար տալիս է չորս ստուգաբանական բացատրություն, որոնցից ոչ մեկը չի համապատասխանում այս բառի նշանակությանը¹¹:

Այր բառը Հր. Աճառյանի բառարանում տրված է երեք անգամ՝ հետևյալ նշանակություններով՝

1. «արու մարդ»,
2. «մարդ»,
3. «քարայր, մաղարա, ակերակ տեղեր»:

Հետաքրքիր է, որ *առն*, *յառնէ*, *արամբ* և մյուս հոլովական ձևերը Հր. Աճառյանը տալիս է «արու մարդ» նշանակությամբ, սակայն **Տէր** բառի դեպքում, որի սեռական հոլովը *տէառն* է, նա հղում է տալիս *այր*, այսինքն՝ «մարդ» ընդհանուր գաղափարին:

Բնիկ բառ է նաև գրվածքում **տէր** բառից կազմված **տէրունեան** ձևը, որը վկայված է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետ՝ ՆՀԲ) և «Հայերէն բացատրական բառարան» աղբյուրներում: Առաջինում բառի դիմաց հղում է տրված *Տէրունական* բառին: Մյուս բառարաններում բառը տրված է **տէրունի** ձևով, ընդ որում՝ «Միջին հայերենի բառարան»-ում այն ունի միայն *կիրակի* նշանակությունը, Դավթի կանոնագրքում այս իմաստը վկայված չէ. **տէրունեան** ձևն ունի *աստվածային* նշանակությունը. «*Ձի թէ առ հնովն եւ արիւնական այսպէս ունէր վասն անբան պատարագացն, եւ զամենեւին առանց մատուցանել ի սեղանն, ապա այս սեղան, որ վերընկալ է տէրունեան մարմնոյն, ոչ կամի զարատաւորն մատուցանել յանճար խորհուրդն*» (Էջ 691): Նշենք նաև, որ **տէրունեան**-ը **տէրունի** բառի հնագույն սեռական հոլովի ձևն է *եան* հոլովիչով: Այս *եան*-ը հիմնականում կիրառվում է հայկական ազգանուններ կազմելիս:

Վերադառնանք հումանշային շարքին. հաջորդը **Հայր** բառն է, որը առաջանում է հնիս. ***pátér** ձևից (սեռ. հօր <հար< հնիս. ***patrós**): Համատեքստում առաջին իսկ հայացքից ակնհայտ է, որ այն գործածված է *Աստված* նշանակությամբ, գրված է մեծատառ. *Քանզի Աստուած բարի է եւ ամենայն տուրք բարիք եւ պարգևք կատարեալք ի բարերար Հաւրէն իջեալ առ իւր արարածս* (Էջ679):

Շարքում վերջին երկու բառերի՝ *Հեզ*, *Մարդասէր*, կարծես միայն Աստծոն չվերաբերող ածականներ են, սակայն մեր բնագրում ածական համարվող այս բառերը ստացել են անձնանիշ գոյականի իմաստ՝ վերագրվելով Հիսուս Քրիստո-

¹⁰ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 401:

¹¹ Գ. Ջահուկյան, Հայերէն ստուգաբանական բառարան, էջ 728:

սին. «*Եւ եթէ խնդրէ ի նմանէ ծառայութեան պատիւ եւ փառս եւ նա ոչ կարէ հատուցանել, կամ պակասեցուցանէ ի պատուոյ նորա, կամ զընդդէմնս գործէ եւ փոխանակ տուրս տալոյ, զրկէ եւ նա ռիսացեալ հրապարակէ զխոստովանութիւնն, ոչ է աշակերտ **Հեզին** եւ **Մարդասիրին**, որ աղաթս առնէր ի վերայ խաչահանուացն*» (Էջ 703):

Հիսուս Քրիստոսի *մարդասէր* անվանումը սկզբունքային նշանակություն ունի. մարդասիրությունը քրիստոնեական կրոնի գլխավոր արժեքանական հիմքն է, բառանունը հաստատուն տեղ է գտել բնիկ բառերի շարքում, քանի որ և՛ **մարդ** (հնիւ. ***mr-tó**-ձևից), և՛ **սէր** (բնիկ հնդեվրոպական՝ ***k'ēi-ro-**՝ ***k'ēi-** «պատկել» արմատից) բառերը հայերենին են անցել հնդեվրոպական նախալեզվից:

Հետաքրքիր է, որ Հիսուս Քրիստոսը ներկայացվել է որպես **զՈրդի Մարդոյ**, թեև քրիստոնեական միաբնակության ընկալմամբ ընդունված է Քրիստոսին համարել Աստծո որդի: 714-րդ էջում Դավիթը գրում է. «...*վասն այնորիկ ի նոյն տաւնին մեծի առաջին մարտիրոսն Ստեփանոս, ի բանալ երկնից **զՈրդի Մարդոյ տեսանէր ընդ աջմէ Աստուծոյ, ուստի եւ գորդեգրութիւնն ընկալաւ...***»:

Ե՛վ *մարդ*, և՛ *որդի* (հնդեվրոպական ***portuo-** ***per-** «ծնել» արմատից) բառերը բնիկ ծագման են: Հոմանշային այս մեծ շարքի քննությունը ավարտենք **Տեսուն Աստուծոյ Ամենակալի** (Էջ 697) եռաբաղադրիչ կապակցությամբ, որը, խտացնելով Աստծուն վերագրվող հիմնական որակները, վերածվում է անվանման կատարյալ տարբերակի:

Բնագրում ունենք **տերունական տաւնք** բառակապակցությունը: Յուրաքանչյուր կրոն ունի իրեն բնորոշ տոները: Քրիստոնեությունը իր տոների որոշ մասը ժառանգել է հեթանոսությունից՝ դրանց տալով քրիստոնեական նշանակություն: **Տաւն**-ը բնիկ հայ բառ է՝ հնիւ. ***dapni-** ձևից, որ նշանակում էր «գոհ»: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ բառը կարող է *տալ* և *տուրք* բառերի արմատը լինել¹²: Դավիթ Ալավկա Որդին անդրադառնում է քրիստոնեական տոների մեծ մասին: Դրանցից բնիկ են **յարութեան** (հնդեվրոպական ***ar-** «հարմարեցնել» արմատից) տոներ, որը այլ կերպ կոչվում է **զատիկ**: Հր. Աճառյանը *զատիկ* բառը բացատրում է որպես «զենումն. գոհ»: Նա բերում է բառի ծագման վերաբերյալ մի շարք վարկածներ, որոնցից մենք առավել հակված ենք հետևյալին. «Տերվ. Նախալ. 80 գանել, զենուլ, պրս. zadan, պրս. jan, սանս. han ձևերի հետ՝ հնիւ. gha, ghan «զարնել, վիրաւորել» արմատից. ըստ այսմ զատիկ բուն նշանակում է «զենումն»¹³:

Տոնանունների մեջ բնիկ են նաև **յայտնութիւն**-ը և **խաչ**-ը: *Յայտնութիւն* բառի արմատի (*յայտ*) ծագման վերաբերյալ կասկածներ չկան, այն ընդունված է համարել բնիկ հնդեվրոպական բառ՝ ***ai-d-**՝ ***ai-** «այրել, լուսավորել» արմատից՝

¹² Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 442:

¹³ Նույն տեղը, էջ 82:

զանազան աճականներով¹⁴: Ալավկա Որդին տոների մասին խոսում է հիմնականում **ՁԹ, Ղ** գլուխներում:

Քրիստոնեական գլխավոր խորհրդանիշ **խաչը** ևս պատկանում է բնիկ բառերի շարքին (հնիւ. ***khēt-** «փայտ» արմատից)¹⁵: Իսկ խաչի՝ քրիստոնեական խորհրդանիշ դառնալը Քրիստոսի խաչելության հետևանքն է, բայց նշենք, որ խաչերի տարբեր տեսակները դեռևս վաղնջական հնդեվրոպական ժամանակներում պաշտամունքի խորհրդանիշ են եղել: Տոների ցանկում Ալավկա Որդին խոսում է նաև **խաչի** մասին: Տոնը այժմ հայտնի է *խաչվերաց* անվամբ, այս ձևը բնագրում վկայված չէ: Դավիթն իր շարադրանքում *խաչ* բառը ոչ միայն խորհրդանիշ, առարկա (խաչափայտ), այլև տոն իմաստով է գործածել. «*Բայց յաղագս չճաշակելոյ ի մտոյ յայս Գ (3) տաւնս, այս է՝ ճրագալուցին եւ վարդավառին եւ խաչին, որ ոչ հաղորդիմք ի մտոյ, բայց ի վաղին, որ է յայտնութեան ար, եւ յարութեան եւ վարդավառին*» (էջ 695):

«...Քրիստոս զմեզ ազատեաց ի կապանաց մահու եւ մեղաց եւ չարչարողացն իւր ի վերայ **խաչին** առնէր...» (էջ 694):

«*Իսկ եթէ զերդումնն ոչ պարզաբար ի խաչ եւ յեկեղեցի, բանիւ կամ ձեռն ղնելով, այլ...*» (որպես քրիստոնեության խորհրդանիշ) (էջ 696):

Այս բառից ունենք **խաչահանունք, խաչահանունս և խաչահանուաց** հոգնակի ուղիղ և թեք հոլովաձևերը: Առաջին երկու բառերի դեպքում հոգնակի վերջավորության ձևը հուշում է, որ եզակի ուղիղ ձևը *խաչահան*-ն է, իսկ երրորդ բառի դեպքում՝ *խաչահանու*-ն: Փաստորեն երկու ձևերն էլ հավասարաչափ գործածություն են ունեցել: Բառերի երկրորդ արմատի (*հան*) ծագումնաբանության վերաբերյալ առավել ընդունված է բնիկ տարբերակը:

Արդեն նշեցինք, որ *կրոնի* և *օրենքի* իմաստային դաշտերը միջնադարում չունեին հստակ սահմանագիծ: Դավիթ օրենսդիրն իր մատյանում մանրամասն անդրադարձել է մարդկային մեղքերին և առաքինություններին: Նման բառերի դեպքում դժվար է որոշել, թե իմաստային որ դաշտում դրանք կարող ենք ընդգրկել, քանի որ մեղքերը և հանցանքները, օրինակ, հավասարապես անընդունելի և պատժելի են թե՛ եկեղեցու կողմից, թե՛ դատարանի: Նման բառեր պարունակող իմաստաբանական ենթախմբերը պայմանականորեն կարելի է անվանել **մեղք և մեղսակրություն** եզրույթներով: Այս խմբերի մեջ մտնող բնիկ բառերից Դավթի մատյանում վկայված են *այրեցող, անասնազէտ, անէծք, անիծանել, անիծեալ, անիծիչ, արբեցող, արբեցութիւն, արուազէտ, արուագիտութիւն, գինըմպուք, գինըմպութիւն, գող, գողութիւն, երդմնահարք, խափանել, մատնեալ, մատնել, մատնողք, մեղաւոր, մեղուցեալ, մեղսաբարիչ, մեղք, մոլեցուցանել, մոլորութիւն, մոլութիւն, յանցանք, յանցաւորութիւն, յարբեցութիւն, նախանձ, շնայ, շնացող,*

¹⁴ Տե՛ս Գ. Չահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 547:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 317:

շնութիւն, որկրամոլութիւն, ուրանալ, ուրացութիւն, չար, չարագործ, պիղծ, պիղծեալ/պղծեալ, պղծել, սպանանել/սպանել, սպանանող, սպանեալ, սպանողք, սպանութիւն, սպառնալ, սպառնալիք, քէն, քինախնդիր հիմնաբառերը: Ստորև անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Բնիկ բառերի շարքում *մեղք* (հնիւ. **mel-** «սխալիլ, խաբել» արմատից) և *յանցանք* հոմանշային գույգը լայն կիրառություն ունի Դավթի օրենագրքում: Դրան գուգահեռ՝ ունենք նաև *մեղաւոր* և *մեղական* հոմանշային գույգը: Այդ արմատներին կազմված մյուս բառերը թվարկել ենք վերևում:

Որկրամոլութիւնը Աստվածաշնչում յոթ մահացու մեղքերից մեկն է համարվում. այս բառի երկու արմատները հայերենին են անցել հնդեվրոպական նախալեզվից՝ *որկոր* (հնիւ. ***g^oor-** **g^oor-**կրկնականից. հնիւ. ***ger-** արմատի զարգացումը տրված է կեր և կոկորդ բառերով) և *մոլ* (հնիւ. ***mol-** արմատից): Մյուս վեց մահացու մեղքերից մեկը նշանակող բառը՝ *ազահութիւնը* խառնանդամ է. այն կրննենք ավելի ուշ: *Նախանձ* և *ծուլութիւն* բառերի արմատների ծագումը անհայտ է, թեև Գ. Ջահուկյանը *նախանձ* բառի դեպքում հնարավոր է համարում կապը *խանդ* բառի հետ, որը բնիկ ծագում ունի¹⁶, իսկ մնացյալը՝ *բարկութիւն, բղջախոհութիւն, հպարտութիւն*, բնագրում վկայված չեն: *Բղջախոհութեանը* հակառակ՝ վկայված է **ողջախոհութիւն** բառը, որն արդեն քրիստոնէական յոթ առաքինություններից մեկն է: Այն կազմված է *ողջ* և *խոհ* արմատներից: Առաջինը բնիկ հայ. բառ է՝ կազմված՝ ջ մասնիկով պարզական ***ող** արմատից, որ ***ոյդ** ձևի միջնորդությամբ գալիս է հնիւ. ***olyo-** ձևից¹⁷: Երկրորդ արմատի վերաբերյալ կան տարբեր վարկածներ. Գ. Ջահուկյանը նշում է, որ այն հավանաբար փոխառություն է իրանական լեզուներից, սակայն Հր. Աճառյանը բերում է Հ. Պեդերսենի վարկածը, ըստ որի՝ բառը գուգորդվում է հայերեն **խրատ** բառի հետ և բխեցվում հնիւ. շրջյալ ***qhortu** արմատից¹⁸: Մենք հակված ենք այս ստուգաբանությանը, այդ իսկ պատճառով *ողջախոհությունը* ընդգրկում ենք բնիկ բառերի շարքում: Քրիստոնէական յոթ առաքինություններից բնագրում վկայված են նաև **սէրը, յոյսը** և **հաւատը**, որոնցից բնիկ բառերի շարքը համալրում են միայն առաջին երկուսը:

Յոյս արմատը վկայված է *անյուս* և *անյուսութիւն* բառերի կազմում. Դավիթ Ալավկա Ռոդին **ԼԷ** (37) գլուխը վերնագրել է «Վասն **անյուսից բռնաւորաց** որ գայցեն, եւ ես առ հարկի շնորհուկս արարի»: Ընդգծված բառակապակցությունը թույլ է տալիս կարծել, որ *յոյս* բառը ժխտական ածանցով ձեռք է բերել սաստկական նշանակություն՝ խորացնելով *բռնավոր* բառի խիստ բացասական իմաստը: Բացի այդ՝ 713-րդ էջում հանդիպում ենք հետևյալ մտքին. «Ապա թէ ոչ, **հեթանոսական անյուսութեան կցորդ է, ի սուրբ խորհրդոյն մի՛ գատցի**». սա թույլ է տալիս ենթա-

¹⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 560:

¹⁷ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 558:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 409:

դրել, որ Դավիթը մարդու մեջ հույսի բացակայությունը համարում է հեթանոսության բացասական ազդեցության հետևանք:

Հ. Պեդերսենը կարծում է որ բառի արմատը *ուս*-ն է՝ *ուս-անիլ* բառից: Գ. Ջահուկյանը այն բխեցնում է հնդեվրոպական՝ **peu-k-*, **peu-* «հուսալ» արմատից¹⁹: Մենք վստահելի ենք համարում հայ լեզվաբանի վերականգնումը:

Անդրադառնանք **անեծք** բառին, որը բնիկ հնդեվրոպական **oneid-s-* *(*o*)*neid* «նախատել, հանդիմանել» արմատից է²⁰: **Անեծք**-ը բառային գործողության անվանումն է, սակայն բոլոր ժամանակներում, հատկապես միջնադարում այն ծանրագույն պատիժ էր համարվում: Բերենք համապատասխան բնագրային օրինակ. «*Իսկ եթե սովորութեամբ անհոգացեալ ընդ անիծաւքն՝ որոշեսցի ի սուրբ խորհրդոյն եւ այլ մի՛ հաղորդեսցի*»: Այս գործողությունը բացասական էներգիայի ուղղորդման ծիսական հնագույն դրսևորում է, նշենք, որ Ալավկա Որդին գործածել է **անեծք**-ը և նրա գործիականի ձևը՝ **անիծիւք**-ը, որպես դատաւճիռ. «...որ յԱստուծոյ անարգեաց, այնպիսին ընդ անիծիւք է» (էջ 690): Ինչպես ակնհայտ է բնագրային մեջբերումներից, Դավիթի լեզվում առկա են միջինհայերենյան հոլովական գուգաձևությունները, որոնք գրաբարի հոլովման համակարգի կտրուկ փոփոխման ապացույցն են:

Ինչպես **անեծք** և **ծուևոր** բառերի օրինակով ենք տեսնում, միջին հայերենին բնորոշ անկանոնությունները միայն գործիական հոլովի դեպքում չէ, որ արտահայտված են, այլ նաև սեռական հոլովի կազմության տարբերակներում: Բնութագրական է **հոգի** բառի հարացույցը: Բնագրում բառը սեռական հոլովով հանդիպում է երկու ձևով՝ **հոգոյն** և **հոգույն**: Գրաբարում օրինաչափ և կիրառելի էր երկրորդ տարբերակը, որը **ի**-ով վերջացող բազմավանկ բառերի **ի+n=ւոյ** հնչյունափոխության հետևանք էր, ինչպես **գինի>գինւոյ, եկեղեցի>եկեղեցւոյն**: Միջին հայերենում բառավերջի **ի**-ն արդեն չէր հնչյունափոխվում, այլ ընկնում էր՝ **գինի>գինոյ, եկեղեցի>եկեղեցոյ**: Բերենք բնագրային համապատասխան օրինակներ. «... նոյնպէս ընտրեաց զուտելի եւ զանուտելի կերակուրն՝ նշանակ տուեալ նմա իմաստութեան **հոգույն**, զի ետես զազանս շաղաղակերս թէ անուտելի են», «Այլ կերակրեա եւ որ ընդ քեզ են ձեռն տուր եւ աննախանձաբար սփռել ի նոսա զշնորհս **Հոգոյն Սրբոյ...**» (էջ 693):

Այս բառի հոլովման գրաբարյան և միջինհայերենյան ձևերի մրցակցությունն ակնհայտ է ոչ միայն սեռական, այլև գործիական հոլովների պարագայում. «Այլ կոչեցեալքն ի քահանայութիւն ամենեւին սուրբ լիցին **հոգով** եւ մարմնով» (էջ 691): «Նա մկրտէ եւ լուսավորէ **հոգւովն սրբով**» (էջ 711):

Եկեղեցական-կրոնական արարողություններն ունեն հստակ կարգ: Սովորաբար ընդունված է աղոթել, ապաշխարել ծնկած, կամ ինչպես բնորոշում է Ալավկա

¹⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 554:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 56:

Որդին՝ *ծնորհի/ծնորհալ*: Հետաքրքիր է, որ այս երկու ձևերը նա գործածել է իրար հաջորդող նախադասություններում: Մա նշանակում է, որ երկուսն էլ հավասարարժեք տարածված ձևեր են եղել ժողովրդական լեզվում. «*Ապա թե կերեալ իցեն, քահանայն հանդերձ ընտանաւք Ը (8) աւր արտաքոյ կացցէ ի սուրբ խորհրդոյն կարդածութեամբ, իսկ այլ ժողովրդականք հինգ աւր, յաւուր Ճ (100) ծնորհի ապաշխարեցեն*»: *9 Իսկ եթէ որ գիտաց եւ անփոյտ արար աներկեղութեամբ, Իս (40) աւր պահեցէ Ճ (100) ծնորհալ*» (էջ 681):

Հատկանշական է նաև հետևյալը. *ծնորհի/ծնորհալ* ձևերից ենթադրվում է, որ բառի ուղիղ ձևը *ծունդր*-ն է, սակայն գրաբարի բառարաններում վկայված են միայն *ծունկ* և *ծունր* ձևերը: Իսկ «Միջին հայերենի բառարան»-ում *ծունր ասել* և *ծունր դնել* հարադրությունների կողքին արդեն առկա են *ծունդր ասել*, *ծունդր դնել* ձևերը²¹: Փաստորեն *ծունդր*-ը միջինհայերենյան ձև է. Գ. Ջահուկյանն իր ստուգաբանական բառարանում *ծունր* բառի կողքին՝ փակագծում, նշում է. «ուշ՝ *ծունդր*»²²: Այսինքն՝ առկա է ն-ից հետո դ հնչյունի հավելում համաբանությամբ՝ *մանր/մանդր, ծանր/ծանդր*:

Այս արմատից «Կանոնական օրենսդրութեան» մեջ ունենք երեք նորակազմություն, որոնք նույնպես բնիկ են: Խոսքը *ծնորածութիւն*, *ծնորադրութիւն* և *ծննդրութիւն* բառերի մասին է: ՆՀԲ-ում վկայված է *ծնրադրութիւն* ձևը, Ստ. Մալխասյանցի և Էդ. Աղայանի բառարաններում համապատասխանաբար՝ *ծնրադրութիւն/ծունրադրութիւն* և *ծնրադրություն/ծունրադրություն* տարբերակները: Այնպես որ *ծնորադրութիւնը* կարող ենք համարել նորակազմություն:

Ծնորածութիւն-ը կազմված է *ծունր/ծունդր*՝ հնդեվրոպական *g'onu-r- *g'enu- հիմքից և *ած*՝ հնի. *ag-* արմատից, իսկ *ծնորադրութիւնը*՝ *ծունր/ծունդր* և *դր/դիր* (հնդեվրոպական *dhē-n- *dhē- «դնել» նախաձևն է) բաղադրիչներից, որոնք ունեն բնիկ ծագում:

Հոլովական զուգաձևություններով աչքի է ընկնում նաև *կարգ* բառը, որի ծագումը անհայտ է: Բերենք բնագրային օրինակներ. «*Ապա թէ ի բաշխելն ծանիցի կատարեցէզպատարազն եւ ինքն մի արտաքոյ կացցէ սրբութեան անխափան նուլին կարգով*»:

Ապա թէ գիտութեամբ մատոյց, ի կարգէն լուծցի եւ ապաշխարեցէ այնու կարգաւ, որպէս կանոն հրամայեն» (էջ 688):

Կրոնական պատկերացումները, նախապաշարմունքները և օրենքները, որպես կանոն, նպատակ ունեն մարդկանց ոչ միայն տարանջատելու, այլև միավորելու: Քրիստոնեությունն իր պատվիրանների և բարոյահոգեբանական արժեքների համակարգով եկավ փոխարինելու հեթանոսական բազմաստվածությանը, այս իսկ պատճառով կրոնի և օրենքի իմաստային դաշտում բնիկ բառերի հետ մեկտեղ

²¹ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 1987, էջ 350:

²² Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 368:

ունենք համագործածական փոխառություններ: Քննենք Դավիթ օրենսդրի կիրառած փոխառյալ կազմությունները:

Ա. Իրանական փոխառություններ.

*ախտ, անաւրէն, անհաւատ, անպարտ, անվնաս, աշակերտ, աշխարհականաւրէն, աշխարհական, աւագան, աւետարան, արէնք, գրաւ, դատ, դատաստան, դել, դժոխք, դիւական, դրախտ, զենում, ժամ, ժամանոց, խոստովանական, կախարդ, կոյս, *հաւատ, *հաւատացեալ, հմայք, հրեշտակ, հրեշտակական, մահ, մահապարտ, մարգարէ, մարգարէական, մեհեան, նաւակատիք, նգովք, նշխար, ուխտ, պահպանական, պահք, պատարագ, պատիժ, պատուիրան, պարտական, սանդարամետական, սեղան, վարդապետ, վարդապետական, վնաս, տաճար, փառք:*

Բ. Հունական փոխառություններ.

բեմ, դիւթ, եպիսկոպոս, կանոն, մարտիրոս, պենդեկոստէ, սնդիկնոս, Քրիստոս:

Գ. Ասորական փոխառություններ.

արեղայ, Բելիար, փրկանք, սերորէ, սասանայ, հեթանոս, մծղնայ, քարոզ, քահանայ:

Դ. Ասուրակկադական փոխառություններ.

անկնունք, կնիք, կնունք:

Նախորդիվ արդեն անդրադարձել ենք քրիստոնեական առաքինություններից երեքին՝ *յոյս, սէր, ողջախոհութիւն*: Առաքինութիւններից մեկը՝ *հաւատը*, իրանական ծագում ունի: Թեև լեզվաբանները միանգամից չեն եկել այս եզրահանգման: Մերովրէ Տերվիշյանը հղում է տալիս *հաւան* բառին, իսկ Ղևոնդ Ալիշանը ենթադրում էր, որ բառը կարող է ծագած լինել *սկիզբ* նշանակող *հաւ* արմատից²³:

Գևորգ Ջահուկյանը *հաւատ* բառը նախապես դիտարկել է որպես բնիկ հնդեվրոպական **hau- *au-* «զգալ, հասկանալ» արմատից կազմված, սակայն հետագայում հանգել բառի իրանական աղբյուրից ծագման վարկածին՝ **fravat*: Մենք վերապահումով նշել ենք որպես իրանյան ծագման բառ, սակայն առավել հավանական ենք համարում բնիկ ծագումը՝ ելնելով ն՛ հնչյունական կազմից, ն՛ իմաստաբանական բաղադրիչից:

Բնագրում բազմիցս հանդիպում են պաշտամունքավայրեր նշանակող բառեր, ինչպիսիք են՝ *տաճար, մեհեան, եկեղեցի*: Առաջին երկուսը իրանյան փոխառություններ են: *Տաճարը* ծագել է հին պարսկերեն *tačara* ձևից, որը նախապես ունեցել է «պալատ, ապարանք», ինչպես նաև «ձմեռանոց, շտեմարան» իմաստները: Բառը հայերենում բազմիմաստ է. բերենք բառի բացատրությունները Ստ. Մալխասյանցի բառարանից՝

²³Տե՛ս Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնները, Եր., 2021, էջ 17:

1. Ապարանք, շքեղ բնակարան (թագաւորների, իշխանների):
2. Տան մէջ զարդարուն սենեակ ճաշկերոյթների համար, սեղանատուն:
3. (Կրօն.) Տուն աստծու, եկեղեցի:
4. Յատկապէս՝ Սողոմոնի շինած տաճարը Երուսաղէմում:
5. (Կրօն.) Հեթանոսական աստուածների տուն, կռատուն :
6. (Գուցէ կրակի տուն՝ ատրուշանի նշանակութիւնից մնացած) թոնիր:
7. Վանք, հիրանոց. անկելանոց: Հարուստ եւ առատաբաշխ տուն:
8. Սեղան, կուշունք, խրախճան:
9. Նման. (կրօն.) Մարմինը՝ իբրեւ բնակարան Հոգու:
10. (կրօն.) Մարիամ Աստուածածինը, որ իր արգանդում կրեց Քրիստոսին:

Այսպիսի բազմիմաստ բառերի նշանակությունը հստակ որոշելու համար անհրաժեշտ է դրանք ճշտել կիրառության մեջ՝ համատեքստում: Մեր բնագրում այն հոմանիշ է *եկեղեցու-ն*: Ընդհանրապէս Դավթի գրչին բնորոշ են կրկնաբանություններից խուսափելը և նույն բառի փոխարեն նրա հոմանիշների կիրառությունը: Ասվածի ապացույցն է հետևյալ նախադասությունը. «*Այլազգին թէ յեկեղեցի մտանիցէ առանց բռնութեան, ջուր ցանեալ աւել ածցեն ուր հասեալ իցէ ոտն կամ ձեռն նորա եւ ի պղծեալ տաճարին մարգարէական եւ առաքելական եւ աւետարան կարդասցեն եւ աղալթք զկնի*» (էջ 685):

Ի տարբերություն **տաճար** և **եկեղեցի** բառերի, որոնք գործածված էին բացառապէս քրիստոնէական պաշտամունքավայրի նշանակությամբ՝ **մեհեան** բառը հեթանոսական շրջանի պաշտամունքավայր է նշանակում: **Մեհեան** բառը ևս իրանյան փոխառություն է, սկզբնապէս նշանակել է Միհր աստծո պաշտամունքին նվիրված տաճար, ատրուշան, կրակատուն, ապա իմաստի ընդլայնմամբ՝ հեթանոսների կրոնական պաշտամունքի աղոթավայր, որը կարող է ձոնված լինել տարբեր աստվածների կամ կուռքերի: Նշենք, որ բառը ծագել է հենց Միհրի անունից՝ **mehyān** (<***mihra-** **kān**) «Միհրի, միհրական»²⁴: Բնագրում *մեհեան* բառին զուգահեռ՝ տեսնում ենք *կոռց տուն* բառակապակցությունը, որը *մեհեան*-ի հոմանիշն է. «... *եթէ ի մեհեանն դիւաց եւ ի տուն կոռց մտանեն եւ ի զոհից անտի ուտիցեն*» (էջ 688):

Կուռք բառի ծագումը հստակ չէ. Գ. Ջահուկյանը ծագումը բխեցնում է ուրարտերենից կամ ենթաշերտային մեկ այլ լեզվից: Մեր ընկալմամբ՝ այն հայերեն *կուռք* կռել բառարմատ է՝ **-ք** հոգնակերտով:

Կրոնական արարողությունների ժամանակ օգտագործվող իրեր, առարկաներ, նյութեր նշանակող բառերը ևս շատ են բնագրում. **ժամանոց** (էջ 685), **իւղ** (արբութեան) (էջ 685), **նշխար** (էջ 688) ևն:

Նշխար (պիլ. ***nišxvar** ձևից) բառը կանոնագրքում միջինհայերենյան հոլովական բազմաձևությամբ է վկայված: ՆՃԲ-ում նշված է, որ բառը պատկանում է *ի-ս*

²⁴ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 521:

խառն վերջադրական հոլովմանը: Սակայն բնագրում ունենք նաև ո հոլովմամբ ձևեր՝ *ի նշխարոյն, նշխարով* նն : Այսպես՝

«Իսկ ի դնել սպասուցն արածեսցի մուկն **ի նշխարոյն** եւ ո՛չ գիտացեալ քահանայն...»:

«Եթէ մկնանկ գինով կամ **նշխարով** յանգէտս որ պատարագ մատուցանէ...»:

«Այլ թէ երկուարեայ **նշխարաւ** որ մատոյց յանգէտս , Գ (3) շաբաթ արտաքոյ կացցէ նովին կարգան» (էջ 688):

Բնագրում կիրառված իրանյան ծագում ունեցող բառերը կազմում են հակա-նշային հետաքրքիր գույգեր: Քննությունը սկսենք **հրեշտակ** (պհլ. ***frestak** բառից) – **դև** (պհլ. ***dēv** բառից) գույգից: Առհասարակ բոլոր կրոններին է բնորոշ բարի և չար ոգիների տարբերակումը: Բնագրում էլ այս երկուսի հակադրությունը ակնհայտ է: Այս արմատներից կազմված բառերը (այս դեպքում՝ *հրեշտակական* և *դիւական*) գործածված են նույն նախադասությունների մեջ՝ որպես հակադիր երևույթներ բնութագրիչներ. «... եւ փոխանակ Քրիստոսի եւ **հր[եշտակաց դիւաց լինի բնակութիւն...**» (էջ 687): «Այլ փոխանակ **դիւական** խաղուցն **գհր[եշտակական գերգս երգել ...**» (էջ 688):

Հրեշտակ բառից բացի՝ բնագրում հանդիպել ենք նաև *սերոբէ* բառին, որը նշանակում է «առաջին կամ երկրորդ կարգի հրեշտակ»: Գ. Ջահուկյանի և Հր. Աճառյանի բառարաններում բառը տրված է **Սրո(վ)բէ** ձևով, թեև Հր. Աճառյանը նշում է, որ նոր գրականում միայն *սերովբէ* տարբերակն է ընդունված, որը նաև հատուկ անուն է²⁵: Այնուամենայնիվ, երկու լեզվաբաններն էլ պաշտպանում են բառի՝ ասորական աղբյուրներից փոխառված լինելու վարկածը:

Հաջորդ տարարմատ հականշային գույգը **դժոխք-դրախտ** է: Բնագրում վկայված է *դժոխք* բառի հոմանիշ *գեհեն* բառը, որը եբրայական ծագում ունի: *Դժոխք* բառը ծագում է իրանյան ***dužaxwa** ձևից, իսկ *դրախտի* համար որպես համեմատական՝ նշվում են միջին պարսկերեն. **draxt**, և պ. **diraxt** «ծառ» ձևերը: Վերջին բացատրությունը լավագույնս է ցույց տալիս դրախտի՝ որպես վայրի և կենաց ծառի կապը:

Դժոխքի մասին խոսելուց հետո չենք կարող չանդրադառնալ նաև *սանդարամետական(ք)* բառին: **Սանդարամետ** բառը հիմնականում երկու բացատրություն ունի՝

1. Երկրի խորքը, ստորերկրյա վիհ՝ անդունդ,
2. (կրոնական) Դժոխք:

Իսկ *սանդարամետական* բառը՝ երեք՝

1. ամ. Սանդարամետում եղող՝ ապրող, դժոխային,
2. Մեռած ու թաղվածները,

²⁵ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 284:

3. գ. Դժոխքի ոգի²⁶:

Բնագրում բառը գործածված է որպես գոյական՝ *դժոխքի ոգի* իմաստով. «*Եւ ի սանդարամետականաց իսկ վկայեալ, այն՝ որ գտիչք եւ արիչք են չարի եւ բարեացն սրբութեան խափանիչք*» (էջ 719):

Ինչ վերաբերում է համարմատ հականիշներին, ապա բնագրում որպես դատավճիռ այս կամ այն երևույթի համար շատ են գործածվում **վնաս** է - **անվնաս** է կառույցները: Ըստ Հր. Աճառյանի՝ *վնաս* բառը ծագում է պիլ. **vinas* «մեղք, յանցանք, ոճիր, պակասություն» ձևից²⁷: Սակայն Գ. Ջահուկյանը այն համարում է փոխառություն միջին պարսկերենից²⁸: Որպես դատավճիռ՝ բնագրում մեծ կիրառություն ունեն նաև հետևյալ ձևերը՝ *անպարտ է* (էջ 696), *անպարտական են* (էջ 686), *չէ պարտ* (էջ 686), *արեան պարտական են* (էջ 702), *մահապարտ է* (էջ 695), *ընդ խաչահանունս նդիցին* (էջ 703), *նզովեալ եղիցին* (էջ 686) և այլ համանման կայուն կապակցությունները:

Իրանյան փոխառություններում կան բառեր, որոնք գալիս են լրացնելու բնիկ բառերով կազմված հոմանշային շարքերը. առաջինը խոսենք կրոնական պաշտոնյաների (պաշտաւնեայք) մասին: *Կրօնաւոր* բնիկ ընդհանրական բառի ենթախմբում առկա են տարբեր ծագման մի շարք բառեր: Բնիկ է դրանցից մեկը՝ *երէց*-ը: Իրանական ծագում ունի *վարդապետ* բառը, իսկ ասորական փոխառություններ են *արեղայ* և *քահանայ* բառերը: Հունական փոխառություններից վկայված է *եպիսկոպոս*-ը: Բացի *կրօնաւոր*-ից՝ կա ևս մեկ ընդհանրական անվանում՝ *եկեղեցական*-ը, որը կքննենք հիբրիդ բառերի շարքում:

Մեր քննած բառերից շատերը բազմիմաստ են և միաժամանակ պատկանում են մի քանի իմաստային խմբերի: Բնագրում նույնպես երևում է դրանց բազմարժեքությունը: Վերցնենք **ժամ** բառը. «...թէ **ի ժամ** գիշերոյն իցէ, նոյն արինակ կատարել զկարգն...» (էջ 685):

«*Ապա թէ ի ժամ պատարագին մտցէ, խափանեն*» (էջ 685):

Այս նախադասություններում բառը գործածված է ժամանակի իմաստով, սակայն նույն էջում մենք հանդիպում ենք նաև հետևյալ նախադասությանը. «*Թէ յետ ժամուն մտանիցեն, նոյնպէս արասցեն*». այս դեպքում բառը արտահայտում է *պատարագի, ժամերգության* իմաստ: Ինչպես արդեն տեսանք, բնագրում կա նաև *պատարագ* բառը, որի հետ *ժամ*-ը կազմում է հոմանշային զույգ:

Մենք վերևում նշել էինք, որ իմաստային սահմանազատում չկա բնագրում վկայված *օրենք, կրոն* իմաստային դաշտերի բառերի միջև: Սակայն հարկ ենք համարում շեշտել, որ արդի արևելահայերենում արդեն սահմաններ կան դրանց միջև, քանի որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունները հստակ սահմանազատ-

²⁶ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, էջ 181:

²⁷ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 347:

²⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 713:

վում են իրարից: Ժամանակակից պետության կազմում դատաիրավական համակարգը իշխանության անկախ թևերից մեկն է, որն ուղղակի ենթակա չէ օրենսդիր և գործադիր իշխանություններին, իսկ եկեղեցին պետության բաղկացուցիչ չէ համաշխարհայնացման արդի աշխարհում, թեև պահպանում է իր գործուն ազդեցությունը: Չուտ օրենքի իմաստային դաշտին պատկանող մեր առանձնացրած բառերը մեծ մասամբ իրանյան ծագում ունեն և առավել հաճախ՝ միջին պարսկերենից են անցել հայերենին. *արևնք, դատ, դատաստան, դատապարտել, պատիժ* ևն: Քննենք **արևնք** բառը: Արմատն է *արեն*, որը փոխառություն է միջին պարսկերենից (**awdēn**): Միջին պարսկերենից է փոխառված նաև **դատ** բառը (**dāt**):

Բնագրում շատ են մեջբերումները Աստվածաշնչից, հիմնականում՝ Նոր կտակարանից: **ՁԴ** գլխում, որը քահանաներին անարգելու մասին է («Վասն այնոցիկ որ զքահանայն անարգեն»), կա մի հատված, որը մեջբերում է Ղուկաս ավետարանիչից. «*Որպէս ասաց Տէր մեր աշակերտացն. «Որ ձեզ անարգէ, զիս անարգէ»:* Քրիստոնեությունը տարածում էին առաքյալները, որոնք Քրիստոսի աշակերտներն էին: Բերված նախադասության մեջ *աշակերտ* բառը հավասարարժեք է *առաքյալ* բառին. երկու բառերն էլ վկայված են բնագրում: *Աշակերտ*-ը իրանական փոխառություն է (***ašākert**), իսկ *առաքեալ* բառի դեպքում քննությունը միանշանակ չէ. բառի արմատ ընդունված է համարել *աք*-ը (ոտք), որը ենթադրաբար կովկասյան փոխառություն է. *աքել* «ուղարկել» բառը կենդանի է մինչև այսօր Ձեյթունի բարբառում: Բերենք բնագրային օրինակը. *Իսկ հայր հարսին՝ զառաքելոց եւ զմարգարէից եւ ամենայն բազմութիւն հրեշտակաց սրբոց* (էջ 687):

Քրիստոնեության յոթ խորհուրդներից մեկը **մկրտությունն** է, որի բառանունը ընդգրկել ենք բնիկ բառերի շարքում: Այն ունի նաև այլ անվանում՝ *կնունք*, որը *կնիք* բառի հետ փոխառված է ասուրաակկադական աղբյուրներից: Գ. Ջահուկյանը *կնունք*-ը նոր ձև է համարում, իսկ Հր. Աճառյանի բառարանում նշվում է, որ այդ երկու ձևերն էլ ասուրական աղբյուրներում վկայված էին և երկու տարբերակով էլ անցել են հայերենին²⁹:

Մկրտության, կնունքի թեման ամբողջացնելու համար պետք է անդրադառնանք **անդիկնոս** (հուն. *súnteknos* համաձնունդ, կաթնեղբայր) բառին, որը հունական փոխառություն է, նշանակում է՝ *Մկրտութեան աւագանով որդիացած, կնքահայր եւ իւր սանք*³⁰: ՆՀԲ-ում բառը տրված է *սինտեկնոս* և *սնդեկնոս* ձևերով, Ստ. Մալխասյանցն իր բառարանում՝ *սնդիկնոս* բառհոդվածում հղում է տալիս *սինտեկնոս* տարբերակին, այսինքն՝ առավել գործածական է եղել հենց վերջին ձևը: Էդ. Աղայանի բառարանում այն արդեն վկայված չէ, իսկ միջին հայերենի բառարանում տրված է հենց *սնդիկնոս* ձևով, որը թույլ է տալիս ենթադրելու, որ

²⁹ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 608:

³⁰ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, էջ 215:

այն հենց միջինհայերենյան ձև է: Դավիթ Ալավկա Որդին **ԻԲ** կանոնում անդրադառնում է այս թեմային և արգելում բոլոր կրոնավորներին, բարեկամներին և սիրելիներին որդեգիր լինել մոր համար և կնքահայր՝ մանկան համար:

Բնիկ բառերի ենթագլխում հանգամանորեն քննեցինք *Սատուած* բառի հոմանշային շարքը: Այս ենթագլխում կանդրադառնանք դրա հականիշ *սատանայ* բառին: Այն ասորական փոխառություն է՝ **sātānā**, իսկ եբրայերենում (**sātān**) նշանակում է՝ «հակառակորդ, սատանա». «*Վասն որոյ երկպառակն նման է սատանայի եւ կցորդ ամենայն չարացն նորա, որ եւ ընդ նմին ժառանգեցէ զխոստացեալ պատիժն նորա սատանայ*» (էջ 708):

Սատանայի հոմանիշներից բնագրում հանդիպում ենք **Բելիար** բառին, որը համատեքստում հիշատակվում է Քրիստոսի հետ հակադրության մեջ, այդ հականիշների գույգին ուղիղ համեմատական է *հաւատացեալ-անհաւատ* հակադրությանը. «*Ձի զինչ բաժին է հաւատացելոյն ընդ անհաւատին եւ կամ Քրիստոսի ընդ Բելիարայ*» (էջ 687):

Հր. Աճառյանը նշում է, որ *բելիար* բառը եբրայերեն **bēli-ya'al** բառն է, որ կազմված է **bēli** «ոչ, ան-» եւ **ya'al** «օգուտ» բառերից. ուստի բուն նշանակում է «անպետք, անօգուտ, անպիտան», հետո նաև՝ «չար, վատ, ապականօղ» և վերագրվում է սատանային: Սակայն պարզ չէ, թե որ լեզվից է անցել հայերենին: Գ. Ջահուկյանը երկու վարկած է առաջ քաշում. բառը ծագել է հունարեն. **peiap** (*Beio*) կամ ասոր. **beliār** (*belial*) բառերից³¹:

Քննելով *օրենքի* և *կրոնի* իմաստային դաշտերի փոխառյալ բառերը՝ համոզվում ենք, որ թվով և կենսունակությամբ աչքի են ընկնում միայն իրանական ծագման բառերը: Իրանականին հաջորդում են հունական փոխառությունները, որոնք թեև շատ չեն, սակայն էական, հիմնական եզրույթներ են: Առավել սակավ են ասորական և ասուրաակկադական փոխառությունները: Արձանագրենք, որ այդ բառերի շարքերում կան մեծ թվով հականշային գույգեր, բազմիմաստ բառերը, որոնք, կախված համատեքստից, կարող են իմաստային տարաբժեքություն ունենալ: Պատմական զարգացման ընթացքում այս բառային միավորները իմաստաբանական փոփոխությունների գրեթե չեն ենթարկվել:

Բնագրում վկայված են մեր իմաստային դաշտերին պատկանող շատ բառեր, որոնք չենք կարող ընդգրկվել ո՛չ բնիկ և ո՛չ ինչ-որ այլ լեզվից փոխառյալ բառերի շարքում, քանի որ այդ բառերը կազմող բաղադրիչները տարբեր ծագում ունեն: Դրանք այսպես կոչված **խառնանդամ** կամ **հիբրիդ** բառերն են: Հիբրիդային բառերի պարագայում դիտարկել ենք երկու դեպք՝

1. բարդ բառերի արմատների ծագման անմիօրինակություն,
2. ածանցավոր և բարդածանցավոր բառերի բաղադրիչների ծագման անմիօրինակություն:

³¹Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 124:

Քանի որ առանձնացրած հիբրիդային բառերի թիվը զգալի է, մենք բոլորին չենք անդրադառնա: Կներկայացնենք բնութագրական և հաճախադեպ երկանդամ կազմությունները հետևյալ կադասարներով.

1. Բնիկ ծագման արմատ+ իրանական ծագման արմատ.

Աղուէսադրոշմ, աստուածաբնակ, աստուածահրաման, աստուածավաճառ:

2. Բնիկ ծագման արմատ+իրանական ածանց.

Աւետարան, բարոյական, սրբագան:

3. Իրանական ծագման արմատ+հնդեվրոպական ածանց.

Ազահութիւն, ապականութիւն, ապաշխարել, ապաշխարեալ, ապաշխարող, ապաշխարութիւն, արինաւոր, արինել, արինութիւն, ժամանոց, ժառանգաւոր, խոստովանել, խոստովանութիւն, կախարդութիւն, կուսութիւն, հմայութիւն, նզովեալ, պահանջել, պաշտել, պատրեալ, պատրող:

4. Իրանական ծագման արմատ+բնիկ արմատ.

Ախտամոլ, դիւակոչ, դիւահար, ժամհար, պատուիրանագանց:

5. Հունական ծագման արմատ+ բնիկ ծագման արմատ.

Նեոնագործ,կանոնագիծ, կանոնեալ:

6. Հունական ծագման արմատ+բնիկ ծագման ածանց.

Եկեղեցի:

7. Հունական ծագման արմատ+իրանական ծագման ածանց.

Քրիստոսական:

8. Ասորական ծագման արմատ+ բնիկ ծագման արմատ.

Կնքահայր:

9. Ասորական ծագման արմատ+ բնիկ ծագման ածանց.

Կնքել:

10. Ասորական ծագման արմատ+բնիկ ածանց.

Աբեղայութիւն, հեթանոսաբար, փրկական, քահանայութիւն, քարոզել:

11. Ասորական ծագման արմատ+իրանական ծագման արմատ.

Սատանայախաւս, քահանայապետ:

12. Ասորական ծագման արմատ+իրանական ծագման ածանց.

Քահանայական, հեթանոսական:

13. Եբրայական ծագում ունեցող արմատ+իրանական ծագում ունեցող ածանց.

Սողոմական:

14. Եբրայական ծագում ունեցող արմատ+բնիկ ծագում ունեցող ածանց.

Սողոմային, սողոմայեցի:

15. Որևէ անհայտ ծագման բաղադրիչ պարունակող բառեր.

Խորհրդական - բնիկ ծագման արմատ+անհայտ ծագման ածանց+իրանական ծագման ածանց,

Կարգալուծութիւն - անհայտ ծագման արմատ+բնիկ ծագման արմատ+բնիկ ծագման ածանց,

Նարատաներկութիւն - անհայտ ծագման արմատ+իրանական ծագման արմատ+բնիկ ծագման ածանց,

Աւագանաձոց - իրանական ծագման արմատ+անհայտ ծագման արմատ:

Պաշտամունքավայրերի անվանումներից *էկէղէցի* բառը խառնանդամ է: Հր. Աճառյանը պարզաբանել է. «Հայերէնի մէջ –**էցի** վերջավորութիւնը հայկական յարմարեցում է և ո՛չ թէ յունարէնի հարագատ տառադարձութիւն»³²: Բերենք բնութագրական օրինակ. «*Այլ թէ ոք իշացաւ **յէկէղէցոջն**, թէ ակամայ՝ Ը (Ց) աւր արտաքոյ, ապա թէ կամաւ անհոգացեալ՝ ամ մի*» (էջ 689) :

Տրամաբանական շղթայում մենք ներկայացրինք ամենատարածված կաղապարները երկբաղադրիչ բառերի դեպքում: Սակայն սրանք բավական չեն մեր ուսումնասիրած դաշտի բոլոր բառերը բնութագրելու համար: Քիչ չեն նաև բազմաբաղադրիչ բառերը, որոնցից մի քանիսին միայն կանդրադառնանք: Նախ նշենք բազմաբաղադրիչ խառնանդամ բառերից ամենակիրառականները՝ *ամենակարող, աստուածատեսակազոյն, արիինադրել, բռնադատել, դատապարտութիւն, կանոնագիրք, կնքահայրութիւն* ևն:

Քննությունը սկսենք *ամենակարող* բառից. առաջին բաղադրիչը՝ *ամեն*, հնագույն արմատական ձև է: Այս արմատի հետ կապված կա հնչյունական մի առանձնահատկություն. հայտնի է, որ առանձին գործածության դեպքում (թեև շատ քիչ վկայություններ կան) արմատը գրվում է է տառով, թե՛ Հր. Աճառյանի, թե՛ Գ. Ջահուկյանի բառարաններում հենց այդ գրությամբ է տրված, զուգահեռաբար նշվում է, թե Ոսկեդարում չկար *ամէն* բառը, այլ միայն *ամենայն*: Սակայն, ինչպես արձանագրում է Հր. Աճառյանը. «Այս բոլորը չեն խանգարիլ սակայն ընդունելու թէ բառիս արմատն է **ամէն**, որ յետնաբար սովորական գործածութիւն է ստացել... Մրա էլ հիմնական ձևն է **ամէն**. Բայց որովհետև հայերէնի օրենքներով վերջնաձայն **ն**-ից առաջ գտնուած **ե** դառնում է **է**. ուստի և **ամէն** դարձել է **ամէն**: Ուր որ է մտնում է բառի մէջ, այնտեղ **ե** ձայնը նորից երևան է գալիս. այսպէս հոլովման ժամանակ՝ սեռ. **ամենի, ամենից** և ածանցման մէջ...»³³: Հենց այս վերջին դեպքն էլ բացատրում է բառի գրությունը նաև Դավիթ Ալավկա Ռդդու գրքում:

Նշենք նաև, որ Գ. Ջահուկյանը բառը համարում է ծագած հնդեվրոպական ***sbmo-** ***sem-** «մեկ, միասին, հետ» արմատից՝ **-էն** ածանցով, սակայն մենք, հիմք ընդունելով Հր. Աճառյանի հիմնավորումները, *ամեն* բաղադրիչը ընդունում ենք որպէս պարզական արմատ և *ամենակարող* բառի համար տալիս ենք հետևյալ կաղապարը՝ *բնիկ ծագման արմատ+իրանական ծագման արմատ+ բնիկ ծագման ածանց*:

³² Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 717-718:

³³ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 153:

Անցնենք երկրորդ արմատին՝ *կար*, որը, ինչպես արդեն իսկ հուշում է մեր առաջարկած կաղապարը, իրանական ծագում ունի: Հր. Աճառյանը այս արմատի մայր ձևը կորուսյալ է համարում, իսկ Գ. Ջահուկյանը որպես համեմատություն բերում է պարթևական (**kari* «ակտիվություն») և միջին պարսկական (**kar* «ուժ ունենալ, ի վիճակի լինել, կարողանալ») ձևերը³⁴:

Անդրադառնանք նաև դերբայական *-ռդ* ածանցին: Որոշ լեզվաբաններ այն համարում են դերբայական վերջավորություն և ոչ թե ածանց: Գ. Ջահուկյանը *աւղ/ռղ* ձևը դիտարկում է որպես դերբայական ածանց, որը ծագում է հ.-ե. **tel-* ածանցի թեմատիկ **-tlo-* ձևից³⁵:

Բնիկ բառերը քննելիս՝ մենք անդրադարձանք յոթ մահացու մեղքերին: Դրանցից մեկը՝ *ազահութիւնը* խառնանդամ ծագման բառ է, քանի որ արմատը՝ *ազահ*, փոխառություն է իրանական աղբյուրներից (թեև նախաձևը որոշ չէ), իսկ ածանցը՝ *-ութիւն* հնդեվրոպական ծագում ունի:

Խառնանդամ բառերի մեջ տեղ է գտել մի շատ հետաքրքիր բառ ևս՝ **նեռնագործ**: Առաջին արմատի (*նեռն*) հոմանիշները քննել ենք փոխառյալ բառերի մեջ՝ *սատանայ*, *Բելիար*: **Նեռն**-ը հունական փոխառություն է, և՛ Հր. Աճառյանը, և՛ Գ. Ջահուկյանը այն համարում են **Ներոն** կայսեր անունից ծագած: Նեռի կամ դերաքրիստոսի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ղևոնդ Ալիշանը, որն այլ ստուգաբանություն է առաջարկել. «Սա ոչ թե դե է, այլ դիվաշունչ մի անձ, որ պիտի գա նախքան աշխարհի վախճանը՝ խաբելու մարդկանց և իրեն ներկայացնելու իբրև Քրիստոս, ինչպես արդեն եկել են այդպիսի խաբեբա Նեռեր՝ Հովհաննես Ավետարանիչի ասածի համաձայն, որի գրքում է միայն հիշվում սա, և ոմանք անվան մերձավորությունից կարծեցին, թե Ներոն կայսրն է: Բայց Նեռի խնդիրը այս իմաստով մեր գործին չի վերաբերում, այլ այն ենթադրությամբ միայն, թե հին ժամանակներում՝ հայերիս մեջ ճանաչված պիտի լինի այդ անունը կրող մի չար ոգի, և մեր թարգմանիչները այդ անունով են կոչել դերաքրիստոսին, ինչպես կոչել են նրան այլ ազգերն ու լեզուները, որ մերի նման անուն չունեն: Չար ոգու նշանակությունը գուշակվում է նաև միջին դարերի մի վարդապետի՝ չարագործ մարդկանց մասին նեռնագործ ասելուց»³⁶: Ինչպես տեսնում ենք, Ղևոնդ Ալիշանը հակված է այս անվան բնիկ ծագման վարկածին՝ ի հակադրություն Հր. Աճառյանի և Գ. Ջահուկյանի:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ հիբրիդային կազմությունները մեր քննած իմաստային դաշտում բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն: Երկրադադրիչ կազմությունների դեպքում ամենակենսունակ **իրանական ծագման արմատ+բնիկ ծագման ածանց** կաղապարն է:

³⁴ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանականբառարան, էջ 390:

³⁵ Նույն տեղում, էջ 801:

³⁶ Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնները, էջ 155:

Nnarine Dilbaryan - Legal and Religious Terms in the “Canonical Code” of David Vardapet.- In the Armenian literature of the XI-XII centuries, the book of laws "Canonical Code" compiled by the Monk David Son of Alavka occupies a special place. This most important work relating to legal thought and legislation in medieval literature is practically not studied from a linguistic point of view. Studying the lexical units of the semantic fields of law and religion in the “Canonical Code” by David Vardapet, we see that most of the roots and suffixes that form terms and concepts with the semantic meaning of law and religion are of Indo-European origin, they are productive even now in modern Eastern Armenian language. When compiling the "Canonical Code", David Son of Alavk used a number of sources - mainly the Bible, the works of Armenian chroniclers, philosophers and clergyman, as well as folklore materials, in which the national system of moral values, ancient beliefs and prejudices are clearly expressed.

The language of the Code, as Vardan Areveltsi, one of David's younger contemporaries, rightly noted, is "easily accessible." It occupies an intermediate position between Classical Armenian and Middle Armenian, which makes it possible to identify the process of transition from one literary language to another. This character of the language is due to the fact that, although David lived and worked in the Middle Ages, he received a high spiritual education, was a clergyman, was awarded the title of teacher-wardapet, and the language of education and science was the Ancient Armenian language.

The semantic fields of religion and law did not have a clear borders in the Middle Ages. David the legislator in his book mentioned in detail about human sins and virtues. In the case of analyzing such words, it is difficult to determine in which semantic field they can be included, because, for example, sins and crimes are equally unacceptable and punishable by both the church and the court. The semantic subgroup containing such concepts can be conditionally called "sin and crime". In this study, the main units of the semantic field of religion and law were considered by their etymology, the Indo-European units that form the core of the vocabulary were identified, then borrowings and hybrid formations. 46% of the units studied in these two semantic fields are native words, 25% are hybrids (with combinations of an Indo-European root or suffix and a borrowed root or suffix), 20% are Iranian, 4% are Greek and Syriac, and 1% are Akkadian.

The code, compiled by David Son of Alavk, shows that the Armenian language in the Middle Ages already had a rich and multifaceted legal and religious vocabulary.

Keywords: David Vardapet, "Canonical Code", XI-XII Centuries, Vocabulary, Legal and Religious Terms, Etymology, Word Formation.

Нарине Дилбарян - Правовые и религиозные термины в «Каноническом кодексе» Давида Вардапета.- В армянской литературе XI-XII веков особое место занимает составленная преподобным Давидом Сыном Алавкакнига законов «Канонический кодекс». Этот важнейший труд, относящийся к правовой мысли и законодательству в средневековой литературе практически не изучен с лингвистической точки зрения. Рассматривая лексические единицы семантических полей права и

религии в «Каноническом кодексе» Давида Вардапета, мы видим, что большинство корней и суффиксов, которые формируют термины и понятия с семантическим значением права и религии, имеют индоевропейское происхождение, они продуктивны и сейчас в современном восточноармянском языке. При составлении «Канонического кодекса» Давид Сын Алавка использовал ряд источников - в основном Библию, труды армянских летописцев, философов и священнослужителей, также фольклорные материалы, в которых ярко выражена национальная система нравственных ценностей, древние верования и предрассудки.

Язык Кодекса, как справедливо заметил Вардан Арвелци, один из младших современников Давида-законодателя, «легко доступный». Он занимает промежуточное положение между классическим армянским и среднеармянским, что позволяет выявить процесс перехода от одного литературного языка к другому. Такой характер языка обусловлен тем, что, хотя Давид жил и творил в средние века, он получил высокое духовное образование, был священнослужителем, удостоен звания учитель-вардапет, а языком обучения и науки был древнеармянский язык.

Семантические поля религии и права не имели в средние века четкой границы. Давид-законодатель в своей книге подробно говорит о человеческих грехах и добродетелях. В случае анализа таких слов трудно определить, в какое семантическое поле можно их включить, ведь, например, грехи и преступления одинаково недопустимы и наказуемы как церковью, так и судом. Семантическую подгруппу, содержащую такие понятия, условно можно назвать «грех и согрешения». В данном исследовании были рассмотрены основные единицы семантического поля религии и права по их этимологии, выделены индоевропейские единицы, которые составляют ядро лексики, затем заимствования и гибридные образования. 46 % единиц, исследованных в этих двух семантических полях, являются исконными словами, 25 % - гибридными (с сочетаниями индоевропейского корня или суффикса и заимствованного корня или суффикса), 20 % - иранскими, по 4 % - греческими и сирийскими и 1% аккадского происхождения.

Кодекс, составленный Давидом Сыном Алавка, показывает, что армянский язык в средние века уже имел богатую и многоплановую юридическую и религиозную лексику.

Ключевые слова: Давид Вардапет, " Канонический кодекс", XI-XII века, лексика, юридические и религиозные термины, этимология, словообразование.

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ԱՆՇԵՇՏ ԴԻՐՔՈՒՄ
ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՍՂՈՒՄԸ ՈՒՐԱՐՏԵՐԵՆՈՒՄ

DOI: 10.54412/93055-2023-43

Այվազյան Մարգիս

ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ,
ճարտարագետ տեխնոլոգ. sarayvaz@gmail.com

Բանալի բառեր. ուրարտերեն, հայերեն, հայագիտություն, հնչյունաբանություն, պատմական հնչյունափոխություն, ձայնավորների սղում, շեշտ:

Ուրարտերենի անվանական հիմքն և շեշտի կորստով պայմանավորված բնավոր ձայնավորների սղման դեպքերը: Անվանական հիմքը ուրարտերենում (որը, մեր կարծիքով, հնագույն հայերենի մի բարբառ է), իբրև կանոն, բնավոր է վերջանում է ձայնավորով (առնվազն՝ գրում): Դատելով եղած նյութից՝ ուրարտերենում զանազանվում են /i/, /i/ (կամ /iy/), /e/, /a/, /o/ և /u/ բնով հիմքերը:

/i/ հիմքով բառերն ամենամեծաթիվն են: Դրանցով կազմված բառերի ուղիղ ձևերը գրում ավարտվում են e-ով (վանկազիր՝ -C[onsonant]i/e(-e), -Ce(-e)), սակայն թեքվելիս կամ ածանցվելիս e-ի փոխարեն հանդես է գալիս i-ն, ինչպես՝ ulgu=še – ulgu=ši=ane, al(a)sui=še – al(a)sui=ši=ni=ne, gunu=še – gunu=ši=ie, ušti=pte – ušt=ipti=ne, ^mMinua=he – ^mMinua=hi=ne=le, sue – sui=ni=ne և այլն¹: Այս երևույթը պայմանավորված է շեշտահաջորդ դիրքում բառավերջի i ձայնավորի թուլացմամբ կամ անկմամբ²: Բացառություն են կազմում եզ. սեռականն ու պատկանելության -he ածանցով ձևերը, որոնց դեպքում վերոհիշյալ բառերը հանդես են գալիս e բնով, տե՛ս հետևյալ օրինակները՝ երկրորդ բացարձակ հոլով³ (այսուհետև՝ բաց2) ^{md}Sardure, երգատիվ հոլով (այսուհետև՝ երգ.) ^{md}Sarduri=še, սեռ. հոլով ^{md}Sardure=i, -he ածանցով ձև՝ ^{md}Sardure=he և այլն:

¹ Մասնավորապես, սրանց թվին են պատկանում՝ -he, -ibte, -use, -še ածանցներով կազմված (այս ածանցներով վերջացող) բոլոր բառերը: Եթե դրանք հոլովվում են կամ կրկնակի ածանցվում, ապա վերոնշյալ ածանցները հանդես են գալիս՝ -hi-, -ibti-, -usi-, -ši- տեսքով:

² Ուրարտերենին հասուկ է ուժային շարժական շեշտը, որը դրվում է նախավերջին վանկի վրա: Ուրարտական շեշտի և շեշտով պայմանավորված հնչյունափոխությունների մասին տե՛ս նաև Wilhelm G., The Ancient Languages of Asia Minor (Edited by Woodard R.), Urartian, chapter 10, Cambridge, 2008, p. 109, Այվազյան Ս., Ուրարտերեն, Երևան, 2013 (այսուհետև՝ Ուրարտերեն), էջ 21 և այլն:

³ Չնայած, որ ուրարտերենը ունի երգատիվ կառուցվածք, այնուամենայնիվ, այն ձևաբանորեն միայնակից տարբերակում է ոչ միայն անցողական և անանցողական բայերի ենթակաները (սուբյեկտներն), այլև անանցողական բայերի ենթական (սուբյեկտը)՝ անցողական բայերի ուղիղ խնդրից (օբյեկտից), ինչը բնորոշ է ուղղական-հայցական տիպի լեզուներին: Ըստ այդմ, այս երկու իրավիճակները միմյանցից տարբերելու նպատակով, մենք այստեղ կիրառում ենք առաջին բացարձակ (անանցողական բայերի ենթակայի հոլով, որ համապատասխանում է ուղղականին) և երկրորդ բացարձակ (ուղիղ խնդրի հոլով, որ համապատասխանում է հայցականին) անվանումները: Սրա մասին տե՛ս Ս. Ուրարտերեն, էջ 39, 59:

/i/ (կամ /iy/՝ պարզ չէ): Այս հիմքով բառերի թիվը մեծ չէ: Դրանք, ի տարբերություն /i/ բնով բառերի, վերոհիշյալ ձևերում պահպանում են իրենց հիմնային ձայնավորը, իսկ եզ. տրականում ստանում են -i=je վերջավորություն, որն ուշ շրջանի արձանագրություններում (Argište I-ից հետո) հաճախ գրվում է -i=ge⁴, ինչպես՝ բաց2. ebani(i) (/i-/ կամ /iy/), սեռ. ebani(i) (/i-/ կամ /iy/), տր./ուղևորական ebani=i/ge=(e)de (/i=y=(e)də/), բաց2. armuzi(i) (/i-/ կամ /iy/), սեռ./տր. armuzi=ge (/i=yə/), հոգ. բաց2. armuzi=le (գրում՝ ar-mu-zi-i-le) (/i=r/ կամ /iy=r/) և այլն:

/e/ հիմքով առայժմ վստահաբար կարելի է առանձնացնել թերևս միայն հետևյալ բառերը՝ 1) erele «արքա» (էրզ. erele=še, վանկագիր՝ e-re-li/e-e-še), 2) ule «ինչ-որ մեկը» (էրզ. ule=še, վանկագիր՝ u-li/e-e-še), 3) ale «այլ, իսկ, ևս» (հմմտ. նույն արմատից և -ke մասնիկից կազմված ale=ke «այլ մեկը» ձևի հետ): Թերևս /e/ բնին է պատկանում նաև -ine ածանցով վերջացող բառերը, որոնք եզ. տրականում ստանում են -ine (վանկագիր՝ -ni/e(-e), -ne(-e)) վերջավորությունը⁵:

/a/ բնին են պատկանում հիմնականում հատուկ անունները, ինչպես՝ ^dAdia, ^dAdaruta, ^dAša, ^mErimena, ^mMinua, ^{KUR}Baršua, ^{KUR}Eria, ^mKatarza և այլն: Վկայված են նաև մի շարք հասարակ անուններ, ինչպես՝ qi(u)ra /ki(w)ra/ «երկիր», qaburza /kawurja/ «կամուրջ», alzena /arjəna/ «ժայռ, քար» և այլն: Այս բնով բառերը եզակի թվի հոլովային վերջավորություններում ամենուր պահպանում են իրենց հիմնային ձայնավորը և միշտ հանդես են գալիս /a/ բնով: Ինչպես՝ եզ. առաջին բացարձակ (այսուհետև՝ բաց1) ^mMinua=ne, եզ. սեռ. ^mMinua=i (/a=y/), եզ. տր. ^mMinua=Ø (/a/), եզ. բցռ. ^mMinua=ne (/a=n/), եզ. էրզ. ^mMinua=še (/a=s/) և այլն: Մինչ այժմ հայտնի ուրատական տեքստերում, հոգնակի թվում a բնով բառերը միշտ հոլովվում են հոգնակիության -na/-ne- մասնիկների միջնորդությամբ՝ նույնպես պահպանելով հիմքակազմ /a/ ձայնավորը: Ինչպես՝ հոգ. բաց2. qaburza=ne=le /kawurja=ne=rə/ «կամուրջներ»:

/o/ հիմքով բառերը շատ չեն⁷ և հիմնականում հատուկ անուններ են, ինչպես՝ եզ. բաց2. ^dŠebitu (/o/), եզ. սեռ. ^dŠebitu=i (/o=y/), եզ. տր. ^dŠebitu=e (/o=ə/), եզ. սեռ.

⁴ Այս հանգամանքը ստիպում է մտածել, որ գրում առկա -i=(i/g)(-)-ի մեջ իրականում հնարավոր է տեսնել /iy/ երկբարբառը:

⁵ Ուրարտերենում բառերի ուղիղ ձևերը գրում վերջից հաճախ ստանում են հավելուրդային e, որի գործառույթը պարզ չէ, ինչպես՝ uie/ui, manae/mana, au(i)e/au, ebanie/beani և այլն:

⁶ Ուրարտերենում անունների հոգնակին կազմվում է ինչպես հոգնակիության -na/-ne-, այնպես էլ՝ -a/-e- մասնիկների միջնորդությամբ, որոնք հավելվում են անվան հիմքին. երկրորդ դեպքում՝ բնավոր ձայնավորի անկմամբ, ինչպես՝ եզ. բաց2. esi «տեղ, վայր», «ափ, շրջապատ» - եզ. նրզ. esia (esi=a), հոգ. նրզ. esa (< esi=a=a) (Ուրարտերեն, էջ 39):

⁷ Հին հայերենի n հոլովման բառերը, որոնք այդքան շատ են հին հայերենում, ուրարտերենում պատկանում են i հոլովմանը, այսինքն հիմքում ունեն i ձայնավորը, որը շեշտահաջորդ դիրքում թուլանում է (գրում արտացոլվում է e-ով), ինչպես՝ հին հայ. *ամր* «տուր»՝ սեռ. *ւրմ-յ* - ուր. *šure* (šuri-), հին հայ. *ծառ* «ծառ»՝ սեռ. *ծառմ-յ* - ուր. *šare* (*šari-) և այլն:

^{KUR}Šatiru=i (/o=y/), եզ. բցո. ^{KUR}Šatiru=ne (/o=nə/), եզ. բաց1. ^{URU}Tule/iḫu=ne (/o=nə/), եզ. սեռ. ^{URU}Tule/iḫu=i (/o=y/) և այլն:

/u/ հիմքով ունենք ընդամենը մի քանի հատուկ անուններ, որոնք եզ. սեռականում և տրականում, ի տարբերություն /o/ հիմքով բառերի, հոլովային ցուցիչ չեն ստանում՝ նշանառվում են Ø-ով⁸: Ուրարտերենում ունենք նաև /u/ հիմքին պատկանող երկու ընտանի կենդանիների անուններ (ուր. sulu /c'ulu/ «ցուլ» - հին հայերեն (այսուհետև՝ հհայ.) *ցուլ*, *-ուլ*, ուր. ultu /uḫtu/ «ուղտ» - հհայ. *ուղտ*, *-ու*):

Եթե ամփոփենք վերոնշյալը, ապա կարող ենք եզրակացնել, որ ուրարտերենում, ի հակադրություն հին հայերենի (գրաբարի), շեշտահաջորդ դիրքում բնավոր ձայնավորները պահպանվում են և չեն սղվում: Բացառություն են կազմում միայն /i/ բնով հիմքերը, որոնք շեշտահաջորդ դիրքում սղվում (թուլանում) են և գրի մեջ արտացոլվում են e-ով: Վերջինը, հավանաբար, արտասանվում էր՝ /ə/ կամ ընդհանրապես չէր արտասանվում: Այս փաստը համահունչ է նախագրաբարի համար առաջարկվող այն պնդմանը, ըստ որի, բնավոր /h-ի անկումը նախորդել է մյուս ձայնավորների անկմանը⁹: Այսինքն, ուրարտական շրջանում, շեշտահաջորդ դիրքում գտնվող բնավոր ձայնավորի սղման հայերենի օրենքը /h-ի համար արդեն գործում էր (առնվազն մասնակի), իսկ մյուս ձայնավորների համար՝ դեռ ոչ:

Շեշտի կորստով պայմանավորված՝ ձայնավորների սղման հնարավոր այլ դեպքեր ուրարտերենում:

Եթե նկատի առնենք ուրարտերենում /i/ բնավոր ձայնավորի սղման վերոնշյալ փաստը, ապա չի բացառվում, որ ուրարտերենում առկա են շեշտի տեղաշարժով պայմանավորված և հայերենին հատուկ՝ սղման (անկման) կամ հնչյունափոխության այլ դեպքեր ևս: Նման հնչյունափոխությունները կամ դրանց բացակայությունը պետք է, որ այս կամ այն կերպ արտացոլված լինեն ուրարտական տեքստերում: Դիտարկենք հին հայերենի համապատասխան հնչյունական օրենքները և փորձենք գտնել դրանց հնարավոր արտացոլումները կամ դրանց բացակայությունը ուրարտական տեքստերում:

ա) Երկու բաղաձայնների միջև գտնվող շեշտակորույս *m* հնչյունի սղում (անկում): Առկա են նման դիրքում *m* հնչյուն պարունակող հին հայերեն-ուրարտերեն հետևյալ հավանական համապատասխանությունները¹⁰. 1) ուր. *barzu/i=dibidu(ne)* /barju=/ «ինչ-որ շինություն (պարզ չէ թե՛ հատկապես ինչպիսի)» - հհայ. *բարձու՛ն-ք* «տաճարք, բազիկ, սեղանք» (< *բարձու/h-* < **bherg'h* «բարձր, վեր»), հմմտ. *բարձու՛մն* և սեռ. *բարձմա՛ն*, 2) ուր. *burganane* /burgananə/ «ամրոց,

⁸ Մրա մասին մանրամասն տե՛ս Այվազյան Ս., Ուրարտերեն-հայերեն, բառապաշար և պատմահամեմատական քերականություն, Երևան, 2008, էջ 171-172:

⁹ Sté u Bolognesi G., Ricerche sulla fonetica armena, Ricerche Linguistiche 3, 1954, p. 127; Godel R., An Introduction to the Study of Classical Armenian, Wiesbaden, 1975, p. 72 և այլն:

¹⁰ Սույն հոդվածում գործածված ուրարտերեն - հին հայերեն բառային համապատասխանությունները իրենց հղումներով տե՛ս Ուրարտերեն, էջ 78-116:

աշտարակ» - հհայ. *բուրգն* (սեռ. *բրգան*) «բուրգ, աշտարակ կամ նման բարձր շենք» (միջնորդավորված < հ.-ե. *bherg'h-hg ()), 3) ուր. *kurune* /kurunə/ «ետև, կող, թիկունք» - հհայ. *կուրն* (հոգ. *կրուն-ք*) «թիկունք, ետև, կողք, թև» (< *gu-r-no-s' *geu «ծոել, կամար կապել» արմատից ()), 4) ուր. *kure=le* /kure=rə/ «ոտքեր»¹¹ - հհայ. *կրուկ(ն)* «կրունկ» < **կուր-ուկն* (< հ.-ե. *gōr- ()), 5) ուր. *qaburza=ne=le* /kawurʃa=ne=rə/ «կամուրջներ» - հհայ. *կամուրջ*, սեռ. *կամրջի, կամրջաց (ի-ա)* «կամուրջ» (< **կամուրջա* < հ.-ե. *g^uobhur-jā), 6) ուր. (^է)*mure* /murə/ (հոգ. *mure=le* /mure=rə/) «ինչ-որ շինություն (հավանաբար՝ թաքստոց կամ ամբար)» - հհայ. *ա-մուր*¹² (սեռ. *ամրի, ամրոյ*) ած. «ամուր», գ. «ամուր տեղ, ամրոց, բերդ», հմմտ. նաև *ամր-ոց* «ամրոց, ամուր տեղ» (հ.-ե. < *moi-ro «փայտե կառույց» *mei «ամրացնել» արմատից), 7) ուր. *dudi /tuti/* (ուղևորական՝ *dudi=ge=edi*) «սահման, սահմանագլուխ, եզր, ծայր»¹³ - հհայ. *տուտն* (սեռ. *տտան*, հոգ. ուղղ. *տտուն-ք*) «ծայր, եզր, պոչ» (< հ.-ե. *dud «ծայր»), 8) ուր. *šure* /surə/ (բցո. *šuri=ne/∅*) «զենք, սուր» - հհայ. *սուր* (սեռ. *սրոյ*) «սուր» «սուր, հատու և այլն» (< հ.-ե. *k'ō-ro' *k'ō «սրել» արմատից), 9) ուր. *suṭuq-* /ṣutog- կամ *šutok-* «պոկել, անջատել» (°) - հհայ. *շտոգ-ան-ել* (< *շուտոգ- (°)) «բաժանել, քակել, պոկել, անջատել»¹⁴, թերևս նաև՝ 10) ուր. *gunu=še* /gunu=sə կամ *juṣu=sə/* «մարտ, կռիվ» - հհայ. **գ/ջ¹⁵ուն-*, հմմտ. *համա-ջուն-ջ, համա-ջն-ջ-ական* «ամեն ինչ կոտորող՝ ջնջող, ավերող», *ջին* «ծեծի մահակ», *ջն-ել* «թակել, մահակով ծեծել», *գան* «ծեծ» և այլն (< հ.-ե. *g^uhe/ēn- (ye/o), *g^uho/ōn- (ye/o) «խփել, ծեծել»), 11) ուր. *suwi(-d-)/juwi(-t)-/* «տեղաշարժել, շեղել, հեռացնել», «(ետ)շարժել» - հհայ. **ձուզի-* (հմմտ.՝ *ձիզ, -ի* «ամուր; երկար; նետ», *ձգ(-տ)-ել/իմ* «քաշել, ձգել; քարշել;

¹¹ «Ոտքեր» թարգմանությունը մոտավոր է՝ արված համաձայն «(նա) ընկավ գետին, բունեց (°) (արքայի) *kur-երը*» դրվագի ընդհանուր իմաստի:

¹² Ս.Պետրոսյանը առաջարկում է «անձավ» թարգմանությունը՝ այն կապելով հհայ. *մորի* «անձավ, կաղաղ, որջ» բառաձևի հետ [Պետրոսյան Ս., «Շիրակա Անբարք»-ի շուրջ, ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, №8, էջ 73-78]:

¹³ Ի. Դյակոնովը թարգմանում է «սահմանաքար» հենվելով ... II kape BABBAR-ne : NINDA^{MEŠ} n=un=a=le pare : ^{KUR}Arteni=e dudi=ge=edi [KYKH 520 л.с. 10-11] դրվագի վրա, որը նա թարգմանում է «... 2 'կապ' (կապիճ) սպիտակ հաց բերվեց (բառացի՝ հասան) մինչև (երկիր) Արտենիի սահմանային սյունը (սահմանաքար)» [Дьяконов И., Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963, с. 71,88]: Սակայն հասկանալի չէ, թե բերված դրվագում *pare ... dudi=ge=edi* (ուղևորական հոլով՝ *dudi-ից*) ինչու պետք է թարգմանել «մինչև ... սահմանային սյունը», մանավանդ որ *dudi-ն* չունի քարե առարկաները բնորոշող NA₄ որոշիչ նշանը: Շատ ավելի բնական է *pare ... dudi-ն* այստեղ ուղղակի թարգմանել «մինչև ... սահմանը, սահմանագլուխը, եզրը, ծայրը», իսկ դրվագն ամբողջությամբ՝ «... 2 'կապ' (կապիճ) սպիտակ հաց հասավ (բերվեց) մինչև (երկիր) Արտենիի սահմանագլուխը/եզրը/ծայրը (բառացի՝ տուտը)»:

¹⁴ Ամալյան Հ., Բառգիրք հայոց, Երևան, 1975, էջ 252:

¹⁵ Ուրարտ. *g* նշանը կարող է արտացոլել, ինչպես /g/, այնպես էլ /j/ հնչյունները: Ըստ այդմ, պարզ չէ, թե այստեղ դրանցից հատկապես որն է պետք վերականգնել: Եթե հնարավոր է, որ հհայ. *-ջուն-ջ-ով* կազմություններում առաջին *ջ-ն* երկրորդի ազդեցությամբ հետագա հնչյունափոխության արդյունք չէ, ապա ուր. *gunuše-ի* համար թերևս կարելի է առաջարկել հհայ. *ջուն-* արմատը: Հակառակ դեպքում նախընտրելի է **գուն-* չափապանված (հետագայում հնչյունափոխված) տարբերակը (ձայնադարձը):

դուրս/ներս քաշել; տարածել; շարտել; նետել և այլն») (< h.-ե. *g'hō-ϣ < *g'hē(i) (°)) (վերջին երկուսի դեպքում հին հայերենում վկայված ձևերի դիմաց ուրարտերենում հավանաբար առկա են նույն արմատների ձայնադարձները), 12) ուր. muru=muria(=)hine /muro=muria=xə/ «մուր, ծուխ կամ փոշի» - հիայ. *մուր*, -*ոյ* «ծուխ, ծխի և կրակի մրուր», *մրուր* (< **մուր-մուր*) «նստվածք, դիրտ, տիղմ, «օղի պղտորություն, փոթորիկ» և *մրրիկ* (< **մուր-մուր-իկ*) «ծուխ, գոլորշի; մեզ, մշուշ, ամպ», 13) ուր. dur(u)=b- /dur(u)=b-/ «ապստամբել» - հիայ. *դր-անջ-ել* «ապստամբել», որտեղ բուն արմատը *դր*-ն է, հմտ. *վտար-անջ-ել* «ապստամբել, հեռանալ իր իշխանավորից»: Ուր. ձևը հուշում է, որ *դր-անջ*-ի հին ձևը պետք է լինի **դուր-անջ*-ը: Իր հերթին *վտար-ել* «դուրս մղել, դուրս քշել, հեռացնել» բայի *վտար*- արմատը, մեզ հուշում է, որ *դր-անջ-ել* բայի *դր*- արմատի մեջ կարող է թաքնված լինի հիայ. *դուր/ո* «դուր; դուրս» բառը՝ «դուրս» իմաստով:

Ինչպես երևում է բերված օրինակներից, ուրարտերենում երկու բաղաձայնների միջև գտնվող /ս/ ձայնավորը, անկախ շեշտի դիրքից, մնում է անփոփոխ (համենայնդեպս՝ գրում):

բ) Շեշտակորույս է հնչյունի (երկբարբառի) փոփոխումը բաղաձայնին նախորդող դիրքում: Հին հայերենի է ձայնավորը (երկբարբառը) ուրարտական գրում փոխանցվում է երկակի՝ ei-ով կամ e/i-ով: Մեզ են հասել ei-ով փոխանցման հետևյալ օրինակները. 1) ուր. keid=an- /keyt=an-/ (վկայված է նաև ki/ed=an- /ki/et=an-/ տարբերակը) «(գորք) ուղարկել հակառակորդի դեմ» կամ «(գորք) հավաքել, կենտրոնացնել» - հիայ. *կէտ* (սեռ. *կէտի* / *կիտի*) «(նպատակա)կէտ, նշան(ակէտ), թիրախ; կենտրոն; և այլն», *կիտի* «մարտի տեղ կամ նպատակ» (< *geid (°)), 2) ուր. ^(L) aueiti=ne /aweti=nə/ «ավետաբեր (քուրմ/տաճարական) (°)»¹⁶, «ավետիս, ողջույն, պարզև, խոստում» (°) - հիայ. *աւէտ/աւետ*, *աւետի-ս/ք* (սեռ. *աւետեաց*) «ավետիս, (բարի) լուր, ողջույն, պարզև, խոստում» (< *aueid- «խոսել»), թերևս նաև՝ 3) ուր. ei=ardi=še /ey=ardi=sə/ «արդարություն, արդարամտություն» (°) (թարգմանությունը մերն է, հմտ. ուր. ardi=še «կարգ, կանոն, իշխանություն» - հիայ. *արդ*, -*ի* «ձև, կարգ, կանոն և այլն») ¹⁷ - հիայ. *է-արդ-ն-ա-պէս* «արդարապես»¹⁸: Մյուս կողմից, ունենք

¹⁶ Բերված թարգմանությունը մերն է, տե՛ս Ayvazyan S., *Urartian-Armenian: Lexicon and Comparative-Historical Grammar*, (այսուհետև՝ UrAr), Yerevan, 2011, p. 39, 63: Ն.Հարությունյանը թարգմանում է «տաճարի ինչ-որ սպասավոր, քրմական դաս» [Арутюнян Н., Новые урартские надписи Кармир-Блура, Ереван, 1966, с. 44], իսկ Մ.Սալվինին՝ «գորք, զինվորներ» (°) [Salvini M., Una stele di Rusa III Erimenahi dalla zona di Van, Studi micenei ed Egeo - Anatolici, XLIV/1, 2002, p. 123, 130]:

¹⁷ Ei=ardi=še-ն վկայված է ուրարտական արքաների կողմից աստվածներից հայցվող՝ շնորհների, պարզևների շարքում՝ ողջության (ulgu=še), երջանկության (pišu=še), մեծության (al(a)sui=še) և առնական ուժի (°) (arni usma=še) հետ միասին: Այս ei=ardi=še-ի համար Մ.Սալվինին առաջարկում է «առյուծի ուժ» (°) [Salvini M., Wegner I., Einführung in die urartäische Sprache, Wiesbaden, 2014, s. 109], Բ.Դյակոնովն՝ «ողորմություն (°), շնորհ (°), բարեգործություն (°)» [Дьяконов И., Древний Восток, № 5, 1988, с. 166] թարգմանությունները: Ն.Հարությունյանն այն կարող է անջատ՝ իբրև երկու անկախ բառեր (eia ardi=še):

¹⁸ Ամալյան Հ., Բառգիրք հայոց, Երևան, 1975, էջ 107:

հին հայերենի նույն ձայնավորի (երկբարբառի) ուրարտերենում i-ով արտացոլման հետևյալ հնարավոր օրինակները՝ 4) ուր. *šiš-* /cis-/ «ծես իրականացնել» (օ) - հհայ. *ծէս* (սեռ. *ծիսի*), *ծիս-ական*, 5) ուր. *izi-* /iji-/ «իջեցնել»¹⁹ - հհայ. *էջ* (սեռ. *իջի*), *իջ-եց-ուց-ան-ել*, 6) ուր. *qis-* /kis-/ «պակասեցնել, նվազեցնել» - հհայ. *կէս*, *կիս-աց-ուց-ան-ել* «կիսել, պակասեցնել, նվազեցնել», և այլն:

Եթե նկատի առնենք այն փաստը, որ հին հայերենի *ա* ձայնավորն ուրարտական տեքստերում բացի *a*-ից հաճախ փոխանցվում է նաև *e*-ով (օրինակ՝ ուր. *alzena* /arjəna/ «ծայր, մեծ քար» - հհայ. *արձան* «մեծ քար», ուր. *šerabae* /cəraw=aə/ «անջրդի (հող)» - հհայ. *ծարաւ* «ծարավ, փափագ (նաև հողը)», ուր. *zeld-* /jərd-/ «կրճատել, նեղ դարձնել, փոքրացնել (թշնամի երկիրը)» - հհայ. *ջարդ-ել* «ջարդել, փոքրացնել, կրճատել», ուր. *Uelekuni* /Welə'uni-/ - հհայ. *Գեղա(ր)քունի-ք* և այլն²⁰), ապա նշված օրինակներին թերևս կարելի է հավելել նաև հետևյալը՝ 7) ուր. *pišu=še* /pico=sə/ «ուրախություն, երջանկություն», *piša-* /pica-/ «ուրախանալ» - հհայ. *պայծառ* «պայծառ, լուսավոր»²¹ նաև «ուրախ, զվարթ, խնդուն, երջանիկ»²², *պայծառացուցանել* «լուսավորել», «վայելչացնել, զարդարել», «ուրախություն՝ բավականություն պատճառել, փառավորել»²³ և այլն²⁴ (հավանաբար հհայ. *պայծառ*-ի բարբառային մի

¹⁹ Բերված թարգմանությունը մերն է, տե՛ս Ուրարտերեն, էջ 93: Այլ հեղինակներն առաջարկում են «հրամայել(օ), կարգադրել(օ) ենթադրական թարգմանությունը, տե՛ս, օրինակ, Меликишвили Г., Урартские клинообразные надписи, Москва, 1960, с. 399; Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН), Ереван, 2001, с. 450 և այլն: Այն վկայված է հետևյալ դրվագներում՝ *šuke* ^dHaldi=še izi=d=u=ne ar=u=me «šuke Հալդին izi-արեց, տվեց-ինձ» [КУКН 406/7_{л.с.43-44/31-32} / Salvini M. Corpus dei Testi Urartei, I, 2008 (այսուհետև՝ СТУ) A 11-1/2_{43-44/31-32}], *šuke* ^dHaldi=še izi=(d)=u=ne ieše zad=u=be «šuke Հալդին izi-արեց, ես արեցի» [КУКН 427a₃,391₂₃₋₂₄ / СТУ A 14-2 R₀₂₀₋₂₂], և [...] A(?)^{MEŠ} i(?)zi=d=ul=i=ne hūbi=g[i](?)=ne «(օ)» [КУКН 406 o.c.23-24]: Մեր առաջարկությունը հիմնվում է վերջին դրվագի վրա, որտեղ խոսվում է ջրերն izi-անելու և ինչ-որ հովտի մասին: «Իջեցնել» բայը կարող է ընդունելի լինել նաև մյուս դրվագների համար՝ փոխարինելով առաջարկվող «հրամայել (օ), կարգադրել (օ)» ենթադրական իմաստին («հրամանը/ կարգադրությունը» նույնպես իջեցվում է՝ վերից վար): Սակայն, նշված վերջին դրվագի ընթերցումը հուսալի չէ՝ վնասված լինելու պատճառով: Այսպես, Մ.Սավլինին այդ դրվագում չի տեսնում A^{MEŠ} «ջրեր» գաղափարագիրը և այն ընթերցում է՝ [.....] iziduline hūbišine [СТУ A 11-2 V₀₂₃₋₂₄]: Մեր ձեռքի տակ եղած բնագրի պատճենում (լուսանկար), վատ որակի պատճառով, մեզ հետաքրքրող հատվածում ոչինչ չի գանազանվում: Ուստի այժմ դժվարանում ենք ճշգրտել սույն հատվածի ընթերցումը:

²⁰ Տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 472; ՄrAr, էջ 24; Ուրարտերեն, էջ 24-25 և այլն:

²¹ Աղաջանյան Ս., Բնիկ հայկական թագավորների թագավորության շրջանը, Արարատյան թագավորությունում, Երևան, 2012, էջ 96:

²² Տե՛ր Խաչատուրեան Ա., ..., Հայոց լեզուի նոր բառարան, հ. Բ, Պէյրութ, էջ 649:

²³ Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, Երևան, 2000, հ. Բ, էջ 384:

²⁴ Ընդհանրապես, լեզուներում «ուրախ, զվարթ» իմաստը հաճախ գալիս է հենց «փայլուն, լուսավոր» իմաստից, տե՛ս, օրինակ՝ հուն. *φαιδρός* «պայծառ, լուսավոր» նաև «զվարթ», լիտվ. *giēdras, gaidrūs* «ուրախ» նաև «մաքուր, պայծառ», անգլ. *glad* «ուրախ» և «պայծառ», հ.-ե. *gēl-, gēle-, gēl* «պայծառ, փայլուն, շողալ, ուրախ» (այս արմատից են հհայ. *ծաղ(ր)*, *ծի-ծաղ* բառերը) [Pokorny J., Indogermanisches Etymologisches Wörterbuch, Band I, Bern und München, 1959, s. 366-367] և այլն:

տարբերակ է *ալժ* «կայծ, փայլուն» բառաձևը²⁵: Բերված բոլոր օրինակներում բաց վանկում գտնվող *է*-ի համար ունենք հետևյալ համապատասխանությունը.

ուր. *ei=ardi=še* [ey=ardi=sə] - հիայ. *է-արդ- (է-արդ-ն-ա-պէս)* (°):

Իսկ բաղաձայնին նախորդող դիրքում գտնվող *է*-ի համար ունենք հետևյալ օրինակները.

ուրարտերեն (անշեշտ)	հին (շեշտահար դիրք)	հայերեն (անշեշտ դիրք)
<i>izi-</i> [iʃi-]	- է՛ջ	իջի՛, իջ-,
<i>šiš-</i> [cis-]	-ծէ՛ւ	ծիսի՛, ծիս-,
<i>qis-</i> [kis-]	- կէ՛ւ	կիսի՛, կիս-
<i>keid=an-</i> [keit=an-]	- կէ՛տ, կե՛տ	կիտի՛, կետ-,
<i>ke/id=an-</i> [ke/it=an-]	-"-	-"-,
<i>auēiti=ne</i> [aweyti=nə]	- աւէ՛տ, աւե՛տ,	աւետ-,
<i>այ/է</i> - հերթագայմամբ		
<i>piš-</i> [pic-]	- պայծառ [բրբ. պեծ/պեծ] (°),	

Ինչպես տեսնում ենք, բոլոր դեպքերում նախաբաղաձայնային անշեշտ *է*-ի սղումից առաջացած հիայ. *ի*-ի դիմաց ուրարտերենում առկա է /i/: Բացառություն են կազմում ուր. *auēiti=ne* գոյականը և *keid=an-* բայը²⁶, սակայն, նախ ուրարտերենում *keid=an-*-ի կողքին առկա է նաև *kid=an-* (կամ *ked=an-*՝ պարզ չէ) տարբերակը, և երկրորդ՝ հիայ.-ում *կէտ*-ի և *աւէտ*-ին զուգահեռ ունենք նաև *կետ* և *աւետ* ձևերը (*աւէտ/աւետ-ն* ածանցումներում վկայված է միայն *աւետ*- ձևով՝ առանց *է > ի* փոփոխության): Նման պատկերը վկայում է այն մասին, որ հին հայերենի՝ շեշտից կախված *է > ի* (որոշ դեպքերում՝ *է > է*) հնչյունափոխությունն ակտիվ էր արդեն ուրարտական շրջանում:

զ) Շեշտի կորստով պայմանավորված՝ միջբաղաձայնային /i/ ձայնավորի սղում (անկում): Ինչպես արդեն նշվեց, շեշտի տեղաշարժով պայմանավորված, բնավոր /i/ ձայնավորն ուրարտերենում փոփոխվում է ճիշտ նույն կերպ, ինչպես որ հին հայերենում: Միակ տարբերությունն այն է, որ ուրարտերենում բնավոր /i/-ն սղվելիս սովորաբար գրում արտացոլվում է *e*-ով, իսկ հին հայերենում այն չի գրվում, այսինքն՝ արտացոլվում է *ø*-ով: Այս տարբերությունը, հավանաբար, պայմանավորված է ուրարտական գրի առանձնահատկությամբ, որտեղ բառավերջի *e*-ն կարող է արտահայտել /ə/ թույլ ձայնավորը²⁷ կամ ընդհանրապես չարտասանվել:

²⁵ Ղափանցյան Գ., Անտիպ գործեր, Երևան 2008, էջ 39:

²⁶ Ի դեմս *Eiduru* և *Teišeba* դիցանունների (առաջինը նաև լեռնանուն է)՝ ուրարտական տեքստերում ունենք բաղաձայնին նախորդող անշեշտ դիրքում *ei* երկբարբառի վկայության ևս երկու օրինակ:

²⁷ Wilhelm G., *The Ancient Languages of Asia Minor* (Edited by Woodard R.), *Urartian*, chapter 10, Cambridge, 2008, p. 108:

Հին հայերենի *h* ձայնավորն ուրարտական գրում, որպես կանոն, փոխանցվում է *i*-ով: Ինչ վերաբերում է հին հայերենի միջբաղաձայնային *h*-ին, որը, կորցնելով շեշտը, սղվում է և գրում չի արտացոլվում, ապա ուրարտերենում նման դրսևորումը հաստատող կամ հերքող բավարար վկայություններ չկան, իսկ եղածներն էլ հակասական են: Իբրև *h*-ի սղման օրինակներ կարելի է դիտարկել 1) ուր. *ter-* /*dər-*/ «դնել» - հհայ. *ղր-* (< *ղիր*) «դնել», 2) ուր. *wal=d-* /*wəl=t-*/ «զցել (հարկի տակ), տապալել (սահմանափարը)», «հաղթել (նաև իրավական վեճում), հաղթահարել, գերազանցել» - հհայ. *զլ-(տ-)(որ)-ել* (< *զիլ* < **uēl-*) «զլորել, հաղթել, հաղթահարել (նաև վեճի մեջ՝ խոսքով), գերազանցել, առավելել», «շրջել, տապալել և այլն», 3) ուր. *tar=a(i)e* /*tər=ay*/ «մեծ, հզոր, շատ» - հհայ. *տիր* «հույժ, շատ», «վերջին», «խիստ, պինդ» գույգերը: Հին հայերենում առկա են բազմաթիվ բառեր, որոնցում միջբաղաձայնային *h* ձայնավորը բացակայում է (ենթադրաբար՝ շեշտակորույս դիրքի պատճառով), սակայն այն ենթադրվում է նախագրաբարյան հայերենի համար: Եթե նկատի առնենք այս հանգամանքը, ապա եղած օրինակներին կարելի հավելել նաև հետևյալները՝ 4) ուր. *man-* /*mən-*/ «լինել, մնալ» - հհայ. *մն-ալ* (< **mhén-* (⊃>) < **mēn*) «մնալ», 5) ուր. *mak-* /*mək-*/ «նետել (նետ)» - հհայ. *մկ-ունդ* (հավանաբար, < **mhk-*ից կամ < **mnk-*ից) «տեգ, նիզակ», 6) ուր. *tan-* /*dən-*/ «անել» կամ «դնել» - հհայ. *դն-ել* (< **dhēn-* < **dhē-n*) «դնել»: Մյուս կողմից՝ բերված օրինակներում ուր. *tar=a(i)e*-ն ամենուր վանկազիր գրված է *tar-a-* ձևով, որը նույն հաջողությամբ կարելի է կարդալ *tir-a-*, իսկ ուր. *wal=d-* /*wəl=t-*/ - հհայ. *զլ-տ-* < **qhl-տ-* < **uēl-* գույզի փոխարեն հնարավոր է նաև առաջարկել ուր. *wal=d-* - հհայ. *զալ + տ-* (հմմտ. *զալ-ար*) < **uəl-* տարբերակը: Ինչ վերաբերում է հհայ. *մն-ալ*, *դն-ել* և *մկ-ունդ* բառերին, ապա դրանց համար ենթադրվող **mhén-*, **dhēn-* և **mhk-* արմատական ձևերը չեն վկայված: Փաստորեն, միակ հուսալի գույզը *ter-* /*dər-*/ «դնել» - հհայ. *ղր-* (< *ղիր*) «դնել» համապատասխանությունն է: Ուշագրավ է, որ հին հայերենի սույն բայի *h* ձայնավորի թուլացումից առաջացած և գրում չարտացոլվող *ը* թույլ ձայնավորն ուրարտական զուգահեռ բառաձևում փոխանցվում է *e*-ով (ճիշտ այնպես, ինչպես բնավոր /*i*-ի սղման դեպքում), մինչդեռ մյուս դեպքերում առկա է *a*²⁸: Այսպիսով, միջբաղաձայնային անշեշտ դիրքում սղված կամ ենթադրաբար սղված հին հայերենի *h* ձայնավորի դիմաց ուրարտերենում առկա է *a*-ն, բացառությամբ մեկ դեպքի, որի համար ունենք *e*. տե՛ս ստորև:

Ուրարտերեն	Հին հայերեն	
(անշեշտ)	(անշեշտ)	(շեշտահար)
<i>man-</i> / <i>mən-</i> /	- մն-ալ	< * <i>մին-</i> ,
<i>mak=ul-</i> / <i>mək=or-</i> /	- մկ-ունդ	< * <i>միկ-</i> ,
<i>tan-</i> / <i>dən-</i> /	- դն-ել	< * <i>դին-</i> ,
<i>wal=d=ul-</i> / <i>wəl=t=or-</i> /	- զլ-տ-որ-ել	< <i>զիլ-</i> (հմմտ. սակայն նաև <i>զալ-ար</i>),

²⁸ Ըստ այդմ, չի բացառվում, որ *e*-ն բարբառային դրսևորման արդյունք է:

ta/ir=a(i)e [tə/ir=]	- *տր-	< տիր,
ter- /dər-/	- դր-	< դիր-,

Աղյուսակից երևում է, որ բերված բոլոր օրինակներում ենթադրվող հնչյունափոխությունը վերաբերում է բառերի առաջին վանկերին²⁹: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս մտածել, որ ուրարտերենի միջբաղաձայնային *i* ձայնավորն անշեշտ դիրքում սղվում է և գրում արտացոլվում է *a*-ով (մեկ դեպքում՝ *e*-ով) բոլոր այնպիսի բառերում, որոնցում այն առաջին ձայնավորն է: Սակայն ուրարտական տեքստերում բացակայում են նշված բառ(արմատն)երի այնպիսի ձևերի վկայություններ, որոնցում առաջին վանկը լինի շեշտահար: Այսինքն, ուրարտական գրում բացակայում են բաղաձայնների միջև վկայված շեշտահար /i/ - շեշտակորույս դիրքում այլ ձայնավոր հերթագայման հստակ օրինակներ (խոսքը չի վերաբերում բնավոր /i/ ձայնավորին, որի համար, ինչպես տեսանք վերևում, առկա է *i* → *e* / *i* → *ə* / կանոնավոր անցում): Այս հանգամանքն առայժմ թույլ չի տալիս սույն հարցում կատարել վերջնական եզրակացություն: Իբրև վերոնշյալ ենթադրությանը հակասող օրինակներ կարող են ծառայել ուր. *imen-* /imən-/ «հիմք» - հհայ. *հիմն* «հիմք» և ուր. *pit-* /p'it'-/ «ջարդել, քանդել, պոկել» - հհայ. *փթ-ուր, փթ-ր-իմ* «փշրել, մանրել և այլն» < **փիթ-* (՝) համապատասխանությունները: Սակայն, նախ՝ ուր. *imen-* բառաձևը չունի բառասկզբի *h-* բաղաձայնը (համենայնդեպս՝ գրում), և երկրորդ, հին հայերենում *հիմն* գոյականը հոլովելիս, ի հակադրություն ընդհանուր օրենքի, չի կորցնում իր *ի* ձայնավորը (*հիմն*, սեռ. *հիման*): Իսկ ինչ վերաբերում է ուր. *pit-* - հհայ. *փթ-ուր, փթ-ր-իմ* գույզին, ապա այն այնքան էլ հուսալի օրինակ չէ: Բացի այդ, ուր. *pit-* բայի /i/ ձայնավորը կարող է և ունենալ հավելուրդային բնույթ՝ պայմանավորված գրի առանձնահատկությամբ (տե՛ս ծան. 29): Այս դեպքում հհայ. *փթ-* բառարմատի համար հնարավոր է առաջարկել և **փթ-* նախատիպը³⁰:

Ayvazyan Sargis - Nominal Stem in the Urartian and Reduction of Vowels in the Unstressed Position. - Mobile stress accent is characteristic for the Urartian (according to us - a dialect of ancient Armenian language) which is put on the penultimate syllable as in the pre-Classical Armenian (hereafter PCArm.). In the result of such a stress accent, the following general cases of vowel reduction or change are specified in the Urartian:

a) In the Urartian thematic vowel /i/ in the post-accent positions (at the end of the word) is changed or else is reduced. In graphics, it is expressed with the sign “e” which either was

²⁹ Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ սեպագիր համակարգը բացառում է երեք, իսկ բառասկզբում և բառավերջում նաև երկու բաղաձայններով կազմված հնչյունախմբերի արտացոլումը գրում: Ուստի նման դեպքերում գրում բաղաձայնների միջև դրվում է հավելուրդային ձայնավոր, որը չի կարդացվում:

³⁰ Հմմտ., օրինակ՝ ուր. *šid-* /sət-/ «կանգնեցնել, կառուցել» - հհայ. *ստ-ան-ալ* (< **stā-* «կանգն(եցն)ել, դնել») «կանգնեցնել, հաստատել, ստեղծել, հիմնել», «ձեռք բերել, ստանալ»:

not pronounced or was pronounced as /ə/, whereas names with other theme are not subject to this kind of change.

b) Vowel (diphthong) /ē/ of Classical Armenian (hereafter CArm.) is usually rendered by diphthong “ei” in the Urartian. But in an unaccented position before a consonant, it is rendered in two ways: either by “ei” or “i”, as in the CArm.

c) Vowel /i/ of CArm. in the Urartian script is rendered by “i”. Yet, the same vowel in the position between consonants which drops in an unaccented position in CArm., in such cases, if it forms the word-initial syllable, is rendered in the Urartian either by the signs “a” or “e”. For instance, Ur. *man-* /mən-/ - CArm. *mən-am* < *mi'n-, Ur. *tan-* /dən-/ - CArm. *dən-em* < *di'n-, Ur. *mak=ul-* /mək-/ - CArm. *mək-ownd* < *mi'k- ? etc.

d) Vowel /u/ positioned between two consonants, drops in an unaccented position in CArm., while regardless of accent position it is maintained in the Urartian as in the PCArm.

e) Vowel /a/ is constant in the Urartian and regardless of accent position it is not subject to any change thus corresponds to CArm.

Keywords: Urartian, Armenian, Armenology, Phonetics, Historical Phonetic Change, Reduced Vowels, Accent.

Айвазян Саргис - Именная основа в урартском языке и редукция гласных в безударной позиции. - Для урартского языка (который нами рассматривается как некий диалект древнейшего армянского языка) характерно подвижное силовое ударение на предпоследнем слоге, как в праграбаре. И в результате такого ударения в урартском языке имеют место следующие основные случаи редукции или изменения гласных.

а) Тематическая гласная /i/ в постударной позиции (в конце слова) редуцируется либо видоизменяется. В графике он обозначается знаком “e”, который либо не произносилось, либо произносилось как /ə/, в то время как именные основы с другим окончанием не видоизменяются.

б) Гласный (дифтонг) /ē/ характерный для грабара, в урартском обычно передаётся посредством дифтонга “ei”, но в безударном положении перед согласным он передаётся через “ei” или “i”, как в грабаре.

в) Гласный /i/ в урартском передаётся через “i”, но в позиции же между согласными тот же гласный звук, который в безударном положении в грабаре выпадает, в урартском, если он образует первый слог в слове, передаётся через “a” или “e”. Например - ур. *man-* /mən-/ - граб. *mən-am* < *mi'n-, ур. *tan-* /dən-/ - граб. *dən-em* < *di'n-, ур. *mak=ul-* /mək-/ - граб. *mək-ownd* < *mi'k- ? и т.д.

г) В позиции между согласными гласная /u/, которая в грабаре в безударном положении выпадает, в урартском сохраняется независимо от ударения, что характерно для праграбара.

д) Как и в грабаре гласная /a/ в урартском в зависимости от ударения не изменяется.

Ключевые слова: Урартский, армянский, арменоведение, фонетика, историческое фонетическое изменение, редукция гласных, акцент.

ԱՆԱՆԻԱ ՄԱՆԱՀՆԵՑՈՒ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ ԱԻԵՏԱՐԱՆԻ» ԵՐԿԻ
ԳՐԱԲԱՐՅԱՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ

DOI: 10.54412/93055-2023-53

Բարսեղյան Վարդուհի
ԵՊՀ ասպիրանտ
varduhy.barseghyan@gmail.com

Բանալի բառեր. Անանիա Մանահնեցի, գրաբար, մեկնություն, դարձվածաբանական միավոր, նորագյուտ դարձվածքներ:

Անանիա Մանահնեցին (ծ. թ. անհտ – XI դ. 70-ական թթ.) հայ միջնադարյան շրջանի ականավոր դեմքերից է, «այր մտաւոր եւ հանճարեղ, գիտող տոմարական արհեստից եւ գրոց աստուածայնոց մեկնող»¹, Մանահին վանքի միաբան, ուսուցիչ, դավանաբանական, մեկնաբանական, տոմարագիտական, ճառագրական և ներբողական երկերի հեղինակ: Մանահնեցու մեկնաբանական աշխատությունները օգտագործվել են ինչպես Հաղպատ-Մանահնի, այնպես էլ Կիլիկիայի և Էջմիածնի ուսումնագիտական կենտրոններում: Այդ մեկնությունները ուշագրավ են հատկապես ժամանակաշրջանի հոգևոր, աստվածաբանական, եկեղեցա-դավանաբանական կյանքի ըմբռման, հայերենի գիտական մտքի զարգացման, հարստացման տեսանկյունից:

Անանիա Մանահնեցու գործունեության ժամանակը համընկնում է քաղաքական և հասարակական բարդ պայմանների հետ, երբ խարխլվում էին հայոց պետականության և հոգևոր արժեքների հիմքերը: Հենց այս շրջանում ավելի է նշանավորվում և կարևորվում Հաղպատի և Մանահնի՝ Կյուրիկյան թագավորության հոգևոր կենտրոնների դերը, մասնավորապես՝ Անանիա Մանահնեցու անձնական մեծ ներդրումը մշակութային, ինչպես նաև ընդհանուր քրիստոնեական կյանքում:

Անանիա Մանահնեցու գրչին պատկանող մեկնողական աշխատությունների շարքում իր ուրույն տեղն ունի «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի»՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունը, որ գրվել է հեղինակի ուսուցչի՝ մեծ հռետոր Դիոսկորոս Մանահնեցու (1039-1063) խնդրանքով: Աշխատությունը մեկ Ավետարանի հանգամանալից մեկնություններից է հայ մատենագրության մեջ, պետք է գրված լինի մոտ 1060-1063 թթ.՝ ավելի ուշ խմբագրվելով և բարեփոխվելով փիլիսոփա, գիտնական և մանկավարժ Հովհաննես Սարկավագի կողմից:

Որպես գրաբարյան դարձվածքների իմաստակառուցվածքային առանձնահատկությունների բացահայտման սկզբնաղբյուր՝ մեր քննած մեկնությունը

¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 112-113: Հմմտ.Մատթեոս Ուռհայեցի, էջ 179: Վարդան, էջ 121: Բ.Կյուլեսերյան, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ, էջ 703: Նույնի՝ Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ, էջ 978: Թ.Գուշակյան, Ցուցակ ձեռագրաց Ս. Նշանի, էջ 111:

հարուստադրյուր է, քանի որ այս դավանաբանական-մեկնողական աշխատանքը կատարելիս հեղինակը իր քրիստոնեական խոսքը հարստացնում է փոխաբերություններով, այլաբանությամբ, աստվածաշնչյան թևավոր խոսքերով:

Կատարելով դարձվածքների իմաստակառուցվածքային քննությունը և վիճակագրական նկարագրությունը՝ դարձվածային միավորները հետազոտել ենք գիտական նկարագրության, համեմատության և վերականգնման մեթոդների կիրառմամբ՝ նախ քննելով դրանք ըստ բաղադրիչների քանակի, ապա՝ ըստ գերադաս անդամի իմաստային բովանդակության: Դարձվածքները համեմատել ենք Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանի» միավորների հետ՝ իմաստային տեղաշարժերը բացահայտելու, ինչպես նաև համոզվելու, որ մեր դուրս գրած թվով 85 դարձվածքների և դարձվածային արտահայտությունների հիմնական մասը բացակայում է այս բառարանում:

Պետք է նշել, որ դարձվածային միավորները ըստ բաղադրիչների քանակի տարբերակման մեջ ընդունված է նվազագույնը երկանդամ կառույցների առանձնացումը, քանի որ դարձվածքը կայուն բառակապակցություն է, որի բաղադրիչները վերահիմաստավորված են: Առանձնացվում են եռանդամ, քառանդամ, հնգանդամ և ավելի կառույցներ: «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկում գերակշռում են երկանդամ անվանական, եռանդամ և քառանդամ բայական դարձվածային միավորները: Ստորև բերենք օրինակներ՝ նշելով, որ այս աշխատանքում նախդիրները ևս համարել ենք ինքնուրույն բաղադրիչներ, որոնք կապակցությանը տալիս են ձևային և բովանդակային տարբերակիչ առանձնահատկություն:

Երկանդամ անվանական դարձվածքներ՝ ստալոյս գիտութիւն (էջ 27)՝ կեղծ, սուտ գիտություն, **աւետիս կենաց** (էջ 28)՝ կենսաբեր ավետիս, **նորոգություն կեանս** (էջ 30)՝ կյանքի բարելավում, **փրկութեան դեղ** (էջ 31)՝ փրկության հնար, **շնչաւոր մարդ** (էջ 31)՝ ողջ, կենդանի մարդ, **կենաց դպրութեան** (էջ 32)՝ կյանքի դպրոց, **խմոր անապականութեան** (էջ 34)՝ մաքուր նպատակ, էություն, **դեղ յիմարութեան** (էջ 35)՝ հիմարության թույն, **ախտ նսեմութեան** (էջ 37)՝ փոքրոգության հակում/ձգտում, **մարմնական վիշտ** (էջ 192)՝ ցավ և այլն:

Երկանդամ բայական դարձվածքներ՝ խորհել խոխտումն (էջ 30)՝ հնար մտածել, **հող դառնալ** (էջ 34)՝ մահանալ, **կարճել լեզուն** (էջ 197)՝ լռեցնել, **մեղադիր լինել** (էջ 198)՝ մեղադրել:

Ինչպես նկատում ենք՝ երկանդամ դարձվածքները հիմնականում կազմված են լինել, դառնալ բայերով և անուն՝ գոյական և ածական խոսքի մասերով: Ինչպես նաև երկանդամ բայական դարձվածքներն իրենց քանակով ակնհայտորեն զիջում են երկանդամ անվանական ԴՄ-ներին: Նույնը չենք կարող ասել եռանդամ և քառանդամ դարձվածքների դեպքում, որտեղ ԴՄ-ները գերազանցապես բայական են:

Եռանդամ բայական դարձվածքներ՝ *ի վերուստն եկելոյ* (էջ 30)՝ ի սկզբանե տրված, *պղծել արեամբ շնչաւորացն* (էջ 30)՝ սպանութեամբ պղծել, *հաւասարվել անասնոց* անվանութեամբ (էջ 35)՝ հավասարվել անխոս կենդանու՝ տխմարանալ, *հրդեհել բոց մեղացն* (էջ 36)՝ մղել մեղսագործության, *սրբանալ ի պոռշկութենէ* (էջ 41)՝ անբարոյականութեամբ հպարտանալ:

Քառանդամ բայական դարձվածքներ՝ *ոչ առնել այցելություն տէր* (էջ 29)՝ անհավատ լինել, *ի գուրս գլոր կալնուլ* (էջ 29)՝ գլորվել խոր փոս, *նկարել ըստ պատկերի Աստուծոյ* (էջ 34)՝ Աստծո տեսքով ստեղծվել, *ազատել ի բռնութենէ չարին* (էջ 35)՝ ազատել չարքի լծից, *գծագրել զգիր դատապարտութեան* (էջ 36)՝ դատավճիռ կայացնել, *կերակրել ի ճաշակս անմահութեան* (էջ 38)՝ հասնել անմահության, *տկարանալ ի մեղաց ապականութեամբ* (էջ 47)՝ մեղքերի աղտից թուլանալ, *տնկել որթն յարգանդի* (էջ 52)՝ հղիացնել, *կոտորել զարմատս հպարտութեան* (էջ 71)՝ խոնարհ և հեզ դառնալ, թոթափել հպարտությունը, *լուծել զխրացս կաւշկացն* (էջ 75)՝ բորկանալ և այլն:

Հնգանդամ դարձվածքներ՝ *արձակել զաչս զկուրաց* (էջ 31)՝ տեսողությունը վերականգնել, *զմոլորյալս յարդարութիւն առաջնորդել* (էջ 31)՝ դարձի բերել, *ի ցանկութենէ պոռնկութենէ մեղացն ապականել* (էջ 43)՝ կրքից պոռնկանալ, անառության մեջ ընկնել:

Վեցանդամ դարձվածքներ՝ *նաւարկել յանդունս խորոց աստուածային իմաստից* (էջ 28)՝ հեռանալ Աստծուց, *ի ձերութեան ծնանել զանդրանիկն արարածոց* (էջ 38)՝ ուշացումով անդրանիկ որդի ունենալ՝ հեղինակը նկատի ունի նաև նոր կրոնի հասու դառնալը:

Մեր քննած երկում վկայված են նաև մի քանի յոթ, ինը և տասը բաղադրիչ ունեցող դարձվածքներ, ավելի ստույգ՝ դարձվածային արտահայտություններ, ինչպես՝ *ի բնէ եւ յաւիտենից լինել ի գիտութեան* (էջ 33)՝ ի սկզբանե և հավետ նվիրվել գիտությանը, *առաջին մարդն՝ հող յերկրէ, երկրորդ մարդն՝ տէր երկնից* (էջ 34)՝ առաջին մարդը հողից, երկրորդը՝ հողի տեր, այսինքն՝ սկզբից ստորին, ապա վերին էակ դառնալ, *ի մէջ երկոցունց կոխել զխաւար խորհուրդ Հաւր և Որդոյ* (էջ 69)՝ հոր և որդու միջև պառակտում սերմանել՝ հեղինակը նկատի ունի Հիսուսին Հայր աստծուց բաժանելը:

Ինչպես վերը նշեցինք, մեկնության ԴՄ-ները քննելիս առանձնացրել ենք նաև մի քանի միավոր, որոնք վկայված են գրաբարի դարձվածային բառարանում: Բերենք նման օրինակներ՝ *ածել ի գիտութիւն* (էջ 33)՝ տեղյակ դարձնել, *խոստովան լինել* (էջ 41)՝ խոստովանել, *հաղորդ առնել* (էջ 53)՝ մասնակից դարձնել, *ուշ դնել* (էջ 200)՝ ուշադրություն դարձնել:

Բազմանդամ ԴՄ-ների կազմում նկատելի է *ի* և *զ* նախդիրների հաճախակիրառելիությունը, ընդ որում՝ նախդիրները հիմնականում գործածվում են անուն խոսքի մասերի և բայի համադրությամբ՝ *կարգել ի պետէն բժշկաց* (էջ 30)՝

բժշկությանը ծառայեցնել, *շինել գտաճար մարմնոյ* (էջ 42)՝ մամինը զարգացնել, *ապականել զպտուղ մահու* (էջ 50)՝ ոչնչացնել չարը, մահաբերը, *խորհել ի միտս* (էջ 53)՝ մտածել և այլն:

Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկից առանձնացված ԴՄ-ները բնութագրենք նաև ըստ իմաստային դաշտերի՝ նկատի ունենալով դրանց գերակա բաղադրիչի իմաստային բովանդակությունը:

1. *մարմնամասեր նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ՝ արձակե զաչս զկուրաց* (էջ 31), *բնակել յարգանդ* (էջ 55), *մարմնական վիշտ* (էջ 192), *կարճել լեզուն* (էջ 197),

2. *ֆիզիկական գործողություններ արտահայտող բառերից կազմված ԴՄ-ներ՝ ածել ի տեսութիւն* (էջ 28), *ի գուրս գլոր կալնուլ* (էջ 29), *ոչ առնել այցելություն* տեր (էջ 29), *դեպ լինել* (էջ 31), *հրդեհել բոց մեղացն* (էջ 36), *արկանել ընդ պատժովք* (էջ 49), *հաղորդ առնել* (էջ 53),

3. *տուն, տեղ, վայր նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ՝ ի ներքս մտանել* (էջ 34), *իջնել ի դժոխս* (էջ 45),

4. *միտք, գիտելիք և խոսք նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ՝ նկարել յտրհուրդ* (էջ 44), *պարտել զմիտս* (էջ 47):

Ինչպես նկատելի է բերված օրինակներից, երկուս գերակայում են գործողություններ արտահայտող բառերից կազմված ԴՄ-ները:

Անանիա Սանահնեցու այս մեկնության դարձվածքներից միայն մի քանիսն են վկայված Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանում», ինչպես՝ *ածել ի գիտութիւն* (էջ 33)՝ եղյակ դարձնել, *խոստովան լինել* (էջ 41)՝ խոստովանել, *հաղորդ առնել* (էջ 53)՝ մասնակից դարձնել, *ուշ դնել* (էջ 200)՝ ուշադրություն դարձնել և այլն: Նորագյուտ դարձվածքները տարբեր պատճառներով չեն ընդգրկվել բառարաններում, թեպետ հեղինակի թե՛ այս երկը, թե՛ մյուս մեկնությունները տարբեր ժամանակներում եղել են լեզվաբանների քննության առարկա: Նորագյուտ դարձվածքների մեծամասնությունը երկանդամ և քառանդամ են:

Գրաբարյան այս դարձվածքների ուսումնասիրությունը բացահայտում է 10-11-րդ դարերի հայ մեկնողական գրականության լեզվաոճական, իմաստաբանական առանձնահատկությունները, իսկ նորագյուտ դարձվածքները կարող են դառնալ գրաբարյան դարձվածաբանական բառարանները հարստացնելու նյութ:

Barseghyan Varduhi – Ancient Armenian Phraseological Units in the Book "Commentary on the Gospel of Matthew" by Anania Sanahnetsi. - Anania Sanahnetsi is an Armenian theologian and poet, church leader of the Armenian Apostolic Church of the XI century. "Commentary on the Gospel of Matthew" is one of the author's most famous works. 85 phraseological and idiomatic units are written out of the book, most of them are two- and three-component verbal constructions with rich semantic content. In addition, the main part of

them can be considered as newly found lexical units, since they are absent in the phraseological dictionary of Grabar, compiled by R. Kazaryan.

Keywords: Anania Sanahnetsi, Grabar, Commentary, Phraseological Unit, Newly Identified Phraseological Units.

Барсегян Вардуи – Древнеармянские фразеологизмы в книге Анании Санахнеци «Толкование на Евангелие от Матфея». - Анания Санахнеци – армянский богослов и поэт, церковный деятель Армянской апостольской церкви XI века. «Толкование на Евангелие от Матфея» - одна из самых известных работ автора. Из книги выписано 85 фразеологизмов и идиоматических единиц, большинство из них – это двух и трехкомпонентные глагольные конструкции. Кроме того, основную часть из них можно считать новонайденными лексическими единицами, так как они отсутствуют в фразеологическом словаре грабара, составленном Р. Казаряном.

Ключевые слова: Анания Санахнеци, грабар, толкования, фразеологическая единица, нововьявленные фразеологизмы.

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

DOI: 10.54412/93055-2023-58

Գրիգորյան Սուսանա

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. susanna7494@gmail.com

Բանալի բառեր. սովորության իրավունք, եկեղեցական կանոններ, կանոնագիրք, դատաստանագիրք, օրենք, թուղթ արձակման:

Նախաբան

Իրավագիտության ոլորտի ուսումնասիրողները, որպես կանոն, նշում են հայ իրավագիտական մտքի մի քանի աղբյուր. սովորության իրավունք, եկեղեցական կանոններ, փոխառու օրենքներ, ազգային դատաստանագրքեր, մատենագիտական աշխատանքներ: Աղբյուրագիտական իմաստով Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի¹, ինչպես նաև մյուս աշխատությունների իրավագիտական հասկացությունները մատենագիտական աշխատանքներից քաղվող տեղեկություններ են: Եվ այնուամենայնիվ, նրա հարցադրումները թե՛ սովորու-թային իրավունքից են, թե՛ ազգային դատաստանագրքերից և առավել ևս եկեղեցական կանոններից:

Հարցի պատմությունից

1964 թվականին հրատարակված Հայոց Կանոնագրքի ծավալուն առաջաբանում, որն ըստ էության միջնադարյան իրավական մտքի համառոտ վերլուծություն է, անդրադարձ չկա Գրիգոր Տաթևացուն, քանի որ վերջինս իրավական կարգավորումներին նվիրված առանձին աշխատություն չի ստեղծել: Սակայն նրա բազմաթիվ աշխատություններում այնքան շատ են իրավական հարցադրումները և վերլուծությունները, որ դրանք ի մի բերելու պարագայում, մենք անշուշտ կունենանք ժամանակաշրջանի իրավական հարաբերություններին համակողմանիորեն անդրադարձած ժամանակի մտածողի ուրույն մի աշխատանք: Իհարկե, սա այն ոլորտն էր, որտեղ հեղինակն ավելի քան պահպանողական է գտնվել և փորձել է ելնելով իր ժամանակի խնդիրներից՝ բացատրել նախնիների մոտեցումները և ըստ էության պաշտպանել Կանոնագրքի նախնեաց սահմանումները, սակայն ժամանակի թելադրանքով անդրադարձել է նաև իր օրերի խնդիրներին, և նրա հարցադրումներն ինքնին տեղեկություն են տալիս խնդրի առկայության և դրա վերաբերյալ հեղինակի տեսակետի մասին:

¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729:

Քննության ենթարկված իրավական հասկացությունների համեմատու-թյունը հայերենի բառարանների հետ ցույց է տալիս, որ դրանք երբեմն վկայված են նույն իմաստով (օրինակ՝ քրեական), կան իմաստային տեղաշարժերի դեպքեր (օրինակ՝ օժիտ, օրէնք), և կան, որ բոլորովին վկայված չեն, այսինքն գործ ունենք նորակազմ բառերի հետ (օրինակ՝ ազգաջինջ, դատելիք): Ասենք նաև, որ բառիմաստի փոփոխության մասին ամբողջական պատկերացում տալու նպատակով, տվյալ բառի վերաբերյալ երբեմն բերել ենք նաև բարբառային իրողությունները և զարգացումները, քանի որ գաղտնիք չէ, որ շատ ու շատ լեզվական իրողություններ պահպանված ենք գտնում բարբառներում՝ երբեմն նույնիսկ մեկ բարբառի օրինակով:

Ելնելով նյութի առանձնահատկություններից՝ օգտվել ենք ուսումնա-սիրու-թյան թե՛ տարածամանակյա, և թե՛ համաժամանակյա մեթոդներից:

ԱԶԳԱՋԻՆԶ - Ազգը ջնջող, վերացնող: «Հինգերորդ՝ զի քրեական մեղքն ազգաջինջ առնէ. որպէս զԴադան և զԱբիրոն. զի ընդ Մովսէսի և աստուծոյ հակառակ կացին, ազգօք և աղխիք ընկղմեցան, զի այլքն երկիցեն»²: Վկայված չէ որևէ բառարանում: Ուշադրության արժանի է հեղինակի «քրեական մեղքն ազգաջինջ առնէ.» արտահայտությունը, որն ուղղակիորեն արտահայտում է հեղի-նակի կարծիքը քրեական մեղքի ծանրագույն հետևանքների վերաբերյալ: Նախ «քրեական» բառի մասին, որի հետ կապվում է «ազգաջինջ առնէ» բառակապակ-ցությունը:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը (այսուհետ՝ ՆՀԲ) բառը համարում է առաջացած **«քրայ»** կամ **«քուրայ»** բառաձևից՝ մետաղները հալեցնելու «դարբնոց, վառարան» իմաստով: **«Քրեական»** բառահոդվածում բառարանի հեղինակներն ավելի հստակ են բացատրում բառը՝ ընդգծելով, որ այն հատկապես մետաղին է վերաբերում: Բացատրությունից պարզ են դառնում մի շարք հան-զամանքներ: Նախ, որ բառը սկզբնապես վերաբերել է քուրայով անցնող մետաղ-ներին, նրանց արդյունահանությանը, տեղին կամ հանքին և վերամշակմանը. «Եւ առաւել ընդ բառիս Մետաղք, որպէս տեղի մետաղաց և որ ինչ անկ է նմին. հանքի տեղին վերաբերեալ»³: Այնուհետև բացատրվում է **«քրեական» բառի իմաստի անցումը հանցագործությանը կամ՝ հանցագործի ծանր կամ ծանրագոյն մեղքի** (ընդգծ. Մ.Գ.). «Դարձցին ամենայն դատապարտեալք՝ որք ի քրեական մետաղսն իցեն: Լուծանել հրամայէր զկալանաւորսն, և որք ի քրեական մետաղսն են: Ի քրեականսն յերկաթահատ կամ ի պղնձագործ մետաղսն ոսկեհանաց, և որք ի քրեական մետաղսն խոնջիցեն: Յաւիտենից բանդեալքն ազատեցան և քրեական

² Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 416:

³ Գ.Աւետիքեան, Խ.Միրմելեան, Մ.Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ). հ. 2, Վենետիկ, 1837, էջ 1015:

մետաղքն հրդեհեցան յարփիահրաշ փառաց քոց. Ագաթ.Ճ.Գ, Ոսկ.Մ»⁴, այսինքն՝ ծանր դատապարտյալները, որոնք աշխատել են հանքավայրերում, հետագայում ստացել են «քրեական» մակդիրը: Բացատրությունը կրկնվում է «**Քրեական**» բառահոդվածում, որին տրվում է նաև «արժանի աքսորաց, աստուածընդդէմ, արքայընդդէմ» հավելումները՝ գրանցելով բառիմաստի ընդլայնումներ. «**Արժանի աքսորանաց և աշխատելոյ ի մետաղս**. աստուածընդդէմ, արքայընդդէմ»⁵ (ընդգծ. Ս.Գ.):

Այսպիսով, սերելով «քուրայ» բառից՝ իրավական հասկացություններից ամենագործածականներից մեկն աստիճանաբար վերաիմաստավորվել է՝ համադրելով **հանք, ծանր, հանցանք, կալանավոր** բառերի իմաստները՝ հետագայում ձևավորելով իրավական օրենսդրության մի ամբողջ ոլորտ. «քրեական հանցագործություն», «քրեական դատավարություն», «քրեական օրենսդրություն» և այլն (ընդգծ. Ս.Գ.):

Նկատենք, որ բառիմաստի ընդլայնման միտումները շարունակվել են Տաթևացու օրոք, որն արձանագրել է «քրեական մեղքի» ծանրագույն հետևանքները՝ տալով «**ազգաջինջ**» բնորոշումը: Այսպիսով, հեղինակը շրջանառության մեջ է դրել նորակազմ բառ, որը գրաբարյան որևէ բառարան չի վկայում:

Բառարանային բացատրությունները համընկնում են նաև «**դատ, դատախազ, դատաստան, դատավոր**» բառերի դեպքում, սակայն Տաթևացու բացատրություններում դարձյալ առկա են նրբերանգներ, որոնք բացակայում են գրաբարյան բառարաններում: Հետևյալ վկայությունն օրինակ տեղեկություն է տալիս նաև դատարանի կառուցվածքի և կողմերի վերաբերյալ. «Զորօրինակ բ ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ ճշմարիտ գոլ. այլ մերձ եկեալ դատաւորին՝ վկայիք յայտնի ճշմարիտն»⁶. Կամ՝ «զի երեք են դատելիքն. մին դատաւորն, և բ դատախազքն. պիտո՛յ է այսինքն գ վկայք»⁷: - 742.», ըստ որի դատարանն ունեցել է երեք կողմ. դատավորը, երկու դատախազները և վկաները:

ԴԱՏԱԿՇՈՒԵԼ - Այս բառի գործածությամբ՝ «դատել, քննել ճշտությամբ» իմաստով նկատելի է հեղինակի կողմից հանգամանքների լիակատար վերլուծության ակնարկ, որ քրեական ապացուցողական պրակտիկայում վճռորոշ նշանակություն ունի. «Երրորդ, զմեզ առ այլս դատակշռել, այսինքն՝ առ վերինս և ներքինս և հաւասարս»⁸. ՆՀԲ-ն նույն իմաստով բերում է «**ԴԱՏԱԿՇԻՌ ԼԻՆԵԼ**» ձևը:

Ինչպես նշեցինք, բառիմաստի ընդլայնում է գրանցել *օրէնք* բառը: Գրաբարյան բոլոր բառարաններում պահպանվել է «օրէնք»-ի «սահման և կանոն» բացատրությունները, սակայն, բացակայում են Տաթևացու բացատրության նրբե-

⁴ ՆՀԲ, հ. 2, էջ 1015:

⁵ Նույն տեղում:

⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 551

⁷ Նույն տեղում, էջ 742:

⁸ Նույն տեղում, էջ 745:

րանգները («Նա՛խ՝ զի օրէնքն կանոնն և սահմա՛նն է առնելեաց և ոչ առնելեաց: Երկրորդ՝ օրէնքն է հարկի. և պատուիրանն կամաց»⁹), այսինքն հեղինակը տալիս է բոլոր ժամանակների համար ընդհանրական մի ձևակերպում. օրէնքը պարտադիր կատարման վարքագիծ է՝ կատարելու կամ չկատարելու մի բան (սահման է առնելեաց և ոչ առնելեաց և ի հարկի է), որը գրաբարյան բառարաններում չենք գտնում: Միայն «Գիրք հարցմանց»-ում հեղինակն ունի օրէնք բառի ավելի քան երեք հարյուր գործածություն՝ հիմնականում աստվածաշնչյան տասը պատվիրանների վերլուծության շրջանակներում:

Հավանաբար, հաշվի առնելով օրէնքի պարտադիր լինելու լինելու հանգամանքը կամ գրաբարում «**օրէնք**» բառի եկեղեցական կանոնների իմաստով գործածական լինելը, հետագայում որոշ բարբառներում այդ բառը գործածվել է կրոնական արարողություն կատարելու իմաստով: Օրինակ Բիթլիսի վիլայեթի Խիան գյուղում բառը գրանցված է «*մկրտութիւն*» իմաստով, Երևանի խոսվածքում՝ *Մուրբ հաղորդութիւն* (օրէնք առնել - հաղորդութիւն առնել), իսկ Ալաշկերտում՝ *օրէնքել* նշանակել է «հաղորդել»¹⁰:

Գրական հայերենում **օրէնք** բառը մեր օրերում հանդես է գալիս միայն պարտադիր կատարման ենթակա նորմի իմաստով, այսինքն դրսևորել է բառիմաստի նեղացում, չնայած խոսակցական հայերենում և բարբառներում այն շարունակում է ազատ գործածվել նաև պարտադիր բնույթի գործողության իմաստով:

Նույն բառից ածանցված «**օրինաւոր**» բառը Տիփլիսի բարբառում շատ ավելի է հեռացել իր նախնական իմաստից և կիրառվել **լավ, շատ, առատ** իմաստներով. «Օրինաւոր ուսում եմ տուել», «Օրինաւոր կերանք, խմեցինք»¹¹:

Շուրջ երկու հարյուրի է հասնում **պատիժ** բառի գործածությունը «Գիրք հարցմանց»-ում: Հր. Աճառյանի «Հայերենի արմատական բառարանում» (այսուհետ՝ **ՀԱԲ**) այն չստուգաբանված բառերի շարքում է: Բառը հայերենի գրեթե բոլոր բարբառներում պահպանվել է՝ հնչյունափոխված բազմաթիվ տարբերակներով. պաղիժ, բաղիժ, բաղիջ, պատիշք, պատիճ, բաղինջ և այլն:

Բառիմաստի նեղացում ունենք Ատանայի բարբառում՝ *պատիժ* բառն իբրև *տգեղ-տձն* մարդ: Ղարաբաղի բարբառում ունենք «*աստծոյ պատիժ*»՝ *խիստ չարագործ մարդ ինաստով* գործածություն:

Իրավական հասկացության ձևավորման, իսկ հետո նաև՝ ամրագրման համար կարևոր դեր են խաղացել սովորութային իրավունքները: Ընդունելով ձևավորված իրավունքների գերակայությունը՝ դրանց շեղումներին տրվել են իրավա-

⁹ Նույն տեղում, էջ 340:

¹⁰ Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագարական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 1137:

¹¹ Նույն տեղում, էջ 1138:

¹² Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 371:

կան գնահատականներ. «Զի ամենայն գործ կամ **պակաս է, քան զօրէնսն, որ է անիրավութիւն** կամ ի վեր, քան զօրէնսն, որ է ողորմութիւն»¹², - գրում է Տաթևացին, այսինքն օրենք էր համարվում և գործունեության կանոնակարգվածությունը, օրենք էր համարվում նաև սովորութային իրավունքով ամրագրվածը, հետևաբար նաև դրա խախտումն էր «անիրավութիւն» (խախտում), որի արձանագրումը դառնում էր իրավական հասկացություն: Այս առումով հետաքրքիր է «թուղթ արձակման» կամ արդի հայերենով՝ ապահարգան տալու հանգամանքների նկարագրությունը. «Եթէ կին ատելի գեղով, չար բարութն, լեզուագար ի խօսս լծակցի բարի մարդու, որ լինի մտօքն բարի և գործովն բարի և լեզուովն հեզ և գեղով երևի, ամենայնքն շարժին ի վերայ նորա և ողբան զթշուառութիւն նորին, որ այնպէս չար և ժանդ կնոջ է դիպեալ: Եւ կինն յորժամ տեսանէ զայն, անզգամութեամբն իւրով և լրբութեամբ յամօթ առնէ զվշտակիցսն, կռուի ընդ այրն և ավիբերան առնէ զնա: Յորժամ ոչ կարեն տեսանել տեսօքն, յառնեն ի վերայ ամենայնքն, **բանիւ անարգեն, գանիւ հարկանեն և թուղթ անիծից** տալով՝ հանեն ի տանէ, զի **թուղթ արձակման՝** անիծից թուղթ է կանանց»¹³ (ընդգծ. Մ.Գ.):

ԳԻԹԻՈՐՆ - Սայթաքած, մեղավոր, հանցանք գործած մարդ: «Վեց քաղաքաց հրամայեաց որոշել ապաստանի և տալ քահանայից. գ յերկիրն քաննու և գ յայնկոյս յորդանանու: Եւ իբ այլ ի շրջակայ երկիրն, որ լինի իւր: Զի ականայ սպանողքն զերծանիցին անդ մինչ քահանայն կենդանի իցէ. և յորժամ մեռանիցէ քահանայն, ապա գնասցեն ի տեղս իւրեանց: ...Եւ դեռևս ունին ազգն վրաց. զի զիրթորն մտեալ յեկեղեցի ազա՛տ են»¹⁴: Հր Աճառյանի ՀԱԲ-ը վկայակոչում է՝ նշելով Գրիգոր Տաթևացու բառագործածությունները:

Վկայությունը հետաքրքրական է այնքանով, որ վերաբերում է միջնադարում հանցագործության հանգամանքներից մեկին. խոսքը քաղաք-ապաստարանների մասին է, որտեղ առերևույթ հանցագործը (տվյալ դեպքում՝ ականա հանցագործը) կարողանում էր խուսափել պատասխանատվությունից, և ինչպես վկայում է Տաթևացին, վրաց իրականության մեջ այդ գործառույթը իրականացրել է եկեղեցին:

«**Գիրթոր**» բառի Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի գործածության հետ կապված պարզաբանենք մի հանգամանք. Հր. Աճառյանը նշում է, որ «գիրթոր» բառի մեկ այլ գործածություն գտնում է «յետին մի գրուածք»¹⁵-ում և բերում մի հատված, որի ամբողջական նկարագրությունը սակայն մենք գտնում ենք Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորում. «Որպէս այն թագաւորն, որ բնաւ ոչ ուրախանայր, բայց արդար դատաստան առնէր: Եւ հարցին զթագաւորն, թէ՛ ընդէ՞ր ոչ որախանաս և նա ասէ՛ վաղիւն տաց պատասխանի: Եւ ի

¹² Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 371:

¹³ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ձմեռան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 274:

¹⁴ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 392:

¹⁵ Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971., էջ 510:

վաղին հրամայեաց փողահարացն փող հարկանել և երկեան յոյժ: Եւ ետ բերել զեղբայրն իւր և նստոյց զնա մերկ ի վերայ աթոռոյ միոյ և հոր ի ներքոյ աթոռոյն և սուր կախեալ ի վերոյ գլխոյն և այլ սուր յառաջուստ և յաջ և յահեակ կուսէն: Եր ետ բերել գուսան և ուրախութիւն առաջի նորայ: Եւ ասէ թագաւորն՝ եղբայր, ընդէ՞ր ոչ որախանաս և ասէ եղբայրն՝ որպէ՞ս ուրախանամ ի մէջ այսչափ նեղութեանս: Եւ ասէ թագաւորն՝ նոյնպէս և ես տեսանեմ զիս ի մէջ բազում նեղութեանց, քանզի որպէս դու վախեցար ի ձայնէ փողոյն իմոյ, որ չես ինձ վնասակար, նոյնպէս և ես երկնչիմ ի յետին փողոյն, զի **գիթոր և վնասակար եմ** աստուծոյ»¹⁶: Այսինքն, որ ավանդապատումը Տաթևացունն է, որտեղ դարձյալ «**գիթոր**» բառը գործածվում է «մեղավոր», «հանցանք գործած» իմաստներով:

Ժառանգական իրավունքից ունենք «**արենազգն**» նորակազմությունը՝ «արյունակից, ազգակից» իմաստով, որի առկայության դեպքում մինչև չորրորդ սերունդը արգելվում է խնամիրությունը «Եւ որպէս ի մէջ **արենազգացն** ո՛չ լինի խնամութիւն մինչև ի չորրորդ ծնունդն»¹⁷: Որևէ բառարան չունի վկայություն:

Հաջորդ բառը՝ «**արենակցութիւն**» հոմանիշ է սրան, որը եզրափակում է յոթերորդ սերունդը. «Զի հայրն և որդին և թոռն որ է՛ **գ.** և թոռին թոռն որ է՛ **դ.** որ լինի է, և եզր արենակցութեան»¹⁸: Որևէ բառարան չունի վկայություն: Իսկ յոթերորդ սերնդի սկիզբն ըստ Տաթևացու «ապպապ»-ն է. «Առաջին մեք, և հայրն, և պապն մեր. հոր պապն, և պապու հայրն, և պապուն պապն, և ապպապն. որ է՛ նմանապէս և ի մօր կողմն»¹⁹:

«**ՀԱՄԱԺԱՌԱՆԳ**» բառը դիտարկել ենք իբրև «հավասար իրավունքներով ժառանգորդ»-ին առնչվող իրավական հասկացություն Այն «Գիրք հարցմանց»-ում դիտարկվում է հոգևոր իմաստով. «...որպէս ասէ առաքեալն, չիք խտիր ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի և ո՛չ ազատի. զի դուք միապատիւ էք ի քրիստոս յիսուս և համաժառանգք արքայութեանն»²⁰: Որևէ գրաբարյան բառարան չունի վկայություն, իսկ արդի հայերենում այն շրջանառվում վերոնշյալ՝ իբրև հավասար իրավունքներով ժառանգորդին առնչվող իրավական հասկացություն, այսինքն հանդես է եկել բառիմաստի փոփոխությամբ:

Հետաքրքիր տվյալներ է տալիս Գրիգոր Տաթևացին «Գիրք քարոզութեան» Ամառան հատորում *օժիտ* բառի վերաբերյալ, որի արժանահավատությունը հաս-

¹⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր. էջ 628:

¹⁷ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 611:

¹⁸ Նույն տեղում, էջ 611:

¹⁹ Նույն տեղում, էջ 611:

²⁰ Նույն տեղում, էջ 590:

տատվում է նաև հայերենի բարբառների տվյալներով: Ժառանգական իրավունքի տեսանկյունից այս բառի քննությունը նաև պատմական հետաքրքրություն է պարունակում: Գրիգոր Տաթևացին գրում է. «Հարսին տուեալ լինին երեք իրք. այսինքն բաժինք, **օժիտք** և պարգևք. բաժինքն տուեալ լինլ ի հօրէ հարսինն վասն պիտոյից պսակին, և **օժիտքն ի փեսայէն լինի տուեալ**, իսկ պարգևքն ի բարեկամացն լինին տուեալ»²¹ (ընդգծ. Ս.Գ.). այսինքն՝ ա. օժիտը բերվել է փեսայի կողմից, աղջկա հայրական տնից բերվածը կոչվել է բաժինք, որը ծավալով և կշռով զիջել է օժիտին, որովհետև նախատեսված է եղել հարսանեկան ծախսերը հոգալու համար. բ. երեք նվերներն էլ հասցեագրվել են հարսնացուին, այսինքն ապագա տանտիկնոջը:

Որքանով է հավաստի այս վկայությունը, և կա՞ն արդյոք վերոասվածը հաստատող այլ փաստեր բացի հայերենի բարբառներից:

Ժամանակին անվանի հայագետներից մեկը՝ Նիկողայոս Ադոնցն իր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատության մեջ²² մանրամասնորեն քննել է ամուսնական հարաբերությունների պետական, իրավական կարգավորման խնդիրը միջնադարյան Հայաստանում և կատարել հետաքրքրական դիտություններ՝ մասնավորապես խնդրո առարկա բառի վերաբերյալ: Նա, մեջ բերելով «Հայերի ժառանգական իրավունքի մասին» Հուստինիանոսի հրապարակած նովելները²³, որոնցից մեկում հայտարարվում է, որ հայ կինը զրկված է ժառանգական իրավունքից, գրում է. «Հարսնացուի բաժինքի իմաստով գրաբարում օժիտ բառի առկայությունը չափազանց կասկածելի է դարձնում Հուստինիանոսի այն պնդումները, թե հայ կանայք ամուսնանում էին առանց օժիտի: Հիշյալ բառը պատկանում է հայոց լեզվի ոչ արիական տարրերի թվին (ըստ հեղինակի՝ ասորական փոխառություն է), այդ պատճառով էլ նրա հնությունը կասկածից վեր է»²⁴, ապա տողատակում ավելացնում է. «Հնարավոր է, որ **օժիտ բառը հայերենում**

²¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր, էջ 203:

²² Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987:

²³ Նովելլայում գրված է. «Մենք միաժամանակ անհրաժեշտ համարեցինք սույն օրենսդրությամբ ուղղել նրանց կյանքի կոպիտ թերությունը, որպեսզի բոլոր սովորության համաձայն ծնողների, եղբայրների և մյուս ազգականների թողած ժառանգությունը չպատկանի միայն տղամարդկանց և երբեք՝ կանանց, ինչպես նաև այն պատճառով, որպեսզի կանայք առանց օժիտի չամուսնանան և չգնվեն իրենց փեսացուների կողմից»: Նիկողայոս Ադոնց, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*, Ե., 1987, էջ 208:

²⁴ Նույն տեղում, էջ 216:

ևս գործ է անվել այն նվերի իմաստով, որ փեսացուն տալիս է հարսնացուին, ինչպես ասորերենում» (ընդգծ.-Ս. Գ.)²⁵:

Ինչպես տեսնում ենք, Ադոնցի ոչ այնքան համոզվածությամբ արված եզրահանգումը հաստատվում է Գրիգոր Տաթևացու վկայությամբ, և կասկածից վեր է, որ 14-15-րդ դարերում, երբ ապրել է Տաթևացին, *օժիտը* դեռ շարունակել է գոյություն ունենալ իբրև փեսայի կողմից հարսին տրված նվեր: Ի դեպ, ասենք, որ Սուրբ Գրքում քանիցս հենց այս իմաստով էլ բառը գործածված ենք գտնում²⁶:

Ի լրումն բերված փաստերի, ասենք, որ *օժիտ* բառի պահպանված լինելը Սվեդիայի բարբառում՝ ուժեղք, ուժդիլ ձևերով. «ուժեղք». խոսքկապի ժամանակ հարսնացուին տրուած նուէրը», «ուժդիլ». փեսի ազգականների նուէր տալը հարսնացուին»²⁷: Այսպիսով, Սվեդիայի բարբառը ոչ միայն հարազատ է մնացել վաղնջական իմաստին, այլ նա նույնպես երկու դեպքում էլ իբրև ստացող նշում է հարսնացուին, մի բան, որ իր հերթին հաստատում է Գրիգոր Տաթևացու վկայության արժանահավատությունը:

Գալով «օժիտ» բառի ստուգաբանությանը, ապա ինչպես տեսանք, Ադոնցն այն համարում է փոխառություն ասորերենից՝ *zabhdā* «նուէր» բառից, մինչդեռ հայ միջնադարյան հեղինակները այն կապել են *ոյժ*, *ուժ* արմատի հետ՝ *ոյժտել*, *օժտել*՝ «գորացնել, օժանդակել» իմաստով: Կոստանդին Երզնկացին վկայում է «ուժիտ» ձևը: Սվեդիայի բարբառը նույնպես այս իմաստով էր պահպանել:

Հյուբշմանն այս բառը դնում է բնիկ բառերի շարքում, դրանք *օգնել*, *օգուտ*, *օժանդակ* բառերն են, որոնց համար հայագետը ընդհանրացնում է «օգնել» իմաստը²⁸: Հօգուտ «օժիտ»-ի բնիկ հայկական լինելուն թերևս կարելի է բերել նաև այն փաստը, որ **Հր. Աճառյանը այն չստուգաբանված բառերի շարքին է դասում, այսինքն նա գտնե չի պնդում, որ բառը փոխառյալ է շարքում** (ընդգծ.-Ս. Գ.):

Ըստ էության, փաստերի համադրումով կարելի է խոսել «օժիտ» բառի բնիկ հայերեն լինելու մասին: Դրանով սկզբում կոչվել է այն նվերը, որ փեսան տվել է հարսնացուին: Դա, ամենայն հավանականությամբ, շատ ավելի ծանրակշիռ է եղել, քան աղջկա հոր կողմից տրված բաժինքը, որովհետև նախ՝ բաժինքը տրվել է հարսանիքի հոգսերը հոգալու համար և երկրորդ՝ հետագայում, երբ արդեն դադարել է փեսայի կողմից պաշտոնապես օժիտ տալը, այն իբրև անվանում գրավել է բաժինքի տեղը՝ վերջինիս գրեթե դուրս մղելով գործածությունից: Արդի հայերենում «բաժինք»-ը իր նախնական իմաստով, այսինքն աղջկա հոր կողմից

²⁵ Նույն տեղում, էջ 217:

²⁶ Տե՛ս Աստուածաշունչ, Սանկտ Պետերբուրգ, 1817, Ա թագատրաց, ԺԸ գլուխ:

²⁷ Հր. Աճառյան. *Հայերեն արմատական բառարան*. Կ. Դ, Երևան, 1979, էջ 611:

²⁸ Նույն տեղում, էջ 611:

տրվող ստացվածքի առումով, պահպանվել է Ղարաբաղ-Գորիս բարբառում՝ *պեժինք, պաժինք* ձևերով. «Ղարաբաղի բարբառի բառարան»-ում կարդում ենք. «ծնողների ազգականների կողմից ամուսնացող աղջկան տրվող ունեցվածք, օժիտ»²⁹:

Եզրակացություն

Այսպիսով, Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության որոշ իրավական հասկացությունների համեմատությունը հայերենի բառարանների հետ ցույց է տալիս, որ դրանք երբեմն վկայված են նույն իմաստով, որը պահպանել են թե գրական հայերենը, թե բարբառները: Կան իմաստային տեղաշարժերի դեպքեր, ընդ որում դրանց նախնական իմաստը դեռ պահպանված ենք տեսնում բարբառներում, օրինակ՝ օժիտ բառի դեպքում, և կան, որ բոլորովին վկայված չեն, այսինքն գործ ունենք նորակազմ բառերի հետ:

Օգտագործված գրականություն

1. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741:
2. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ.Պոլիս, 1740:
3. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց. Կ.Պոլիս, 1729:
4. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա-Դ Ե., 1971-1979:
5. Գ.Աւետիքեան, Խ.Միրմելեան, Մ.Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 2, Վենետիկ, 1837:
6. Ս.Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ.1, Ե., 1971:
7. Աճառյան Հր., Հայերեն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913:
8. Աստուածաշունչ, Սանկտ Պետերբուրգ, 1817:
9. Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987:
10. Սարգսյան Ա.Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե. 2013:

Grigoryan Susanna-Applications of Legal Concepts in Series of Armenian Dialects.- A comparison of some of the legal concepts considered by Grigor Tatevatsi with Armenian dictionaries shows that sometimes they are attested with the same meaning (for example, qreakan - criminal), there are cases of semantic shifts (for example, ojit-dowry, orenq -law), and there are cases that are not attested. in general, that is, we are dealing with

²⁹ Ա. Սարգսյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե. 2013, էջ 611:

newly formed words with (for example, azgajinj- genocide). That in order to give a complete picture of the change in the meaning of a word, sometimes we cited dialect realities.

Keywords: Customary Law, Church Rules, Code of Law, Legal Code, Criminal Law, Law, Divorce Paper.

Григорян Сусанна-Некоторые правовые понятие литературного наследия Григора Татеваци в армянских словарях.- Сравнение некоторых юридических понятий Григора Татеваци с армянскими словарями показывает, что иногда они засвидетельствованы с одним и тем же значением (например, գրեական-уголовное), есть случаи смысловых сдвигов (например, օյիտ-приданое, օրենք-закон), а есть случаи, которые не засвидетельствованы вообще, то есть мы имеем дело с новообразованными словами с (например, azgajinj-геноцид). Для того, чтобы дать полное представление об изменении значения слова, иногда мы приводили также диалектные реалии относительно данного слова.

Ключевые слова: Право по обычии, церковные правила, свод законов, судебник, закон, бумага развода.

«ՓՈՔՐԱՎՈՐ» ԵՎ «ՁԱԳ» ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.54412/93055-2023-68

Զաքարյան Հովհաննես
բանասիրական գիտությունների թեկնածու,
«Տաթև» գիտակրթական համալիր,
լեզվաբանության բաժանմունքի ղեկավար,
hovzakaryan@yahoo.com

Բանալի բառեր. հնդեվրոպական նախալեզու, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, ձայնդարձ, ածանց, աճական, սահող s-:

Նախաբան


Հոդվածը նվիրված է հ.-ե. *(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատից ճյուղավորված «փոքրավոր» և «ձագ» իմաստներով մի քանի բառերի քննությանը, որոնք առ այսօր համարվել են կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեցող, կա՛մ օտար աղբյուրներից փոխառված: Իմաստային, հնչյունական և բառագիտական վերլուծությունների հիման վրա առաջարկված են ստուգաբանական նոր վարկածներ մասնավորապես **ծառա, ծարրթվոր, ճորտ, ստրուկ, ճետ, ճեռ, ճուտ, ճիգ (ճիժ), ծիտ, ծերկ, զավակ, ճավակ, ճաւակեթ, զուարակ, ծոռ, կոռ, կոր, խորշ** «երեխա», **խոխա, շառաւիղ, ճմլիկ** և այլ բառերի վերաբերյալ: Հոմանիշային շարքեր կազմող այս բառերի համար վերականգնվող նույնարմատ նախաձևերը հնչյունապես աղերսվում են միմյանց՝ տարբերվելով ածանցներով, աճականներով, ձայնդարձի աստիճաններով, բաղաձայնական օրինաչափ հերթագայություններով, հնչունափոխություններով, առանցքային *k հնչյունի շնչեղացմամբ, քմայնացմամբ կամ շրթնայնացմամբ, սահող s-ի առկայությամբ/բացակայությամբ և այլ հատկանիշերով:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Հ.-ե. *(s)keu- (<*sek-) «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատը և նրա՝ սղված, ապա զանազան աճականներով ընդլայնված, ձայնդարձի տարբեր աստիճաններով արտահայտված, շարժուն (սահող) s-ով կամ առանց դրա, շնչեղացած/չշնչեղացած, քմայնացած/չքմայնացած, շրթնայնացած/չշրթնայնացած k-ով տարբերակների ածանցյալները հ.-ե. լեզուներում, այդ թվում՝ հայերենում¹, ենթարկվել են

¹ Ածանցյալների այդ հսկա բազմությանը կարելի է ծանոթանալ Յ. Պոկորնու «Հնդեվրոպական ստուգաբանությունների բառարանում» [J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959 (<http://dnghu.org/indoeuropean.html>) (այսուհետ՝ Պոկ.)] և Ս. Նիկոլայևի «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» [S. Nikolaev, *Database of Indo-European etymology*. — <http://starling.rinet.ru/cgi-in/response.cgi?root=config&morpho=0&basename=data\ie\piet&first> (այսուհետ՝ Նիկ.)] մաս-

ոչ միայն ձևային, այլև իմաստային ամենաբազմազան զարգացումների: Ահա իմաստային զարգացման միայն մի ճյուղ՝ ըստ Յ. Պոկոռնու և այլոց ներկայացրած նյութերի (տե՛ս գծանկարը):



Հ.ե. *(s)keu- արմատի ցույց տված «կտրել, հատել, ճեղքել» գործողության արդյունքը ամբողջի կտորներ, պատառներ, ծվեններ, հատիկներ, այսինքն՝ մեծի ավելի փոքր մասեր ստանալն է: Հիշենք այդ արմատի՝ «մանր, փոքր» իմաստային բաղադրիչ պարունակող ածանցյալներից մի քանիսը հատկապես հայերենից. **խախիճ** «մանր, կտոր-կտոր» [*<*khidio-*՝ կիսակրկնությամբ]², **կրտ-սեր** «ամենափոքր սերունդը» [*<*(s)kur-d-*], **կտոր (կտուր, կտիր, կտոր)** «մաս, հատված, բեկոր» [*<*(s)ku-d-*], **կարճ** [*<*(s)kəɹ-d-io-*]³, **խիճ** «կոպիճ, քարի կտորտանք» [*<*khidio-*] (ՀՄԲ, 330-331), **խրխոր (խրխուր, խրխիր)** «1. փշուր, մանր կտոր, չնչին բան, 2. փուխր» [*<*khor-*՝ կրկնությամբ] (ՀՄԲ, 355), **խիպար** «մանր քար, խիճ» [*<*khēb-*], **խշուր (խուշուր)** «1. կտորտանք, խոիվ, փշուր, մանրուր, տաշեղ, 2. քիչ, սակավ» [*<*(s)khō-skē-*], **կոպիճ** «խիճ, մանր գլաքար» [*<*(s)ko-b-*], **կոռուճ/կռոճ/գոիճ** «ջարդած պինդ նյութի փոքր կտոր, կռշտ, բեկոր» [*<*(s)kōr-s-*], **կրկուտ** «փայտի կտորտանք, խոիվ» [*<*(s)kō-r-*՝ կիսակրկնությամբ և **տ** սաստկականով]⁴, **ցլեպ** «փշուր, բեկոր» [*<*sk(ē)leb-*]⁵, **ծլեպ** «ցլեպ, սրածայր բեկոր» [*<*(s)k'hē-l-*], **ծեղ (ծիղ, ծիլ)** «շյուղ, կտոր, փշուր» [*<*(s)k'he-l-*], **ծիւղ (ծուղ)** «1. ծեղ, շյուղ, հարդի փշուր, 2. խոիվ» [*<*(s)k'heu-l-*]⁶, **ճակ** «կտոր, փերթ, շառաշիղ» [*<*sk'hə-g-*], **ճախ (ճեխ)** «մանր ցախ, խոիվ, կրկուտ» [*<*sk'hə-kh-*], **ճիւ** «1. մաս, կտոր, 2. վերջույթ (թև, ճուռ, ոտք, կճղակ, սմբակ, ամորձիք), 3. թռչուն» [*<*sk'hē-p-*], **ճուռճուռ (ճուրճուր, կուրկուռ)** «վախկոտ փոքր թռչուն» [*<*sk'hōr-s-*՝ կրկնությամբ], **ճուռիկ** «կարճ մարդ» [*<*sk'hōr-s-*], **ճուռա(յ)** «փոքր սրինգ» [*<*sk'hōr-s-*

նավորապես *skēn- «կտրել, պոկել», *(s)ken-(d)- «մաշկել, ճեղքել», *(s)ker-4, (s)kerə-, (s)krē- «կտրել», *(s)ko-l- «կտրել» և այլ գլխաբառերի տակ:

² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010 (այսուհետ՝ ՀՄԲ), էջ 310:

³ Տե՛ս Զ. Ջաքարյան, Կարիճ, կարճ, կիրճ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն, «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» IV միջազգային գիտաժողովի (Վանաձոր) գիտական նյութերի ժողովածու, Ե., 2016, էջ 87-91 (այսուհետ՝ Ջաք., 2016):

⁴ Տե՛ս Զ. Ջաքարյան, Խխուռ, քրքիր, կոպիտ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն, «Արեղյանական ընթերցումներ - 2» հանրապետական գիտական նստաշրջանի հողվածների ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2018, էջ 79-93:

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 148:

⁶ Տե՛ս Զ. Ջաքարյան, Ծ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն, «Ջահուկյանական ընթերցումներ» (գիտական հողվածների ժողովածու), Եր., 2019, էջ 35-45:

]7, կէս, կիսել [^{*}skē-k'-], կորի «ակոս, արտի առու, փոքր ջրանցք» [^{*}(s)ko-r-iio-]⁸, լատ. cordus «կրտսեր», հ.հնդկ. krdhuh «կարճեցված, փոքր» (Նիկ., 125), հուն. καρός «ոչնչություն, դատարկություն», ἀκαρής, ἀκαριαῖος «պատիկ», իռլ. cert «փոքր», մ.ս.գերմ. schör «նվագ», ռուս. բրբռ. kórnyj «կարճահասակ, կարճ», հ.բ.գերմ. scurz «կարճ», անգլ.-սաքս. scort «կարճ», արբ. shkurt «կարճ», kodra «բլուր, փոքր սար», մ.իռլ. կիմր. և ն corr «գանձ» (Պոկ., № 1738, (s)ker-4, (s)kerə-, (s)krē- «կարել»), корнать «կարճացնել»⁹ և այլն:

«Ամբողջի համեմատ նրա ավելի փոքր մասի, հատվածի» իմաստի զարգացումներից են «կարգավիճակով փոքրավորի՝ սպասավորի» և «էակից սերվածի՝ ձագի» ենթաիմաստները: Հայերենում այդ նշանակություններով բառերի թվում կան այնպիսիները, որոնք կարելի է կապել հ.-ե. ^{*}(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» արմատի հետ, այսինքն՝ դասել այդ արմատից սերված վերոհիշյալ բառերի շարքին: Ստորև ներկայացնում ենք այդ բառերը:

1. «Փոքրավոր» իմաստով բառեր

Ծառայ «1. ստորակարգ, ցածրակարգ, 2. ճորտ, ստրուկ, գերի, հպատակ, 3. սպասավոր, փոքրավոր, 4. արբանյակ» բառը Հ. Աճառյանը համարել է հավաստի չստուգաբանված¹⁰: Գ. Ջահուկյանը, հետևելով Լիդենին, բխեցրել է հնիւլ. ^{*}g'rsāti-՝ ^{*}g'ers- «պտտել, ծռել, դառնալ» արմատից, որից է **ծուռ** բառը (ՀՄԲ, 360): Սակայն խնդիրն այն է, որ **ծուռ** բառի հետ կապելու առաջարկն արել է Հ. Աճառյանը դեռևս 1906 թ., բայց հետո հրաժարվել է այդ վարկածից (ՀՄԲ, 2, 447-448): Նա մերժել է նաև Լիդենի առաջարկը՝ կապելու ^{*}g'ers-ի հետ (նույն տեղում): Նկատի ունենալով կարծիքների այս հակասությունը, նաև «ծառա» և «փոքր» իմաստների փոխառնչությունը¹¹՝ առաջարկում ենք **ծառ-այ** <^{*}(s)k'hə-r-s- <^{*}(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանական բանաձևը՝ *r, *s աճականներով: -**Այ** ածանցի համար հմմտ. *առ-արկ-այ, հիմ-այ, արք-այ, ան-ուղղ-այ, ան-զգ-այ* և այլն:

⁷ Տե՛ս Հ. Ջաքարյան, Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն, «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2(22), 2019, Գյումրի, էջ 228 - 238:

⁸ Տե՛ս Հ. Ջաքարյան, Կեղեքել, խողխողել, քակ(տ)ել, կէս և մի քանի այլ բառերի ստուգաբանություն, «Արդի հայերենագիտության խնդիրները» առցանց գիտաժողով, ՀԳԱ ԼԻ, 2020, http://language.sci.am/sites/default/files/hovannes_zakaryan.pdf

⁹ Տե՛ս Викисловарь (<https://ru.wiktionary.org/wiki>) (այսուհետ՝ ՎԲՌ):

¹⁰ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետ՝ ՀՄԲ), հ. 2, էջ 447-448:

¹¹ «Փոքր – երեխա – ծառա» իմաստային անցման համար հմմտ. գնդ. karaiti «1. մանուկ, 2. ծառա» (ՀՄԲ, 2, 447-448, ծառայ), ռուս. холоп «ճորտ», բնիմաստը՝ «տղա, մանչ» [ՎԲՌ, холоп], раб «ստրուկ» <^{*}roб- <^{*}orбe «որբ», բնիմաստը՝ «փոքրիկ, տղա», որից՝ նաև ребёнок «երեխա» [ՎԲՌ, раб], լիտվ. tarnas «ծառա, սպասավոր» (բնիմաստը՝ «մանուկ, պատանի») (ՀՄԲ, 2, 198, թոնն, Wiktionary [<https://en.wiktionary.org/wiki>] [այսուհետ՝ ՎԲԱ], tarnas), мальчишка «1. փոքր տղա, 2. աշկերտ, 3. ծառա» (ՎԲՌ, Ա. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Ե., 1977), փոքրավոր «1. փոքր տղա, 2. ծառա, սպասավոր» (Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976):

Ծարըթվոր (բրբռ.) «ծառա» բառը¹² չկա ստուգաբանական բառարաններում: Սա թե՛ իմաստով, թե՛ անաժանց հիմքի ձևով գրեթե համընկնում է վերոհիշյալ **ծառայ** բառին: Այդ նմանությունից ելնելով՝ կարելի է առաջարկել **ծարըթ-վոր** <*(s)k'hə-r-t- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը՝ *r, *t աճականներով և **-վոր** ածանցով (հմմտ. *բանվոր, հնձվոր, քաղվոր, ջրվոր, սարվոր* ևն): **Ը** հնչյունը թերևս բարբառային-խոսակցական ներդաշնակային հավելում է (հմմտ. *տարբեր/տարրբեր*¹³, *պճլո/պճրլո*¹⁴, *քննել/քնննել, քրտնել/քրտրնել, Մինսկ/Մինըսկ*): Ի դեպ, իմաստով և ձևով **ծարըթվոր**-ին է առնչվում բարբառային անաժանց **ծարթ** «մանր, մանրացրած» բառը (նույն տեղում), որին կարելի է վերագրել նույն ստուգաբանությունը:

Ճորտ «1. փոքրավոր, սպասավոր, ծառա, 2. հպատակ, իրավագուրկ, անազատ, ճնշված» (որից՝ **Ճորտ ու պորտ** «ազգուտակ, ամբողջ գերդաստանը») բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 213, ՀՄԲ, 496): Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք **Ճորտ** <*(s)k'hor-d- <*(s)k'he-r <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ *r-ն և *t-ն աճականներ են: Կարելի է արձանագրել, որ **Ճորտ** բառի նախաձևը **ծառայ** բառի նախաձևի ձայնդարձային տարբերկն է՝ սկզբնահնչյունի **ճ/ծ** հերթագայությամբ և *s-ի փոխարեն *d աճականով:

Ստրուկ «գերված կամ գնված ծառա» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 281): Գ. Ջահուկյանը կասկածով վերականգնել է *strug- նախաձև՝ բխեցնելով հ.-ե. *ter- «պինդ, կարծր, խիստ» արմատից՝ համեմատելով անգլ. struggle նույնարմատ «ջանք թափել, պայքարել, դիմադրել, կռվել» բառի հետ (ՀՄԲ, 697): Սակայն իմաստային անցումը համոզիչ չէ: Ելնելով իմաստային վերոհիշյալ «կտրել – փոքր – փոքրավոր – ծառա» հանրույթային անցումից՝ առաջարկում ենք **ստր-ուկ** <*u-տ-ր- <*(s)k'ō-d-ro- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը (որտեղ *d-ն աճական է, *-ro-ն նախահայերենյան ածանց է, **-ուկ**-ը՝ հայերենյան¹⁵): Ձևի և իմաստի համար հմմտ. նաև սանս. śudhra «հնդկական չորրորդ՝ ճորտերի և ստրուկների դասակարգը» բառը:

2. «Ձագ»¹⁶ իմաստով բառեր

¹² Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012 (այսուհետ՝ ՀԼԲԲ), Գ, 397:

¹³ Ճահուկ-Վայքի միջբարբառից այս վկայությունը տվել է բարբառագետ Արտակ Վարդանյանը:

¹⁴ Սա Ուրմիայի բարբառից է (ՀԼԲԲ, Ե, 92):

¹⁵ Ստրուկ բառում -ուկ-ը ածանց է համարել դեռևս Մ. Աբեղյանը (Հայոց լեզվի տեսություն, Ե., 1931, էջ 278):

¹⁶ Ի դեպ, ձագ բառի համար ընդունված է *g'hāg^wh- «ճուտ» ստուգաբանությունը (ՀԱԲ, 3, 141, ՀՄԲ, 473), թեև կարելի է առաջարկել նաև ձագ <*(s)k'hə-g^wh- <*(s)keu- «կտրել» տարբերակը: Անշուշտ, ձագ բառի ձայնդարձային կրկնավոր ածանցյալ է ձիգձիգ «1. հավի փոքր ճուտ, 2. կարճահասակ» բառը (տե՛ս Մ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945 [այսուհետ՝ Մալխ.], 3, 174): Վերջինից է ձիգ-ձիգ «հավերի կանչելու ձայնարկություն» բառը (Մալխ., 3, 174):

Ճես (բրբռ. **Ճիս**) «1. զավակ, ժառանգ, սերունդ, զարմ, ցեղ, ազգ, 2. փոքրիկ արքադադ, 3. հավի ճուտ, վառեկ, 4. փոքրիկ, մանչուկ» (որից՝ **անճես** «անզավակ», **անճեսել** «ցեղը ջնջել», **միաճեսի** «մեկ բուն ունեցող (ծառ)», բրբռ. **ճուլօզ**¹⁷ «փոքրիկ արլոր, արլորաճուտ») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 3, 197): Գ. Ջահուկյանը կասկածով փոխառյալ է համարել իրանական ենթադրյալ *čit (čiyāt) բառից՝ համեմատելով ավ. čithra- «ծագում է» ձևի հետ (ՀՄԲ, 492): Նկատի ունենալով վերոհիշյալ «կտրել - փոքր - զավակ» իմաստային հանրույթային անցումը, ինչպես նաև այն, որ **ճես**-ի **ցեղ** հոմանիշը դուրս է բերվում հ.-ե. *sk'e-l- «ճեղքել» նախաձևից (ՀՄԲ, 742)՝ առաջարկում ենք վերջինիս մեկ այլ՝ *sk'he-d- տարբերակից բխեցնել **ճես**-ը: Այս **ճես** <*sk'he-d- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» բանաձևում *d-ն աճական է: Ի դեպ, կարելի է ենթադրել, որ նույն արմատից է **ճեսիկ** «կավե կարճ ու լայն կարաս» բառը (ՀԼԲԲ, Գ, 379):

Ճես «ճես, սերունդ, զարմ, տոհմ» բառը (Մալխ. 3, 207, ՀԼԲԲ, Գ, 379) չկա ստուգաբանական բառարաններում: Մա վերոհիշյալ **ճես** հոմանիշից տարբերվում է միայն աճականներով: Հետևաբար սրա ստուգաբանական բանաձևը կլինի՝ **ճես** <*sk'he-r-s- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել», որտեղ *r-ն և *s-ն աճականներ են: Այս բառի առկայությունը ևս մի ապացույց է, որ **ճես**-ին իրանական ծագում վերագրելու փորձը մերժելի է:

ճուտ (բրբռ. **ճուճ, ճուչ**)¹⁸ «ձագ, զավակ, երեխա, մանուկ» բառը Հ. Աճառյանը համարել է **ճես**-ի ձայնդարձային տարբերակ՝ թողնելով առանց ստուգաբանության (ՀՄԲ, 497): Դա է հաստատում **ճեսնոց** «հավի ճուտերի վանդակ» բառը (Մալխ. 3, 208): Գ. Ջահուկյանը **ճուտ**-ը չի կապել **ճես**-ի հետ և համարել է անհայտ ծագման բառ, «թերևս բնաձայնական կազմություն» (ՀՄԲ, 497): Առավել ընդունելի համարելով Հ. Աճառյանի կարծիքը՝ առաջարկում ենք **ճուտ** <*sk'hō-d- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ *d-ն աճական է: Ըստ Հ. Աճառյանի՝ **ճուտ** բառի կրճատված տարբերակի կրկնավորն է հավերին կանչելու **ճու-ճու (ջու-ջու)** ձայնարկությունը (ՀՄԲ, 497): Անշուշտ, նույն արմատից են նաև **ճուճա, ճուճե** «կարճահասակ, թզուկ» (ՀԼԲԲ, Գ, 423) բառերը:

Ճիզ (Ճիժ) «մանուկ, երեխա» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀՄԲ, 3, 199, ՀՄԲ, 492): Մա իր **ճուտ, ճես** և **ճես** հոմանիշներից տարբերվում է թե՛ ձայնդարձի աստիճանով, թե՛ աճականով: Ուստի առաջարկում ենք **Ճիզ** <*sk'hē-g'h- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանական բանաձևը: **Ճիժ** տարբերակի համար կարելի վերականգնել *sk'hē-gʷh- նախաձևը (**զ/ժ**

Մա էլ իր հերթին կապվում է ձիբո-ձիբո, ծիպ-ծիպ, ծիկ-ծիկ հոմանիշների, ռուս. цыпа, цыпка, цыплёнок «հավի ճուտ», цып-цып «ծիպո-ծիպո», անգլ. chicken և այլ բառերի հետ (ՎԲԱ, chicken):

¹⁷ Այս բառը Ստ. Մալխասյանցի բառարանում կա որպես ճուլուզ (ճուլօզ) «1. նոր կանչել սկսող փոքրիկ արքադադ, 2. փոքրահասակ» (Մալխ. 3, 228):

¹⁸ Կա նաև ճուճու «1. հավի ճուտ, 2. վառեկ, 3. մանկիկ» (ՀԼԲԲ, 3, 423) տարբերակը:

հերթագայության համար հմմտ. *խզբզել – խժբժտել*), թեև ավելի հավանական է, որ **ճիժ**-ը **ճիզ**-ի հետագա բարբառային առնմանական զարգացումն է:

Միտ «1. թռչուն, 2. ճնճողիկ, 3. թռչնի ձագ» բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն կովկասյան լեզուներից, չնայած որ վրացագիտության մեջ կարծիք կա, թե կովկասյան լեզուներն են փոխառել հայերենից (ՀԱԲ, 2, 458): Գ. Ջահուկյանը համարել է բնաձայնական բառ (ՀՄԲ, 363): Նկատի ունենալով մի կողմից՝ տարաձայնությունները, մյուս կողմից՝ թե՛ ձևային, թե՛ իմաստային նմանությունը **ճուտ**, **ճետիկ**, **ճտլուզ**, **ճիզ** բառերին՝ առաջարկում ենք ստուգաբանական նոր վարկած՝ **ժիտ** <*(s)k'hē-d- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել», որտեղ *d-ն աճական է:

Մերկ (բրբռ.) «ձագ» (ՀԼԲԲ, Բ, 402) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից և ձևից ելնելով՝ կարելի առաջարկել **ժերկ** <*(s)k'he-r-g^w- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *r-ն և *g^w-ն աճականներ են:

Ջուակ «1. որդի, 2. ծնունդ, ցեղ, սերունդ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 85): Գ. Ջահուկյանը կասկածով համարել է փոխառություն իրանական աղբյուրից՝ համեմատելով սողդ. zwn «կենդանի արարած, երեխա» ձևի հետ (ՀՄԲ, 234): Սակայն այս բառը իմաստով միանգամայն համապատասխանում է վերոհիշյալ **ճուտ**, **ճետ**, **ճեռ**, **ճիժ**, **ժերկ** նույնարմատ հոմանշային շարքին: Ձևը նույնպես թույլ է տալիս սա ևս կապելու դրանց արմատին: Ուստի առաջարկում ենք **զու-ակ** <*(s)k^whəu- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ **-ակ**-ը ածանց է:

Ճուակ «զավակ, որդի, տղա» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 194): Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման բառ՝ «եթե *զուակ*-ի սխալագրությունը չէ» վերապահությամբ (ՀՄԲ, 491): Ավելի հավանական է, որ առկա է **զուակ**-ի տարբերակ՝ **զ/ճ** հերթագայությամբ, և այդ դեպքում կունենանք **ճու-ակ** <*(s)k'həu- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանական բանաձևը, որտեղ **-ակ**-ը ածանց է:

Ճուակեթ «աղջիկ, դուստր» բառը Հ. Աճառյանը հիշատակել է **ճուակ** բառի առիթով (ՀԱԲ, 3, 194): Ունի նաև Մալխասյանցը՝ **ճուակիթ** տարբերակով (Մալխ., 3, 205): Ակնհայտ է, որ կազմված է *ճուակ* բառից՝ **-եթ/-իթ** ածանցով (**-արթ/-իթ/-որթ/-եթ** [**<-եթ**]/**-ութ** ածանցի համար հմմտ. *փարթ-արթ-ել*, *կնճ-իթ*, *կող-կող-իթ*, *զավ-իթ*, *խրճ-իթ*, *փողթ-որթ*, *սոռ-որթ-այ*, *փարթ-եթ*, *խարխ-ութ*, *մո-ութ* են):

Ջուարակ «1. մատաղ ցուլ, արջառ, 2. «Ցուլ» կենդանակերպը» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 106): Գ. Ջահուկյանը կասկածով համարել է փոխառություն իրանական աղբյուրից՝ «բայց բուն աղբյուրը չի հավաստված» վերապահությամբ (ՀՄԲ, 242): Նկատի ունենալով, որ արջառը ևս ձագ է՝ առաջարկում ենք այս բառը կապել վերոհիշյալ **զուակ**, **ժերկ**, **ճուտ** և այլ բառերի ընդհանուր նախաձևի հետ՝ **զու-ար-ակ** <*(s)k^whō- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբա-

նական բանաձևով, որտեղ *-ար*-ը և *-ակ*-ը ածանցներ են (*-ար* ածանցի համար հմմտ. *գալ-ար, պալ-ար, կերպ-ար, տիպ-ար, պատահ-ար, ծու-ար-ել* են):

Օռո(ն) «թոռնորդի, որդու թոռ» (Մալխ., 2, 348, ՀԳԲ¹⁹, 523) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Նկատի ունենալով, որ դարձյալ առկա է «գավակ, ձագ» իմաստային բաղադրիչը մի քանի աստիճանով և ձևային նմանությունը վերոհիշյալ **Ճեռ** և այլ բառերին՝ առաջարկում ենք **ծոռն** <*ծոր-ն <*(s)k'ho-r-no- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ *r-ն աճական է, *-no-ն՝ ածանց, իսկ **ր-ն** է դարձել **ն** ոնգայինից առաջ:

Կռո(ն) (հռոն) «ծոռնորդի, թոռան թոռ»²⁰ (Մալխ., 2, 472, ՀԼԲԲ, Գ, 151, ՀԳԲ, 594) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Սա սկզբունքորեն շատ չի տարբերվում **ծոռ(ն)** բառից, հետևաբար ստուգաբանությունն էլ կլինի նույն տրամաբանությամբ՝ **կռոն** <*կոր-ն <*sko-r-no- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել», որտեղ *r-ն աճական է, *-no-ն՝ ածանց, իսկ **ր-ն** է դարձել **ն** ոնգայինից առաջ: Ինչ վերաբերում է **հռոն** տարբերակին, ապա մեզ **կ/հ** հերթագայության այլ օրինակ հայտնի չէ: Կարելի է ենթադրել **կ-խ-հ** անցում, որի միջանկյալ օղակը (***խռոն**) վկայված չէ: Իսկ **կ/խ, խ/հ** անցումների համար հմմտ. *կայտ-առ – խայտ-ալ, կաղ – խեղ, խախանդ – հահանդ, խոնավ – հոնավ, խոշտանգել – հոշտանգել, դախանալ – դահանալ, խաղող – հավող* և այլն:

Կոր «ձագ» (որից՝ **կոր**-ին «առյուծի՝ գայլի՝ օձի նն ձագ», խոճ-**կոր** «խոզի ձագ», **կոր**-նակ «բորենու փոքր ձագ») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 2, 648-649, կորին): Գ. Ջահուկյանը բխեցրել է հ.-ե. *g^uor- (◌)՝ *g^urebh- «սաղմ, ձագ» արմատից (ՀՄԲ, 422, ըստ Պոկոռնու), սակայն այս մեկնությունը մերժել է Հ. Աճառյանը (նույն տեղում): Ի դեպ, Հ. Աճառյանը հիշատակել ու մերժել է նաև այլ ստուգաբանական փորձեր, որոնցում զուգահեռներ են տարված ոչ միայն հ.-ե., այլև սեմական, կովկասյան հարանման և հարիմաստ բառերի հետ. դա կարող է վկայել նոստրատիկ ընդհանրության մասին: Այնուամենայնիվ, նկատի ունենալով այս տարաձայնությունները և բառիս ձևային ու իմաստային առնչությունը վերոհիշյալ **կռո(ն)**, **ծոռ(ն)** և այլ բառերի հետ, առաջարկում ենք **կոր** <*sko-r- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ *r-ն աճական է:²¹ Անշուշտ, նույն արմատի ածանցյալ է նաև **կռոնակ** «շան լակոտ՝ ձագ» բառը (Մալխ., 2, 472), որում **ր-ն** է դարձել **ն** ոնգայինից առաջ (**-նակ** ածանցի համար հմմտ. *աղջ-նակ, փոխ-նակ, կոչ-նակ, սկս-նակ* և այլն):

¹⁹ Հ. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913 (այսուհետ՝ ՀԳԲ):

²⁰ Այս բառի իմաստը ճիշտ է ներկայացված միայն Ա. Սուքիասյանի Հայոց լեզվի հոմանիշների բառարանում (Ե., 1967): Մյուս բառարանները, սկսած ՀԳԲ-ից, մեկը մյուսին ընդօրինակելով, սխալմամբ նշում են «ծոռի թոռ», որի դեպքում թոռան թոռը մնում է առանց ազգակցանիշ հատուկ եզրույթի:

²¹ Կոր «ձագ» բառն ունի համանուններ՝ կոր «կարիճ», որ նույն արմատի իմաստային այլ զարգացման արդյունք է (Ջաք., 2016), կոր «ծուռ», որ ծագել է հ.-ե. *gor-՝ *ger- «պտտել, ոլորել» արմատից (ՀՄԲ, 422), ինչպես նաև կոր- «կորուստ» արմատը, որի ծագումը դեռ ճշտված չէ (ՀՄԲ, 422):

Խորշ «երեխա, մանուկ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 2, 410): Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման ու, թեև նմանեցրել է հուն. κορος «երեխա» (<*k'er «աճել, սնել», որից՝ *սերունդ, սերմն*) բառին, սակայն դրա հետ չի կապել (ՀՄԲ, 345): Վերոհիշյալ «կտրել – մանրել – փոքր – երեխա» իմաստային հանրույթային անցումը նկատի ունենալով, ինչպես նաև հիմնվելով վերոհիշյալ **կոր, կոռն, ծոռն** բառերի հետ ձևային նմանության վրա՝ առաջարկում ենք **խորշ** <*(s)khor-s- <*(s)ke-r- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ *r-ն և *s-ն աճականներ են: Հ.-ե. այս նախաձևից ծագած ունենք երկու այլ համանուն բառեր՝ **խորշ** «փոս, ծակ, խորություն» (ՀՄԲ, 345) և **խորշ** «խոշոր կտոր, կոռճ» (ՀՄԲ, 345), որոնք նույն արմատի իմաստային այլ զարգացումների արդյունք են:

Խոխայ (բրբռ.) «երեխա» (Մալխ., 2, 279, ՀԼԲԲ, Բ, 347) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք այս բառը ևս բացատրել «կտրել – մանրել – փոքր – երեխա» իմաստային հանրույթային անցմամբ, և այդ դեպքում կունենանք **խոխ-այ** <*(s)kho-kh- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ *kh-ն աճական է (-**այ** ածանցի համար տե՛ս վերը՝ *ծառայ* բառի առիթով):

Շառալիղ (շառաւեղ) բառը բառարաններում սովորաբար ներկայացվում է «1. ընձյուղ, ծիլ, 2. սերունդ, զավակ, 3. շող, ճառագայթ» իմաստներով: Այս բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 3, 497): Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման՝ նկատելով, որ «շող, ճառագայթ» իմաստով թերևս կապ ունենա *շառ* «մուգ կարմիր» և *շառալի* «լույս, ճառագայթ» բառերի հետ (ՀՄԲ, 581): Կարծում ենք՝ հարկ է առանձնացնել երեք համանուններ՝ **շառալիղ**¹ «ընձյուղ, ծիլ», **շառալիղ**² «շող, ճառագայթ», **շառալիղ**³ «սերունդ, զավակ»: Այս երրորդի համար առաջարկում ենք **շառ-աւ-իղ** «սերունդ, զավակ» <*skhə-r-s- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ ունենք **-աւ** և **-իղ** ածանցներ (-**աւ** ածանցի համար հմմտ. *կաղ-աւ-ել, անձ-աւ, հար-աւ, խարդ-աւ-անք* ևն (տե՛ս նաև *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1975, էջ 85), **-իղ/-եղ** ածանցի համար հմմտ. *տորմ-իղ, խտ-իղ, բավ-իղ, ուղ-իղ, ինձ-իղ, տաշ-եղ, աս-եղ, ուղ-եղ, մժ-եղ, բոկ-եղ* ևն): Այս նույն նախաձևի իմաստային մեկ այլ զարգացում է **շառալիղ** «ընձյուղ, ծիլ» համանունը: Իսկ **շառալիղ** «շող, ճառագայթ» համանունը պետք է կապել հ.-ե. համանուն **(s)keu- «լուսավորել» արմատի հետ (հմմտ. ՀՄԲ, 591, շող):

Ճմլիկ(կ) (ճմբլիկ) «դեռահաս, մատղաշ, փոքրիկ (երեխա)» (Մալխ. 3, 217, ՀԼԲԲ, Գ, 402) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **ճմլ-իկ** <*ճմ-ուլ- <*ճուլ-/*ճիմ- <*sk'hō-/*sk'hē-m- <*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը, որտեղ *m-ն աճական է, **-ուլ-ը** և **-իկ-ը**՝ ածանցներ (-**ուլ** ածանցի համար հմմտ. *փսփ-ուլ-իկ, սր-ուլ-իկ, զանգ-ուլ-ակ* և այլն): Այս բառի մի տարբերակ է **չմբուլ** «պստիկ (երեխա)» ձևը (**ճ/չ** անցմամբ և **բ**

միջհավելվածով), որ խոսակցական լեզվում կիրառվում է որպես երեխային դիմելու փաղաքշական արտահայտություն:

Եզրակացություն

Այսպիսով ներկայացրինք «փոքրավոր» և «ձագ» իմաստներով հայերեն մի շարք բառեր (**ծառա**, **ծարըթվոր**, **ճորտ**, **ստրուկ**, **ճես**, **ճեռ**, **ճուտ**, **ճիզ** (**ճիծ**), **ծիտ**, **ծերկ**, **զավակ**, **ճավակ**, **ճաւակեթ**, **զուարակ**, **ծոռ**, **կոռ**, **կոր**, **խորշ** «երեխա», **խոխա**, **շառաիդ**, **ճմիկ** և այլն), որոնք մինչ այժմ համարվել են կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեցող (անհայտ ծագման), կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունային, ձևային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվել են ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք սերված են հ.-ե. **(s)keu-* (**sek-*) «կտրել, հատել, ճեղքել» արմատից:

Այդ բառերը փաստորեն կազմում են հոմանիշային խմբեր և միմյանց առնչվում են իմաստային հանրությային կապերով: Դրանց միջև փորձել ենք տեսնել նաև ձևային-ծագումնաբանական ընդհանրություն՝ հիմնավորելով դա ներքին ու արտաքին համեմատություններով և ստուգաբանական բանաձևումներով: Հատկանշական է, որ հոդվածում որպես հ.-ե. ծագման բնիկ հայերեն նույնարմատ բառեր ներկայացվածները **ծ**, **ճ**, **զ**, **շ**, **ս**, **կ**, **խ** սկզբնահնչյուններով են: Այս փաստը վկայում է հայերենում համապատասխան բաղաձայնների օրինաչափ հերթագայության առկայության մասին:

Zakaryan Hovhannes - Etymology of Several Armenian Words Meaning «Houseboy, Servant» and «Young One, Calf». - Several Armenian words meaning «houseboy, servant» and «young one, calf» are not etymologized or are considered to be borrowings. The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward new etymologies for them as native Armenian words of I. E. origin. They are: **ծառայ** «servant» **(s)k'hə-r-s-* **(s)keu-* «to cut, split», **ճորտ** «serf» **(s)k'hō-r-d-*, **ստրուկ** «slave» **(s)k'hō-r-d-*, **ճես** «child, heir» **(s)k'hē-d-*, **ճեռ** «breed, generation» **(s)k'hē-r-s-*, **ճուտ** «young one, calf» **(s)k'hō-d-*, **ճիզ** «baby» **(s)k'hē-g'h-*, **ծիտ** «small bird» **(s)k'hē-d-*, **զուարակ** «child, heir» **(s)k'həu-*, **ճաւակեթ** «child, daughter» **(s)k'həu-*, **զուարակ** «goby» **(s)k'hō-*, **ծոռն** «great-grandson» **(s)k'hō-r-no-*, **կոռն** «great-great-grandson» **(s)k'hō-r-no-*, **խորշ** «child, baby» **(s)k'hō-r-s-*, **խոխայ** «child» **(s)k'hō-kh-*, **շառաւիղ** «breed, son» **(s)k'hə-r-s-* etc.

Keywords: Proto-Indo-European, Root Variants, Initial Sound, Vowel Gradation, Affix, Determinative, S-mobile.

Закарян Оганес - Этимология некоторых армянских слов, обозначающих «малый, мальчишка, слуга» и «детёныш». - Некоторые армянские слова, обозначающие «малый, мальчишка, слуга» и «детёныш», считаются заимствованными или же не этимологизированными. В настоящей статье на основе фонетического,

словообразовательного и семантического анализов предлагаются их новые этимологии, согласно которым данные слова являются исконно армянскими словами индоевропейского происхождения. Эти слова: **ծառ-այ** «слуга» <*(s)kʰə-r-s- <*(s)keu- «резать, раскалывать», **ճրլո** «крепостной» <*skʰo-r-d-, **ստր-ուկ** «раб» <*unl-un-p- <*(s)kʰō-d-ro-, **ճէտ** «ребенок, наследник» <*skʰe-d-, **ճէռ** «поколение» <*skʰe-r-s-, **ճուտ** «детёныш» <*skʰō-d-, **ճրգ** «малыш» <*skʰē-gʰ-, **ծխո** «маленькая птица» <*(s)kʰē-d-, **գաւ-ակ** «ребенок, наследник» <*(s)kʰəu-, **ճաւ-ակ** «ребенок, сын», **ճաւ-ակ-եթ** «ребенок, дочь» <*skʰəu-, **գու-ար-ակ** «бычок» <*(s)kʰō-, **ծոռն** «правнук» <*ճոռ-ն <*(s)kʰo-r-no-, **կոռն** «праправнук» <*կոռ-ն <*sko-r-no-, **խոռ** «ребенок, малыш» <*(s)kʰo-r-s-, **խոխ-այ** «ребенок» <*(s)kʰo-kh-, **ջառ-աւ-իղ** «поколение, сын» <*skʰə-r-s- и т. д.

Ключевые слова: Праиндоевропейский язык, корневые варианты, начальный звук, чередование, аффикс, детерминатив, s-mobile.

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ
ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ՈՐՈՇ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ

DOI: 10.54412/93055-2023-78

Թաղևոսյան Հասմիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ լեզվի Հ. Աճառյանի անվան ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. hasarm79@mail.ru

Բանալի բառեր. միջնադարյան բժշկարան, միջին հայերեն, իմաստային դրսևորում, բժշկական տերմին, ախտանուն, տերմինային իմաստ, դերբայական ձև

Միջնադարյան բժշկարաններում հանդիպում են ինչպես հին հայերեն, այնպես էլ միջին հայերեն բառերի՝ գրաբարին անծանոթ իմաստներով զգալի թվով գործածություններ: Դրանք առօրյա-խոսակցական բառեր են որոնք հիմնականում *նմանության գուգորդությանը*¹ կիրառվել են նոր նշանակությամբ՝ շարունակելով պահպանել իրենց գրաբարյան հիմնական իմաստները:

12-րդ դ. Մ. Հերացու կողմից նախաձեռնած բժշկությունը ժողովրդին հասկանալի լեզվով մատուցելու կարևոր գործը շարունակվեց հետագա դարերում և իր անմիջական ազդեցությունն ունեցավ միջնադարյան բոլոր բժշկարաններում (12-16-րդ դդ.): Բժշկական հասկացությունները ժողովրդին հասանելի ձևով ներկայացնելու արդյունքը թերևս եղավ նաև զգալի թվով անսովոր բժշկական բառերի ու բառակապակցությունների կիրառությունը:

Բժշկարանների բառապաշարի քննության տեսանկյունից հատկապես հետաքրքրություն են ներկայացնում այն բառերը, որոնք հիմնականում կիրառվել են բժշկական նշանակությամբ և, փաստորեն, այդպիսով միջնադարում բժշկական տերմինի դեր են կատարել:

Ուշադրության են արժանի հատկապես բժշկարաններում գոյականաբար՝ ախտանվան կամ բժշկական այլ տերմինի նշանակությամբ կիրառված որոշ դերբայական ձևեր: Տերմինային իմաստով հետաքրքիր դրսևորումներ են հանդիպում անորոշ, գրաբարի անցյալ, հարակատար և ենթակայական դերբայական ձևերում:

Իբրև բժշկական տերմին է գործածվել *խաղղիլ* բայը: Վերջինս գրաբարի *խաղաղիլ*՝ «խաղաղանալ, հանդարտվել» բայի հնչյունափոխված տարբերակն է, միջին հայերենում շարունակում է վերոհիշյալ իմաստով գործածվել²:

13-րդ դարի բժշկապետ Գրիգորիսի բժշկարանում *խաղղիլ*-ը արաբերեն *սքթե*-ի (sakta) փոխարեն հենց անորոշ դերբայի ձևով կիրառվել է նաև «կաթված»

¹ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 79:

² Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Երևան, 2009, էջ 303:

նշանակությամբ. «Սքթեին՝ որ է *խաղողի*»³: «Եւ սքթայիլն՝ որ է *խաղողի* և ոչ իմանայ զցան անդամոցն» (Գր., 64):

Նկատենք, որ արաբերենում վերոհիշյալ *սքթ*-ի բայական *sakata* ձևը երրորդ իմաստով նշանակում է հենց «խաղաղվել, հանդարտվել»⁴, ինչպես և հայերենում: Սրանից կարելի է ենթադրել՝ *խաղողի* տերմինը ստեղծվել է արաբերենի ազդեցությամբ:

Խաղողի-ը զուգահեռ գործածվել է նաև խաղաղեցնել պատճառական բայի *խաղաղացնող, խաղաղացող, խաղաղեցնող, խաղաղեցնող* ենթակայական դերբայի տարբերակներով. «Իսկ սքթային երակն, որ անուանի *խաղաղացնող*»: «Ընծայի յիւրմէս սքթէ, որ անուանի *խաղաղացող*»: «Սքթէ, որ ասի *խաղաղեցնող*»: «Սքթէ, որ է *խաղաղեցնող*» (Գր., 5, 4, 9, 208): Հետագա դարերում այս տերմինը չի հանդիպում:

Ուշագրավ է Աբուսայիդի բժշկարանում անորոշ դերբայի ձևով իբրև կազմախոսական տերմին՝ գոյականաբար գործածված *արտաքսել* բայը, որը գրաբարյան *արտաքսելանել* «դուրս ելնել» բառակապակցությունից է առաջ եկել. այս պարագայում նշանակում է «դուրս ելնելու տեղ, ելք», ինչպես՝ «Եւ գայդ ԲԺ-ան դուռդ, զոր ասացաք... Բ՝ *արտաքսելն*. Ա՝ ջրհեղն և Բ՝ վերջինն»⁵: Ընդ որում նկատենք, որ Աբուսայիդի բժշկարանի համառոտ խմբագրված տարբերակում այս նույն իմաստով կիրառված ենք գտնում *ելն* տերմինը (Աբուս., 164): Վերոնշյալ *արտաքսելն*-ի հիման վրա Աբուսայիդը ստեղծել է *արտաքսելն առաջին* «միզանք» և *արտաքսելն վերջին* «հետանք» (Աբուս., 172) կազմախոսական բառակապակցական տերմինները: Նկատենք, որ թե՛ *արտաքսելն* և *ելն* բառերի տերմինային իմաստները, թե՛ դրանցով կազմված բառակապակցությունները տեղ չեն գտել ՄՀԲ-ում և մյուս* բառարաններում:

Ի շուրջ գալ // շուրջ գալ հարադիր բայը, որ գրաբարում նշանակում է «պտտվել, շրջել», Գրիգորիսի բժշկարանում կիրառվել է գոյականական «գլխապտույտ» իմաստով՝ իբրև արաբերեն *տուար* -ի հայերեն համարժեք. «Սըտրն ու

³ Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց (այսուհետև՝ փակագծերում Գր.), Ե., 1962, էջ 61;

⁴ Стен X. К. Баранов, Большой арабско-русский словарь, Москва, 2002., том 2, стр 792.

⁵ Աբուսայիդ, Յաղագս կազմութեան մարդոյն (այսուհետև՝ փակագծերում Աբուս.), Ե., 1974, էջ 172: Ս. Վարդանյանի աշխատասիրությամբ և ռուսերեն թարգմանությամբ տպագրված այս բժշկարանը հայագիտական և բժշկական գրականության մեջ հայտնի է նաև «Մարդակազմություն» անվանումով:

* Մեր առանձնացրած բառերը ստուգել ենք հետևյալ բառարանների տվյալներով. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1846, Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1836-37, Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., 1971-1979, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944, Հ. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, Լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարան», Ե., 2001-2012: Նորայր Բյուզանդացի, «Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց» (Մարտիրոս Մինասյանի հրատարակությամբ), Ժնն, 2000:

տուար, որ անուանի յիմարեալ և *ի շուրջ գալ*: «...և կամ պատահէ մարդոյն տուար, որ ասի *շուրջ գալ*» (Գր., 60, 186):

Ամասիացու «Օգուտ բժշկութեան» բժշկարանում «արյան շրջանառություն» տերմինային իմաստով է գործածվել նաև **գայլէն ու գնալն** բառակապակցությունը. «Ի բարակ երկնին աղէկ է իւր *գայլէն և գնալն*»⁶:

Գրիգորիսի բժշկարանում տերմինային իմաստով են հանդիպում *պաղէլ* և *ջախէլ* բայերի՝ անցյալ դերբայի ձևերը՝ *պաղեալ* և *ջախեալ*: Այս շրջանում անցյալ դերբայը, միջին հայերենի խոնարհման համակարգում աչքի չընկնելով, հիմնականում ածականի արժեքով է կիրառվում⁷, իսկ նշված բժշկարանում գոյականական տերմինի նշանակություն ունի:

Պաղէլ(իս) բայը գրաբարում ունի «սառչել», «սառույց դառնալ» իմաստները⁸: Վերջինիս անցյալ դերբայը՝ *պաղեալ-ը*, գործածվել է «քնափություն, կոմա» բժշկական տերմինի իմաստով՝ իբրև արաբերեն *խոմս*-ի (ճմուտ) հայերեն տարբերակ. «Ճմուտն, որ ասեն իւին *պաղէլալ* և կամ *պաղչեալ*» (Գր. 3-4): Նկատենք, որ արաբերենում վերջինիս բայական ձևը ևս ունի *սառել* իմաստը⁹:

Արաբերեն մեկ այլ՝ *հըտք* բառի համար, որ նշանակում է «հարվածի հետևանքով տեսողության կորուստ», կիրառվել է *ջախէլ* «ուժեղ հարվածով խփել, փշրել»¹⁰ բայի անցյալ դերբայը՝ *ջախեալ*. «և կամ հըտք, որ է *ջախեալ*» (Գր., 33):

Նշենք, որ հիշյալ տերմիններից միայն առաջինն է արձանագրված ՄՀԲ-ում:

Միջնադարյան բժշկարաններում տերմինային իմաստներով են աչքի ընկնում նաև անցյալ դերբայի մյուս տարբերակի¹¹՝ *-ած* վերջավորությամբ հարակատարի ձևերը:

Ինչպես գիտենք, հարակատարն իբրև դերբայ գրաբարում չի առանձնացվում, սակայն գրաբար մատենագիտության մեջ *-ած* վերջավորությամբ բազմաթիվ օրինակներ են վկայված, որոնք հենց գրաբարից են անցել ժամանակակից հայերենին, ինչպես՝ *արարած, առեղծված, դարձուած, զանգված, կալուած, հատուած, յաւելուած, յօրինուած, շինուած, ողորմած և այլն*: Դրանք, սակայն, ըմբռնվում են, ոչ թե որպես բայ, այլ գոյական կամ ածական¹²: Հ. Աճառյանը *-ած, -ուած* մասնիկով ձևերը դնում է բայանունների շարքում¹³: Ա. Այտընյանը միջին հայերենի «*ած* անցյեալն» հենց *-ած, -ուած* մասնիկով բայանուններից սերված է համարում¹⁴:

⁶ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան (այսուհետև՝ փակագծերում ԱՍՕԲ), Ե., 1940, էջ 83:

⁷ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 355:

⁸Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836-37, հ. 2, էջ 590:

⁹ Տե՛ս X. К. Баранов, Большой арабско-русский словарь, Москва, 2002., том 1, стр 137:

¹⁰ ՆՀԲ, հ. 2, էջ 667:

¹¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 193-194:

¹² Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 204-215:

¹³ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Հ.V, Ե., 1965, էջ 27:

¹⁴ Տե՛ս Ա. Այտընեան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 100:

Բժշկարաններում կարելի է առանձնացնել *-ած / ուած* -ով կիրառությունների երկու խումբ.

1. գրաբարում իբրև գոյական գրանցված բառեր, որոնք նոր՝ տերմինի իմաստով են կիրառվել,

2. միջին հայերենում գործածված վիճակ, դրություն ցույց տվող հարակատարի ձևեր, որոնք, սակայն գոյական-տերմինի իմաստով են կիրառվել:

Առաջին խմբի բառերից է *կալուած*-ը: Վերջինս իբրև գոյական գրաբարում ունի «ունեցվածք», «տիրույթ», «կալվածք», «գրաված ունենալը» իմաստները: Մխիթար Հերացին իր «Ջերմանց մխիթարութիւն» գրքում երկու անգամ բառը կիրառել է իբրև բժշկական տերմին՝ *խցանուլ* իմաստով. «Լոքին դուրսն, որ օգտէ լերդին, և *կալուածոցն*»: «Ղաֆեթի դուրսը, որ օգտէ... ՚ի լերդին ցաւոցն, և ՚ի *կալուածոցն*»¹⁵:

Հարկ ենք համարում նշել, որ *կալուլ* բայը, որ գրաբարում նշանակում է բռնել, արգելել, միջին հայերենում *կալնել* ձևով ունի նաև *փակել խցել* իմաստները¹⁶:

Կալուած տերմինը ավելի հաճախական կիրառությամբ գտնում ենք նաև 15-րդ դարում, Ամասիացու բժշկարաններում. «...եւ զլերդի եւ զիրիկամաց *զկալուածն* բանայ և տաքցնէ»: «... եւ թէ ջրով չոր եփեն կալուած չայնէ անձինն»¹⁷, (ԱՍՕԲ 52): Պետք է նկատել, որ ՄՀԲ-ն նշված իմաստի համար հղում է Ամասիացուն, մինչդեռ այն հանդիպում է ավելի վաղ՝ 12-րդ դարում»

Նկատենք որ տերմինը բացի ՄՀԲ-ից արձանագրված է նաև Գաբամաճյանի բառարանում «մարմնոյ խողովակաց կամ անցից խցում» նշանակությամբ¹⁸:

Պատաստուած բառը, որ գրաբարում գոյական է և ունի «ձեռք, ձեռքվածք» իմաստը¹⁹, 13-րդ դարի մեկ այլ բժշկարանում նշված իմաստից բացի *պատտուած* ձևով կիրառվել է նաև իբրև «ճողվածք» բժշկական տերմին. «Եւ այս նեղս ի պորտն լինի՝ ի ներքի կողմն, և ասեն իւր *պատտուած*, և կամ լինի այս *պատտուածս* այլ ի վայր, մերձ փոքր փորոյն, և կամ լինի աճուկն»²⁰: Նկատենք, որ նշված իմաստն արձանագրված չէ ՄՀԲ ում:

«*Ճողվածք*» նշանակությամբ «Բժշկարան ձիոյ»-ում կիրառվել է նաև *-ք* ածանցով ձևավորված *իջուածք* գոյականը. «Յաղագս ցաւու, որ յաճուկն լինի զեղ ուռեց կամ *իջուածք* է»: «Եւ այն, որ կոճբխի *իջուածք* է, որ ի մէջ կոճին որպէս ոսկոր» (ԲՁ, 58, 100): Այս իմաստը առավել հաճախ գտնում ենք նաև 15-րդ դարում՝

¹⁵ Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն (այսուհետև՝ փակագծերում ՄՀՁՍ), Վենետիկ, Ս. Ղազար, 1832, էջ 145-146:

¹⁶ ՄՀԲ, էջ 354:

¹⁷ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, Վիեննա (այսուհետև՝ փակագծերում ԱԱԱԱ), 1926, էջ 91, 105:

¹⁸ Տե՛ս Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պօլիս, 1910, էջ 681:

¹⁹ ՆՀԲ, հ.2, էջ 604:

²⁰ Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար), աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասզյանի (այսուհետև՝ փակագծերում ԲՁ), Ե., 1980, էջ 163:

Ա. Ամասիացու բժշկարաններում. «...եւ թէ սպեղանի առնես, չի թողու, որ *իջուածք* իջնու ի մարդն»: «...թէ աւծեն՝ աւգտէ տաք ուռեցնուն եւ հումրային. չթողու ու իջուածք լինի» (ԱԱԱԱ 50, 524): «Նշան խոչակին այն է, որ գլխուն *իջուածն* է, որ գլխուն մէջն ցաւի»²¹:

Գրիգորիսի բժշկարանում վերոհիշյալ *իջվածք*-ը գործածվել է այլ՝ «հարբուխ, գրիպ» իմաստով՝ իբրև արաբերեն *նուզլայ*-ի (nazla) հայերեն համարժեք (Հերացին և Ամասիացին կիրառել են արաբերեն բառը): Նկատենք, որ գրաբարի *իջանել* բայը, որ միջին հայերենում հանդիպում է *իջնել* և *իջնուլ* տարբերակներով, գրաբարյան իմաստներից (1. բարձր տեղից գնալ, 2. խոնարհվել, 3. իջնանել, 4. ընկնել, 5. հաջորդել)²² բացի, կիրառվում է նաև «սուզվել», «հոսել», «տարածվել նշանակություններով»: Հենց «հոսել» իմաստի հետ է կապվում նշված հարբուխ գրիպ նշանակությունը (բառացի՝ հոսք). «զի այս նեղերս են, որ անուանին նըզլայ, որ է *իջվածք*»: «Իսկ թէ այս *իջուածքս* ի ցրտոյ լինի և պաղութենէ, նայ ի ճակատն և ի յոնքն ցաւ ունենայ և ձգել մորթոյն» «Իսկ հագն, որ ի թոքեն լինի, նայ իւր պատճառքն *իջուածքն* է»: «Մարդս, որ շատ *իջվածք* լինի, որ ասի նզլայ, գուշակե գէջ հազ» (Գր., 103, 104, 105187):

Աճառյանը *իջուածք*-ը նոր բառերի շարքում է դնում «կաթուած» իմաստով²³: Բարբառներում այն պահպանվել է «աղեթափություն», «կաթված», «մարմնի ուռուցք», «իջնելու կերպ» նշանակություններով²⁴, իսկ արդի հայերենի բառապաշարում ամրագրվել է նաև բժշկակական տերմինի «ճողվածք» իմաստը²⁵:

Վիճակ, դրություն ցույց տվող *-ած*-ով ձևերը բժշկարաններում ևս ուշագրավ իմաստային դրսևորումներ ունեն:

Մ. Հերացին իր աչքի կազմախոսությանը նվիրված «Վասն շինուածոյ և յորինուածոյ աչացն» գլխում²⁶ արաբերեն կազմախոսական տերմինների փոխարեն հայերեն *խծկել* «խցանել», *կոշրիլ* «շաղկապվել, կապվել», *վաթել* (գրբ. *վայթել*) «թափել, դուրս թափել» բայերի հարակատար ձևերը կիրառել է հետևյալ տերմինային իմաստերով. *խծկած* «բիբի կալնում», *կոշրած* «աչքի շաղկապող թաղանթը, շաղկապենի», և *վաթած* «լուսացրում, բիբի լայնանալուց լույսի ցրվելը»:

Օրինակներ՝ «և այս մկունքս... յորժամ չորանան, յիրար ածեն զփող ջրին ծայրն, և խծկի բիբն, և երևնայ զեղ ասդան ոռք մի, և այդ է գոր անուանեն *խծկած*»: «Եւ է-րորդ աստառն, որ անուանեն մուլթահիմայ, որ թարգմանի *կոշրած*, և ինքն զետ ծածկոց է, որ ... կոշրի ի վերայ աստառացն»: «...նա լոյսն ի դուրս վաթի և ցրուի

²¹ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Ե., 1940, էջ 275:

²² Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Ե., 2000, հ.1, էջ 521:

²³ Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 2, Ե., 1973, էջ 119:

²⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.2, Ե., 2002, էջ 181:

²⁵ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 504:

²⁶ Նշված գլուխը տեղ է գտել Հերացու հետևորդ ասորի բժիշկ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» գրքում, Երևան, 1974:

ընդ ամենայն պտուղն, զոր ինթիշար անուանեն, որ թարգմանի վաթած» (Աբուս., 185, 183-184, 185):

Շարունակելով Հերացու մոտեցումը՝ 13-րդ դարում Գրիգորիսը նույն սկզբունքով իբրև արաբերեն *հըտք*-ի հայերեն տարբերակ՝ կիրառել է *ջախսած** ձևը՝ «հարվածից տեսողության կորուստ» նշանակությամբ. «Երկրորդին ասեն հըտք, որ է *ջախսած*» (Գր., 88):

Իմաստային նոր դրսևորումներ ենք գտնում նաև միջնադարյան բժշկարաններում գործածվող հարակատարի՝ բարբառներին բնորոշ²⁷ -ուկ մասնիկով այնպիսի ձևերում ինչպիսիք են *խոցտուկ*, *քստուկ*, *կոտրտուկ* բառերը: Գործողության գաղափարը վերջիններիս մեջ թերևս այդ ժամանակ արդեն մթագնված է եղել, բայց կարևորում ենք ընդգծել այն հանգամանքը, որ վերջիններս բժշկարաններում կիրառվել են բժշկական տերմինի իմաստով՝ որպես գոյական և իբրև այդպիսին էլ գրանցված են հենց ՄՀԲ-ում:

Խոցտուկ-ը ձևավորվել է գրաբարյան *խոցտել* բայի ո-ի անկմամբ, որից էլ միջին հայերենում ունենք *խոցտուկ* (բառացի խոցոտված) ձևը՝ «խիթ, սուր փորացավ» իմաստով²⁸: Նշենք, որ վերջինիս զուգահեռ գործածվում է նաև սրանից առաջացած *խոստուկ* տարբերակը, որն էլ ՄՀԲ-ն բերում է իբրև հիմնական: Իբրև գոյական՝ այս բժշկական տերմինը սովորական է միջնադարյան բոլոր բժշկարանների համար:

Օրինակներ՝ «Եւ թէ *խոստուկ* ունենայ, ա՛ն հինգ դրամ մանիշակ, եոցո»: «և թէ լուծութիւն ունենայ հետ *խոցտուկին*, գդալ մի պզրդատուն և ըռահնի հունդ ... տուր որ խմէ»: (ՄՀԶՄ 148): «Եւ նշանն այն գլխայցաւին, որ ի տաք ուռիցէ լինի, որ ունենայ հետ ցաւուն խոցտուկ» (Գր., 54): «Յաղագս խոցտկի. նշանքն այս է. փուլնայ շլնիքն, բոնվի զաւղվածքն ու դողայ ու փրփրայ բերանն» (ԲԶ 132): «և վարդի եղով սպեղանի առնես... աւգտէ եւ ցաւն տանի եւ *զխոստուկն* այլ տանի» (ԱԱԱԱ 33):

Քստմուկ / *քստուկ* ձևը առաջ է եկել *քիստ* «ցորենի հասկի փշոտ մազերը» բառից, որից՝ *քստմնիլ* «սոսկումից փշաքաղվել»²⁹ բայը, սրանից էլ՝ Գրիգորիսի բժշկարանում ունենք կիրառված *քստմուկ*-ը՝ որպես բժշկական տերմին՝ «դող, սարսուռ» իմաստով. «զի կայնէդ, որ անուանի խաշառիէ, որ է *քստուկ*»: «Երբ հիւանդին գլուխն զամէն ցաւէ, և ցաւն սարսամ լինի, առնու զինքն *քստուկ*» (Գր., 6, 207):

Կոտրտուկ ձևը, որ բարբառներում նշանակում է «որևէ կոտրած բանի մնացորդ»³⁰, 13-րդ դարի բժշկարաններում գործածվել է «ջերմի հետևանքով մարմնի հողերի կոտրտվելը» նշանակությամբ. «Յետ քրտանցն՝ այլ յտեսնու

* Նույն իմաստն արտահայտվել է նաև *-եսլ*-ով անցյալ դերբայով, որի մասին տե՛ս էջ 3:

²⁷ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 221:

²⁸ ՀԱԲ, հ. 2, էջ 412:

²⁹ ՀԱԲ, հ. 4, էջ 580:

³⁰ *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 3, Ե., 2004, էջ 158:

քստմնուկ և ոչ *կոտորտուկ*, այլ ողջանայ ամեն մարմինն» (Գր., 13): «Յաղագս ցաուն, որ կոչի կոտորտուկ» (ԲՁ 108):

Նշված *-ուկ*-ով ձևերից պահպանվել և արդի հայերենին է անցել միայն *խոցոուկ-ը*³¹:

Գրիգորիսի բժշկարանում տերմինային իմաստով են հանդիպում *զենեկ, խեղդեկ, խոցեկ և խաղաղեցնեկ*³² բայերի *-ող* վերջավորությամբ ենթակայական դերբայի ձևերը:

-ող-ով ներկան կամ ենթակայականը գրաբարում, ինչպես գիտենք, սահմանափակ կիրառություն ունի. կրավորական սեռի բայերը չունեն ենթակայական, մնացած սեռերի ու լծորդությունների բայերն էլ որոշակի չեն, բացի այդ գրաբարում այս դերբայի իմաստն արտահայտվում է տարբեր միջոցներով (*-իչ* մասնիկ, երկրորդական նախադասություն, ապառնի և անցյալ դերբայներ, ածանցման և բառաբարդման միջոցներ)³³: Միջին հայերենում ենթակայական դերբայ կազմվում է ամեն բայից³⁴ և այդպիսով լայն կիրառություն ձեռք բերելով և տարածվելով՝ վերջինս միջին հայերենում և բարբառներում դառնում է ներկայի արտահայտման միակ ընդունելի ձևը³⁵: Միջին հայերենում ենթակայական դերբայը, ճիշտ է, բայի խոնարհման համակարգի մեջ չի մտնում և կիրառվում է ածականի կամ գոյականի արժեքով, բայց այս դերբայը չի դադարում բայական հասկացություն լինելուց³⁶:

Վերոհիշյալ չորս բայերը ենթակայական դերբայի ձևով գործածվել են գոյականի արժեքով՝ հիվանդություն մատնանշող բժշկական տերմինների նշանակությամբ:

Ջենեկ (գրբ. զենուկ) «մորթել, կտրել» և *խեղդեկ* «շնչահեղձ անել» բայերը միջին հայերենում շարունակել են գործածվել նույն իմաստներով, իսկ ենթակայական *զենող խեղդող* ձևերով փորձ է արվել արտահայտելու կոկորդի հիվանդության տեսակները: Եվ քանի որ նշված բառերն իբրև ախտանուն արձանագրված չեն ՄՀԲ-ում և մյուս բառարաններում, մեզ մնում է համատեքստից ենթադրել, որ *խեղդող-ը* կոկորդաբորբ է, իսկ *զենող-ը* լոկ կոկորդով չսահմանափակվող և նաև կրծքավանդակն ընդգրկող հիվանդություն է:

Օրինակներ՝ «Եւ նեղ, որ ի տափակ ջիլն պատահէ՝ ինքս է, որ անուանի *զենող* և *խեղդող*» (Գր., 102): «Իւրեանց ցաւոց անուանք այս են՝ փողցավ, որ անուանի *խեղդող*»: «վասն փողացավութեան, որ անուանի *խեղդող*» (Գր., 6, 7): «Սարդ, որ փողցաւ է, և կուրծքն կարմիր ուռից երևնայ... և այս ցաւիս *զենող* ասեն» (Գր., 216):

³¹ Տե՛ս Է. Աղայան, ԱՀԲԲ, Ե., 1976, էջ 608:

³² Այս ձևին անդրադարձել ենք *խաղողի* անորոշ դերբայի հատվածում, տե՛ս էջ 2:

³³ Ա. Աբրահամյան, Նշվ. աշխ. էջ 231 - 233:

³⁴ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 314:

³⁵ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Հ. V, Ե., 1965, էջ 32:

³⁶ Ա. Աբրահամյան, Նշվ. աշխ. էջ 397:

«Իսկ *զենօղն* ի տաք ուռից է լինի... նա յատուկ զկլանելն արգիլէ»: «Իսկ *խեղդօղն* ի տաք ուռիցէ լինի, որ պատահէ այն ջլին տափակն, որ զխոչակն է պատեալ»: «Եւ խեղդօղին նշանն և զենօղին՝ նման են իրերաց» (Գր., 102, 103):

Խոցել «խոց՝ վերք հասցնել» բայի ենթակայական դերբայը՝ *խոցող*, (արձանագրված չէ ՄՀԲ-ում) կիրառվել է փոխառյալ *տայուն* բժշկական տերմինի փոխարեն, որը նշանակում է «ժանտախտ» (ՄՀԲ 746). լատիներեն անվանումն է *pestis*, որը բացատրվում է որպես բակտերիայով հարուցվող համաճարակային հիվանդություն³⁷: Տերմինի միջին հայերեն տարբերակը կիրառվել է Գրիգորիսի բժշկարանում. «...և թէ ի յանթոն ելնէ կամ ի շլնիքն, կամ ի յետեւ ականջացն ընծայի ի յինքն շարավ, նայ ասեն իւրն ելունդ և սուր ելունդ և այլ ասեն տայուն, որ է *խոցող*» (Գր., 30):

Ամփոփելով՝ նշենք, որ հոդվածում դիտարկված իմաստային 21 դրսևորումները կարելի է պայմանավորել երեք հիմնական հանգամանքով՝ արաբերենի ազդեցությամբ, բժիշկ հեղինակների կողմից գիտակցված տերմինաստեղծմամբ և ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ: Իրենց տերմինային իմաստներով այդ բառերը հիմնականում հատուկ են միջին հայերենին, թեև դրանցից ութը արձանագրված չեն «Միջին հայերենի բառարան»-ում, միայն երկուսն են (*խզվածք* «ճողվածք», *խոցունկ* «խիթ, ծակոց, սուր ցավ») պահպանվել ու անցել արդի հայերենին:

Tadevosyan Hasmik – On Some Semantic Manifestations of Words Used in Medieval Medical Books. - This article discusses 21 semantic manifestations of words, that were used in medieval medical books to enrich the Middle Armenian vocabulary, while preserving the basic meanings of Grabar. Particular attention is paid to those participial forms that were used with term meaning as names of diseases or other medical terms. With their term meanings, those words are typical for Middle Armenian, although eight of them didn't find place in the "Dictionary of Middle Armenian". Only two of them, were preserved and fixed in the Modern Armenian language.

Keywords: Medieval Medical Book, Middle Armenian, Semantic Manifestation, Medical Term, Disease Name, Term Meaning, Participial Form.

Тадевосян Асмик – О некоторых семантических проявлениях слов, в употреблявшиеся в средневековых лечебниках. - В данной статье рассматриваются 21 семантические проявления слов, которые были использованы в средневековых лечебниках, обогатив словарный запас среднеармянского языка, сохраняя при этом основные значения Грабара. Особое внимание уделялось тем причастным формам, которые употреблялись как медицинские термины. По своему терминологическому значению эти слова в основном свойственны для среднеармянского языка, хотя восемь

³⁷ https://en.wikipedia.org/wiki/Yersinia_pestis

из них не были включены в "Словарь среднеармянского языка". Только два из них сохранились и зафиксировались в современном армянском языке. характерны

Ключевые слова: Средневековый лечебник, среднеармянский язык, семантическое проявление, медицинский термин, название болезни, значение термина, причастная форма.

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԻ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

DOI: 10.54412/93055-2023-87

Խաչատրյան Վալենտին

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. valentin.khachatryan@mail.ru

Բանալի բառեր. բարբառային բառ, ձեռագիր, երկ, մատենագրություն, օրինաչափություն, բառատարբերակ, փոխառություն:

Ներածություն

Հայ հին մատենագրության տարբեր երկերում կարելի է նկատել շատ թե քիչ այնպիսի լեզվական իրողություններ, որոնք շեղվում են գրաբարյան ընդհանուր օրինաչափությունից՝ հավանաբար մեծ մասամբ լինելով բարբառային:

Ինչպես և ժամանակին նկատել են շատ ուսումնասիրողներ, 5-րդ դարից ավանդված գործերից, ըստ մեզ փոխանցված ձեռագրերի, ամենաշատը Փարպեցու և Բուզանդի պատմական երկերն են ցուցաբերում բարբառային իրողություններ: Անկասկած, հայերենի զարգացման գրավոր շրջանի սկզբնավորման օրերին ևս գործել են հայերենի մի շարք բարբառներ: Ուղղակի մեզ հայտնի չէ, թե յուրաքանչյուր մատենագիր որքանով է օգտվել իր բարբառից, մանավանդ որ բավական ուշ դարերի ընդօրինակություններ են մեզ հասել՝ ով իմանա, թե ինչպիսի միջամտություններով:

Մյուս կողմից կարելի է ենթադրել, որ մատենագիրները ջանացել են այնպիսի լեզվով և ոճով գրել, որ հնարավորինս մատչելի լինի տարբեր վայրերի հայ ընթերցողին, այսինքն ապավինել են ընդհանրական լեզվական իրողություններին, բայց և ակամա գործածել են նաև իրենց բարբառին բնորոշ բառեր ու բառաձևեր: Պետք է նկատել նաև, որ գրչագիրները ևս ձգտել են նեղ բարբառային իրողությունները փոխարինել տարածված համարժեքով՝ հնարավորինս փոխանցելով կանոնավոր գրավոր խոսք: Ի վերջո որոշակի սրբագրություն են կատարում նաև քննական-գիտական բնագրերը կազմողները: Այսպիսով, շատ երկերի քննական բնագրեր մեզ հասնում են լեզվական առումով էապես փոփոխված, հնարավորինս մշակված և հղկված: Այս ամենով հանդերձ հնարավոր է տարբեր երկերում գրական բառերի ու բառաձևերի կողքին նկատել բարբառային իրողություններ:

Խորամուխ լինելով 5-րդ դարի հայ մատենագրության լեզվի մեջ՝ կարելի է նկատել թե՛ ընդհանրական խոսակցական բառեր ու բառաձևեր, թե՛ գրական-գրքային և թե՛ նեղ բարբառային իրողություններ:

Ա. Այտընյանը Բուզանդի երկի լեզվաոճական առանձնահատկություններին անդրադառնալիս նկատում է. «... ընտիր և խորին հայկաբանութեան հետ բնական կերպով մը հիւսված է ընտանեկան բարբառը՝ առանց գոեհկանալոյ...: Վերջապէս լեզուար խորին հայկաբան, քերականական տրամաբանութեամբը ճշդիւ ռամիկ, ոճովն ամենին արևելեան՝ այս եզական գործը բազմապատիկ արժէք ունի»¹:

Ուշագրավ է նաև Մ. Աբեղյանի հետևյալ դիտողությունը. «Նրա լեզուն հարագատ, մաքուր հայերեն է առանց խորթ օտարաբանությունների, մեծ մասամբ բնիկ ժողովրդական ձևով, նույնիսկ ռամկական դարձվածներով ու հատկություններով այն աստիճանի, որ բնավ կարելի չէ թարգմանություն համարել այդ երկը»²:

Փավստոս Բուզանդի պատմական երկի լեզվաոճական առանձնահատկություններին անդրադարձել է նաև Վ. Առաքելյանը՝ նախ նկատելով հետևյալը. «Փավստոսի գիրքը պատմություն է, որ հիմնված է ժողովրդական առասպելների, իրական ու առասպելական պատմությունների, ավանդապատումների վրա: Ժողովրդական բանավոր մշակույթի օգտագործումը կամա թե ակամա իր հետ բերել է նաև ժողովրդի բառն ու բանը: Փավստոսը մեզ համար թանկագին է այսօր հենց նրա համար, որ V դարի ժողովրդական, մինչև իսկ բարբառային շատ բառեր ու դարձվածքներ է կիրառել, որոնք ունեն առարկայական իրացի նշանակություններ»³: Ուշագրավ է նաև հետևյալ դիտողությունը. «Անտեսելով գրական լեզվի պատշաճն ու կանոնիկությունը՝ նա ամենից շատ գավառական բառեր է գործածում, որոնցից շատերի նշանակությունը մութն է ու անմեկնելի, որովհետև այդ բառերը ուրիշները չեն կիրառել»⁴:

Լ. Հովհաննիսյանը «Գրաբարի բառապաշարը (V դար)» գրքում գրում է. «Բուզանդի երկի բառապաշարի քննությունը կարևորվում է հատկապես V դարի ժողովրդախոսակցական, բարբառային տարրերի բացահայտման տեսանկյունից: Բառապաշարի այդ շերտը Բուզանդի մոտ զգալի է: Այդ է պատճառը, որ որոշ ուսումնասիրողներ նրա լեզուն համարել են ռամկական, դասական օրինաչափություններից շեղվող: Ժողովրդական մտածողությունը, կենդանի խոսքը իր արտահայտությունն է գտնում ոչ միայն բառապաշարում, այլև դարձվածներում, ոճերում, շարադասության մեջ»⁵:

Վ. Առաքելյանն իր աշխատության մեջ առանձնացնում է Բուզանդի երկում արձանագրված մի շարք բարբառային-խոսակցական բառեր⁶, սակայն չի նշում բարբառները, բառաքննակական առանձնակի վերլուծություն չի կատարում: Բացի

¹ Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1987, էջ 59:

² Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Ե. 1968, էջ 191:

³ Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության(V դար), Ե., 1981, էջ 160:

⁴ Նշվ. աշխ., էջ 167:

⁵ Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարը (V դար), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2006, էջ 127:

⁶ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 167-170:

դրանից, նշված աշխատության համեմատ, այստեղ խնդրո առարկա բառապաշարի որոշակի ճշգրտում է կատարվում, դիտարկվում են նոր բառեր ու բառատարբերակներ:

Այդ բառերի մի մասը գործածական է ներկայիս բարբառներում, իսկ մյուս մասը կարելի է ենթադրաբար համարել բարբառային՝ ելնելով տարածված հոմանիշների կողքին դրանց եզակի գործածությունից, բարբառներին հատուկ հնչյունափոխությունից կամ բառակազմությունից:

Բարբառային բառեր

Բուզանդի պատմության մեջ վկայված հետևյալ բառերը, որոնք մեծ մասամբ գրաբարյան շրջանից մեզ ավանդված եզակի օրինակներ են, համաձայն բառաբանային տվյալների, գործածական են նաև մերօրյա բարբառներում.

Ափափայ «ժայռոտ, անանցանելի տեղ» – «...ելաներ ընդ դժուարին ընդ անջրդի ընդ *ափափայսն* անապատին սարարադեան լերինն»⁷: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ում⁸ մեկնվում է «ապառաժ, առապար», «Առձեռն բառարանում»⁹ «դժար ու ապառաժ տեղուանք»: Նույնպիսի բացատրություն առկա է «Հայերեն արմատական բառարանում»¹⁰ «լեռների վրայ ապառաժ ու առապար տեղեր»: Համաձայն «Հայոց լեզվի բարբառային բառարանի»¹¹ գործածվել է Խարբերդի բարբառում «ժայռոտ, անանցանելի տեղ» իմաստով:

Բաշխիշ «պարզև, նվեր, ընծա» – «Եւ ամենայն զօրացն տային *բաշխիշ* ի մեծամեծ աւարացն ածելոց»: Ըստ ՆՀԲ-ի՝ միակ վկայությունն է, և հետևյալ մեկնաբանությունն է տրված՝ «որպէս ուկ. պաշխիշ, պ. պէխշիշ, այսինքն պարզև, կամ մասն և բաժին ի բարեաց»: Ահա և ՀԱԲ-ի ստուգաբանությունը. «Բառիս արմատն է *բաշխ*. բայց *-իշ* մասնիկը լինելով զուտ պարսկական վերջաւորութիւն, բառը ամբողջապէս փոխառեալ է իրանեանից» (պահլ. *baxšiš*, պարսկ. *baxšiš*): ՀԼԲԲ-ում տրված է *բաշխիշ* // *բախշիշ* տարբերակային ձևերով, սակայն որևէ վայր նշված չէ, փոխարենն առկա է «ընդհանրական» նշումը:

Եռանդ «նախորդ օրը» – ըստ ՆՀԲ-ի՝ գրաբարում բավական լայն գործածություն ունի, բացատրվում է «իբր երիւք աւուրքք անդր, կամ յերիկէ և անդր»:

⁷ Քանի որ առկա է Բուզանդի պատմության համաբարբառը, ուստի հոդվածը չենք ծանրաբեռնում համապատասխան էջերի նշումով. Հայկական համաբարբառ, Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, կազմ. Ա. Բաղդասարյան, Հ. Սարգսյան, Բ. Եզանյան, Օ. Խաչատրյան, Ե., հ. 1-3, 1973-1978:

⁸ Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837(այսուհետև՝ ՆՀԲ):

⁹ Աւգերեան Մ. և Ճէլալեան Գ., Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865 (այսուհետև՝ ԱԲ):

¹⁰ Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան, Ե., 1926 (այսուհետև՝ ՀԱԲ):

¹¹ Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հհ. Ա-Զ, Ե. 2001-2012(այսուհետև՝ ՀԼԲԲ):

Նույնպես և՛ ԱԲ՝ «երէկ չէ՛ մէկալ օր», ՀԱԲ՝ «երէկ չէ՛ նախորդ օրը»: Աճառյանը բառիս կապակցությամբ հետևյալ հարցադրումն է կատարում. «Բայց հին հայերէնի մէջ կարելի՞ էր *են* ձևը սպասել. *են* «երեք» բառով բարդուած բոլոր բառերը յետոսկեդարեան շրջանին են պատկանում», ապա հավելում է՝ հիւնք. լտ. heri «երէկ» բառից, որն ավելի հավանական է: Նշվում են նաև դիտարկվող բառի՝ տարբերակային դրսևորումներով իրացումը բարբառներում, այսպէս՝ Վն. յեռանդ «մի քանի օր առաջ», Սլմ. յեռանդ, Մկ. հեռանդ, Մրդ. յառանդ, սեռ. յառատվա «նախորդ օրը»: ՀԼԲԲ-ում նշված են հետևյալ բարբառները՝ Ուրմ., Վն., Մկս., և տրված է «նախանցյալ օրը, երէկ չէ՛ նախորդ օրը» բացատրությունը:

Խաշար «ցից, ձող» – «Եւ ետ հրաման թագաւորն զօրավարին իւրոյ հանել *խաշար* յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց և տնկել»: ՆՀԲ՝ «որպէս խարձ *յն*, տունկ ի պէտս ցանգոյ կամ պատնշի, ցից»: ՀԱԲ-ում անդրադառնալով նշված իմաստին՝ Աճառյանն ի վերջո նկատում է. «Բայց հաստուածը այնպէս է կազմուած (յանել խաշար յաշխարհէն և բերել զվայրենի կաղին), որ յայտնի երևում է թէ խօսքը ո՛չ թէ ձողերի մասին է, այլ «մարդկանց բազմութեան, հասարակ գիւղացի մշակների: Այսպէս է հասկանում նաև Մառ,... և մեկնում է «խումբ, ամբոխ»: Կարծում ենք, որ չի կարելի բացառել նաև «ցից, ձող» իմաստը, որ և, ըստ ՀԼԲԲ-ի, առկա է Խոտուրջուրի բարբառում՝ «ածվի մէջ տնկված փայտե ձող, որի վրա փաթաթվում են մազցող բույսերը»:

Կորի «ակոս» – «Ոչ թողոյր բնաւ ամենևին և ոչ քան *զկորի* մի գետին ի սահմանաց երկրին հայոց ուրեք վտարել»: ՆՀԲ՝ «առուակ կամ ակօս փոքր, փոս հերկեալ, առու, անցք ջրոց, խողովակ ոռոգիչ պարտիզաց, արդ, օլուզ», ՀԼԲԲ՝ « 1. Ար., ՆԲ., Մշ., Սս., Ոզմ., Մշ., Շտիս. և այլն – ջրելու համար արտերում բացված նեղ առու, 2. Դրբ., Ալշ. արտի միջով առաջին անգամ բացված ակոս»:

Հաղ քան զհաղ «կամաց-կամաց» – «...իբք ժամանակին *հաղ քան զհաղ* յառաջադէմ աջողէին». ՆՀԲ-ում *հաղ* գլխաբառի մոտ նշված է «որպէս ոմկ. *հեղ*, այսինքն անգամ», ապա նաև դիտարկվող հարադրությունն է տրված՝ միայն Բուզանդի վկայությամբ, և բացատրված է *զամ քան զզամ*-ով, վերջինս էլ իր հերթին՝ «յորմէ ոմկ. կամաց կամաց»: «Հայերէն գաւառական բառարանում»¹² և ՀԱԲ-ում նշված են մի շարք բարբառներ, որոնցում գործածվում է *հաղ* // *հեղ* բառը: Նաև ՀԱԲ-ում այն բնիկ հայերէն բառ է համարված: ՀԼԲԲ-ում *հեղ*-ի կողքին տրված է նաև *հաղ* հնչյունական տարբերակը՝ Մշ., Խտջ. և Վն. բարբառների նշումով:

Հեսկ «ոտքերին փաթաթելու շոր» – «Մոյգս անգամ ոչ ազանէր, այլ զամառն *հեսկով* պատէր»: ՆՀԲ՝ «հիւսք, հիւսկէն իբք, չուան հիւսեալ, սիրայ, պարան, պատատք և խրացք», ԱԲ՝ «հիւսած բան՝ չուան՝ կապ»: ՀԱԲ-ում բառը բացատրված է՝ վկայությունների ցուցաբերած իմաստներից ելնելով, այսպէս՝ «առագաստի կապ կամ չուան» (Վրք. հց. բ.), Բուզանդի օրինակը՝ «խսիր կամ նման նիւթ՝ ոտքին

¹² Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913:

փաթաթելու համար», որից էլ *հեսկի* «ոտքի զանգապան, սոնապան» (Առաք. պատմ.): Նշված է նաև Ղարաբաղի բարբառում առկա *հէ՛սկի* «սոնապան», հարցադրումով նաև՝ «այստեղ կապ ունի՞ արդեօք *հեսկել* Նփ. «թխմել, ճխտել»: ՀԳԲ-ում՝ Ղրբ. «սրունքի փաթաթան, սոնապան, թօզլուխ»: Արմեն Մարգարյանի «Ղարաբաղի բարբառի բառարանում»¹³ տրված է *հեսկի // հէնկի* «սրունքները փաթաթելու երկար շոր, գործվածք, սոնապան, զանգապան»: Ինչ վերաբերում է Աճառյանի նշած *հեսկել* «թխմել, ճխտել» բառին, որը տրված է նաև ՀԳԲ-ում, այն, անշուշտ, *էցքել // էսկել* բարբառային բառի տարբերակային դրսևորումներից է՝ *անցկացնել* բայի կրճատմամբ և բարբառային հնչյունափոխությամբ առկայացած: Բայց զարմանալի է, որ *հեսկել*-ը ՀԼԲԲ-ում տրված չէ որպես մյուսների տարբերակ: ՀԼԲԲ-ում *հեսկի* «տղամարդկանց սրունքները փաթաթելու երկար երիզավոր կտոր, սոնապան, զանգապան» բառի համար, Ղարաբաղի բարբառից գատ, նաև նշված են Արաբատյան և Լոռվա բարբառները:

Ճանճկէն «ճանճի նման սև բծեր ունեցող» - «Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն... գնոյն կերպարան ճարտուկ ճանճկէն»: ՆՀԲ-ում *ճանճկէն*-ը հղված է *ճանճաճերմակ* բառով «ոյր գոյնն է պիսակ, սեաւ և սպիտակ խառն»: ԱԲ-ի բացատրությունն է «սևուճերմակ, էպրէշ, ապրաշ»: Մալխասյանցը «Հայերէն բացատրական բառարանում»¹⁴ բացատրում է «ճերմակ, բայց վրան ճանճի նման սև բծեր ունեցող»: ՀԼԲԲ-ում ևս արձանագրված է, բայց և որևէ բարբառի նշում չկա:

Ճէտ // ճէտ «զարմ, արու զավակ, սերունդ, ժառանգ, ազգ». «...զի նոքա նեթ *ճէտք* մնացեալ էին յազգացն», «...որ մարմնապէս իսկ էին նոցա *ճէտք*»: Ըստ ՀԼԲԲ-ի՝ հատուկ է հետևյալ բարբառներին՝ Խրբ., Խտջ., ՋԵԴ, ՆՆ, ՋԵ, Սշ., Ալշ. ևն: Նույնից է կազմված *անճիտեմ* «անճէտ ու անզուակ առնել». «...գրագումս ազգատ արարեալ *անճիտեաց*». ըստ ՆՀԲ-ի՝ միակ վկայությունը Բուզանդի երկից է, թերևս հենց նա է կազմել:

Մամխի «վայրի սալորենի» - «Ի թաուր խարձիցն *մամխեացն...*»: ՆՀԲ՝ «թուփ, որոյ պտուղն կոչի մամուխ. այն է շլոր վայրի՝ մանր, թթու, կմ անոյշ», սակայն ՆՀԲ-ում *մամուխ* չի արձանագրվել, հետագայում վկայվել է ԱԲ-ում: Ըստ ՀԼԲԲ-ի՝ առկա է Լոռվա բարբառում՝ «*մամուխի ծառ*». «Մամխըքին բոլ մամուխ ա բոնել» (Ձ): ՀԼԲԲ-ում *մամուխ* «վայրի սալոր» բառի մոտ նշված է միայն Մալաթիայի բարբառը, թեև ըստ նախորդ բնագրային վկայության՝ Լոռվա խոսվածքում ևս կա: Ուրիշ բարբառներում կամ խոսվածքներում առկա է *մամոխ* տարբերակով (Խտջ., Տրնտ., Կս., Սբ., Քղ., Մլթ.): Պարզվում է, որ Ղարաբաղի բարբառում ևս առկա է *մամուխ* «սալորենիների ցեղին պատկանող փշալից ծառ՝ թուփ և նրա սև-կապտավուն պտուղը» (ՂԲԲ):

¹³ Մարգարյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013 (այսուհետև՝ ՂԲԲ):

¹⁴ Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Ե., 1944-1945 (այսուհետև՝ ՀԲԲ):

Միհանէս – «...միհանէսք այն էին նորա, ի չորք անկեալ յոտս և ի ձեռս՝ սողեր առաջի թագաւորացն, և զուղտու զձայն անկէր»: ՆՀԲ-ում *միհանէսք* ընթերցմամբ է արձանագրվել նշվածը, միակ վկայությունը Բուզանդից է, բացատրված է «որպէս թէ միակ հանակ, այսինքն խաղ, կատակ, միմոսություն, կամ կեղծաւորութիւն՝ առ ի հանել և քաղել ինչ մի յայլոց»: ԱԲ-ում ևս ՆՀԲ-ի տարբերակն է տրված՝ նույն բացատրությամբ: ՀԱԲ-ում Աճառյանը համարում է անստույգ բառ՝ չընդունելով ՆՀԲ-ի մեկնությունը. «ՆՀԲ-ի մեկնությունը իբր հանաք բառից, չի կարող ուղիղ լինել, որովհետև բառի եզ. ուղ. ձևն է *միհանէ*, երկրորդ՝ որ հանաք յետին փոխառութիւն է. հմմտ. քրդ. *henek* «շատախօսութիւն, անպէտ խօսքեր»...»: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ դիտարկվող բառը հայերենի բարբառներում լայնորեն գործածվող *մահանա // մահնա // միհանա* «կեղծ պատճառ, առիթ» բառին է աղերսվում: Ընդ որում, ՀԼԲԲ-ում *միհանա* տարբերակը վկայված չէ: Մյուսի կողքին նշված են մի շարք բարբառներ:

Նքողիս «թուլանալ, թալկանալ» – ՆՀԲ՝ «նքթիլ, նուաղիլ, նուազիլ, ցամաքիլ, անշքանալ», ԱԲ՝ «սիրտը քաշուիլ, երեսը գոյն չննալ, ցամքիլ, ճոզիլ», ՀԱԲ՝ «անօթի մնալուց ցամաքիլ՝ չորանալ», ՀԼԲԲ՝ *նքողել* Ղրբ. (Գնձ.) «թուլանալ, թալկանալ, մարել»:

Որձ «արու» – «Ոչ թողոյր զերկոցունց տոհմանց զորձ կորին (այսինքն զարու զաւակ)»: Բուզանդը գործածել է նաև նշվածով բաղադրված *որձակոտոր* «կոտորել զարուս» (ՆՀԲ) բառը. «Զազգն *որձակոտոր* առնէր. և զկանայսն և զդստերսն ի գերութիւն վարէին»: Այսօր բարբառներում *որձ* բառն ընդհանրական գործածություն ունի: Գրաբարում առավել գործուն է եղել *արու* բառը, որի վկայությունները և դրանով բաղադրությունները չափազանց շատ են դիտարկված հումանիշի համեմատ:

Որմած կամ **որմածք** «ցանկապատ, պատնէշ» – «Մօտ *յորմածս* արգելոցացն որսոյն էրեոցն». ՆՀԲ՝ գ. «որմ անեալ, ցանկ պատեալ», ԱԲ՝ «պատ, ցանկ, պատնէշ»: Ըստ ՆՀԲ-ի՝ նշվածից զատ առկա է *որմել* «որմով պատել, պարսպել» բայի գրաբարյան անցյալ դերբայի (*որմեալ*) մեկ վկայություն (Խոսր. պտրգ): Այդ բայը, համաձայն ՀԼԲԲ-ի, գործածական է Խոտուրջուրի բարբառում:

Ջրթափել «արբունքի հասնել, չափահաս դառնալ» – «Եւ իբրև *ջրթափեաց* և եղև հուժկու, ետուն զնա պանդանդ ի դուն կայսերն յերկիրն Յունաց»: ՆՀԲ-ում բացատրված է հետևյալ կերպ՝ «ջուր հեղուլ, միզել, որպէս յարբունս հասանել»: Ըստ նշված բառարանի՝ նաև մեկ անգամ վկայվել է այլ երկում: ԱԲ-ի մեկնությունն է՝ «սկսիլ սերմ դուրս հանել, մեծնալ տղին»: ՀԳԲ-ում *ջրթափուիլ // ջրթփիլ* գլխաբառերի հոդվածում տրված է՝ գրբ. *ջրթափել* «արութիւնը գալու՝ սերմը հոսելու չափ մեծանալ»: ՀԼԲԲ – ում էլ վկայված է *ջրթափվել*՝ Ար., Ղրբ. բարբառների նշումով:

Սարիք՝ «սյուն կամ ձող» - «Արձակեաց յոտիցն երկաթոց, և անրոց պարանոցն շղթայիցն սարեացն»: ՆՀԲ՝ «սիրայ. չուան, տոռն, շղթայ, կապ, կապանք» (առկա են մի շարք վկայություններ՝ Խոր., Վրք հր. և այլն, որոնցից հիմնականում բխում է «շղթա, կապանք» իմաստը): Նույն բացատրությունն է նաև ԱԲ-ում: ՀԱԲ-ում վկայված է *սարի* «կայմ, սին», որը կապվում է պարսկ. *սարքինայ* բառի հետ: Ուշագրավ է նաև ՀԼԲԲ-ում գրանցված *սարի* բառը, որը Ղարաբաղի բարբառում ունի հետևյալ իմաստը՝ «երկու մետր և ավելի բարձրության ձող, որ տնկում են խաղողի վազերի կամ լոբու կողքին և վրան կապում վազի ճյուղերը կամ լոբու թուփը, որ աճելով վրայով բարձրանան, սարքինա»: Չի բացատրվում, որ Բուզանդի երկում նույնպես «սյուն» կամ «ձող» իմաստով է կիրառված:

Տրմուղ – ՆՀԲ՝ «մատաղահասակն յանասունս՝ չն մղեալ ի գործ, անփորձ...», ՀԱԲ՝ «անվարժ, դեռ չլծուած ձի, եզ»՝ հետևյալ ստուգաբանությամբ. «Կազմուած է *մուղ* «մղել, վարել» արմատից՝ *տր*- բացասական մասնիկով, որ այլուր անսովոր է, հմմտ. համապատասխան *անմուղ* ձևը...»: ՀԼԲԲ՝ Ուրմ. «դեռևս հեծնելու՝ լծելու չվարժեցրած (կենդանի)»:

Բարբառային դիտվող որոշ բառեր, համաձայն ՆՀԲ-ի, միայն հայտնի են Բուզանդի երկի միջոցով: Շատերը գործածվել են մեկ անգամ: Դրանցից սակավ օրինակներ ՆՀԲ-ում արձանագրվել են բաղադրությունների կազմում:

Մխերակ՝ «հիմար, ապուշ» - «Միտք ի կերպարանացն (հաւատոց) թափուր կամ ունայն իբր *ախերակք*»: Ըստ ՆՀԲ-ի՝ մեկ անգամ վկայված է Բուզանդի երկում, նշանակությունն է «անշահ, անպիտան, աւերակ կամ հնոտի», ըստ ԱԲ-ի՝ «անշահ, փուճ, պօշ»: Նշված բառարաններում նաև արձանագրվել են *ախերական* // *ախերկան*, որից և *յախերկան* (կամ *յախերական*)՝ վկայված Ազաթանգեղոսի երկում, նշանակությունն է «իբր յանօգուտս, ի գուր, անխնայ, և կամ յախուռն, յախուր, յահուր», ասել է թե նախորդ ածականից կազմված մակբայ է: Ըստ ՀԱԲ-ի՝ նշվածների իմաստը անորոշ է, պետք է ուղղել *ախերակ* «յիմար, ապուշ», *յախերական* «յիմարաբար, անմտօրէն», ինչպես որ վրացերենում է՝ *ախվիրակի* «ապուշ, անմիտ, անխելք, տխմար»: Այսպիսով, ի վերջո համարվում է փոխառություն վրացերենից:

Սպիզակ՝ «իշխանական կրծքազարդ» - «Զսոյն և սպարապետին Մանուէլի տոյնպէս ետ տանել զթագաւորական պատմուճանն, եւ լանջաց պատիւ՝ *սպիզակ*». ՆՀԲ՝ «զարդ լանջաց», ԱԲ՝ «կուրծքի զարդ», ՀԱԲ՝ «կրծքի վրայ կախելու իշխանական զարդ»: ՀԱԲ-ում վկայաբերված է Թիրեաքեանի «Արիահայ բառարանում» տեղ գտած պարսկ. āvēza «զինդ, օղ» բառը՝ հետևյալ նշումով. «....որ սակայն չի յարմարիլ մեր բառի հետ՝ v ձայնի պատճառաւ»:

Սպրդում՝ «լծասարքի կամ սանձի ինչ-որ մաս»- «....բազում նժոյզս զարքունական ձիոյ՝ արքունի օճառովք, ոսկիվարաւանդ *սպրդումլն* տայր նմա»: ՆՀԲ՝ «իբր ապրսում, ապրշում», ԱԲ-ում հղված է *սպարդում* բառատարբերակը, որ և բացատրված է «ձիուն մետաքսեայ զարդերը»: Սակայն ՀԱԲ-ում լիովին այլ բացա-

տրություն է տրված՝ «ձիու սարքի մաս է», ապա բխեցված է պարսկ. *pārdum* կամ *pāldum* «ձիի թամբի փոկ» բառից և նշված Հյուբշմանի կարծիքը. «բառիս պահլաւ. ձելը աւանդուած չէ, բայց կարող էր լինել *apārdum*»: Այնուհետև Աճառյանն ավելացնում է, որ այն կազմված պիտի լինի պիլ. *apar* «վեր» + *dum* «ազի» բառերից և բուն նշանակում է «վերնագի»: Նաև վկայաբերում է պարսկերենի *pāldum* ձևից վրացերենին անցած *պալդումի* «шлея, կառք քաշող ձիու մեջքի փոկը» բառը:

Առնշոգի «առանձին, մասնաւոր» – «Իբրև սեպհական ի բնէ առանձին *առնշոգի* նոցա էր կարգեալ»: ՆՀԲ-ում հիշյալ բառը մեկնված է «տեղի առաշոգ, հովանոց, ամարանոց, զուարճալի և հով վայրք»: Նույն բառարանում արձանագրված է նաև *առաշոգ* «առ աշոգ, արևահայեաց, լուսաւոր»: ԱԲ-ում «առանձին, գատ» մեկնությամբ է: Հ. Աճառյանը ՀԱԲ-ում *առաշոգի* և *առնշոգի* բառերի համար հղում է *աշոգի* և մեկնում է նույնպես «առանձին, մասնաւոր», որից էլ *առ* նախդիրով կազմված է *առնշոգի* «առանձին, յատուկ, իրեն միայն սեփական»: Այնուհետև նկատվում է. «Այսպէսով բառս ներկայանում է 3 ձևով՝ *աշոգի, ոշոգի, ուշոգի* և առ նախդիրով՝ *առաշոգ, առնշոգի*»:

Բռշոպ «խռովահույզ» – «...զումարէր զգօրսն իւր ըստ *բռշոպ* ժամանակին, որչափ և եկն ի ձեռն իւր». ՆՀԲ-ի բացատրությունն է՝ «որպէս թէ բունն շոպեալ, սաստիկ բրդեալ, խռովայոյզ, խառնակ», ԱԲ-ում նույնպիսի բացատրություն է՝ «խառնակ, շփոթ»: ՆՀԲ-ում վկայված է նաև *շոպ* «ի տապոյ և ի տօթոյ խանձատումն, խորշակահարութիւն, խորշակ, դալուկն», ըստ ԱԲ-ի՝ «1. արևուն տաքէն էրիլ մրկիլը, 2. դեղնացատութիւն»: Միաժամանակ պետք է նկատել, որ *շոպել* բայը նշանակում է «յափ արկանել, յափշտակել, կորզել»: ՀԱԲ-ում *շոպ* բառը մեկնված է «բոյսերի արևահարութիւնը», ապա նշված է «Գւո. – Մկ. շօբ «տիֆ և նման վարակիչ հիւանդութիւն», Ալշ., Սշ. շօբա «typhus»: ՀԱԲ-ում *բռշոպ*-ը դարձյալ բացատրված է «խռովայոյզ, խառնակ, շփոթ»: Նշված է, որ մի քանի բառարաններ բացատրում են *բունն շոպեալ* կամ *բոնի շոպեալ*, բայց և միաժամանակ տրված է Թիրաքեանի բառարանի հետևյալ մեկնությունը՝ պարսկ. *purāšōb* «խառնաշփոթ, խռովայոյզ», ապա նշված. «նշանակութեամբ չափազանց յարմար է սա, բայց նախաձայնը անյարմար»: Կարծում ենք, որ չի կարելի բացառել նաև բառի նման հնչյունափոխությունը: Ուշագրավ է ՀԼԲԲ-ում արձանագրված *բռռ* համանուն բառի հետևյալ դրսևորումը՝ Բղշ., Մոկս. 1. վառելու խոփ, կպչան, 2. ՆՆ. կառչող բոյսերի արձակած թելը, որով փաթաթվում են այլ բոյսերի, 3. Խրբ., Մկս., Մվր. տրցակ, փունջ: Շոպ-ը, համաձայն ՀԼԲԲ-ի, հայերենի բարբառներում հայտնի է յոթ իմաստներով: Հատկանշական է, որ միայն Ղարաբաղի բարբառն է նշվում հետևյալ իմաստային առումով՝ «սաստիկ տապից բոյսերի խանձվելը», որին էլ աղերսվում է դիտարկվող *բռշոպ* բառը:

Գուզազ «գորք» – «Ապա ետուն հրաման *գուզազ* հանել յաշխարհէ»: ՆՀԲ-ի սովյալների համաձայն՝ երկու անգամ կիրառվել է միայն Բուզանդի երկում, բա-

ցատրվում է հետևյալ կերպ՝ «ամբոխ գորու կամ քաջաց կամ հսկայից (լծ. յուն. զիգաս, լտ. կիկաս կամ ճիկաս. հսկայ, վիթխարի)»: Այնուհետև ԱԲ-ում տրվել է հետևյալ բացատրությունը՝ «անկիրթ գորք, տ. ասկեր»: ՀԱԲ-ում նշվածին ավելացված է՝ «Գ. Փառնակ, Անահիտ, 1904, 26 աքքադ. ցուկ կոուիլ»: Թերևս վերջինից էլ բխեցնենք «կովող» իմաստը: Ուշագրավ է նաև ՀԼԲԲ-ում վկայված *գուգուգ* բառը, որը հայտնի է նաև *կուկուգ* հնչյունական տարբերակով. «1. ծնկները ծալելով ոտների վրա հենված՝ կկգած դրություն, 2. Պպ. շատ ծերացած ու կորացած ծերունի»:

Կահոյր «ջրաման» - «*Կահոյր* մի ջուր...»: ՆՀԲ-ում միակ վկայությունն է՝ «անօթ ջրոյ, սափոր» բացատրությամբ, ԱԲ՝ «ջրի աման», ՀԱԲ-ում նույն մեկնությունն է՝ հետևյալ նշումով. «ԳԲ համեմատում է արաբ. *ճարա* հոմանիշի հետ»: Վ. Առաքելյանը բացատրում է «տակառ»¹⁵: Նշված բառին անշուշտ աղերսվում է նաև ՀԼԲԲ-ում առանց որևէ բարբառի նշման վկայված *կահաւլ*՝ «գետնի տակից հանած ջուր՝ աղբյուր»:

Կոտինդ «բաժակ» - «...դեղ մահու ընդ *կոտինդն* խառնեալ մատուցաներ նմա». միայն Բուզանդի վկայությամբ հիշյալ բառը ՆՀԲ-ն մեկնում է հետևյալ կերպ՝ «նոյն կարծեցեալ ընդ յունարէն *գողինոս*, որ է հատ խաղողոյ կամ չամչի»: ԱԲ-ում բացատրված է «խմելու աման, գաւաթ», ՀԱԲ-ում նշվում է, որ ՆՀԲ-ի վերոհիշյալ բացատրությունը պայմանավորված է հնչյունական նմանությամբ, ապա տրվում են այլ մեկնություններ, այդ թվում և՛ *կոնդինոս* ընթերցումով հուն. «մեծ բաժակ» կամ պարսկ. «բաժակ», ինչպես որ ԱԲ-ում է: Աճառյանն ի վերջո եզրակացնում է. «Այս մեկնութիւնը չի կարող լինել ուղիղ, որովհետև վկայութեան մեջ ասուած չէ ի կոտինդն, այլ ընդ կոտինդն»: ՀԲԲ-ում նույնպես «բաժակ» իմաստն է տրված:

Ճեւիշ «գուգարան» - «...ես յարուցեալ իբրև ի *ճեւիշն* երթալոյ պատճառաւ և դուք պատեսջիք գնովա»: Ըստ ՆՀԲ-ի՝ «բառ պ. *չեւշէ*, թ. *չեշմէ*. որ է աղբիւր, և տեղի թափելոյ զաւելորդս բնութեան, ոտից ճամբայ, քէնէֆ», այսպես և ՀԱԲ-ում՝ «արտաքնոց». «Պիլ. անյայտ մի ձևից, որի հետ հմմտ. պրս. *čāšma* և շրջեալ *čamša*, որ բուն նշանակում է «աղբիւր» և երևի փխր. նշանակում է նաև «արտաքնոց», այսպես է քրդ. *čēšma* «արտաքնոց, ինչպէս նաև Մշոյ հայ. և թուրք. գաւառականով՝ *չաշմա* «արտաքնոց»: «Նորայր, Կոր. վրդ. 446 պրս. *čāmēz* «մեզ» բառից հանելով՝ սխալ է գտնում *ճեւիշ* «արտաքնոց» նշանակությունը և դնում է *ճեւիշ* «մեզ»: Ուշագրավ է նաև ՀԼԲԲ-ի վկայությունը՝ *չաշմա* Հմշ. «աղբյուր, քարե թասաձև աղբյուր լեռան կողին»:

Մաճկացուցանել – գործածվել է նախորդ բառի հետ նույն նախադասության մեջ, ըստ ՆՀԲ-ի՝ «կամ է մաճուցանել, մակարդել, թանձրացուցանել և կամ մաշ-

¹⁵ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 167:

կացուցանել», ԱԲ-ում՝ «մակարդել, թանձրացրնել», ՀԱԲ-ում «անստույգ բառ» նշումով է, տրված են միայն նախորդ բացատրությունները:

Մկրթալ «ծաղրել» – «Իսկ թագաւորն ծաղր առնէր զբանսն կաթողիկոսին, և մկրթայր գնորա ասացելովքն»: ՆՀԲ՝ «ունչս առնել, յընչաց քերել, ծաղրել, այսպն առնել», ԱԲ՝ «ծիծաղիլ, կատակել»:

Յուրան «հացահատիկի շեղջ կամ սափոր, կուժ» – «Սպառէր զամենայն *յուրանս* և գնորամանս և զմառանս գինւոյն»: ՆՀԲ՝ «կամ է բրգաձև աման, կարաս, սիրահի, սիվրի գապ, տ. *ցուրան*. և կամ է մառան ցորենոյ, շտեմարան, ամբար», ԱԲ՝ «1. բուրգ, կոթող, տիքիլի թաշ, հէրէմ, 2. բրգաձև դիզած որայ, 3. բրգաձև աման», ՀԱԲ՝ «ցորենի դէզ»: Որոշ բառարաններում համեմատվում է նաև *օրան* բառի հետ, որը վկայված է ՀԼԲԲ-ում՝ *օրան* «չծեծված, հասկերով հացահատիկ», սակայն որևէ բարբառ նշված չէ, թերևս բարբառներում ընդհանրական գործածություն ունենալու հետևանքով:

Նախճամէջ պար «փորոտիք, աղիք» - «Թող թէ զմիս կամ զգինի ճաշակել. որ *զնախճամէջ* պարն յուղացուցեալ մաճկացուցանէ, և զճարպն և զերիկամամբքն պատեալ»: ՆՀԲ՝ «աղիք կամ փորոտիք մեծ, քաղիք, փոր կամ մէջ շուրջ զերիկամամբք», ԱԲ՝ «մեծ աղիք, քաղիքը, փորը, իշկէմպէ, գարըն, պումպար»: ՀԱԲ-ում *նախիճ* գլխաբառը հարցականով բացատրված է «որովայն, փոր», ապա նշված է, որ առանձին չի գործածվել: Ըստ Աճառյանի՝ վրացերէնում կա *նախիճո* «իւղի մէջ տապակած»:

Շորիկ «կեղծավոր, նենգ» – «Եւ այս բանքն, վաղվադակի յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ *շորիկն* շոգմոգն տիրանենկն և տիրադրուծն տիրասպանուն տիրամատնիչն Փիսակայ»: ՆՀԲ՝ «բառ պ. *շուրիտէ, շուրիզէ*, այսինքն խելաշուրջ, և թափառական. խելքը ժուռ եկած, հովարտայի պէս ժուռ եկող, պաշըպօշ», ԱԲ՝ «խելքը ժուռ եկած, պարապ ժուռ եկող. պաշը պօշ»: ՀԱԲ-ում Աճառյանը գրում է. «....բուն նշանակութիւնը անստոյգ է. մօտաւորապէս միայն երևում է, որ անարգական ածական է», ապա հավելում իր նախորդ աշխատություններից մեկում կատարած նկատառումը. «Աճառ.համարելով «խառնակիչ, խռովարար կամ խենթ», ուզում է դնել պիլ. *šōrīk* ձևից, իբր պրս. *šōr* «շփոթութիւն, խռովութիւն. 2. ձախող», *šōrmōr* «անարգ, չնչին, նուաստ. 2. կագ և կթիւ»»: Ըստ բնագրի՝ առավել հավանական է Վ. Առաքայլանի նշած բացատրությունը՝ «կեղծավոր, նենգ»: Ուշագրավ է նաև՝ ՀԼԲԲ՝ *շորիկ շաղինք*-ի հղումով, որ և՛ Ղրբ. *շորիկ* «շողիք, լորձունք, թուրք»: Գուցե և պատմության այդ հատվածում բացթողում կա, այլապէս տեղին է «*ի բերանոյ շորիկն*»:

Տղել «ուզել, կամենալ» - «Իսկ թագաւորն սալացեալ՝ ոչինչ լսէր. ծածկեալ կայր ի գահոյսն. զի և շարժել անգամ ոչ *տղէր*»: ՆՀԲ՝ «կամիլ, յօժարիլ, խնդրել (լծ. յն. *թէ՛ չօ*, թ. *տիլէմէք*, որպէս *խնդրել*, ոմկ. *ուզել* կամ *տնտղել*, որպէս *յուզել*, կայ և անտղաբար, անտղելի, իբր անգննելի, կամ անբաժանելի, լծ. ոմկ. *տարտղնել*)», ԱԲ՝

«սկսիլ կամ ուզենալ շարժիլ», ՀԱԲ՝ «շարժել, յուզել», =բնիկ հայ բառ՝ հնիս. dil- «շարժել» արմատից: Վերջինում նաև գրված է. «Տղել բայի փոխաբերական իմաստներն են ներկայացնում՝ տղել «ուզել, կամենալ» Բուզ. և կրկնութեամբ՝ տն-տղել «որոնել, քննել, փնտռել»՝ նորագիտ բառ, որ գտնում եմ գործածուած Սմբ. դատ. 46, 114 ևն (կենդանի է նաև գաւառականներում)»:

Հետևյալ բառերը, որոնց մեծ մասը նույնպես քիչ վկայություններով է հայտնի, ամենայն հավանականությամբ ևս բարբառային են:

Ասիճ «որսի մտով կերակուր» - «...եղին առաջի նորա միրգ, խնձոր, վարունգ, և *ասիճ*», «...*գասիճն* կամէր ուտել». Ըստ ՆՀԲ-ի՝ «խորտիկ ի մտոյ կամ յորսոյ, ծուծ կենդանեաց», փակագծերում էլ հիշեցվում է «որպէս թէ ամիկ եփեալ կամ համեղ կերակուր», նաև հիշատակվում է ենթադրյալ առնչությունը թուրքերեն *էմճէք* «ծծելի ինչ» բառին: Իսկ *ասիկ* բառն էլ նշանակում է «ուլ արու, արու այծ փոքր կամ միոյ ամի, տարևոր»: Բառահոդվածի վերջում հղված է նաև *ամճաբեր* «որ եփէ և բերէ ամիճս, խոհակեր խորտկաց և համադամաց», որի ներքո՝ միակ բնագրային վկայության մեջ, հոգնակի տրականի *յամճաբերացն* ձևն է. թերևս սխալմամբ ընկալվել է որպէս բացառական հոլով, ուստի և գլխաբառը տրվել է առանց նախահնչուն յ-ի, որը և իր հերթին հուշում է գուցե իրապէս *յամ* բաղադրիչով բաղադրված լինելու մասին: ԱԲ-ում բացատրված է. «1. ուլ, վայրի որսերու ձագ, 2. փափուկ ուտելիք անոնցմէ», որից *ամճաբեր* «փափուկ ուտելիքներ բերող»: ՀԱԲ-ում նախ նշված է ՆՀԲ-ի բացատրությունը, ապա ՋԲ-ի¹⁶՝ «փափուկ մասն ինչ երեոց կազմեալ համեմիք՝ իբր ուտեստ ազնիվ». նկատենք, որ բառը նաև վկայել է Եղիշեն. «Սնեալք էին ուղղովքն զուարակաց և ամճովք երեոց», որից և բխում է ՋԲ-ի մեկնությունը: Բացի դրանից՝ Բուզանդն էլ վերը հիշատակվածի շարունակության մեջ ավելացնում է. «Զդանակն... որով զմիրգն կամ *գասիճն* կամէր ուտել», որ և Հրաճյա Աճառյանը բացատրում է. «...այս *կասը* ցույց է տալիս, որ պտուղ և ամիճ տարբեր բաներ են: Երկրորդ օրինակից (նկատի ունի Եղիշեի վկայությունը) բաւական ճշտում է իմաստը՝ իբրև երէի մտով պատրաստուած մի տեսակ ուտելիք», որից և *ամճաբեր* «խոհարար»: Ի վերջո բխեցվում է պահլավերեն *amīč* «որսի մտով կերակուր» բառից:

Աւրուկ (օրուկ), որից և՛ *աւրկանոց* (օրկանոց) – «ի ժողովել զախտաժէտս և *զօրկունս* և զմարմնահարս», «...*զօրկունս* և զաղկատս հանգուցանէր», «...նոցուն կարգեցին *օրկանոցս* և դարմանոց և ռոճիկս»: ՆՀԲ-ն նշված բառերը հղում է *ուրուկ* «բորոտ, գողի, քոսոտ» և *ուրկանոց* «տեղի և բնակարան ուրկաց, բորոտաց» տարբերակներով: ՀԼԲԲ-ում արձանագրվել է *ուրուկել*, որի մոտ հղվել է *օրուկել*, սակայն վերջինս բացակայում է: Մեր կարծիքով՝ *աւրուկ* բառը կազմվել է *աւեր* + *ուկ* բաղադրիչներով՝ բարբառային հնչյունափոխության հետևանքով առկայանալով նշված ձևով, իսկ փակ վանկում էլ *աւ-*ը ձեռք է բերել *օ* արտասանություն: Այս-

¹⁶ Տե՛ս ՀԱԲ-ում:

պիսով, *աւրուկ*-ը իմաստով նույնանում է *աւերակ* կամ *աւիրած* բառին: Այնուհետև առնմանության հիման վրա *օրուկ*-ը դարձել է *ուրուկ*: Նկատենք, որ ըստ ՆՀԲ-ի *աւեր*-ը գործածվել է նաև հետևյալ իմաստով՝ «անունը արած կին, շնացեալ, շուն, սկընդիկ, պոռնիկ»:

Բախած «խենթ, յիմար, ապուշ» – «...որ ի գործ իմաստութեան *բախած* էր»: ՆՀԲ՝ «բախեալ յայտոյն չարէ, հարեալ ի խելսն, թափեալ ուղեղ, խելագար, անմիտ, մորոս», ԱԲ՝ «խելքը զարնուած, փախուկ, խենդ», ՀԲԲ՝ «խելքից զարկված, խելագար, յիմար, ապուշ»:

Ճապատիս «փաթաթվել» – ՆՀԲ՝ «նոյն ընդ ճաղպատիլ, շաղպատիլ, եռալ գեռալ, գալարիլ, երկայնիլ և կարճիլ սողնոց և գեռնոց ծեքծեքմամբ», ԱԲ՝ «ծոնընկիլ, երկըննալ ու քաշուիլ սողնոց», ՀԱԲ՝ «օձի գալարուիլ, մէկին կամ մի բանի փաթաթուիլը»: Վերջինում տրված է նաև բարբառային Տփ. *ճիպտվիլ* «երակի երկարիլ ձգուիլը», իսկ ՀԲԲ-ում՝ «գալարվել, փաթաթվել, երկայնանալ ու կարճանալ (սողունների)»:

Ճարտուկ «սպիտակ ու սև բծերով՝ ճանձկեն, ճանձիկ» – «Եւ էր ձին գունով ճարտուկ *ճանձկէն*... գնոյն կերպարան *ճարտուկ ճանձկէն*»: ՆՀԲ՝ «ազգ ճերմակ ձիոյ՝ խառն ընդ մոխրագունի և պիսակոտ ճանձկենի, աշխէտ», ԱԲ՝ «ճերմակ ձի՝ բծաւոր. շիտախ գըր, պօզ», ՀԱԲ՝ «բծաւոր սպիտակ գոյնով, որ է ճանձկէն»՝ «պիլ. čartuk հոմանիշից, որի հետ հմմտ. պրս. čarda կամ čarta. «սևի զարնող գոյն, կարմրաւուն», ապա և նմանատիպ այլ մեկնություններ:

Շաղաշուտ «լկտի, ցոփ», **շաղաշտութիւն** «ցոփություն» – «Անմտութեան, և *շաղաշուտ* խօսից և գործոց», «Արշակ որչափ ի մատաղութեան հասակին ըստ աստուածային իմաստութեան գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութեան՝ ի լկտութեան ի *շաղաշտութիւն* հատաւ»: Ըստ ՆՀԲ-ի՝ «անարգ և ցոփ», որից էլ *-ութիւն* ածանցով բաղադրությունը՝ «շաղաշուտն գոլ, խենէշութիւն, ցոփութիւն»: ՆՀԲ-ում արձանագրվել է մեկ օրինակ էլ *շաղաշոյտ* տարբերակով: ՀԱԲ-ում, «անմիտ, խենթուկ» բացատրությունից գատ, Աճառյանը հետևյալ կարծիքն է հայտնում. «Ըստ իս *-ուտ* մասնիկ է. բառիս արմատն է *շաղաշ*», ապա և ի վերջո հավելում հետևյալը. «Տէրվ. Altarm. 73 արմատը դնում է *շաղ*, որ կցում է սանս. laš «ցանկալ, տենչալ», գոթ. lustus, գերմ. Lust «ուրախութիւն, հաճոյք» բառերին»:

Ունջ «տակը, հատակ, գետին» – «Ո՞վ են լերինքն այն, զոր դուն ընդ *ունջ* տանէիր»: ՆՀԲ՝ «ծայր, ծագ, մանաւանդ ստորին կողմն, ստորոտ, յատակ, արմատ», ԱԲ՝ «1. քունձ, ծարը, տակը...2. գետին, յատակ», ՀԱԲ-ում ևս նույն մեկնությունն է: Նույն արմատից էլ կազմված է միայն Բուզանդի վկայությամբ հետևյալ բառը՝ **ընջովին** «արմատից, խորքից» – «...արմատաքի խլէին և գտաշտն գլխովին և զբազուկ *ընջովին*». ՆՀԲ՝ «ի բնոյ, ի ստորին փնջէ», ԱԲ՝ «մ. արմըտէն, տակէն»:

Պառական – «Սակաւ սպասաւորօք հանդերձ, և որսոցն *պառականօք*». ըստ ՆՀԲ-ի՝ «երագագ, ուռկան որսորդաց երեոց՝ իբրեւ փարախ շրջափակ»: Գործածել է

նան Ագաթանգեղոսը. «Ժամ տուեալ որսոյ ամենայն զօրացն, ածեալ կուտեալ զպառականն, խուճապական ձգեալ»: ԱԲ-ում բացատրված է «որսի շներ», տրված է նան *պատակական՝ պատական*-ի հղումով: ՀԱԲ-ում նկատվում է, որ, ԱԲ-ի բացատրության համաձայն, նույնանում է *բարակ* հոմանիշի հետ: Ուշագրավ է հատկապես Վ. Առաքելյանի մեկնությունը. «...բացատրում են՝ թակարդ, որսի շներ, մինչդեռ նշանակում է մարդկանց խումբ, որ որսորդության ժամանակ խուճապ է զգում, կամ մեծ շրջան կազմում գազանների փախուստը արգելելու համար»¹⁷:

Սորսորեմ – «...սկսան *սորսորել* գնալ ի բանակէն Հայոց թագաւորին»: ՆՀԲ՝ «սորելով սորել, թորթորիլ, հոսհոսիլ, և ցրուիլ, և եռալ զեռալ», ԱԲ՝ «1. ջրի պէս վազել, քամուիլ, քակուիլ, թորթորիլ, որդերը վխտալ, 2. բաժնուիլ, ցրուիլ»: ՀԼԲԲ՝ *սոր-սոր* Սս. «հոսելը, թափվելը, սորալը», որից և կարելի է բխեցնել դիտարկված բայը, սակայն նույն բառարանում տրված է նշված բայի այլ կիրառություն՝ *սորսորել* «մանգաղով հնձել, մանգաղով հարել»:

Հետևյալները ՆՀԲ-ում վկայված չեն:

Արջն «սև» - ՆՀԲ-ում առանձին տրված չէ, առկա է բաղադրյալ բառերում: ԱԲ-ի մեկնությունն է՝ «մութ սև»: ՀԱԲ-ում նշված է, որ մեկ անգամ գործածել է Բուգանդը. «Եւ յաւուրս ձմերանոյն՝ յորժամ... կամէր ուրեք երթալ ի պէտս ճանապարհի, յանկարծօրէն ձիւնն ցամաք *արջն* լինէր առաջի նորս»: Այնուհետև տրվել են նշված արմատով կազմությունները: Ըստ ՀԱԲ-ի՝ *արջն* արմատը ներկայանում է նան *աղջ* և *աղտ* ձևերով, որոնցից էլ՝ աղջամուղջ «թանձր մութ», աղտամուղտ «մութ, խաւար»:

Բանսերթուկ «ուրիշի խոսքին հետևող, դյուրահավան» – «...տեսանէին զթագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց՝ թէ մանուկ *բանսերթուկ* է»: ՆՀԲ-ում այն արձանագրված չէ, սակայն ամրագրված է ԱԲ-ում՝ «դիւրահաւան, խաբուող» բացատրությամբ: ՀԲԲ-ում զուգահեռաբար տրված է *բանսելու* և բացատրված է «ուրիշի ասածին հետևող, ուրիշի խօսքին անսացող, դիւրահաւան, խաբվող»: Այսպիսով՝ *բանս+երթուկ* «ուրիշի խոսքով գնացող, շարժվող»:

Ղրաստ «հագուստ» - բառը տրված է ԱԲ-ում, նշված են նան նույնի *գրաստ* // *գրաստ* և *դրաստ* տարբերակները, բացատրված «1. հագուստ, զինուորական վերարկու, 2. քղանցք, փեշ, էթէկ, զինձէֆ, թըրագ»: ՆՀԲ-ում միայն *գ*-ով տարբերակներն են՝ «հանդերձ կրելի զանձամբ, զգեստ, վերարկու զինուորական, տառաստկ, վարապանակ»: ՀԱԲ-ում ասվում է, որ անստույգ ձևով բառ է, ապա տրված են տարբերակները և հետևյալ բացատրությունը՝ «պատմուճան, վերարկու»՝ աղբյուրներում առկա վերլուծություններով, դիտարկումներով:

Մնդափար «գորավար» - արձանագրված է ՀԱԲ-ում՝ «գօրավարական մի աստիճան Պարսից մէջ» բացատրությամբ: Աճառյանը նկատում է, որ «Յաղագս մնդա-

¹⁷ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 167:

վարին Պարսից Անդիկանայ»-ն «գլուխների ցանկի մեջ և յետոյ դառնում է «Յաղագս զօրավարին Պարսից Անդիկանայ. Եւ Անդիկան զօրագլուխ նոցա», ապա հավելում է. «Վարդանեան ՀԱ 1921, 504 կարդում է *մկնդավար* «առաջնորդ մկնդաւոր զօրաց», որը շատ հավանական է:

Բաղադրյալ բառերի անհոդակապ տարբերակները, ինչպես նկատում է Վ. Առաքելյանը, ևս բարբառային-խոսակցական են: Նա առանձնացնում է հետևյալները՝ *աղբատսիրություն, աստուածտեսություն, արինհեղություն, բանբեր, գանձտուն, երկայնատություն, գայլոցկերություն, լրջմտություն, խրատտու, հայատակ, միմեանսգրկություն, յառաջսարկաւագ, ոսկիկմբէ, ոսկիվարաւանդ, որկորստություն, ջրթափել, ռամիկապաս, սրտկեղ, փողար*¹⁸: Պետք է ավելացնել նաև՝ *ակնկառոյց, աստուածպաշտություն, բարձրգահ, ձեռնթափ*:

Նկատելի է, որ *փողար*-ի փոխարեն մեկ կիրառություն էլ առկա է *փողահար* ամբողջական տարբերակով: Երկուսն էլ տարբեր հեղինակների կողմից ևս վկայվել են: Ինչ վերաբերում է *հայատակ* բառին, ՆՀԲ-ում վկայված չէ, սակայն *յատակ* գլխաբառի ներքո տրված է նաև *յատակ հայրենի* կամ *հայրենեաց* «բնիկ երկիր կամ հող», ուստի և հասկացվում է, որ Բուզանդի կիրառածը *հայայատակ* բառի՝ բարբառներին հատուկ հնչյունական ամփոփմամբ դրսևորված *հայատակ* «հայի հող, բնակության վայր» բառատարբերակն է:

Վ. Առաքելյանը նաև նկատում է, որ փոքրացուցիչ *-իկ, -ուկ* մասնիկներով ժողովրդախոսակցական բառերը ոչ ոք այնքան չի գործածել, որքան Բուզանդը. *այժմիկ, անտառակ, գաղտուկ, երկիրուկ, սակաւիկ, սարակ, տղայիկ, պատկառուկ, նախանձուկ, քաղաքիկ, խցիկ, մանկիկ, փոքրիկ, նկանակ, վայրիկ, պատանեակ* և այլն¹⁹: Պետք է ավելացնել՝ *գաւառակ, գետակ, եղջերիկ, որդեակ, պողովատիկ, տապարիկ*:

Գաղտուկ «գաղտնի» - Բուզանդի երկում վկայվել է հինգ անգամ: Ըստ ՆՀԲ-ի՝ գրաբարյան այլ աղբյուրներում ևս գործածվել է: Ենթադրվում է, որ գրաբարում բավական լայն գործածություն է ունեցել: ՀԳԲ-ում նշված են հետևյալ բարբառները՝ Ախք., Ձթ., Խրբ., Կս., Սշ., Սրշ., Ննխ., Պլ., Ջղ., Տիգ.: ՀԼԲԲ-ում տրված է *գաղտիկ, գաղտիկ, գաղտուց* տարբերակային ձևերի կողքին, սակայն բոլորի մոտ միաժամանակ բազում բարբառներ են նշված, ուստի չի հասկացվում, թե որ տարբերակը որ բարբառին է բնորոշ, միայն հետևյալ բնագրային վկայությունն է տրված. «*Գաղտուկ* խոսքը *գաղտուկ* կխոսես» (Աճ.), նաև՝ Սբ. *գաղտուկ* գրող «նենգամիտ, դավադիր», Սվ. *գաղտուկ* պահունի «գաղտնապես»: Ակնհայտ է, որ ՀԼԲԲ-ում նախորդ բառարանի համեմատ այլ բարբառներ են նշված:

Վ. Առաքելյանը նաև ավելացնում է. «Ժողովրդական բառեր են նաև ժխտական չ մասնիկով կազմված բառերը, կրկնականները և կցական բարդությունները,

¹⁸ Նշվ. աշխ., էջ 168:

¹⁹ Նշվ. աշխ., էջ 167:

օրինակ. *չերեց, չեպիսկոպոս, չկամութիւն, չհաւատալի, չմոռացական, չքնոտի, չքմեղս, չքաւոր, բարիանուն, բարիատուր, երթնեկել, հարցնքնին, հետիոտն, կալնկապ, հազիւ հազիւ, հազ քան զհազ, հաստամեստ, հաստաբեստ, հուպ ընդ հուպ, գունդ գունդ, վաղվաղ, գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, աւանաց աւանաց, տեղեաց տեղեաց, ընտիր ընտիր, քաղաքաց քաղաքաց, հազիւ հազիւ* և այլն²⁰: Պետք է հավելել նաև՝ *ձեռն ի ձեռն, շեղջս շեղջս, խլխլեմ, կազմ պատրաստ, խուժադուժ, երթնեկս առնուլ* և այլն:

Անկասկած բարբառային-խոսակցական հայերենին են բնորոշ նաև հետևյալ բաղադրությունները. *անդեղեայ* «դեղթափ, դեղ ընդդէմ թունից կամ ցաւոց», *անգաւակիմ* «անգաւակ մնալ», *անճիտեմ* «անճէտ ու անգաւակ առնել», *անմարդիմ // անմարդանալ* «դատարկանալ ի մարդոյ, անմարդ՝ անշէն, անբնակ լինել», *խօսնակից* «միջնորդ խօսելոյ, պատգամաւոր, բանբեր», *կապակոտոր* լինեմ «կոտորել խզել զկապ, զամենայն արգելս յչինչ գրել», *կողաքակ* լինեմ «քակիլ ի կուսակցութենէ, ի սիրոյ բարեկամութենէ», *նշանացեմ* «նշանացի կամ իւր նշանաւ յայտնել, ակնարկել», *քոյրաթիւ* «քոյր թուեցեալ՝ համարեալ»:

Հետևյալ օրինակները ցուցաբերում են ընդհանուր օրինաչափությունից հնչյունական շեղումներ, որոնք, կարծում ենք, բարբառային հնչյունափոխության հետևանք են. խուլ > ձայնեղ՝ *անգանել* (12 օրինակ), *ընգեր, մանգիկ, մանգութիւն, ցանգութիւն, քարընգեց, ըմբել, ազրախումբ* (ասպախումբ), *ընդանի, ընդրել, ճիշդ, ժանդ, ժանդագործ, ընձայ, պանձացեալ, վախջան // վաղջան // վաղձան, ջաղջախել* և այլն, շնչեղ խուլ > ձայնեղ՝ *անհեղեղ, գոջել*:

Նկատվում են նաև ձայնեղների խլացման և խուլերի շնչեղացման օրինակներ՝ *ներտ (նեարդ), նշդեհ* (նժդեհ), *տիրանենկ, խոնճեալ, փայքար*:

Որոշ բառերում առկա է ձայնավորների կամ երկբարբառների բարբառային հնչյունափոխություն՝ *վերըմբարձ* (վերամբարձ), *պեղծ* (պիղծ), *ցուղ* (ցող), *մուրուք* (մօրուք), *դուղել* (դօղել - լողալ), *զգուշ* (զգոշ), *զեղ* (զիղ), *արենհեղութիւն* (արին հեղութիւն), *ներտ* (նեարդ), *տուրնջէն* (տուրնջեան), *այգենալ* (այգանալ «լուսանալ»), *կարեւան* (կարաւան):

Թերևս բարբառներին հատուկ կրճատմամբ են առկայացել հետևյալ բառերը՝ *ապախտիք* «ապերախտութիւն» - «Փոխանակ երախտեացն *ապախտիս* հատուցեք», *շաւակի* -ՆՀԲ-ում արձանագրված չէ, բայց և վկայված է ԱԲ-ում՝ *արշաւակի* (մ. «արշաւելով, յարշաւս, արագ ընթացիք») հղումով:

Եզրակացություն

Ինչպէս և պարզվեց, 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում վկայված զգալի թվով բառեր ու բառատարբերակներ աղերսվում են մերօրյա բարբառներին: Առավել ուշագրավ է այն, որ այդ բառերն առավելապէս

²⁰ Նույն տեղում:

հատուկ են Ղարաբաղի բարբառին: Դիտարկված օրինակների մի մասն էլ, անկասկած, բնորոշ է եղել ժամանակի բարբառային հայերենին:

Վերհանված և քննության ենթարկված նյութը, անշուշտ, կարող է հետաքրքրել հայոց լեզվի պատմության և հայ բարբառագիտության հարցերով զբաղվողներին: Այն փոքրիկ ներդրում է գրաբարյան մատենագրության մեջ բարբառային իրողությունները տարանջատելու և կարևոր բացահայտումներ անելու ճանապարհին:

Օգտագործված գրականություն

1. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1987:

2. Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, էջ 191, Երևան, 1968:

3. Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

4. Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926:

5. Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Երևան, 1981, էջ 160:

6. Աւետիքեան Գ., Սիրմելէան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837:

7. Աւգերեան Մ. և Ճէլալեան Գ., Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

8. Հայկական համաբարբառ, Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, կազմ. Ա. Բաղդասարյան, Հ. Սարգսյան, Բ. Եզանյան, Օ. Խաչատրյան, Երևան, հ. 1-3, 1973-1978:

9. Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հհ. Ա-Զ, Երևան, 2001-2012:

10. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարը (V դար), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2006:

11. Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:

12. Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013:

Khachatryan Valentin - Dialect Words in «History of Armenia» by Pavstos Buzand. - In this article, the words used in the History of Pavstos Buzand, which deviates from the ancient Armenian regularity, are examined. They are mostly words with unique usage, which are partially used in today's dialects, or they are dialectal from the phonetic and word formation points of view.

Keywords. Dialect Word, Manuscript, Creation, Bibliography, Regularity, Vocabulary, Borrowing.

Хачатрян Валентин –Диалектные слова в «Истории Армении» Павстоса Бузанда. – В данной статье исследуются слова, использованные в истории Павстоса Бузанда, которые отклоняются от древнеармянской закономерности. В основном это слова уникального употребления, которые частично используются в современных диалектах, либо являются диалектными с фонетической и словообразовательной точек зрения.

Ключевые слова. Диалектное слово, рукопись, создание, библиография, закономерность, вариант слова, заимствование.

CORPUS LINGUISTICS IN THE STUDY OF OLD ARMENIAN

DOI: 10.54412/93055-2023-104

Hakobyan Frida

PhD in Philology,

Institute of Language after H. Acharyan of NAS RA,

Researcher. frida.hakobyan@gmail.com

Keywords: Old Armenian, Corpus Linguistics, Historical Linguistics, Morphological Analysis, Syntactic Patterns, Diachronic Studies, Ancient Languages.

The study of Old Armenian has consistently held significant importance for linguists. The challenges posed by its complex grammatical structure, historical evolution, and limited linguistic resources have made it a formidable task. However, the advent of corpus linguistics, a methodology that harnesses large electronic databases of linguistic data, has opened new avenues for studying Old Armenian. This article delves into the application of corpus linguistics in the study of Grabar, highlighting how this approach enhances our understanding of the language's morphology, syntax, and historical development.

The Power of Corpora in Linguistics

Technology has been the major enabling factor in the growth of corpus linguistics¹. Corpus linguistics involves the systematic analysis of large collections of text, known as corpora, to identify patterns, linguistic features, and recurring structures. In the context of studying ancient languages like Grabar, corpora provide a valuable resource for researchers to examine language use across different genres, time periods, and social contexts.

In the field of Armenian linguistics, tasks related to the creation of electronic corpora for textual analysis have been restricted to works carried out exclusively in electronic libraries and various online sources. The works involve the generation of links to texts found in electronic libraries and different online repositories.

For instance, the most comprehensive online repository of literary texts is the Digital Library of Armenian Literature available at <https://www.digilib.am/>². This repository showcases a wide range of literary works authored by numerous writers. These texts are accessible exclusively through online browsing. Unfortunately, the website is not feasible to perform certain linguistic tasks, such as searches for terms and expressions, classification based on certain criteria, identification of expressions, etc.

Lists of general and thematic bibliographies, as well as the catalog of Armenian language libraries, are available on the website <https://grahavak.blogspot.com/>³. In contrast to other online libraries, this website provides links not only to books but also to online resources in various repositories. Linguistic corpora exhibit distinct differences in structure

¹ Anne O'Keefe, Michael McCarthy. (2010). *The Routledge Handbook of Corpus Linguistics*. Taylor & Francis e-Library, p.6.

² Digital Library of the Armenian Literature. (2023). [Online] Available at: <https://www.digilib.am/> [Accessed on November 19, 2023].

³ Grahavak. (2023). [Online] Available at: <https://grahavak.blogspot.com/> [Accessed on November 19, 2023].

compared to online libraries. Consequently, the mentioned sources can solely contribute to the establishment of an electronic corpus, as neither a reference site nor an electronic library qualifies as a linguistic corpus.

Building a Corpus of Old Armenian

Creating a Grabar corpus involves collecting and digitizing a diverse range of texts, including religious manuscripts, literary works, and historical documents. This process allows researchers to compile a comprehensive dataset that spans the entire historical timeline of Grabar, from its earliest attestations to its later developments. Building a Grabar corpus is a foundational step in applying corpus linguistics to the study of this classical language. The process involves meticulous collection, digitization, and organization of diverse Grabar texts, creating a comprehensive and accessible linguistic dataset for analysis. Here's a more detailed exploration of the steps involved in building a Grabar corpus:

Text Selection and Diversity:

For the construction of a comprehensive Grabar corpus, a diverse range of texts needs to be identified, encompassing religious manuscripts, literary works, historical documents, inscriptions, and other written records in Grabar. The objective is to capture the linguistic variations present across different genres and historical periods. To ensure a holistic representation of Grabar's evolution over time, texts from various historical periods should be included in the corpus. This approach facilitates the tracking of linguistic changes over different eras, enabling researchers to conduct meaningful diachronic studies.

Digitization Process:

1. Manuscript Transcription:

Given that many Grabar texts are preserved in handwritten manuscripts a crucial step involves transcribing these manuscripts into digital formats. This conversion entails rendering the original script into Unicode or other electronic encoding systems suitable for subsequent computational analysis.

2. OCR Technology Implementation:

To address printed editions of Grabar texts, Optical Character Recognition (OCR) tools become essential. This technology facilitates the conversion of printed texts into digital formats, proving particularly valuable for handling printed editions within the Grabar corpus.

Normalization and Annotation Process:

In the process of building a comprehensive Grabar corpus, a critical initial step involves the standardization of orthography. This step is dedicated to normalizing orthographic variations that may be present in different manuscripts or editions, ensuring a harmonized and consistent approach to spelling conventions, punctuation, and other linguistic features. Following this, the corpus undergoes an annotation process to enrich its linguistic dimensions. Linguistic features such as part-of-speech tags, morphological analyses, and syntactic structures are systematically annotated onto the corpus. This process serves to enhance the corpus's analytical capabilities, facilitating the extraction of nuanced language patterns and contributing depth to linguistic research.

Metadata and Documentation:

In the pursuit of creating a corpus that transcends mere text collections, attention is given to metadata development. Each text within the corpus is accompanied by detailed metadata, encompassing information on authorship, date of composition, genre, and relevant

historical or cultural contexts. This metadata serves as a contextual compass for researchers navigating the corpus during analysis. Additionally, comprehensive documentation outlining the corpus's scope, sources, and preprocessing steps undertaken is generated. This documentation serves as an invaluable guide, ensuring transparency and offering a blueprint for replicability in linguistic studies.

Storage and Accessibility:

The establishment of a secure digital repository is a pivotal step in safeguarding the Grabar corpus. Equipped with appropriate backup mechanisms, this repository ensures the longevity and accessibility of the corpus. The consideration of open-access platforms or repositories further expands its reach, facilitating easy access for researchers and scholars delving into Grabar studies. To optimize the usability of the corpus, user-friendly interfaces or tools are developed. These interfaces empower researchers, enabling them to navigate the corpus efficiently and query specific texts or linguistic features of interest.

Quality Control Measures:

To maintain the integrity of the corpus, an ongoing process of validation and verification should be implemented. Regular assessments need to be conducted to identify and address any discrepancies or errors in normalization, or annotation, fortifying the reliability of the corpus. Moreover, *peer review* will play a pivotal role in validating the linguistic analyses conducted using the corpus.

Therefore, building a corpus of Old Armenian involves a combination of linguistic expertise, technological tools, and careful curation. A well-constructed corpus will serve as a valuable resource, empowering researchers to explore the nuances of Grabar and contribute to the broader understanding of this classical language.

The Varied Applications of the Corpus of Old Armenian

In one of our articles called "The Purpose and Objectives of the creation of an Electronic Corpus of the Old Armenian Language"⁴, we explored the diverse applications of the Grabar corpus. In this article, we will examine further areas where the corpus will play a crucial role in advancing language research.

The corpus of Old Armenian, foremost, will significantly contribute to the study of grammar, specifically aiding in the examination of morphology and syntax.

Morphological Analysis of Old Armenian

One of the key challenges in Grabar is its intricate morphological structure. The language exhibits a highly inflectional and agglutinative morphology, with intricate patterns of affixation and derivation. Noun and verb conjugations, declensions, and the use of various prefixes and suffixes contribute to the morphological richness of Grabar.

As the rich morphological structure of the Old Armenian Language poses challenges for traditional linguistic analysis, corpus linguistics methods and tools will enhance our understanding of its complex morphology. Corpus linguistics enables researchers to conduct in-depth morphological analyses by extracting and categorizing morphemes, exploring word

⁴ Hakobyan, F. (2022). " The purpose and objectives of the creation of an electronic corpus of the Old Armenian language." Jahukyan Readings, 58-66. Retrieved from http://language.sci.am/sites/default/files/jahowkyanakan_entertsowmner_2022.pdf

forms, and identifying patterns of inflection. Through this approach, linguists can uncover the nuances of Grabar's morphology, shedding light on its grammatical intricacies. Here we will discuss Computational Linguistics tools for morphological analysis and explore how they can be used in advancing the study of the morphology of Old Armenian.

Tokenization and Lemmatization: Tokenization involves breaking down text into individual units, often morphemes, while lemmatization identifies the base or dictionary form of words. In Grabar, where inflections abound, these tools aid in isolating and understanding the root forms.

Part-of-Speech Tagging: Assigning grammatical categories to each word or morpheme helps in distinguishing between nouns, verbs, adjectives, etc. This is crucial for deciphering syntactic and morphological roles in Grabar sentences.

Morphological Parsing: Computational tools can be employed to analyze word structures, identifying prefixes, roots, and suffixes. This is particularly valuable in Grabar, where word morphology often carries nuanced meanings.

Certainly, analyzing the morphology of the Old Armenian language through corpus linguistics tools is challenging due to various factors. One notable obstacle is the presence of lexical ambiguity within Old Armenian texts, where words often carry multiple meanings. To overcome this, a thorough contextual analysis becomes imperative for accurately discerning the intended sense of each term. Another challenge arises from the temporal span of Grabar, encompassing archaic linguistic forms that have evolved over time. Effectively addressing this issue involves equipping computational tools with the capability to adapt to historical variations, ensuring a comprehensive and accurate morphological analysis of the texts.

However, by employing computational tools for morphological analysis, researchers can discern intricate patterns of morphemic changes, inflectional variations, and the assimilation of linguistic elements from other languages. They can also identify linguistic borrowings and adaptations, showcasing the dynamic interplay between Old Armenian and its linguistic influences.

Exploring Syntactic Patterns and Linguistic Evolution of Old Armenian through Corpus Linguistics

The study of syntactic patterns is necessary for unraveling the evolution of languages, providing insights into how linguistic structures adapt over time. In the case of Grabar, the exploration of syntactic patterns offers a window into the dynamic linguistic evolution of this language. Here we will explore the significance of syntactic analysis in the study of Grabar and how computational linguistics tools contribute to understanding the intricacies of its syntactic structures.

The Old Armenian Language exhibits a rich and complex syntactic system, characterized by flexible word order, extensive use of inflections, and intricate sentence structures. The syntactic patterns in texts reflect the influence of cultural, religious, and historical factors, providing a unique lens through which to explore linguistic evolution.

Here we'll talk about corpus linguistics tools for syntactic analysis:

Dependency Parsing: Computational tools for dependency parsing identify the grammatical relationships between words in a sentence, shedding light on the syntactic structure. In Grabar, where word order can vary, dependency parsing helps decipher the relationships between constituents.

Phrase Structure Parsing: This tool analyzes the hierarchical structure of phrases and sentences, allowing researchers to understand the syntactic organization in texts.

Machine Translation Models: While primarily designed for translation, machine translation models can reveal syntactic patterns by aligning corresponding phrases in different languages. This is particularly useful for understanding syntactic structures in multilingual contexts involving Old Armenian.

Grabar, as a language situated at the crossroads of various cultures, exhibits syntactic features influenced by neighboring languages. Computational tools will assist in identifying borrowings and syntactic adaptations, revealing the dynamic interplay between linguistic elements as well. The archaic nature of Grabar presents challenges in syntactic analysis, as certain syntactic structures may differ significantly from contemporary languages. Lexical ambiguity and the need for contextual analysis can complicate the accurate identification of syntactic patterns in Old Armenian texts.

However, syntactic analysis, facilitated by computational linguistics, will contribute significantly to understanding the linguistic evolution of Old Armenian. Future research may focus on developing specialized syntactic parsing models for Grabar, expanding linguistic resources, and refining tools to accommodate the challenges posed by the archaic nature of the language. By analyzing sentence structures, word order variations, and syntactic patterns across different genres and periods, researchers will gain insights into the linguistic evolution of the Old Armenian Language. This will help to understand how the language adapted to various cultural and historical influences over time.

Corpus Linguistic and diachronic analysis

Corpus linguistics, a field that harnesses large electronic databases of linguistic data, plays a crucial role in the study of the history of languages. In the case of Old Armenian, the creation of a corpus significantly will contribute to diachronic studies, which involve tracing linguistic changes over time. The corpus, encompassing a diverse range of texts spanning different historical periods, can provide researchers with a comprehensive dataset for diachronic analysis. Through corpus linguistics methodologies, scholars will systematically examine and compare linguistic features, such as vocabulary, syntax, and usage, across various texts within the corpus. Diachronic studies facilitated by the Old Armenian corpus will offer a unique opportunity to explore the evolution of the language over centuries. Researchers can pinpoint shifts in linguistic patterns, identify lexical changes, and analyze the adaptation of syntactic structures across different historical contexts. This corpus-driven approach will enhance the precision and depth of diachronic studies. By leveraging computational tools and analytical techniques, scholars can unravel intricate linguistic transformations and gain insights into the cultural, societal, and historical factors that influenced the language over time. Diachronic studies will facilitate a systematic analysis of linguistic features across different periods. This includes identifying shifts in vocabulary, syntax, and grammatical structures, illuminating lexical changes, semantic shifts, morphological and syntactic adaptations.

As with any field of study, the study of Old Armenian through corpus linguistics encounters several challenges. These challenges, however, pave the way for innovative solutions and the development of more robust methodologies. Additionally, they highlight the

areas where future research and advancements in technology can significantly contribute to the depth understanding of Grabar. Here, we delve into the challenges faced in studying Grabar through corpus linguistics and outline potential future directions for research.

Limited Digital Resources: There are not many Old Armenian texts available in digital form, making it a significant challenge. Some valuable manuscripts and documents remain in non-digital formats, requiring time-consuming manual digitization efforts.

Semantic Analysis and Discourse Studies: Beyond morphological and syntactic analysis, future research may explore semantic analysis and discourse studies in Grabar. This would involve examining how meaning is constructed, conveyed, and interpreted within different genres and periods.

Crowdsourced Annotation and Translation: Crowdsourcing platforms could be employed for the annotation and translation of Grabar texts. This would not only accelerate the digitization process but also involve a broader community in linguistic research.

Integration of Archaeological and Historical Data: Integrating archaeological and historical data with computational linguistics approaches can provide a more comprehensive understanding of Grabar. This interdisciplinary approach could uncover correlations between linguistic changes and historical events.

Open Access Language Resources: Establishing open-access repositories for Old Armenian language resources, including annotated corpora, linguistic tools, and research findings, would foster a collaborative and transparent research environment.

Education and Training Programs: Initiatives to develop educational programs and training opportunities in the intersection of corpus linguistics and the studies of Old Armenian can cultivate a new generation of researchers with the necessary skills and expertise.

While challenges exist in the computational study of Grabar, they also present opportunities for growth and innovation. Future research endeavors, guided by collaborative efforts and technological advancements, can continue to unveil the linguistic treasures embedded in Grabar, contributing not only to the understanding of this classical language but also to the broader field of historical linguistics.

In conclusion, corpus linguistics may emerge as a powerful tool in the study of Grabar, providing researchers with a systematic and data-driven approach to unraveling its linguistic complexities. Computational tools can also contribute to the preservation of Grabar by digitizing and analyzing texts, making them accessible to a broader audience, and ensuring the longevity of linguistic knowledge. As technology continues to advance, the synergy between corpus linguistics and Grabar studies holds great promise.

Հակոբյան Ֆրիդա – Կորպուսային լեզվաբանությունը որպես գրաբարի ուսումնասիրության եղանակ. - Հոդվածը նվիրված է կորպուսային լեզվաբանության մեջ կիրառվող լեզվի ուսումնասիրության մեթոդների և եղանակների ներկայացմանը: Հանգամանալից կերպով նշվում է, թե դրանք ինչպես կարող են նպաստել գրաբարի լեզվական համակարգի առավել ամբողջական և լիակատար քննությանը, հայոց լեզվի պատմության տարբեր փուլերում գրաբարի բառապաշարի, քերականական իրողությունների ուսումնասիրությանը:

Բանալի բառեր. գրաբար, կորպուսային լեզվաբանություն, կորպուս, ձևաբանական վերլուծություն, շարահյուսական վերլուծություն, տարածաբանական ուսումնասիրություն, հին լեզուներ:

Акопян Фрида – Корпусная лингвистика в исследовании древнеармянского языка. – Изучение древнеармянского языка всегда имело большое значение для лингвистов. Проблемы, связанные с его сложной грамматической структурой, исторической эволюцией и ограниченными лингвистическими ресурсами, сделали изучение древнеармянского языка сложной задачей. Однако появление корпусной лингвистики, методологии, использующей большие электронные базы лингвистических данных, открыло новые возможности для изучения древнеармянского языка. В этой статье рассматривается применение корпусной лингвистики при изучении Грабара, подчеркивая, как этот подход улучшает наше понимание морфологии, синтаксиса и исторического развития языка.

Ключевые слова: Грабар, корпусная лингвистика, корпус, историческая лингвистика, морфологический анализ, диахронические исследования, древние языки.

Հմայական Հասմիկ

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. hhmayakyan@yahoo.com

Բանալի բառեր. ինթահայկական, հաց, գաթա, փշրել, կարաս, ^{NINDA}gatai/katai, ^{NINDA}hazizi, ցորեն, zuriun/zuriuun

Հացատեսակները և գաթան հայոց կենցաղում և տոնածիսական համակարգում ունեն խիստ կարևոր դերակատարություն, հատկապես տարբեր տոների, հարսանեկան, թաղման և այլ ծեսերի ու արարողությունների ժամանակ մշտապես հատուկ ծիսակարգով թխվել են տարբեր տիպի հացեր և գաթա: Զանազան հացատեսակների, տարատեսակ գաթաների կենցաղում և, մասնավորապես, տոնածիսական համակարգում վերջիններիս կիրառության վերաբերյալ բազմազան ու հարուստ տեղեկատվություն է պարունակվում հայկական ազգագրական և բանահյուսական նյութերում: Հայոց տոնածիսական համակարգում հայկական տարբեր ուտեստների ունեցած դերակատարությանը, դրանց հետ կապված ավանդույթներին անդրադարձել են մի շարք հետազոտողներ, որոնց ուսումնասիրություններում, ի թիվս այլ ուտեստների, անդրադարձ է կատարվել նաև ծիսական հացերին ու գաթային: Այդ հեղինակներից են Ռ.Նահապետյանը¹, Ս.Մկրտչյանը², Ռ.Ծատուրյանը, Հ.Խառատյանը³: Հայկական տոներին, ծեսերին, վերջիններիս ծիսակարգին և դրանց բնորոշ կերակրատեսակներին անդրադարձել են Լ.Միմոնյանը⁴, Հ.Աբրահամյանը⁵ և այլք: Անդրադարձ է կատարվել նաև հացին առնչվող ժողովրդական պատկերացումներին և հավատալիքներին⁶, հացի և հացահատիկի ծիսապաշտամունքային բովանդակությանը⁷, միջնադարյան Հայաստանում հացագործական ավանդույթներին, միջնադարյան աղբյուրներում պահպան-

¹ Ռ.Նահապետյան, Հայոց ավանդական ուտեստի էթնոմշակութային բնութագրության շուրջ, Պատմաբանասիրական հանդես, 2019, 2, էջ 175-199:

² Ս.Մկրտչյան, Հայոց տոնածիսական մշակույթ, Էջմիածին, 2017, Դ (ապրիլ), էջ 161-167: Նույնի՝ Տոներ, հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2010:

³ Ռ. Ծատուրյան, Հ. Խառատյան, Հայոց ավանդական տոնածիսական ուտեստը, Երևան, 2011:

⁴ Լ. Միմոնյան, Տոմարային ծիսաշար, հ.1, Տոմար, Ձմեռ, Նոր տարի և Սուրբ ծնունդ, Երևան, 2006: Նույնի՝ Տոմարային ծիսաշար, Սուրբ Սարգիս, Տրնդեգ, Բարեկենդան, հ. 2, Երևան, 2007:

⁵ Հ.Աբրահամյան, Միջինքի և Սեբաստիայի Քառասնից մանկանց տոները հայոց եկեղեցական և ժողովրդական տոնացույցում, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2019, 3, էջ 219-220:

⁶ Կ.Սահակյան, Ռ.Հովհաննիսյան, Հացին առնչվող ժողովրդական պատկերացումներ և հավատալիքներ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական աշխատանքներ, 2011:

⁷ Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 356-363:

ված տարբեր հացատեսակներին, թխվածքներին⁸: Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված տարբեր գաթանախշեր ու հացի դրոշմիչներ ներկայացված և քննարկված են հնագիտական բնույթի ուսումնասիրություններում⁹:

Սակայն վերոնշյալ հեղինակների ուսումնասիրած նյութերը գրեթե չեն դիտարկվել Հայկական լեռնաշխարհին հարակից, և վերջինիս հետ սերտ առնչություններ ունեցած հին Փոքր Ասիայից հայտնաբերվածՔ. ա. երկրորդ հազարամյակի խեթական աղբյուրներում պահպանված հացատեսակների անվանումների ու բաղադրությունների, դրանց հետ կապված ծիսապաշտամունքային պատկերացումների, տոնածիսական համակարգում վերջիններիս կիրառության և պատկերազրույթյան համատեքստում: Այնինչ, նման մոտեցման արդյունքում հնարավորություն է ստեղծվում, ըստ մեր ուսումնասիրությունների, բացահայտել վերջիններիս հնագույն ակունքները, քանզի հայերը հանդիսանում են տվյալ տարածաշրջանի հնագույն ժողովուրդների տարբեր ավանդույթների, մշակութային ժառանգության կենդանի պահապանները և կրողները: Հարկ է նշել նաև, որ ստորև ներկայացվելիք վերոնշյալ խեթական սեպագիր աղբյուրներից վկայված բազմաթիվ հացատեսակներին անդրադարձած օտարազգի գիտնականները ևս չեն քննարկել հայկական նյութը, մինչդեռ, որոշ դեպքերում, որպես համեմատական նյութ, դիտարկել են ժամանակակից Թուրքիայում տարածված և թխվող տարբեր հացատեսակների, այլուրից պատրաստվող ուտեստների (հավվայի, ծիրանաչրով հացերի, կանաչեղենով հացերի և այլն) հետ նմանությունները:

Խեթական սեպագիր աղբյուրներում պահպանված տարբեր հացատեսակների և թխվածքների վերաբերյալ կատարված ուսումնասիրություններից խիստ կարևոր է Հ.Հոֆֆների ծավալուն աշխատությունը¹⁰, որում ներկայացված են խեթական սեպագիր աղբյուրներում հանդիպող հացատեսակների, թխվածքների և հացազգիների անվանումները և տեքստային վկայությունները: Խեթական ծիսական ուտեստներին և ծեսերում կիրառվող տարբեր հացատեսակներին անդրադարձ է կատարվում Հ.Բեքմանի աշխատության մեջ¹¹, ինչպես նաև խեթական տարբեր հացերի կիրառության, տեսակների ներկայացման առումով ուշագրավ է Յ. Բ. Իսլամի աշխատության համապատասխան ենթագլուխը¹²: Կարևոր ուսումնասիրություն է նաև Ջ. Գոլեցի խեթական տարբեր ծիսական ճաշատեսակներին և

⁸ Հ. Բեգլարյան, Հացագործությունը միջնադարյան Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 5, 1987, էջ72-78:

⁹ Է. Խանգաղյան, Կ.Մկրտչյան, Է.Պարսամյան, Մեծամոր, ուսումնասիրություն, 1965-1966թթ. պեղումների տվյալները, Երևան, 1973, էջ 131-133:

¹⁰ H.Hoffner, *AlimentaHethaeorum, Food Production in Hittite Asia Minor*, New Haven, Connecticut, 1974.

¹¹ G.Beckman, *The Hittites Serve Their Gods*, in *The Oxford Handbook of Ritual and Worship*, Edited by E. Balentine, Oxford, 2020, pp. 37-53.

¹² J.Golec-Islam, *The food of Gods and Humans in the Hittite World*, Warsaw, 2016, p. 43-49.

հացատեսակներին նվիրված հոդվածը¹³: Մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում նաև իւթական իրականության մեջմեղրի կիրառության օրինակների քննարկումը տարբեր հացատեսակների և թխվածքների մեջ, որին իր հոդվածում անդրադարձել է Ս.Դեմիրելը¹⁴:

Ի մի բերելով այս ուսումնասիրությունները՝ կարող ենք փաստել, որ իւթական տեքստերից մեզ են հասել հարյուրից ավելի հացատեսակների և թխվածքների անվանումներ: Խեթական տեքստերում պահպանված հացատեսակները կարելի է բաժանել ըստ համերի, ըստ բաղադրության, օրինակ, կան հացատեսակներ և թխվածքներ, որոնց բաղադրության մեջ կիրառվում են մեղր (իւթական տեքստերում հանդիպում են շուրջ տասներեք մեղրով հացատեսակներ), մրգեր և հատապտուղներ, նռան հատիկներ, ծիրան, ինձոր կամ բանջարեղեններ, առկա են պանրով և մսով հացատեսակներ, կանաչիով հացեր, յուղահացեր և այլն: Տեքստերում ներկայացվում են նաև այդ հացատեսակների համը՝ աղի, քաղցր, դառը: Ներկայացվում են նաև թե ինչ տեսակի ալյուրից են պատրաստված, ինչ գույնի են, թթխմորով են, թե առանց թթխմորի և այլն: Խեթալուվիական պատկերագրության մեջ ևս կարելի է հանդիպել որոշ հացատեսակների պատկերներ, քանզի վերջիններիս բազմաժանր արվեստի կոթողներում հանդիպում են խնջույքի, հարսանիքի, տարբեր ծիսական արարողությունների տեսարաններ, որոնցում առկա են խմիչքների և ուտեստների, այդ թվում հացի որոշ պատկերումներ, ինչպես նաև հնագիտական պեղումների արդյունքում, ինչպես նշվեց, թե Փոքր Ասիայի, թե Հայաստանի տարածքից հայտնաբերվել են հացերի դրոշմիչներ:

Ստորև ներկայացվում են որոշ ուսումնասիրողների և մեր կողմից դիտարկված իւթական աղբյուրներում հանդիպող մի քանի հացատեսակների, հացագզիների, թխվածքների և վերջիններիս հետ առնչություն ունեցող հասկացությունների անվանումներ, որոնք իրենց հնարավոր գուգահեռները ունեն հայոց լեզվում:

NINDA gatai/katai - գաթա¹⁵

«Գաթա» բառը հայերենում, որը նշանակում է բաղադրի ձևով թխվածք՝ առատ յուղով, շաքարով¹⁶ հին մատենագրության մեջ վկայված չէ¹⁷, դրա առաջին հիշատակությունը Վ. Այգեկցու առակում է¹⁸:

¹³ B. J. Collins, *Ritual Meals in the Hittite Cult, Ancient Magic and Ritual Power*, Leiden: Brill, 1995, pp. 77-92.

¹⁴ S. Demirel, *Apiculture in Hittite Cuneiform Texts*, *The European Zoological Journal*, 89:1, 2022, 1215-1222.

¹⁵ H. Hmayakyan, *The Word Gat'a in the Armenian Language*, *Բանբեր Արևելագիտության ինստիտուտի, հատոր 2*, Երևան, 2022, էջ 120-128.

¹⁶ Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 214:

¹⁷ Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հ 1, Ե., 1926, էջ 499-500:

¹⁸ Վարդան Այգեկցի, *Ժողովածոյ առակաց Վարդանայ, Մնացորդք առակաց ի ձեռագեն G, ՅԽԲ. Խոզ եւ գաթայ (7 G), Մասն Բ, Բնագիր, Մանկտ Պետերբուրգ, 1894:*

«Գաթայ» ձևով այն բազմիցս հանդիպում է միջին հայերենում և ուշ միջնադարյան քնարերգության մեջ¹⁹: Չնայած այս խմորեղենի խիստ տարածվածությանը հայկական տոնածիսական համակարգում և կենցաղում, «գաթա» բառը ստույգ ստուգաբանություն չունի հայերենում²⁰: Ըստ Հ.Աճառյանիայն հանդիպում է երկու տասնյակից ավելի բարբառներում «գաթայ-կաթայ» ձևով, որ խմորեղենի տեսակ է և պատմական Հայաստանի տարբեր վայրերում տարբեր ձևերով է պատրաստվում՝ շաքարով, յուղով, խորիզով, կամ ընկույզով ու մեղրով, առանց շաքարի՝ աղով և այլն: Բառը առկա է նաև թուրքերենում՝ *kele*, քրդերենում՝ *kade*, *kadik*, վրացերենում և այլն, որոնց ծագումն անհայտ է²¹: Գ.Ջահուկյանը հայերեն «գաթա» և ֆրանսերեն *gateau*-կարկանդակ բառերի նմանությունը պատահական է համարում²²:

«Գաթայ»-ից կազմված են համարվում բարբառներում հանդիպող «գաթագուգու»- փոքրիկ գաթա և «գաթախատիկ»՝ հարսանիքն հրավիրելու նպատակով ուղարկված գաթա բառերը²³:

Խեթական աղբյուրներում հանդիպում է ^{NINDA}*gatai/katai*- անվանմամբ մի անհայտ թխվածք, որի բաղադրությունը, ցավոք, հայտնի չէ և ունի հետևյալ գրությունը՝ *ka-a-ta-i* (KUB XXXV 82 i 1) և *ga-ta-a-i* (XXXII 129 + 814/b, i 21; 1262/v rev 9'), *ga-ta-[a-i]* (KBo XIII 248 i 22 '):

Մեր կարծիքով հայերեն «գաթայ» բառը հնարավոր է բխեցնել խեթերեն սեպագիր տեքստերում հանդիպող վերոնշյալ ^{NINDA}*gatai*- մի տեսակ թխվածք բառից, որը խեթերենում ստույգ ստուգաբանություն չունի:

^{NINDA}*hazizi* – «հաց»

Հայոց լեզվում ստույգ ստուգաբանություն չունի նաև «հաց» բառը: Խեթերենում առկա է ^{NINDA}*hazizi* հացատեսակ²⁴, որը նշանակում է հավանաբար «ականջանման հաց»²⁵: Ժամանակին այս բառը հայերեն «հաց»-ի հետ համադրել է Գ.Ջահուկյանը՝ համարելով այն հայերենից խեթերենին անցած փոխառություն²⁶՝ ենթադրելով, որ հայերեն բառը հնարավոր է բնիկ է²⁷: Հ.Մարտիրոսյանը դիտարկելով բոլոր մինչ այս հայտնված տեսակետները և քննելով «հաց» բառը հնդեվրոպական բառամթերքի համատեքստում, այսուհանդերձ, վերջնական տեսակետ այս

¹⁹ Ռ.Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009, էջ 131:

²⁰ Հ. Աճառյան, նույն տեղում: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե. 2010, էջ 144:

²¹ Հ.Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 214-215:

²² Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 144:

²³ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.1, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2001, էջ 227-228:

²⁴ J.Puhvel, Hittite Etymological Dictionary (HED), vol. 3, Words beginning with H, Berlin, New York, 1991, p.285.

²⁵ H. Hoffner, *Alimenta*, p. 208.

²⁶ Գ.Ջահուկյան, ՀԼՊ, Նախագրային ժամանակաշրջան, էջ 320:

²⁷ Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 453:

առումով չի հայտնում՝ նշելով, որ հնդեվրոպական բառաձևերից բխեցումը խնդրահարույց է՝ չբացատրելով խեթերենի հետ վերոնշյալ գուգադրումը²⁸: Ամփոփելով տեսակետները՝ կարելի է ենթադրել, որ «հաց» բառը հնարավոր է իրավամբ ստուգաբանորեն կապված է խեթերեն բառի հետ:

karas- «գարի»-«կարաս»

Խեթերենում պահպանվել է karas- «ցորենի տեսակ» կամ հնարավոր է «հաճար» նշանակող բառը, որը տարբերվում է սովորական ցորենի տեսակներից, այն հանդիպում է խեթական տարբեր տեքստերում, սակայն չի կիրառվել հացի թխման մեջ, ավելի շուտ բոված կամ աղացած կերպով գոհաբերվել է ծիսական արարողությունների ժամանակ: Օրինակ, դրանից ստացված այլուրը խառնելով գարու այլուրի հետ խեթերը պատրաստել են տարբեր խմորե ֆիգուրներ՝ ծիսական նպատակով կիրառելու համար: Ծեսերից մեկում նշվում է նաև karas-ի հատիկների հետ կապույտ բուրդ, կարմիր բուրդ, գարու հատիկներ խառնելով՝ դրանք խանձելու և ինչ-ինչ ծիսական նպատակներով կիրառելու մասին²⁹:

karas-ը հանդիպում է նաև խեթական ամենահայտնի առասպելներից մեկում, որ նվիրված է անհետացող-վերադարձող Տելեպինուս աստվածությանը, որին հատուկ ծեսերով վերակենդանացնում է Կամրուսեպա աստվածուհին: Տեքստը հետևյալն է. «Հետո Կամրուսեպան ասաց աստվածներին. «Գնացեք աստվածներ, տեսեք, բերեք Արևի աստծո ոչխարներին Խարանտալի-ի համար և ընտրեք 12 խոյերի, որպեսզի ես Տելեպինուսի karas-ի հատիկները մշակեմ: Ես վերցրել եմ հազար անցքանի զամբյուղը և շաղ եմ տվել karas-ի հատիկները խոյերի վրա»³⁰:

Մեկ այլ ծեսում, որ կատարվում է բուժման նպատակով և որը կոչվում է ambazzi, նշված է. «Ես լցրեցի ^{GIS}հuwalli- ն կարմիր DILIM.GAL-անոթի մեջ, ես ավելացրի վրանհalki-ի և karaš-ի հատիկներ, հետո բովեցի դրանք, ես հանգցրի ^{GIS}հuwalli-ի տակի կրակը ջրով և ասացի՝ այնպես, ինչպես ես հանգցրեցի այս բաները, այդպես էլ թող «հանգչի» չարը հիվանդների մեջ»³¹:

Ծեսերից մեկում այն հանդիպում է շատ հետաքրքիր համատեքստում, խոճկորների գոհաբերության ժամանակ, երբ նրա հատիկները խառնվում են գոհաբերվող խոճկորների արյան հետ և «քաղցր հացի» ու «յուղով հացի» հետ դրվում փոսի մեջ³²:

²⁸ H.Martirossyan, *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon*, Brill, Leiden, 2010, p.398.

²⁹ J.Puhvel, *Hittite Etymological Dictionary (HED)*, vol. 4, Words beginning with K, Berlin, New York, 1997, pp. 74-75.

³⁰ A.Archi, *Kamrusepa and the Sheep of the Sun God*, *Orientalia*, fasc 4, 1993, p. 404.

³¹ «World of the Old Woman»: *Studies in Female Ritual Practice in Hittite Anatolia*, A Dissertation Submitted to the Faculty of the Division of the Humanities in Candidacy of the Doctor of Philosophy, Department of the Near Eastern Languages and Civilizations, by Hannah Marcuson, The University of Chicago, Chicago, Illinois, 2016. p. 376.

³² P. Mirecki, M. Meyer, *Magic and Ritual in the Ancient World, Religions in the Graeco-Roman World*, Brill, Leiden, 2001, p. 237.

Բառի կիրառման ծիսական համատեքստը վկայում է վերջինիս առանձնահատկության և այլ ցորնատեսակներից տարբերության մասին:

Խեթերենում բառի ծագումը հնարավոր է համարվել կապել նախահնդեվրոպական «գարի» նշանակող արմատի հետ³³: Հ.Մարտիրոսյանը քննարկել է խեթերեն բառը հայերեն «գարի» բառի համատեքստում՝ ենթադրություն հայտնելով, որ վերջիններս հնդեվրոպական միասնությամբ կապված բառեր են³⁴:

Մենք այս համատեքստում առաջարկում ենք դիտարկել նաև հայերեն «կարաս»- մեծ կավե անոթ՝ ստույգ ստուգաբանություն չունեցող բառը: Հ. Աճառյանը այն համարում է հնարավոր ուրարտական փոխառություն՝ առանց որևէ հստակ զուգահեռ նշելով³⁵, Գ. Ջահուկյանը ևս ենթադրում է, որ այն փոխառյալ պետք լինի ուրարտերենից կամ հնարավոր է իրանական աղբյուրից, դարձյալ հստակ օրինակներ չնշելով³⁶:

Հայտնի է, որ կարասները լայն և բազմաֆունկցիոնալ կիրառություն են ունեցել Հայկական լեռնաշխարհում հնագույն բրոնզեդարյան ժամանակաշրջանից սկսած, այնուհետև Ուրարտում և հետագա փուլերում էլ՝ օգտագործվելով ոչ միայն հեղուկների, այլև հացահատիկի պահպանության համար:

Ամփոփելով տեքստային վկայությունները և տարբեր հեղինակների դիտարկումները՝ կարելի է կատարել հետևյալ ենթադրությունները.

Ա. հայերեն «գարի»-ն խեթերեն *karas*-բառերը հնդեվրոպական միասնությամբ են կապված:

Բ. հայերեն «կարաս» բառը միգուցե ևս ստուգաբանորեն կապված է հնդեվրոպական նախալեզվի «գարի» նշանակող ձևերի հետ, որպես հացահատիկի պահպանման մեծ անոթ:

Գ. հայերեն «կարաս» բառը խեթերեն *karas* բառից արված հնարավոր փոխառություն է, իհարկե, այս դեպքում առկա է իմաստային տեղաշարժ: Նման իմաստային անցումներ վկայված են տարբեր լեզուներում, օրինակ, դա լավագույնս դիտարկելի է խեթերենում, երբ ուտեստի կամ հացահատիկի անվանումից կազմվում են նաև համապատասխան անոթների կամ ամանների անվանումներ³⁷:

Հաշվի առնելով *karas*-ի ծիսապաշտամունքային դերը խեթական իրականության մեջ, ինչպես և այն հանգամանքը, որ կարասները, հայկական իրականության մեջ տարբեր մթերքների և հացատեսակների պահպանման անոթներ լինելուց զատ, կիրառվել են նաև ծիսական նպատակներով, օրինակ, կարևոր դերակատա-

³³ A.Klokhorst, *Etymological Dictionary of the Hittite Inherited Lexicon*, Brill, Leiden, 2008, p. 444.

³⁴ H.Martirosyan, *Etymological Dictionary*, p. 199.

³⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1926, էջ 546:

³⁶ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 391:

³⁷ St' u, օրինակ, *NINDA* harsi- *DUG* harsi, *EZEN* harsi hesuwas, որոնցից առաջինը հացահատիկի կամ հացի տեսակ է, երկրորդը՝ անոթի տեսակ, իսկ երրորդը՝ harsi անոթը լցնելու կամ բացելու տոնակատարություն, J. Tischler, *Hethitisches Handwörterbuch*, Innsbruck, 2001, s. 44.

րություն են ունեցել թաղման ծիսակարգում, հնարավոր ենք համարում նման զուգադրումը:

zuriun/zuriusun– «ցորեն, ցորեան, ցուրեան»

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում, ըստ մեր դիտարկումների, խեթական տեքստերում հանդիպող zuriun/zuriusun- բառը, որը նշանակում է ինչ-որ անհայտ հացատեսակ կամ հացահատիկ³⁸, որի կիրառության համատեքստը, ցավոք, հնարավորություն չի տալիս առավել լայն պատկերացում կազմել վերջինիս վերաբերյալ: Այնկարելի է զուգադրել հայկական «ցորեն», «ցորեան» բառի, հատկապես վերջինիս «ցուրեան» ձևի հետ: Ըստ Գ. Ջահուկյանի, «ցորեն» բառի ծագումն անհայտ է, հարցականով բերվում է հնդեվրոպական ker- աճել արմատի հետ հնարավոր կապը³⁹: Ըստ Աճառյանիևս այն ստույգ ստուգաբանություն չունի, հանդիպում է հինգերորդ դարից սկսած⁴⁰:

Հնարավոր է համարվել նաև հայերեն «փշրել» բայի՝ խեթերենում հանդիպող paršul, paršullii-«փշրել, մանրացնել» բառի հետ զուգադրումը, որը խեթական տեքստերում հանդիպում է տարբեր հացատեսակներ, երբեմն՝ պանրի տեսակներ մանրացնելու, փշրելու դեպքում⁴¹: «Փշրել» բառը Աճառյանը հնարավոր կովկասյան կամ ուրարատկան փոխառություն է համարում: Սակայն ժամանակին Ն. Մարտիրոսյանը հայերեն «փշրել, բրդել, կտոր-կտոր անել, մանրել» բառը առաջարկել է բխեցնել խեթերեն paršullii բառից⁴², նման տեսակետ է հայտնել նաև Գ. Ջահուկյանը⁴³:

Օգտագործված գրականության ցանկ

Աբրահամյան Հ., Միջինքի և Սեբաստիայի Քառասնից մանկանց տոները հայոց եկեղեցական և ժողովրդական տոնացույցում, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2019 (3):

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

³⁸ H. Hoffner, Alimenta, p. 193.

³⁹ Գ. Ջահուկյան, Ստուգաբանական բառարան, էջ 744:

⁴⁰ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ. Դ, Երևան, 1979, էջ 461:

⁴¹ J. Golec-Islam, The food, p. 40.

⁴² Ն. Մարտիրոսյան, Նպաստ մըր հեթ և հայ բառարանության, Պատմա-բանասիրական հանդես, 1972, էջ 181-182: Տե՛ս նաև, I. Diakonoff, Ancient Near Eastern Substrata in Armenian, AAL, vol. 3, 1982, p. 17.

⁴³ Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Ե., 1970, էջ 158: Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 316:

- Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:
- Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1926:
- Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 2, Ե-Կ, Երևան, 1973:
- Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 4, Պ-Ֆ, Երևան, 1979:
- Բեգլարյան Հ., Հացագործությունը միջնադարյան Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 5, 1987:
- Խանգաղյան Է., Մկրտչյան, Կ., Պարսամյան Է., Մեծամոր, ուսումնասիրություն, 1965-1966 թթ. պեղումների տվյալները, Երևան, 1973:
- Ծատուրյան Ռ., Խառատյան Հ., Հայոց ավանդական տոնաձիսական ուտեստը, Երևան, 2011:
- Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.1, Հ. Աճառեանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2001:
- Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:
- Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:
- Մարտիրոսյան Ն., Նպաստ մը հեթ և հայ բառաքնության, Պատմա-բանասիրական հանդես, 1972:
- Մկրտչյան Ս., Հայոց տոնաձիսական մշակույթ, Էջմիածին, 2017, Դ (ապրիլ):
- Մկրտչյան Ս., Տոներ, հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2010:
- Նահապետյան Ռ., Հայոց ավանդական ուտեստի էթնոմշակութային բնութագրության շուրջ, Պատմաբանասիրական հանդես, 2019 (2):
- Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970:
- Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Երևան, 1987:
- Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան 2010:
- Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., Հացին առնչվող ժողովրդական պատկերացումներ և հավատալիքներ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական աշխատանքներ, 2011:
- Միմոնյան Լ., Տոմարային ծիսաշար, հ.1, Տոմար, Ձմեռ, Նոր տարի և Սուրբ ծնունդ, Երևան, 2006:
- Միմոնյան Լ., Տոմարային ծիսաշար, Սուրբ Սարգիս, Տըրնդեգ, Բարեկենդան, հ. 2, Երևան, 2007:
- Վարդան Այգեկցի, Ժողովածոյ առակաց Վարդանայ, Մնացորդք առակաց ի ձեռագեն G, ՅԽԲ. Խոզ եւ գաթայ (7 G), Մասն Բ, Բնագիր, Մանկտ Պետերբուրգ, 1894:
- Մարտիրոսյան Ն., Նպաստ մը հեթ և հայ բառաքնության, Պատմա-բանասիրական հանդես, 1972:
- Archi A., Kamrusepa and the Sheep of the Sun God, *Orientalia*, fasc 4, 1993:

Beckman G., The Hittites Serve Their Gods, in The Oxford Handbook of Ritual and Worship, Edited by E. Balentine, Oxford, 2020.

Collins B.J., Ritual Meals in the Hittite Cult, Ancient Magic and Ritual Power, Leiden: Brill, 1995.

Diakonoff I., Ancient Near Eastern Substrata in Armenian, Annual of Armenian Linguistics (AAL), vol. 3, 1982.

Demirel S., Apiculture in Hittite cuneiform texts, The European Zoological Journal, 89:1, 2022.

Golec-Islam J., The food of Gods and Humans in the Hittite World, Warsaw, 2016.

Hmayakyan H., The Word *Gat'a* in the Armenian Language, Բանբեր Արևելագիտության ինստիտուտի, հատոր 2, Երևան, 2022:

Hoffner H., Alimenta Hethaeorum, Food Production in Hittite Asia Minor, New Haven, Connecticut, 1974.

Klokhorst A., Etymological Dictionary of the Hittite Inherited Lexicon, Brill, Leiden, 2008.

Magic and Ritual in the Ancient World, Religions in the Graeco-Roman World, Editors: Paul Mirecki and Marvin Meyer, Brill, Leiden, 2001.

Martirossyan H., Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Brill, Leiden, 2010.

Puhvel J., Hittite Etymological Dictionary (HED), vol. 3, Words beginning with H, Berlin, New York, 1991.

Puhvel J., Hittite Etymological Dictionary (HED), vol. 4, Words beginning with K, Berlin, New York, 1997.

Tischler J., Hethitisches Handwörterbuch, Innsbruck, 2001.

“World of the Old Woman”: Studies in Female Ritual Practice in Hittite Anatolia, A Dissertation Submitted to the Faculty of the Division of the Humanities in Candidacy of the Doctor of Philosophy, Department of the Near Eastern Languages and Civilizations, by Hannah Marcuson, The University of Chicago, Chicago, Illinois, 2016.

Hmayakyan Hasmik – Around Some Hittite-Armenian Parallels. - Bread products and gata (sweet pastry) have very important place in the Armenian household life and festive-ritual system, especially during various holidays, weddings, funerals and other ceremonies when they were always baked in accordance with a special rite. Questions on the role of various Armenian dishes in the Armenian festive-ritual system, traditions associated with them have been touched upon by a number of researchers. However, in their studies, these researchers have almost not compared the names and compositions of bread products preserved particularly in Hittite sources of the second millennium AD, discovered from the ancient Asia Minor, bordering the Armenian Highlands and having close relations with it, with the vocabulary of the Armenian language. Naturally, the Armenian linguistic material in this context remained untouched upon by foreign researchers.

A possible etymology between Armenian *huց hac* ('bread') and Hittite ^{NINDA}*hazizi*, Armenian *փշրել* *p'srel* and Hittite *paršiulli* 'crumble bread was offered by the Armenian linguists and discussed by us in this article.

The author offers linguistic parallels between the following Hittite and Armenian words:

Hittite ^{NINDA}*gatai/katai* – Armenian *գաթայ* *gat'ay* ('gata' sweet pastry)

Hittite *karas* - 'barley' – Armenian *կարաս* *karas* ('karas' a large clay vessel for preserving various products, wine, etc.)

Hittite *zuriun/zuriun* 'emmer wheat' – Armenian *ցորեն*, *ցորեան*, *ցորեան* *c'oren*, *c'orean*, *c'urean* ('wheat').

Keywords: Hittite - Armenian, Bread, Gata, Paršiulli (Crumble), Karas, ^{NINDA}*Gatai* /*Katai*, ^{NINDA}*Hazizi*, *Zuriun/Zuriun*.

Амаякян Асмик – О некоторых хеттско-армянских параллелях. - Хлебные изделия и гата (сладкое мучное изделие) имеют чрезвычайно важное значение в армянском быту и празднично-обрядовой системе, особенно во время разных празднований, свадеб, похорон и других церемоний они всегда выпекались в соответствии со специальным ритуалом. Вопросы роли различных армянских яств в армянской празднично-обрядовой системе, традиций, связанных с ними, затрагивались рядом исследователей.

Однако, они в своих исследованиях почти не рассматривали сопоставления названий и состав хлебных изделий, сохранившихся, в частности, в хеттских источниках второго тысячелетия д.н.э., обнаруженных из сопредельной и имеющей тесные взаимосвязи с Армянским Нагорьем древней Малой Азии, со словарным запасом армянского языка. Естественно, армянский лингвистический материал в данном контексте не затрагивался также иностранными исследователями.

Возможная этимологическая связь между армянского *huց hac* («хлеб») и хеттского ^{NINDA}*hazizi*, армянского *փշրել* *p'srel* и хеттского *paršiulli* «крошить хлеб» предложена армянскими лингвистами и рассмотрена нами в данной статье.

Мы предлагаем лингвистические параллели между следующими хеттскими и армянскими словами:

хеттский ^{NINDA}*gatai/katai* – армянский *գաթայ* *gat'ay* («гата» сладкое мучное изделие)

хеттский *karas*- «ячмень» - армянский *կարաս* *karas* («карас» большой глиняный кувшин для хранения различных продуктов, вина, итд.)

хеттский *zuriun/zuriun* пшеница двузернянка – армянский *ցորեն*, *ցորեան*, *ցորեան* *c'oren*, *c'orean*, *c'urean* («пшеница»).

Ключевые слова: Хеттско-армянский, хлеб, гата, *paršiulli* («крошить хлеб»), *karas*, ^{NINDA}*gatai/katai*, ^{NINDA}*hazizi*, *zuriun/zuriun*.

Հովհաննիսյան Լավրենտի

բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
գլխավոր գիտաշխատող. inslang@sci.am

Բանալի բառեր. բարբառ, Ղարաբաղի (Արցախի) բարբառ, ցուցական դերանուն, հնաբանություն, գրաբար, գրավոր աղբյուր, բանավոր խոսք:

Քննության նպատակը բարբառի ցուցական դերանունների հնաբանության բացահայտումն է, որը բնականաբար պետք է քննել գրաբար-բարբառ փոխհարաբերությունների շրջանակում:

Գրաբարի ցուցական դերանուններն են *սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն*, որոնց մեջ առկա են *ս, դ, ն* արմատական բաղաձայնները, սրանք սկզբնապես ունեցել են *սո, դո, նո* ձևերը¹:

Հայերենի այդ շարքը այնքան հին է և «նրանց հորինվածությունը այնպես կապակցված է, որ որևէ օտար լեզվի ազդեցություն դժվար է երևակայել»²:

Ղարաբաղի (Արցախի) բարբառի ցուցական դերանուններն են՝ *էս, էտ, էն, ըստի / իստի, ըտի / իտի, ընդի / ինդի*: Ցուցական են նաև *էսքան, էտքան, էնքան, էնչաք, էտչաք, ընտեղ....*, որոնց չենք անդրադառնա: Բարբառում *սա, տա, նա* -ն որպես ցուցական դերանուններ չեն գործածվում: Բարբառը չունի նաև *սոյն, դոյն, նոյն*-ը:

Ըստի / իստի, ըտի / իտի, ընդի / ինդի դերանունները գրաբարի *աստի, անդի* բառերի բարբառային արտահայտություններն են³:

Ցուցական դերանուններ են նաև *ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ*⁴, բարբառում՝ *հրսէք, հրտէք, հրնէք*:

Գրաբարում գոյականների հետ գործածվում են *այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն* դերանունները: *Սա, դա, նա* դերանունները անկախ են և գոյականների հետ չեն գործածվում⁵:

Գրաբարում գոյականների հետ հոլովվելիս դերանունը կարող է լինել նախադաս և ետադաս, բարբառում դերանունը նախադաս է.

գրաբարում. ուղղ. այս տուն այս տունք
սեռ. այսր տան այսր տանց

¹ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 79:

² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ե., 1954, հ. II, էջ 183:

³ Ա. Մարգարյան, Գործիսի բարբառը, Ե., 1975, էջ 163:

⁴ Հ. Աճառյան, նույն տեղում:

⁵ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 81:

Բարբառում դերանվան նախադաս լինելը և չհոլովվելը անշուշտ բանավոր խոսքին բնորոշ իրողություն է:

Գրաբարում դերանունները հոլովվում են նաև երկրորդ ձևով. ուղղ. *տունս այս*, սեռ. *տանս այսորիկ*: Արևելյան խմբակցության բարբառներում *այսորիկ*, *այդորիկ* ձևեր չկան:

Կարելի է եզրակացնել, որ *այսորիկ*, *այդորիկ*, *այնորիկ* ձևերը գործածվել են միայն գրավոր խոսքում: Վիճակագրական տվյալները վկայում են, որ դրանք V դարի թարգմանական գրավոր աղբյուրներում հաճախական չեն:

Բնավոր խոսքին բնորոշ չեն եղել նաև գրաբարի առաջին և երկրորդ ապառնիները, որոնք չեն պահպանվել (կամ չեն եղել) բարբառներում:

Ամփոփենք: Քերականական մի շարք իրողությունների պարզաբանման հարցում պետք է ուշադրություն դարձնել գրավոր և բանավոր հաղորդակցության առանձնահատկություններին:

Գրավոր և բանավոր խոսքի տարբերակման վարկածը հիմնավորելու համար անհրաժեշտ է V դարի գրավոր աղբյուրների մանրագնին քննություն՝ համատեքստի բնույթի պարզաբանում:

Hovhannisyan Lavrenti – Demonstrative Pronouns in Karabakh (Artsakh) Dialect. - The article discusses demonstrative pronouns of the Karabakh (Artsakh) dialect. The purpose of the study is to discover archaisms of demonstrative pronouns in the relations of the Old Armenian language (grabar) and dialect. Statistics show that they are infrequent in translated and written sources of the 5th century. To clarify a number of grammatical facts, you should pay attention to the features of written and oral communication.

To substantiate the hypothesis about the difference between written and oral speech, a careful study of written sources of the 5th century is necessary.

Keywords: Dialect, Karabakh (Artsakh) Dialect, Demonstrative Pronoun, Archaism, Grabar, Written Source, Oral Speech.

Оганесян Лаврентий – Указательные местоимения в карабахском (арцахском) диалекте.- В статье рассматриваются указательные местоимения карабахского (арцахского) диалекта. Цель исследования – обнаружить архаизмы указательных местоимений в отношении древнеармянского языка и диалекта. Статистические данные показывают, что они нечастотны в переводных источниках V века. Для уточнения ряда грамматических фактов следует обратить внимание на особенности письменного и устного общения.

Для обоснования гипотезы о различии письменной и устной речи необходимо тщательное изучение письменных источников V в..

Ключевые слова: Диалект, карабахский (арцахский) диалект, указательное местоимение, архаизм, грабар, письменный источник, устная речь.

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐ XII- XIII ԴԱՐԵՐԻՑ
ԱՎԱՆԴԱԾ ԶԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

DOI: 10.54412/93055-2023-123

Հովհաննիսյան Նազիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. instlingv@sci.am

Բանալի բառեր. միջին հայերեն, գրչագիր, բաղադրյալ կազմություն, բարդ բառ, բացատրական բառարան, վերջնաբաղադրիչ, գլխաբառ:

Նախաբան

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներով¹ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններն ամփոփված են XII-XVIII դարերից ավանդված ձեռագրերում (այսուհետև՝ ՄՄ Հ^{մբ}): Ըստ այս ձեռագիր բառարանները քննող Հայկ Ամալյանի՝ այն հնագույն բառարաններից է. «...վկայվում է XII դարից: Բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանվել, գրության ստույգ ժամանակը, տեղը և հեղինակը անհայտ են»²: Հետագայում, սակայն, հետևելով Գասպար Գասպարյանին և ընդունելով նրա դիտարկումը, որ «Բառարանի հնությունը հասնում է XII դարը, բայց վերաբերում է ավելի վաղ շրջանի»³, «Հայ միջնադարյան բառարանագրությունը» աշխատության մեջ արդեն նշում է. «Բնական, բառարանագրական մասնագիտական առումով, հումանիշների բառարանը հայ մատենագրության մեջ «Հանդես բանաստեղծաց» անունով հայտնի բառարանն է, որի հնագույն ձեռագիրը *XII դ. ընդօրինակություն է*»⁴ (ընդգծ.՝ Ն. Հ.), այլև արձանագրում, որ բառարանը «կազմված է 10-11-րդ դարերում»⁵:

¹ Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, հհ. Ա-Բ, Երևան, 1965-1970: Հմմտ. նաև՝ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XVդդ.), Ե., 1966, էջ 233-234:

² Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 124: Նույնն է հաստատում նաև Հ. Ամալյանը՝ «... ձեռագիր հնագույն օրինակները ԺԲ դարից են» (Հ. Ամալյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, Ե., 1976, էջ 1186): Հ. Ամալյանի վկայությամբ՝ Ն. Ակինյանը 1930թ. «Հանդես ամսօրեայ»-ում՝ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի գրախոսականում, «հիշատակում է մի շարք հին բառարաններ», նաև «հայտնում իր կարծիքը նրանց ստեղծման ժամանակների մասին» (Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 8): Հարկ է արձանագրել, որ, ինչպես գրախոսականում նշում է Ն. Ակինյանը, ««Հին Բառագիրքներ»-ը «սովորաբար կը բովանդակեն» «3. Հանդեսը Բանաստեղծաց»-ը «իբր ԺԱ-ԺԲ. դարին, ճոխացած յընթացս նոր յաւելուածներով, եւ ենթարկուած նոր խմբագրութիւններու: Հագուադէպ է գտնել ձեռագիրներ, որոնք ըստ ամենայնի նոյն բնագիրը ներկայացնեն» (Հ. Ն. Ակինեան, Հ. Աճառեան. Հայերէն Արմատական Բառարան, Հանդես Ամսօրեայ, 1930, թիւ 7, 8, էջ 491):

³ Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968, էջ 34:

⁴ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007, էջ 47:

⁵ Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 356:

Այս ձեռագիր բառարանները (այսուհետև՝ ՁԲ) հետազոտողները հավաստում են, որ դրանց «մանրագնին ուսումնասիրությունն ի հայտ կբերի բավական նոր բառեր, որոնք ժամանակին գործածական են եղել մեր գրականության ու ժողովրդական խոսվածքի մեջ»⁶, հավելելով՝ «...միջին հայերենով գրված բնագրերում ավելի շատ են հանդիպում նորաբնույթ կամ նորակազմ հոմանիշ բառեր ...»⁷: Գևորգ Ջահուկյանն էլ, անդրադառնալով միջնադարյան բառարաններում «տեղ գտած նորահայտ» որոշ բառերի առաջարկված ստուգաբանությունների, ճշգրտելով դրանք և կատարելով բառաքննական «դիտողություններ», նշում է, որ «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը»⁸: Ասվածն անվերապահորեն վերագրելի է նաև հոմանիշների՝ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ներին, որոնցում առկա բառերը կարելի է նորակազմություններ դիտել: Այս ՁԲ-ները չունեն բնագրային օրինակներ, հետևաբար փորձ է արվում այդ բառերի գոյությունը հաստատելու հետագայում լույս տեսած բառարաններով, հնարավորության դեպքում՝ բնագրային օրինակներով⁹, այլև պարզելու և պարզաբանելու բառիմաստային անցումները և փոփոխությունները՝ նաև նկատի առնելով հայերենի բառակազմության առանձնահատկությունները:

Բառաքննական դիտարկումներ

Նորակազմ բառը քննելիս կարևորվում է՝ որ դարից ավանդված գրչագրում է այն վկայվում: Ստորև ներկայացվում են ամենավաղ՝ XII-XIII դարերից ավանդված ՁԲ-ում՝ ՄՄ Հ⁴ 5596-ում, առկա նորակազմ բաղադրյալ բառերը: Հատկանշական է, որ բառաբարդմամբ և բառածանցմամբ կազմված այս բառերը լիովին համապատասխանում են հայերենի բառակազմական օրենքներին:

Երգք հենաբառով¹⁰ հոմանիշների բառաշարքում¹¹ (222ա) վկայվում են *գեղապարք* և *երգաձայնք* բարդ բառերը:

Միևիթար Սեբաստացին *գեղապար*-ն արձանագրում է «Գեղեցիկ պար. կամ վայելուչ կերպի պարօղ ի նուագս երգոց»¹², «աղէկ պար բոնօղ»¹³ բացատրություն-

⁶ Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 36:

⁷ Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010, էջ 156:

⁸ Գ. Ջահուկյան, Ստուգաբանություններ, Լրաբեր հասարակական գիտությունների, 12, 1976, էջ 41:

⁹ Դրանք քաղելու հնարավորություն է ընձեռում «Գրահավաք» կայքի «Հայերեն բնագրերի առցանց շտեմարան»-ում հայերեն բառերի որոնումը:

¹⁰ Ընդունված եզրերից պայմանականորեն օգտագործվում է հենաբառը:

¹¹ Հ. Ամալյանը «Հանդես բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ները քննելիս նշում է. «... բառարանում հոմանիշներն իսկական շարք չեն կազմում, ... հիշյալ բառարանի բառախմբերում կան բազմաթիվ բառեր, որոնք հոմանիշ չեն հիմնաբառին», և դա նկատի ունենալով է գործածում «հոմանիշային խումբ տերմինը» (Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 65): Ընդունելով Հ. Ամալյանի դիտարկումը՝ պայմանականորեն կիրառվում է հոմանիշների բառաշարք (այսուհետև՝ ՀԲՇ) ձևակերպումը:

ներով: Նոր հայկազյան բառգիրքն այն վկայում է «Մնացորդք»-ում («Մնացորդք նորագիտ բառից եւ վկայութեանց (Յաւուրս տպագրութեան ի վեր երեւելոց)»)՝ «Ուր իցէ գեղեցիկ պար, և քաղցրանուագ գեղապարութիւն» իմաստով քաղված «Հին տաղարան, կամ երգարան եկեղեցական տաղից՝ նախնեաց, միջոց, և հետնոց» ժողովածուից¹⁴: Առձեռն բառարանում «Ուր կայ գեղեցիկ պարատրութիւն» նշանակությունն է¹⁵: Բառը գործածում են XVII դ. արևմտահայ հեղինակ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը (*Երգ գեղապար ըղձիւք լցեալ, Առ կարօտեալադ սիրահիւսեալ, Սակս որ գնոյն յամր գտեալ, Յանկարծ փութով եւս ոչ տեսեալ*)¹⁶ և XVIII դ. բանաստեղծ Պետրոս Ղափանցին (*Բարեյարմար լար եւ քրնար, Ունկանց խըլից՝ փող ազդարար, Ներսոփեստից՝ գեր գեղապար, Եւ հանճարով գոյգ հաւասար*)¹⁷:

Ստեփան Մալխասյանցի կազմած և հայերեն բացատրական բառարաններում *գեղապար*-ը հիշատակվում է «Ուր կայ գեղեցիկ պար», «գեղեցիկ պար, գեղեցկորեն պարող», «գեղեցիկ խումբ» և «գեղեցիկ պարուհի», «արուեստով՝ գեղեցիկ պար»¹⁸ նըշանակություններով: Այս կազմության առիթով կարելի է հիշատակել հայոց լեզվում առկա *դարձպար, զուգապար, կենտպար, մենապար, շուրջպար* բառերը¹⁹:

Ինչ վերաբերում է *երգաձայն*-ին, ապա հարկ է նշել, որ գրաբարի տպագիր բառարաններն արձանագրում են միայն *երգաձայնութիւն*-ը (ՆՀԲ, հ. I, էջ 672: ԱԲ, էջ 268): Մխիթար Սեբաստացին *երգաձայն*-ը վկայում է «երգի ձայն», «ձայն և հնչումն երգոց. կամ երգաբանական ձայն» իմաստներով (ԲՀԼ, էջ 248 (277): ԲՀԼՄՄ էջ 116 (729): Ստեփան Մալխասյանցի բացատրությունն է «Երգելու ձայն, այն ձայնը, որ հնչում ենք երգելիս» (ՄՀԲԲ, հ. I, էջ 574):

¹² Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետե Սեբաստացոյ (այսուհետև՝ ԲՀԼ), Վենետիկ, 1749, 174 (203). այսուհետև փակագծերում կնշվեն նաև բառարանների PDF ձևաչափով տարբերակի էջերը:

¹³ Բառգիրք հայկազեան լեզուի, հատոր II, Արարեալ բազմատքուն, և աչալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տեառն Մխիթարայ մեծի աբբայի, և րաբունապետին Սեբաստացոյ (այսուհետև՝ ԲՀԼՄՄ), Վենետիկ, 1769, 86 (699):

¹⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գարրիէլի Աւետիքյան, Հ. Խաչատրոյ Միւրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, հ. II, 1837, էջ 1049:

¹⁵ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1846, էջ 184 (194): Առձեռն բառարան հայկազեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1865, էջ 207 (215):

¹⁶ <https://digilib.aua.am/book/158/160/1412/?lang=en>

¹⁷

<https://digilib.aua.am/book/309/314/6430/%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

¹⁸ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. I, Ե., 1944, էջ 423: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. I, Ե., 1972, էջ 380: Է. Աղայան, Արդի հայերէնի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 225: Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Յօրինեց Պետրոս վարդ. Ճիզմէճեան, հ. II, Հալէպ, 1957, էջ 32: Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Գ. Ճերէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, հ. I, Պէյրուք, 1992, էջ 376:

¹⁹ Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976, էջ 536:

«Գրահավաք» կայքի որոնումների արդյունքներով *երգաձայն* բառը վկայվում է նաև «ձայնաստիճան» կամ «ձայնաշար» նշանակությամբ՝ «Տոլին հինգերորդը այնպիսի երգաձայն մըն է...», «Թէ որ ուրիշ երգաձայնէ մը սկսելով՝ նոյն միջոցներուն կարգաւր յառաջանալու ըլլանք...», «...կէս երգաձայն բարձր կը ցուցնեն եւ երգանշաններու կամ նօթաներու մէջ աւ ձևով # կը նշանակուին. իսկ կէս երգաձայն վարիները ասանկ կը կոչուին՝ Ստ-bémol»²⁰: Պետրոս Ճիգմեճյանը նույնպէս նշում է միայն «ձայնաշար» և «եօթը ձայներու շարք զետեղուած բնական կարգով (Ֆրս. տօ ըէ մի ֆա սօլ լա սի)» իմաստները²¹: Հայերէն բացատրական բառարաններն արձանագրում են «երգի ձայն», «երգելու ձայն», այլև «երգելով, երգելու ձայնով» (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 570: ԱՀԲԲ, էջ 338)²² նշանակությունները: «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ը բառը հղում է *Երգահնչյուն*-ին²³: Այս դեպքում էլ հիշատակելի են հայերէնում գործածվող *լիաձայն, միաձայն, ողբաձայն, ցնծաձայն, մեղմաձայն* և այլ բառեր²⁴:

Հեղանակ հենաբառով ՀԲՇ-ում (221բ) վկայվող *Հապատիւ* բառը գրաբարի տրպագիր բառարանները չեն նշում. այն առկա է միայն Երեմիա Մեղրեցու կազմած բառարանում՝ «առաջնորդ, կամ գոյապատիւ» բացատրությամբ²⁵: Բառն արձանագրվում է XVII դ. վաղաշխարհաբարյան աղբյուրներում որպէս «պատուաւոր, առաջնորդ»²⁶: Երեմիա Մեղրեցու նշած «առաջնորդ կամ գոյապատիւ» իմաստով վկայվում է Ստեփանոս Երեցի «Հանգիտագիրք» երկի «Լուծմունք բառից» հատվածում (XVIII դ.)²⁷: Հայոց լեզվում առկա են *արժանապատիւ, բարձրապատիւ, մեծապատիւ* բաղադրյալ կազմությունները²⁸:

Արղակ հենաբառով ՀԲՇ-ի (217ա) *հարթաքանդակ*-ը նույնպէս գրաբարի բառարաններում չկա: Այն հիշատակում են Սամվել Գանթարյանը և Գվիտոն Լուսինյանն իրենց կազմած երկլեզվյան և եռալեզվյան բառգրքերում՝ Médailon և

²⁰ Փորձառական բնագիտություն կամ ֆիզիկա համառօտ օդերեւութաբանութեամբ եւ քիմիայով, Աշխատասիրեց Հ. Բարսեղ վ. Նուրիճանեան, Վիեննա, 1856, էջք 247, 248, 249:

²¹ Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 240:

²² Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 557:

²³ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՀՀԲ), Ե., 1967, էջ 183:

²⁴ Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 376:

²⁵ Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթությունները Հ. Մ. Ամալյանի (այսուհետև՝ ԲՀ), Ե., 1975, էջ 107:

<http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/armenian/Books/bargirq/book/index.html#page/106/mode/2up>

http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/armenian/Books/bargirq_hayoc_1728/book/index.html#page/148/mode/2up

²⁶ Ն. Պողոսյան, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Ե., 2014, էջ 72:

²⁷ https://www.matenadaran.am/ftp/el_gradaran/StepanosErec.pdf էջ 288:

²⁸ Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 487:

Anaglyphe գլխաբառերի բացատրություններում²⁹: Բառը նշում է նաև XIX դ. կրթական և մշակութային գործիչ Մ.Գ. Ծալյանն իր երկի բառարանում («Հարթաքանդակ. Քանդակուած կարկառուն գործ մը հարթ երեսի վրայ»)՝³⁰:

Ստեփան Մալխասյանցի կազմած և հայերեն բացատրական բառարանները «Հարթ քանդակ, որի մէջ քանդակված անձը կամ իրը քանդակի վրայ դուրս է ցցված ոչ աւելի քան իւր կէս բարձրութեամբ» բացատրությամբ *հարթաքանդակ*-ը նշում են որպէս ճարտարապետական եզրույթ (ՄՀԲԲ, հ. III, էջ 68: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 322: ԱՀԲԲ, էջ 844)³¹, իսկ ՀԼՀԲ-ն՝ արվեստին առնչվող, բայց և «հազվադէպ գործածվող բառ» (էջ 378):

Հայոց լեզվում *քանդակ* վերջնաբաղադրիչով գործածվում են *գարդաքանդակ, դիմաքանդակ, բարձրաքանդակ, մանրաքանդակ, խորաքանդակ* և այլ բարդ բառեր³²:

Սույն գրչագրում ածանցավոր կազմությամբ նորակազմ բառերից է *Բիծ* հենաբառով ՀԲՇ-ում (221բ) վկայվող *անզուտ*-ը: Մխիթար Սեբաստացին այն «... ի հին քերակ.» հղումով բացատրում է որպէս «... անյստակ. կամ անմաքուր. կամ անսուրբ» (ԲՀԼՄՍ 34 (59). տե՛ս նաև ԲՀԼՄՍ 25(638)): Մանվել Քաջունին բառը հիշատակում է երկլեզվյան բառարաններում (Անզուտ (շաքար). Brut. Շաքար անզուտ. Որ չէ զրտեայ)³³: Ստեփան Մալխասյանցի կազմած և հայերեն բացատրական բառարաններում *անզուտ*-ը «չզտված, ոչ մաքուր, խառը» իմաստներով է (ՄՀԲԲ, հ. I, էջ 114: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 91: ԱՀԲԲ, էջ 56)³⁴: ՀԼՀԲ-ում այն *Համախառն* տնտեսագիտական եզրն է (էջ 45):

*Հոակապ*³⁵ հենաբառով ՀԲՇ-ում (220բ) առկա *գերամիտ*-ը «Գրահավաք» կայքի որոնումներով գործածում է Կոմիտաս Աղեցեցին (VII դ.)³⁶: Երեմիա Մեղրեցին բառը

²⁹Բառարան գաղղիերեն-հայերեն-տաճկերեն, աշխատասիրեաց Հ. Սամուել Վ. Գանթարեան, Վենետիկ, 1886, էջ 727: Գուլիտոն Լուսինեան, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հատոր առաջին, A-H, Փարիզ, 1900, էջ 98, 242:

³⁰ Մ.Գ. Ծալեան, Համառոտ պատմութիւն ընդհանուր ազգաց, Ե. եւ Զ. մասեր, Արդի եւ Ժամանակակից, Կ. Պոլիս, 1898, էջ 113:

³¹ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 817: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 424: Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., 1973, էջ 559: Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Գ. Ճերեճեան, Փ. Կ. Տոնիկեան, Ա. Տեր Խաչատուրեան, հ. I, էջ 1182: Ա. Կոստեան, Բառգիրք գործնական հայերենի, Պէրոյթ, 1998, էջ 244:

³² Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 207:

³³ Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, Յօրինեալ ի Հ.Սամուել վարդապետէ Քաջունի, հ. I, Վենետիկ, 1891, էջ 325:

http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=73&indexId=3&dt=HY_FR&query=%D5%A1%D5%B6%D5%A6%D5%B8%D6%82%D5%BF

³⁴ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, Հալէպ, 1954, էջ 241:

³⁵ Պահպանվում է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

³⁶

<https://digilib.aul.am/book/1586/1961/16307/%D4%BF%D5%86%D4%BB%D5%94%20%D5%80%D4%B1%D5%92%D4%B1%D5%8F%D5%88%D5%85>

մեկնում է «փարթամ»³⁷. Հայկ Ամալյանը Երեմիա Մեղրեցու բառգրքում վերականգնումներ և ճշգրտումներ կատարելիս նշում է՝ «մեկնությունը պետք է լինի փարթամ մտք ... կամ ուղղակի փարթամամիտ»³⁸: Մխիթար Սեբաստացին *գեղամիտ*-ը վկայում է «վսեմամիտ. կամ առատամիտ. կամ զգեբագոյն միտս ունօղ. կամ յոյժ նրբամիտ» և «խիստ իելացի» նշանակություններով՝ հիշատակելով այն նաև *Խելացի* բառահոդվածում և առադրելով *հանճարամիտ, վսեմամիտ, նրբամիտ* և այլ բառեր (ԲՀԼ, էջ 179 (208): ԲՀԼՍՍ, էջք 88 (701), 247-248 (1276-1277)): Որպես գլխաբառ՝ *գեղամիտ*-ը նշում է նաև Գրիգոր Փեշտրմալճյանը³⁹: Հիշատակված նշանակություններով բառը վկայում են ՄՀԲԲ-ն (հ. I, էջ 428), ՀԼՀԲ-ն (էջ 141), ԱՀԲԲ-ն (էջ 231), այլև Հովհաննես Բարսեղյանը⁴⁰:

Հայերենում շատ են *միտ* վերջնաբաղադրիչով բաղադրյալ կազմությունները՝ *խելամիտ, ծուլամիտ, ծածկամիտ, մանկամիտ, ուղղամիտ* և այլն⁴¹:

Անտառախիտ հենաբառով ՀԲՇ-ում (225ա) վկայվող *ծառանոց*-ը Մխիթար Սեբաստացին նշում է նաև *ծառնոց* տարբերակով և «ծառաստան. ծառուտ. դարաստան», այլև «դրախտ. թփուտ» իմաստներով (ԲՀԼ, էջ 410 (443): ԲՀԼՍՍ, էջ 275(1304)): Հարություն Ավգերյանը *ծառանոց*-ն ընդգրկել է երկլեզվյան բառարաններում⁴²: Գրիգոր Փեշտրմալճյանի բացատրությունն է՝ «տեղի՝ ուր գոյ բազմութիւն ծառոց» (ՓԲ, էջ 63): Բառն արձանագրվում է XVII դ. վաղաշխարհաբարյան աղբյուրներում որպես «դրախտ, թփուտ»⁴³: Հատկանշական է, որ Եղուարդ Հյուրմյուզյանը *ծառնոց*-ը բացատրում է որպես *ծառաստան*⁴⁴, ՄՀԲԲ-ում *ծառնոց*-ը «գաւառական բառ» է (հ. II, էջ 332), իսկ ՀԼՀԲ-ն *ծառաստան* բառահոդվածում է նշում *ծառնոց*-ը (էջ 285): Հայերեն բացատրական բառարանները *ծառանոց*-ի համար առաջնային նշում են «պտղատու ծառերի այգի, պարտեզ» իմաստը (ԺՀԼԲԲ, հ. II, 655: ԱՀԲԲ, 640): Տեղի իմաստ արտահայտող - *անոց*-ը հայոց լեզվի գործածական վերջածանցներից է⁴⁵:

³⁷ <http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/bargirq/book/index.html#page/66/mode/2up>
http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/bargirq_hayoc_1728/book/index.html#page/90/mode/2up

³⁸ Տե՛ս նաև՝ Հ.Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007, էջ 191:

³⁹ Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտրմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի (այսուհետև՝ ՓԲ), հ. I, Կ.Պօլիս, էջ 236 (252):

⁴⁰ Հ. Բարսեղյան, նշվ. բառ., էջ 219:

⁴¹ Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 502-503:

⁴² Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, աշխատ. Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. II, Վենետիկ, 1817, էջ 313: Բառարան հայերէն եւ անգղիական, աշխատ. ի Յ. Պրէնտեան անգղիացի ասպետէ. Վ.Ա., Ձեռն-տուութեամբ Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. Բ., Վենետիկ, 1825, էջ 286:

⁴³ Ն.Պողոսյան, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում, էջ 100:

⁴⁴ Եղ. Հիւրմիւզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ հանդերձ ոճովք եւ բացատրութեամբք նախնեաց, Վենետիկ, 1869, էջ 248:

⁴⁵ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Հայոց լեզու, հ. I, Ե., 1979, էջ 431: Տե՛ս նաև՝ Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 591-593:

Եզրակացություն

Քննությամբ պարզվում է, որ XII-XIII դարերից ավանդված՝ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ՄՄ Հ^ր 5596 ՁԲ-ում առկա վերոնշյալ նորակազմ բառերը վկայվում են Եր. Մեղրեցու (XVII դ.), Մխիթար Սեբաստացու (XVIII դ.), Մխիթարյան հայերի (XIX դ.) կազմած երկլեզվյան և եռալեզվյան բառարաններում, տարբեր հեղինակների երկերում և աշխատասիրություններում: Ասել է՝ դրանք գործածվել են մատենագրության մեջ. ըստ բառարանային տվյալների, *Հասպատի*-ից բացի, առանձնացված բառերը բառիմաստային որոշ փոփոխություններով պահպանվել են հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում:

Օգտագործված գրականություն և բառարաններ

Ակինեան Հ. Ն., Հ. Աճառեան. Հայերեն Արմատական Բառարան, Հանդես Ամսօրեայ, 1930, թիւ 7, 8:

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Ամալյան Հ., Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007:

Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Ե., 1966:

Անասյան Հ., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, Ե., 1976:

Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Հայոց լեզու, հ. I, Ե., 1979, էջ 431:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1865:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1846:

Բառարան գաղղիերեն-հայերեն-տաճկերեն, աշխատասիրեաց Հ. Սամուէլ Վ. Գանթարեան, Վենետիկ, 1886:

Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, աշխատ. Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. II, Վենետիկ, 1817:

Բառարան հայերեն եւ անգղիական, աշխատ. ի Յ. Պրէնտեան անգղիացի ասպետէ. Վ.Ա., Ձեռնտուութեամբ Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. Բ., Վենետիկ, 1825:

Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Քաջունի, հ. I, Վենետիկ, 1891:

Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ, Վենետիկ, 1749:

Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փէշտըմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի, հ. I, Կ.Պօլիս:

Բառգիրք հայկազեան լեզուի, հատոր II, Արարեալ բազմատքուն, և աչալուրջ ճգանօր՝ յաշակերտաց ամենապատիւ տեառն Մխիթարայ մեծի աբբայի, և ըստնապետին Սեբաստացոյ, Վենետիկ, 1769:

Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975:

Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., 1973:

Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. I, Ե., 1972:

Լուսինեան Գուհտոն, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հատոր առաջին, A-H, Փարիզ, 1900:

Ծալեան Մ.Գ., Համառոտ պատմութիւն ընդհանուր ազգաց, Ե. եւ Ջ. մասեր, Արդի եւ ժամանակակից, Կ. Պոլիս, 1898:

Կոսնեան Ա., Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրութ, 1998, էջ 244:

Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Յօրինեց Պետրոս վարդ. Ճիգմեճեան, հհ. I, II, Հալէպ, 1954, 1957:

Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Գ. Ճերեճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, հ. I, Պէյրութ, 1992:

Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976:

Հիւրմիւզեան Եդ., Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ հանդերձ ոճովք եւ բացատրութեամբք նախնեաց, Վենետիկ, 1869:

Ղազարյան Ռ., Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010:

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. I, Ե., 1944:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքյան, Հ. Խաչատրոյ Սիւրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան, Վենետիկ, հ. II, 1837:

Պողոսյան Ն., Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Ե., 2014:

Ջահուկյան Գ., Ստուգաբանություններ, Լրաբեր հասարակական գիտությունների, 12, 1976:

Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:

Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, հհ. Ա-Բ, Ե., 1965-1970:

Փորձառական բնագիտութիւն կամ ֆիզիգա համառոտ օղերեւութաբանութեամբ եւ քիմիայով, Աշխատասիրեց Հ. Բարսեղ վ. Նուրիճանեան, Վիէննա, 1856:

Էլեկտրոնային կայքեր և հղումներ

<http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/armenian/Books/bargirq/book/index.html#page/106/mode/2up>

http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/bargirq_hayoc_1728/book/index.html#page/148/mode/2up
https://www.matenadaran.am/ftp/el_gradaran/StepanosErec.pdf
http://nayiri.com/imagelDictionaryBrowser.jsp?dictionaryId=73&indexId=3&dt=HY_FR&query=%D5%A1%D5%B6%D5%A6%D5%B8%D6%82%D5%BF0%D5%80%D4%B1%D5%92%D4%B1%D5%8F%D5%88%D5%85
<http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/bargirq/book/index.html#page/66/mode/2up>
http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/bargirq_hayoc_1728/book/index.html#page/90/mode/2up
<https://digilib.aua.am/book/158/160/1412/?lang=en>
<https://digilib.aua.am/book/309/314/6430/%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

Hovhannisyan Nazik- Newly Created Words, Attested in Handwritten Dictionaries Dating from the 12th-13th Centuries. - Researchers of handwritten dictionaries note that their detailed study will reveal many new words that were used at that time in Armenian literature and in public speech, adding that "... in the originals written in the Middle Armenian language there are more new ones or newly created synonyms."

What has been said can be unconditionally attributed to handwritten dictionaries of synonyms dating back to the 12th-13th centuries. They do not contain textual examples, so an attempt is made to establish the existence of the words in question using dictionaries published later, using textual examples whenever possible, as well as to clarify and clarify semantic transitions and changes, also taking into account the peculiarities of word formation of the Armenian language.

The words *geghapar*, *yergadzayn*, *eapativ*, *hartaqandak*, *anzut*, *geramit*, *tsaranots* are examined.

Considering the aforementioned words, it turns out that scribes and copyists created or added words that were used by contemporaries: these words are attested in the dictionaries of Yer. Megretsi (17th century), Mkh. Sebastatsi (18th century), members of the Mekhitarist Congregation (19th century), in various collections and works and according to dictionary data, except for *eapativ*, these words, with some semantic changes, are preserved in the Eastern Armenian and Western Armenian versions of the Armenian language.

Keywords: Middle Armenian Language, Handwritten, Compound Form, Compound Word, Explanatory Dictionary, Last Component of Word, Headword.

Оганесян Назик- Новосозданные слова, засвидетельствованные в рукописных словарях, датированных XII-XIII веками.- Исследователи рукописных словарей отмечают, что их детальное изучение выявит немало новых слов, которые употреблялись в то время в армянской литературе и в публичной речи, добавляя, что "...в оригиналах, написанных на среднеармянском языке, больше новых или новосозданных синонимов". Сказанное безоговорочно можно отнести к рукописным словарям синонимов, датированных XII-XIII веками. В них нет текстуальных примеров, поэтому делается попытка установить существование рассматриваемых слов словарями, опубликованными позднее, по мере возможности текстуальными примерами, а также выяснить и уточнить смысловые переходы и изменения, учитывая также особенности словообразования армянского языка.

Рассмотрены слова *geghapar*, *yergadzayn*, *eapativ*, *hartaqandak*, *anzut*, *geramit*, *tsaranots*.

Учитывая вышеизложенное, выясняется, что писцы и переписчики создавали или добавляли слова, которые употребляли современники: эти слова засвидетельствованы в словарях Ер. Мегреци (XVII век), Мх. Себастици (XVIII век), отцов-мхитаристов (XIX век), в различных сборниках и трудах и по словарным данным, кроме *eapativ*-а, эти слова с некоторыми смысловыми изменениями сохранены в восточноармянском и западноармянском вариантах армянского языка.

Ключевые слова: Среднеармянский язык, рукописный, сложная форма, сложное слово, толковый словарь, последний компонент слова, заглавное слово.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԽՕՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

DOI: 10.54412/93055-2023-133

Մարաշլեան Յարութ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող.harout.k.marashlian@gmail.com

Խալիկեան Ջեփիւռ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող. zepurtamerian@gmail.com

Բանալի բառեր. արեւմտահայերէն, Հայաստան, արդի գրական հայերէն, արեւելահայերէն, հարցախոյզ, ներգաղթած հայեր, լեզուի մասին ՀՀ օրէնք:

Յաճախ խօսուած է, կը շարունակի խօսուիլ հայերէնի, այս պարագային՝ արեւմտահայերէնի մասին, սակայն գլխաւորապէս նկատի ունենալով օտար երկրի մը մէջ անոր դիմագրաւած խնդիրները, յաղթահարելիք դժուարութիւնները: Կարծես բոլոր հայերը ակամայ ընդունած են, որ օտար երկրի մը մէջ հայերէնը քանի մը սերունդ վերջ պիտի ըլլայ երկրորդական լեզու, եթէ խուսափիմ աւելի խիստ եւ յոռետեսական գնահատականներէ: Սակայն քիչ խորհած ենք հարերէնի վիճակին մասին իր իսկ հայրենիքին մէջ: Այս հետախոյզը, որ առաջարկուած է Ջեփիւռի կողմէ, եւ իրականացած է իր եւ իմ ջանքերովս, այդ հարցումին պիտի փորձէ պատասխանել:

Արեւմտահայերէնը արդի գրական հայերէնի երկու ճիւղերէն մէկն է, ինչ որ ենթադրել կու տայ որ այն Հայաստանի մէջ նոյնքան կիրառելի է եւ կենսունակ, որքան արեւելահայերէնը: Ընդունուած է ըսելնաւեւ որ Հայաստանի մէջ արեւմտահայերէնը արեւելահայերէնին հաւասար պետական հոգատարութեան հովանու տակ է: Բայց թէ ո՞ր չափով է արեւմտահայերէնը ներկայ իր իսկ հայրենիքին մէջ, այսինքն՝ առօրեային եւ զանազան ասպարէզներու մէջ կիրառելի եւ գործածական, լրջօրէն հետազօտուած չէ, ուստի որոշակի փաստերու եւ իրողութիւններու համաձայն կատարուած եզրակացութիւն մը չէ (ընդհանուր տպաւորութիւններ բոլորս ալ ունինք): Կարելի է ըսել նաեւ, որ մտահոգիչ է, երբ օտար երկրի մը մէջ հայը տարիներ հայկական դպրոց յաճախած ըլլալով հանդերձ, հայերէն լաւ գիտնալուն հետ մէկտեղ, յանկարծ կը ստիպուի երկրորդ անգամ հայերէն սորվելու՝ ուղղագրութենէն սկսած մինչեւ բառապաշար եւ քերականութիւն: Եթէ նկատի ունենանք որ լեզուի բարբառային տարբերակի մը մասին չենք խօսիր (իսկ այս ճամբան հոն կը տանի), ապա, կը խորհիմ, որ մտահոգութիւնը բոլորինս է, սակայն այդ մտահոգութիւնը ընդհանուր տպաւորութիւն մը ըլլալէ անդին պէտք է անցնի, փաստերու կարօտ է:

Խնդիրը բազմակողմանի է եւ անոր բոլոր կողմերուն մէկ հարցախոյզի ծիրէն ներս կարելի չէ անդրադառնալ: Իսկ այս հարցումներուն գլխաւոր նպատակը հետեւեալ հարցը լուսաբանելն է. վերջին տասը տարիներուն Հայաստան ներգաղթած հայերը, նա՛ մանաւանդ Սուրիայէն, Լիբանանէն եւ Իրագէն ներգաղթածները, Հայաստան իրենց ապրելու եւ գործելու ընթացքին ո՞ր չափով կը պահպանեն լեզուն: Արդեօք արեւմտահայերէնը, ինչպէս բարբառները կամ օտար երկիրի մէջ որեւէ փոքրամասնութեան մայրենի լեզու, կը զիջի՞ եւ պատիկ շրջանակի մը հաղորդակցութեան լեզու՞ն կը դառնայ, այսինքն՝ կը սահմանափակուի ընտանիքով, այդ լեզուն խօսողներու շրջանակով, թե՞ այն այնուամենայնիւ գերակշռող դիրք մը ունի, ինչպէս ընդունուած է ըսել կամ բաղձալի է որ ըլլայ:

Այս հարցումները յիշեալ խնդիրին տոկոսային յարաբերութիւնները բացայայտելու համար կազմուած են, ուստի անոնք որեւէ ձեւով չեն անդրադառնար եւ չեն փորձեր լուսաբանել պատճառները այս կամ այն դրական կամ բացասական փաստին: Այսինքն՝ ջանք թափուած է երեւան հանելու իրողութիւնը, հասկնալու՝ մտահոգող բան մը կա՞յ իրապէս, թե՞ աւելորդ են Հայաստանի մէջ արեւմտահայերէնի ապագային վերաբերող շատերու մտավախութիւնները, եւ ամէն արեւմտահայերէն խօսող կրնայ իր արեւմտահայերէնով իր կեանքը ձեւաւորել իր երկիրին մէջ՝ երկրորդ անգամ հայերէն սորվելու պէտքը չզգալով:

Հարցախոյզին պատասխանները պիտի սերտուին՝ նկատի ունենալով լեզուի մասին ՀՀ օրէնքը, ինչպէս նաեւ լեզուի պահպանման հնարաւորութիւնները: Այս աշխատանքին եզրակացութիւնները պիտի տրամադրուին թե՛ պետական մարմիններուն, թե՛ արեւմտահայերէնի վիճակով հետաքրքրուողուայն պահպանելուն նախանձախնդիր կառոյցներուն, հաստատութիւններուն եւ հայոց լեզուի մասնագէտներուն:

Դրական ըլլայ այս հարցումին պատասխանը, թե՛ բացասական, այս հետախոյզին պիտի յաջորդէ երկրորդ մը, ուր պատճառները պիտի լուսաբանուին, որուն միայն կրնայ հետեւիլ նաեւ գործնական բազմաթիւ լուծումներ՝ հիմնուած պատճառներու եւ, անշուշտ, տոկոսային յարաբերութիւններու տուեալներու վրայ:

Մենք յոյս ունինք, որ իր գիտական եզրակացութիւններէն զատ, այս հարցախոյզին արդիւնքները կրնան նպաստել արեւմտահայերէնի զարգացման աշխատանքներուն:

1. Ընտանիքի անդամներու հետ արեւմտահայերէն՞ կը խօսիք:

Մեծ հայր

Մեծ մայր

Հայր

Մայր

Եղբայր

Քոյր

2. Ազգականներու հետ արեւմտահայերէ՞ն կը խօսիք:

Հօրեղբայր

Հօրաքոյր

Քեռի

Մօրաքոյր

Հօրեղբօր եւ հօրաքրոջ որդիներ

Քեռիի եւ մօրաքրոջ որդիներ

3. Արեւմտեան (Եւրոպա, Ամերիկա) երկիրներէ եկած ազգականներու հետ արեւմտահայերէ՞ն կը խօսիք:

4. Արեւելեան (Սուրիա, Լիբանան եւ այլն) երկիրներէ եկած ազգականներու հետ արեւմտահայերէ՞ն կը խօսիք:

5. Արեւմտեան երկիրներէ (Եւրոպա, Ամերիկա) եկած հայ ընկերներու հետ արեւմտահայերէ՞ն կը խօսիք:

6. Արեւելեան երկիրներէ (Սուրիա, Լիբանան եւ այլն) եկած հայ ընկերներու հետ արեւմտահայերէ՞ն կը խօսիք:

7. Հայաստան արեւմտահայերէն կը խօսիմ՝

ուսուցիչներու հետ,

դասախօսներու հետ,

տնօրէններու հետ,

դասընկերներու հետ,

պաշտօնէաններու հետ:

8. Գործատեղին արեւելահայերէն խօսող ձեր գործընկերներուն, յաճախորդներուն կամ ղեկավարներուն հետո՞ր գրական հայերէնով կը նախընտրէք խօսիլ.

Արեւմտահայերէն

Արեւելահայերէն

9. Հայաստան ձեր առօրեայ կեանքի մէջ ե՞րբ արեւմտահայերէն կը խօսիք.

Խանութէ մը գնումի ժամանակ

Հանրակառքերու մեջ
Թաքսիի վարորդին հետ
Հայաստանցի արհեստավորներու հետ
Յաճախորդներու հետ

10. Պետական գործ մը ունենալու պարագային պաշտօնէաներուն հետ կը խօսիք՝

Արեւմտահայերէն,
Արեւելահայերէն:

11. Ստորեւ նշուած ո՞ր նիւթերուն մասին «սահուն» արեւմտահայերէն կը խօսիք.

Ընտանեկան,
Մարզական,
Մասնագիտութիւն
Քաղաքական,
Շարժապատկեր/ շարժանկար/ պատկերաշարժ
Գրականութիւն,
Երաժշտութիւն,
Փիլիսոփայութիւն,
Հոգեբանութիւն:

12. Ձեր ընկերային եւ աշխատանքային կեանքին մէջ արեւմտահայերէն խօսիլը կարելո՞ր կը համարէ՞ք, ինչո՞ւ:

«ՈՒ» ԵՐԿՏԱՌ ԼՇԱՆԱԳՐԻ ՈՍԿԵԴԱՐԵԱՆ
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

DOI: 10.54412/93055-2023-137

Միքայելեան Արմեն

պատմական գիտությունների թեկնածու,
Ֆրանսիա. armen_michaelian@yahoo.com

Բանալի բառեր. «ՈՒ» տառ, երկտառ նշանագիր, պատմական հնչյունաբանություն, ձայնաւոր, երկբարբառ, վանկ, վանկերի կաղապարներ:

Խնդրոյ առարկան

Հայագետների մեծ մասն այն կարծիքին է, որ «ՈՒ»¹ երկտառ նշանագիրը Ե. դարում՝ հայոց գրերի գիտի ժամանակ, ուներ պարզ ձայնաւոր հնչում՝ համապատասխան յունարէն «ՕΥ»ի կամ լատիներէն «Ս» տառի հնչմանը, այսինքն՝ նոյն հնչումը ինչ էլ արդի հայերէնում է:

Այդու հանդերձ, որոշ հայագետներ շարունակում են առաջ քաշել այն վարկածը, թէ՛ քանզի Մեսրոպ Մաշտոց այն երկու տառով է գրի առել, «ՈՒ»ն պէտք է որ ունենար երկբարբառային [ow] արտասանություն²:

«ՈՒ»ի պարզ հնչյուն լինելու լեզուաբանական զանազան հիմնաւորումների կողքին, մենք այստեղ բերում ենք տրամաբանական մի այլ ապացոյց՝ հիմնուած հին հայերէնի վանկերի կաղապարների վրայ: Վանկերի հնարաւոր կաղապարների շար-քէն, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ, հետեւում է, որ [ow] (կամ՝ [ou]) արտասանու-թիւնը անհնարին է եւ որ հետեւաբար՝ միակ հնարաւորը մաքուր ձայնաւոր հնչումն է:

Առկայ կարծիքները

Որոշ հայագետներ համարել էլ համարում են, թէ «ՈՒ»ն երկբարբառային արտասանություն է ունեցել հայերէն տառերի գիտի եւ ուղղագրութեան սկզբնաւորման ժամանակաշրջանում (առնուազն Ե. դարի սկզբին), եւ թէ այն հետագայում է վերածուել պարզ [ու] հնչյունի:

Աշոտ Աբրահամեան. «Գրաբարում սկզբնապէս ու պարզ ձայնաւոր չի եղել, նրա դիմաց եղել է ու երկբարբառ՝ ոու (ou) արտասանութեամբ, որը գրութեան մէջ արտա-յայտուել է ո եւ ւ տառերի համադրութեամբ»³: Աշոտ Աբրահամեանին

¹ Ի գիտություն. տառ կամ նշանագիր արտայայտելու համար գիրը դնում ենք չակերտների մէջ՝ «Ո», «Ի» կամ «ՈՒ», իսկ հնչյուն կամ հնչոյթ արտայայտելու համար, ինչպէս ընդունուած է՝ անկլինաւոր փակագծերի մէջ՝ [ու]: Չակերտների միջի տառը կամ նշանագիրը այս յօդուածում պայմանականօրէն գրում ենք գլխագիր, քանի որ Ե. դարում այդպիսին էր գրությունը:

² Երկբարբառային այդ արտասանությունը հայերէն տառերով պայմանականօրէն գրելու ենք [ou]:

³ Ա.Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեւնարկ*, Երևան 1976, էջ 4:

մեջբերում եւ նրա տեսակետը երկրորդում է մեզ աւելի մօտ ժամանակաշրջանում Անժէլ Քիւրքճեանը⁴:

Լալիկ Խաչատրեանն ու Գեորգ Թոսունեանը նման կարծիքի են. «Է և ու տառերի համապատասխան հնչյունները գրաբարում եղել են երկհնչյուններ (երկբար-բառներ), այսպէս՝ **է = ե + յ, ու = ու + լ: ... Ու-ն, իբրև երկբարբառային ձայնաւոր, գրաբարի այբուբենի մէջ տեղ չի գտել...**»⁵:

Այնքան ամրացած եւ մնայուն է այս կարծիքը լեզուաբանների մի մասի շրջանում, որ այն յիշատակուած է նաեւ Հայերէնագիտական բառարանում. «... որոշ հայագէտների կարծիքով **ու** գրութիւնը ունեցել է երկբարբառային արտասանութիւն»⁶:

Ո՞վ է հայոց ուղղագրութեան հիմնադիրը: Հարցը թերեւս կարող է տարօրինակ թուիլ: Սակայն յիշեցնենք, որ Մեսրոպ Մաշտոց հայոց այբուբենի՝ հեղինակն է. մի բան է տառեր՝ նշանագրեր ստեղծելը (այլ կերպ ասած՝ լեզուի հնչյունների ինքնութիւնը պարզելը եւ դրանց գծագրային տեսք տալը), մի այլ բան՝ այդ նշանա-գրերով միօրինակ շարադրելը, այդ շարադրանքի կանոնները յօրինելը:

Հայերէն առաջին նախադասութիւնը անշուշտ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ...»ը չի եղել, ինչպէս մեզ ուսուցանում են դպրոցում: Մինչ այդ բառերը գրի առնելը՝ Մեսրոպն ու իր աշակերտները ըստ երեւոյթին հարիւրաւոր բառեր են գրել ու փորձել, ստուգել ու յղկել դրանց գրելաձևերը: Տառ ստեղծելը մի ակնթարթի գործ չէ: Որքան եւ աւանդոյթը ասում է, թէ Մեսրոպ տառերը երագում է տեսել, միեւնոյն է նա տքնաջան ամիսներ, գուցէ եւ տարիներ աշխատել է դրանց վրայ:

Աւելին, մինչ Հայոց Միջագետք ու Ասորիք մեկնիլը, Մեսրոպ իր ձեռքին ունէր «դանիելեան» գրերը: Նա եւ իր աշակերտները դրանցով մի երկու ամիս հայերէն են գրել ու նախադասութիւններ կազմել: Այդպէ՛ս են իմացել, հասկացել, որ տառերը պակաս են, որ նշանագրերը չեն բաւարարում հայերէն հնչյուններին: Այդ ընթացքում է նաեւ, որ Մեսրոպ ամենայն հաւանականութեամբ ի մի է բերել հայերէնի բոլոր հնչյունները (հնչոյթները): Կասկած չկայ, որ Ասորիք մեկնելէն առաջ նա արդէն պատկերացում ունէր հայերէն հնչյունների մասին: Այլապէս չէր կարող լինել:

Սակայն ո՞ւմ համարենք հայոց ուղղագրութեան հիմնադիրը, այն ուղղագրութեան որ այսօր կոչում ենք մեսրոպեան (կամ՝ մաշտոցեան): Մեսրոպի դերը դրանում անշուշտ հսկայական է: Բայց մի՞թէ իր աշակերտները, եւ անշուշտ՝

⁴ Տե՛ս Անժէլ Քիւրքճեան, *Դարձեալ արեւմտահայերէնի այբուբենի համակարգում «ու» ձայնաւորը տառի կարգավիճակի արժանացնելու մասին*, Ազդակ օրաթերթ, Երևան, 22 օգոստոս 2016 (<https://www.aztagdaily.com/archives/310794>, ներբեռնած 10 հոկտ. 2023), նաեւ՝ Հորիզոն գրական, թ. 7 (383) յուլիս 2016, էջ 14-16: Հմմտ. նոյնի *Գրաբարի եւ արդի գրական հայերէնի ձայնաւորների համեմատական քննութիւն* յօդուածը, Զարթօնք օրաթերթ, 28 նոյեմբեր 2001:

⁵ Լ.Մ. Խաչատրյան, Գ.Բ. Թոսունյան, *Գրաբարի դասագիրք*, Երևան 2004, էջ 6:

⁶ Զ.Չ. Պետրոսյան, *Հայերէնագիտական բառարան*, Երևան 1987, յօդուած «Ու» (էջ 593):

Աստուածաշնչի թարգմանիչները, ինքը՝ կաթողիկոս Սահակ Պարթևը, որեւէ դեր չեն ունեցել: Մի՞թէ Մեսրոպ միայնակ է որոշել թէ այս տառը կամ բառը այսպէս պէտք է ուղղագրենք, այն միւսը՝ այնպէս, իսկ իր շրջապատը լռելեայն ընդունել է: Դժուար է երեւակայել այդպիսի մի ընթացք: Մեր պատկերացմամբ՝ հայերէնի ուղղագրութիւնը յօրինուել է կայունացել է առաջին թարգմանութիւնների ժամանակ, գուցէ եւ մի քանի տարուան ընթացքում. քանզի հնարաւոր չէ գրութեան բոլոր կանոնները միահաղոյն «օղէն քաղել», կամ թէ՛ այլ լեզուներէն փոխ առնել եւ ուրիշների օրէնքներով առաջնորդուիլ:

Ահա այդ փնտրտութիւնների ընթացքում է, որ ծնունդ է առել [ու] հնչիւնի գրութիւնը: Յիշեցնենք, որ այնժամանակեայ հայ առաջադէմ մտաւորականութեան վրայ ահեղի ներգործութիւն ունէին յոյն աշխարհն ու յունարէն լեզուն:

Երկբարբառ արտասանութեան հիմունքները

Երկբարբառ արտասանութեան միակ փաստարկը ելնում է մեսրոպեան այբուբենի կատարեալ լինելու ենթադրութիւն-դրոյթէն: Այն է, որ քանի որ Մեսրոպ Մաշտոց հայերէն ամեն մի հնչիւն մէկ տառով է գրի առել (այսինքն՝ կատարեալ համապատասխանութիւն գոյութիւն ունի հնչիւնների [աւելի ճիշտ՝ հնչոյթների] եւ նշանագրերի միջեւ), ապա երկու տառով (նիշով, նշանագրով) արտայայտած գրութիւնը եւս պէտք է որ երկու հնչիւն արտայայտէր, այսինքն՝ լինէր երկբարբառ: Ինչպէս եւ են «աւ, եւ, իւ, այ, ոյ...» երկբարբառները: Ուստի՝ «ՈԻ»ն պէտք է որ ունենար երկբարբառային [օւ] արտասանութիւն:

«ՈԻ» նշանագրի երկբարբառային արտասանութեան ոչ մի անմիջական վկայութիւն եւ լեզուաբանական որեւէ այլ հիմնաւորում գոյութիւն չունի: Միջնադարեան հեղինակներէն ոմանք անշուշտ ներկայացուցել են «ՈԻ» գրութիւնը որպէս «երկբարբառ», սակայն դա միայն գրի (նշանի) մասին է խօսքը: Նոյն բանը անում էին յոյները, իրենց «ՕΥ»ն ներկայացնելով իբրեւ երկբարբառ⁷, մինչդեռ յունա-գիտութեան մէջ յայտնի է, որ այդ երկնիշ տառը պարզ հնչիւնի է վերածուել դեռեւս Ք.ա. Ե.-Դ. դարերում:

«ՈԻ»ն երկբարբառ հռչակելով, հայագէտները գիտակցաբար կամ անգիտակցաբար հակում են այն կարծիքին, որ մեսրոպեան այբուբենը կատարեալ է, անթերի, եւ որ Մեսրոպ չէր կարող մի հնչիւնը միայն այս մի եզակի դէպքում երկու տառով գրի առնել:

Ինչ խօսք, այս ամենի մէջ տրամաբանութիւն կայ: Իրօք, եթէ Մեսրոպ Մաշտոց այդքան մանրակրկիտ գործ է կատարել, եւ որ իրեն օգնել ու սատարել են մի բոյլ փառահեղ մտաւորականներ, ինչպէ՞ս կարող էին բոլոր այդ անձինք այդ մի հարցում շեղուիլ իրենց բռնած սկզբունքէն:

⁷ Մինչեւ հիմա էլ հին յունարէնի դասագրքերի մեծ մասը այդպէս է մօտենում հարցին, թէւ այդպէս ներկայացնելէն անմիջապէս յետոյ նշում է, որ «ՕΥ»ն պարզ ձայնաւոր է:

Պարզ տրամաբանություն

«ՌԻ»ն մեկ հնչյուն համարողները եւ ուստի՝ երկբարբառ արտասանությունը չընդունողները հակադարձում են մի քանի փաստարկներով: Դրանցմէ առաջինը պարզ տրամաբանությունն է. ինչպէ՞ս հնարաւոր է, որ այդպիսի մի պարզ ձայնաւոր չլինէր հայոց լեզուում:

Հ. Պօղոս Գոճանեան. «Ումանք կարծում են, որ **ու** պարզ ձայնաւոր չէր, այլ երկբարբառ՝ **օու** արտասանութեամբ. Դա անհիմն է: Մեսրոպ Մաշտոց պարզապէս յունարէնի նմանութեամբ երկու տառ է օգտագործել մեկ ձայնաւորի համար: Չի կարելի մտածել, որ այնքան պարզ **ու** հնչյունը չլինէր հայերէնում եւ օտար անուններ՝ Ղուկաս, Երուսաղէմ են. հարկ լինէր արտասանել՝ *Ղօուկաս, Երօուսաղէմ*⁸:

Այլ ասիցէ որ արդեօք⁹ ինչո՞ւ չի կարող «այնքան պարզ **ու** հնչյունը» գոյութիւն չունենալ մի լեզուում: Բերենք ճապոներէնի օրինակը: Այն ունի, լատինական տառադարձութեամբ, «A, I, U, E, O» ձայնաւորները: Սակայն յայտնի է, որ «U» ձայնաւորը աւելի մօտ է հայերէն [ը] հնչյունին, քան թէ [ու]ին: Փաստօրէն՝ ճապոներէնն ունի [ա, ի, ը, է, ո] ձայնաւոր հնչյունները: Փաստօրէն՝ չունի [ու] հնչյունը: Ուրեմն՝ պարզ տրամաբանութեան փաստարկը կարիք ունի մի այլ հիմնաւորման եւս:

Նմանապէս՝ հին ֆրանսերէնը իր ձեւաւորման վաղ շրջանում, լատիներէնէն ժառանգած «U» ձայնաւոր տառը հնչում էր արդէն [իւ]¹⁰ (նոյն հնչյունը ինչ եւ արդի ֆրանսերէնում է): Քիչ ուշ (վերա)ձեւաւորուած [ու] հնչյունի համար հին ֆրանսերէնը որդեգրեց յունարէնի տրամաբանութիւնը. հնչյունը գրի առաւ «OU» տեսքով (որը մինչեւ օրս էլ այդպէս է գրուում): Փաստօրէն հին ֆրանսերէնը եւս, իր կազմաւորման ամենավաղ փուլում, չունէր [ու] պարզ ձայնաւոր:

Եւ ընդհանրապէս, գիտենալով որ գրական արաբերէնը ունի ընդամենը երեք ձայնաւոր (կարճ եւ երկայն տարբերակներով)՝ [ա, ի, ու], կարելի է լիովին ենթադրել, որ բոլոր պարզ ձայնաւորների առկայութիւնը որեւէ լեզուում պարտադիր չէ:

Այսինքն՝ նորէն կանգնում ենք «ՌԻ»ի երկբարբառային արտասանութիւնը հերքելու խնդրի առաջ:

Ստուգաբանական մօտեցում

Լեզուաբանների մեծ մասը կասկած անգամ չի ունեցել «ՌԻ»ի պարզ ձայնաւոր լինելու վրայ: Ըստ Հր. Աճառեանի՝ «Չայնաւորներից **ա, ի, ը, ու** ունէին ճիշտ

⁸ Հ. Պօղոս Գոճանեան, *Դասական գրարարի գործնական քերականութիւն*, Երեւան 2011, էջ 8:

⁹ Սա մեր պատմաօր՝ Մովսէս Խորենացու դարձուածն է, մէջ բերելու հակառակ տեսակէտը՝ այն այնուհետեւ մեկնաբանելու եւ հերքելու համար:

¹⁰ Հնչյունաբանութեան միջազգային ընկերութեան (International Phonetic Association – IPA) այբու-բենի նշանագրով՝ [y]:

այժմեան հնչումը (այն է լատիներէն **a, i, ə, u**)¹¹: Անուանի լեզուաբանը նոյնիսկ արժանի չի համարել հիմնաւորելու իր այս յայտարարութիւնը:

Երկրաբառ արտասանութիւնը ակներեւաբար մերժում է եւ հնդ(կ)երոպական ստուգաբանութիւնը. հնդ(կ)երոպական նախալեզուն հայերէն անցած բառերի մէջ ի յայտ են գալիս զուգահեռներ հնդ(կ)երոպական [ու]ի եւ հին հայերէն «Ռ» գրութեան միջեւ:

Ահաւասիկ հնդ(կ)երոպականէն հայերէն «Ս» > «Ռ» առնչ(ակց)ութիւնների օրի-նակներ. դու (*tū, *tū), դուստր (*dhuktér), բուս (*bhug'), դուռն (*dhur- / *dhwer-, *dhwor-), թունդ (*stund, *tund), հուր (*puro-), ձուկն (*g'hu-), մուկն (*mūs), ջուր (*yuro-), տուտն (*dud-)¹² եւ այլն: Լեզուաբանական «տրամաբանութիւնը» եզրակացնում է. քանի որ հին հայերէն «Ռ»-ն սերում է հնդ(կ)երոպական [ու] պարզ ձայնաւորէն, «Ռ» գրութեանը պէտք է որ համապատասխանէր [ու] պարզ ձայնաւոր հնչիւն: Լեզուաբանական «տրամաբանութիւնը» սակայն, կարծում ենք, այստեղ զանց է առնում այն հանգամանքը, որ հնդ(կ)երոպական նախալեզուի տրոհման (այն է՝ հայոց լեզուի վաղնջական տարբերակի առաջացման) եւ հայոց գրերի գիտի դարաշրջանի (Ք.յ. Ե. դար) միջեւ առնուազն մի քանի հազար տարի է ընկած, եւ որ այդ ժամանակա-հատուածում լեզուն զանազան տեսակի փոփոխութիւններ կարող էր կրել (ինչպէս որ տեսնում ենք վերջին հազար վեց հարիւր տարիների ընթացքում): Այսինքն՝ հնդ(կ)երոպական պարզ ձայնաւորը կարող էր հետեւողականօրէն վերածուիլ երկրաբառ [ու]ի:

Վերջին կասկածանքի հիմնաւորումներէն մեկն ալ այն է, որ վերին օրինակների շարքին զուգահեռ ունինք նաեւ այլ առնչ(ակց)ութիւններ, օրինակ. լու(ր) (*k'leu-), ծունգ / ծունկ (*g'onwi / *g'onwi), հուս (*pont-), ուս (*omso-), շուն (*k'ūōn- / *k'unós), սուր (*kō-ro-), տուն (*dōm-), տու(ր) (*də, *dō, *d-)¹³ եւ այլն: Այսինքն՝ միշտ չէ, որ հին հայերէն «Ռ»-ի դիմաց ունինք հնդ(կ)երոպական «Ս» ձայնաւոր: Թերահաւատ մի գիտնական կարո՞ղ է արդեօք աներկբայօրէն պնդել, թէ հայերէնի «Ռ»-ն պէտք է պարզ ձայնաւոր համարել: Կասկածում ենք:

Կասկածներն աւելանում են, երբ դառնում ենք «ու» շաղկապի ստուգաբանութեանը. «Բնիկ հայ բառ և հյ. եւ ձևի կրկնակն է. եւ գալիս է հնիս. épi ձևից [...]. սրա հետ կար նաև հնիս. opí ձայնադարձը»¹⁴: Այս մեկնաբանութենէն, ընդհակառակը, կարելի է եզրակացնել, որ «Ռ»-ն հենց երկրաբառային արտասանութիւն պէտք է ունենար՝ «օրի» > «ու» [ու]:

Եւ իսկապէս՝ հայերէնի բարբառներում կարելի է նկատել «Ռ»-ին համապատասխանող երկրաբառային դրսեւորումներ: Այսպէս, օրինակ՝ Ոզմի բարբառում.

¹¹ Հր. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հատ. 6, Չայնագիտություն, Երևան 1971, էջ 226:

¹² Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, համապատասխան բառերի յօդուածները:

¹³ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, համապատասխան բառերի յօդուածները:

¹⁴ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, յօդուած «Ռ» (հատ. 3, էջ 589):

«ձու > ձօլ», «մուկն > մուկ», «ձուկն > ձօլ (jhöuk)»¹⁵, նմանապես՝ «անուն > անուն», «խանութ > խանութ», «խուրձն > խուրձ», «կծու > կծու», «կուշտ > կուշտ», «կտուց > կտուց», «հերու > խերու», «մութն > մութ»¹⁷: Այլ վկայություններ. «թուզ > թուզ / թուզ», «ջուր > ջուր»¹⁸, «թուղթ > թուղթ»¹⁹, «ուզել > ուզել / ուզել»²⁰:

«Ու» ձայնաւորը զանազան այլ դրսեւորումներ ալ ունի, որ այստեղ չենք յիշատակեր:

Հետեւաբար՝ տրամաբանութիւնը յուշում է, որ մի լեզուում լիովին հաւանական է, որ տեղի ունենայ [ու] > [ու] անցում:

Կրկին կանգնում ենք «Ու»ի երկբարբառային արտասանութիւնը ա՛յլ կերպ հերքելու նոյն խնդրի առաջ:

Օտար լեզուների համեմատութիւն

«Ու»ի պարզ ձայնաւոր լինելը «ապացուցում» են նաեւ օտար լեզուներէն կատարած փոխառութիւնների համեմատութեամբ: Օրինակ՝ փոխառեալ հետեւեալ բառերն ու օտար յատուկ անունները հին հայերէն տառադարձութեան մէջ տալիս են «Ու». Երուսաղէմ, Ղուկաս, Շապուհ, Գուրգէն, Յուդա, վզուրկ (վզուրկ), զմրուխտ, խունկ, գուսան, սեպուհ, շուկայ, ուրբաթ, քուրմ...

Ի՞նչ է սակայն դա նշանակում: Դա նշանակում է միայն, որ օտար [ու] հնչիւնը հայերէն տառադարձած է «Ու» երկնիշ տառով: Բայց սա կարող է նշանակել, որ հայերէնը, չունենալով [ու] պարզ ձայնաւորը, օտար [ու]երը պարբերաբար փոխարինում էր հայերէն երկբարբառային [ու]ով (ինչպէս Ոզմի բարբառի վերոյիշեալ օրինակները):

Նոյնը եւ հակառակ փոխառութիւնների ժամանակ: Հայերէն «ու»ն օտար լեզուներում տալիս է [ու] պարզ ձայնաւոր: Օրինակներ չենք բերում, քանի որ ոչ ոք կարող է պնդել թէ հայերէնէն այս կամ այն լեզու անցած այս կամ այն բառը Ե. դարի առաջին կէսի փոխառութիւն է: Այդպիսի ամենահաւանական լեզուն վրացերէնն է, բայց հաշուի առնելով այն հանգամանքը, որ վրացերէնի առաջին բնագրերը թուագրութեամբ Ե. դարի վերջէն են միայն, հաստատ ոչ մի բան թերեւս կարելի պնդել: Օրինակ՝ «շուկայ» բառը հայերէնէն փոխառած է վրացերէնում՝ «შუკა»²¹

¹⁵ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, համապատասխան բառերի յօդուածները:
¹⁶ Այս ուղղագրութեան մէջ պէտք է հասկանալ «էօ» = [ö] եւ «ւ» = [w]: Այն է՝ երկբարբառային արտասանութիւն:

¹⁷ Հ. Աճառեան, Քննություն Վանի բարբառի, Երևան 1953: Տե՛ս «Բառարան Վանի բարբառի» ցանկը (էջ 242-299), Ոզմի ենթաբարբառի սիւնակի օրինակները:

¹⁸ Ն.Ե. Հովսեփյան, Ոզմի բարբառի մի քանի առանձնահատկությունների մասին, Պատմա-բանասիրական հանդէս, 1966, հ. 2, էջ 233:

¹⁹ Նիկոլայ Հովսեփյան, Բառաքնական դիտողություններ Ոզմի բարբառի բառապաշարի մասին, Պատմա-բանասիրական հանդէս, 2001, հ. 2, էջ 134:

²⁰ Անդ, էջ 141:

²¹ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, յօդուած «շուկայ» (հատ. 3, էջ 533): [Արմատական բառարանի վկայութիւնը վրացերէն բառի վերջին «օ» (վրաց. «j») տառ չի դնում, որը սակայն

[շուկա], բայց ո՞վ կարող է պնդել թե դա Ե. դարի սկզբի (կամ առաջին կեսի) փոխառություն է: Նմանապես՝ հայ. «ուռն» (մուրճ, կռան) > վրաց. «ურო»²² [ուրո]:

Եւ այդու հանդերձ, նոյնիսկ եթէ մոռանանք այս վերջին հանգամանքը, այդպիսի փոխառությունները եւս կարող են հաւանաբար մեկնաբանուիլ, թէ հայերէն երկբար-բառը օտար լեզուներում դարձած կարող էր լինել պարզ ձայնաւոր (քանի որ այդ լեզուները չունին [ու] երկբարբառ):

Պարզ ասած, կարող էինք ունենալ մի կողմէն՝ օտար [ու] > հայերէն [ու] անցում, եւ միւս կողմէն՝ հայերէն [ու] > օտար [ու] անցում:

Կրկին՝ խնդիրը վերջնական լուծում չի ստանում:

«ՈՒ»ի դերը իբրեւ երկբարբառի ոչ վանկարար տարր

Մի այլ փաստարկում էլ կարելի է բերել «ՈՒ»ի պարզ ձայնաւոր լինելու օգտին: Եթէ առնենք «ՈՒ»ի իբրեւ ոչ վանկարար տարր (այն է՝ մի այլ ձայնաւորէ առաջ) հանդէս գալու օրինակներ, «ՈՒ»ն երկբարբառ համարելու պարագայում պէտք է ունենայինք հետեւեալ տեսարանը: Օրինակ՝ «արուեստ» բառի մէջ, եթէ համարենք, որ «ՈՒ»ն երկբարբառ է, բառի հնչումը պէտք է լինէր [ա·րօ·ւէստ], երեք վանկով: Նմանապէս՝ *զո-ւա-րակ, ա-ղո-ւէս, [ը]ս-տո-ւեր, լէ-զո-ւի, թո-ղո-ւի* եւ նման այլ բառերի ու ձեւերի մէջ (տարօրինակ եւ տարակուսելի):

Աւելին՝ եթէ համարենք որ «ՈՒ»ն երկբարբառ էր, ապա պէտք է ընդունինք, որ «Ո»էն յետոյ երկու տեսակի բաղաձայն՝ [վ] եւ [ւ], կարող էր գոյութիւն ունենալ. [օվա / օվե / օվի...] հնչումով («ովա / ովե / ովի...» գրութեամբ) եւ զուգահեռաբար՝ [ուա / ուե / ուի...] հնչումով («ուա / ուե / ուի...» գրութիւնները):

«ՈՒ»ի երկբարբառ լինելու կասկածն աւելի է մեծանում, սակայն վերջնական հերքումը ուշանում է:

Երկտառ գրութիւններ

Պարզուում է, որ միայն հայերէնը չէ, որ ընդօրինակել է յունարէնի երկտառ գրութիւնը: Հին վրացերէնը, Ե. դարի իր ուղղագրութեամբ (այսինքն՝ վրացերէն այբուբենի գիւտի ժամանակ), [ու] հնչիւնը նոյնպէս գրել է երկնիշ տառով՝ «ՕԿ», այսինքն՝ «Օ»-ի (հայ. «Ո») եւ «Կ»-ի (հայ. «Ի») համակցութեամբ: Ակակի Շանիձէի խօսքերով՝ [ու] հնչիւնի արտայայտման համար, յունարէնի նման, երկու տառանշան էր գրում, որոնք հետզհետէ միաձուլուեցին եւ ստացան մեկ տառաձեւ, եւ այն արդի վրացերէնում մեկ նիշ է²³: Տրամաբանական հարց է ծագում. ի՞նչ է՝ հին վրացերէնը նո՞յնպէս չի ունեցել [ու] պարզ ձայնաւոր:

բնորոշ պէտք է լինէր հին վրացերէնին, ինչը եւ կասկածի տեղիք է տալիս թէ բառը Ե. դարի փոխառութիւն է:]

²² Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, յօդուած «ուռն» (հատ. 3, էջ 609):

²³ Ակակի Շանիձէ, Հին վրացերէնի քերականություն, Երևան 1983, էջ 15:

Նոյն տրամաբանությամբ են առաջնորդուել հին սլաոներենի ուղղագրության հեղինակներ Կիրեղն ու Մեթոդիոսը Թ. դարում. սլաոներենի [ու] հնչյունը գրի են առել «OY» երկնիշ տեսքով: Ոչ մի սլաոնագետ հարցականի տակ չի դրել այս ձայնատրի պարզ լինելու փաստը²⁴: Հին ռուսերենն էլ հետեւել է իր աւագ եղբոր՝ սլաոներենի գրութեանը, նոյն երկնիշ տառով²⁵:

Ինչպէս յիշատակեցինք վերը, հին ֆրանսերենը նոյնպէս, երբ ստիպուած եղաւ [ու] հնչյունի համար մի նոր տառ յօրինել, գրեց այն յունարենի օրինակով՝ «OU» (ի տարբերութիւն «U»ի, որը լատիներենէն ֆրանսերենին անցնելու դարաշրջանում (Ջ.-Ը. դդ.) փոխել էր իր հնչումը եւ դարձել [իւ])²⁶:

Ուրեմն՝ նոյն հարցը եւ բոլոր այս լեզուների համար կարող ենք տալ. ի՞նչ է՝ երկնիշ գրութեան տեղում սրանք նո՞յնպէս չեն ունեցել պարզ ձայնատր: Փաստերն ընդհակառակը ասում են, որ ունեցել են:

Հայերենի վանկերի կադապարները

Այսու ամենայնիւ հանդերձ, «Ու»ի պարզ ձայնատր լինելու ամենահիմնատր ապացոյցը գտնում ենք հայերենի իսկ հնչյունաբանութեան մէջ:

Հր. Աճառեանը (օգտուելով Մ. Աբեղեանի *Տաղաչափութիւն* աշխատութենէն, էջ 35-36), տալիս է հայերեն վանկերի հետեւեալ նկարագիրը («Վանկի ձայնական կազմութիւնը հայերէնում»):

«Բառամիջին վանկի վերջում, ձայնատրից յետոյ կարող է գալ միայն մի կամ երկու բաղաձայն, վերջինը միայն այն դէպքում, երբ առաջին բաղաձայնն է նայ **ր**, **ռ**, ռնգային **ն**, **մ**, տեւական **ղ**, **խ**, **ւ** (վ), **զ**, **ս**, **ժ**, **շ**, **հ** տառերը: Օրինակ՝ **զարթ-նել**, **անձ-նական**, **ամպ-րոպ**, **գաղտ-նի**, **սաստ-կանալ**, **պաշտ-պան** եւ այլն:

«Այս հաշուով են նաեւ **այ**, **ոյ**, որոնք հնչում են իբր ձայնատր + բաղաձայն:

«Բառի վերջում, ինչպէս եւ միավանկ բառերի մէջ, սովորաբար վանկը վերջանում է վերի ձեւով, բայց կարող է նաեւ լինել որեւէ բաղաձայն կամ **ք** յոգնակերտ նշանը (օրինակ՝ մէջք, աչք, կապք, միտք), կամ նաեւ **քս** յանգը (մետաքս, զուգս, մաքս). – Վերջապէս կարող է լինել վերի ձեւով երկու բաղաձայն + **ք** յոգնակերտ նշանը (ինչպէս **պարտք**, **կուրծք**, **վարձք**, **առանցք**, **քղանցք**, **հարքք**, **մարքք**, **եղբարքք**):

«Ըստ այսմ հայերենի մէջ վանկը ամենաշատ կարող է ունենալ 5 հնչյուն, որոնցից մի բաղաձայն սկզբում, յետոյ մի ձայնատր եւ յետոյ երեք բաղաձայն (**կուրծք**, **հարքք**), որոնցից վերջինը միայն **ք** յոգնակերտն է: Այսպիսի վանկեր կարող

²⁴ Հմմտ. А.И. Изотов, Старославянский и церковнославянский языки, Москва 2001. А.И. Горшков, Старославянский (древнецерковнославянский) язык, Москва 2002. А.А. Плетнева, А.Г. Кравецкий, Церковнославянский язык, 5-е изд., Москва 2012.

²⁵ М.В. Иванова, Историческая грамматика русского языка, Москва 2013.

²⁶ Վկայութիւններ չենք բերում. համոզուելու համար բաւական է թերթել հին ֆրանսերենի որեւէ դասագիրք:

ենք գտնել բառավերջում կամ սակաւաթիւ միավանկ բառերի մէջ: Բառի մէջ երեք բաղաձայն միասին վանկի վերջում անհնարին է, բացառութեամբ **առանցք-ներ**, **քղանցք-ներ**, **կուրծք-ներդ**, **պարտք-ներդ** եւ այլն ձեւերի: Ուր որ երեք բաղաձայն պատահի, մեկը պիտի անցնի յաջորդ վանկին, ինչպէս **վարձ-կան**, **պաշտ-պան**: Բացի դրանից, վանկի վերջում, ինչպէս նաեւ բառի վերջում, ո՛չ մի բաղաձայնից յետոյ չի կարող պատահել **ն, ր, վ (ւ), շ**²⁷:

Եթէ բացառենք հին հայերէնի յոգնակերտ «ք» մասնիկը (վերջաւորութիւնը), հին հայերէնի բոլոր հնարաւոր վանկերը կարող ենք ի մի բերել հետեւեալ աղիւսակով:

	բաց վանկ	փակ բաղաձայն 1	փակ բաղաձայն 2
Չայնաւորասկ իզբ	Չ / ա	ՉԲ / ար	ՉԲԲ / արդ
Բաղաձայնաս կիզբ	ԲՉ / մա	ԲՉԲ / մար	ԲՉԲԲ / մարդ

Որում Չ = ձայնաւոր, Բ = բաղաձայն²⁸:

Ընդամենը՝ վեց կաղապարի, այսինքն՝ վեց տիպարի վանկ: Դա մասնաւորապէս նշանակում է, որ հայերէնում վանկը չի կարող երկու բաղաձայնով սկսիլ, **հայերէնում վանկը չի կարող երեք եւ ւելի բաղաձայնով վերջանալ**: Ընդ որում՝ ամեն պատահական երկու բաղաձայն չի կարող վանկը փակել: Կրկին ընդգծենք, որ խօսքը բառերի ուղիղ տեսքի (եզակիի) մասին է: Միակը, որ խաթարում է այս ներդաշնակութիւնը, յոգնակերտ «ք» մասնիկն է²⁹:

Օրինակներ. չ[ը]-մ[ը]շ-տ[ը]ն-ջե-նա-ւոր, ճ[ը]շ-մար-տա-խասւ, ք[ը]րթ-մ[ը]ն-ջին, [ը]ս-տա-նամ, ջ[ը]-րոյն, սե-նեակ³⁰, բու-րաս-տան, [ը]զ-գեստ, թան-ձ[ը]ր, վա-րա-գոյր, խա-րոյկ, հար, տան, հա-րեր, ձին, ա-րին: «Յ» եւ «Բ» *ձայնորդ* կամ *կիսաձայն* կոչուած տառերը նոյնպէս հանդէս են գալիս իբրեւ բաղաձայններ:

Ինչպէս տեսնում ենք, ոչ մի բառ, ոչ մի վանկ չի վերջանում երեք բաղաձայնով: Հայերէն Յանգարանի ուշադիր քննութիւնը հաստատում է փաստը³¹: Ոչ մի ուրիշ կաղապարի վանկ գոյութիւն ունի հին հայերէնի բառային շտեմարանում:

²⁷ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 6, էջ 271:

²⁸ Հմմտ. նաեւ՝ Հայերէնագիտական բառարան, յօդուած «վանկ», էջ 554-558:

²⁹ Յոգնակի հայցականի «ս» մասնիկի եւ դրան նախորդող որեւէ բաղաձայնի միջեւ միշտ լսելի է [ը] հնչիւնը. անձին[ը]ս, հար[ը]ս, կեան[ը]ս, քաղաք[ը]ս եւ այլն:

³⁰ Այս «եա» երկբարբառի մէջ «ե» տառը նախորդ բաղաձայնը փափկացնելու համար է: Նա կիսաձայն [յ] չէ՝ ինչպէս համարում են շատերը:

³¹ Տե՛ս Յանգարան կամ Բառգիրք յանգաց Հայկազեան լեզուի, խմբ. Խորէն Վ. Գալֆայեան, Թէոդոսիա 1862 (հմմտ. որեւէ ձայնաւորով եւ մեկ կամ երկու բաղաձայնով վերջացող բառերը):

Հետաքրքրական է, որ հնագոյն շերտի բառերէն ոմանք, «ք» յոգնակերտը ստանալիս, զրկուում են իրենց վանկավերջին բաղաձայններէն մեկէն, օրինակ. «այր > արք», «մայր > մարք», «եղբայր > եղբարք», «քոյր > քորք» («յ»ի անկում), կամ ենթարկուում են մի այլ հնչինափոխութեան՝ վերջում երեք բաղաձայնէն խուսափելու համար՝ «աւր > աւուրք»: Սա, սակայն, այլ երեւոյթ է, որ կարիք ունի առանձին քննութեան:

Օրինակներ «ՈԻ» երկտառով բառերի

Այժմ անդրադառնանք «ՈԻ» երկտառը պարունակող բառերին: Ահա մի քանի օրինակ. ուղտ, ունջ, շունջ, սուրբ, քուրմ, խումբ, գունդ, շուրջ, ցուրտ, նուրբ, կո-րուստ, փա-խուստ, ար-տա-քուստ, հա-րուստ («ուստ» վերջաւորութեամբ բոլոր բառերը), խոր-հուրդ, ժո-ղո-վուրդ, ծ[ը]-նունդ, սե-րունդ, կա-մուրջ, եւ հարիւրաւոր այլ բառեր:

Բոլոր այս բառերում «ՈԻ»ին յաջորդում է (առ առաւելն) երկու բաղաձայն:

Երբ «ՈԻ»ին յաջորդում է երեք բաղաձայն, վերջին վանկում անպայմանօրէն հանդէս է գալիս միջանկեալ [ը] ձայնաւորը. ուս-տ[ը]ր, դուս-տ[ը]ր, շուր-թ[ը]ն, ուն-կ[ը]ն, ծուն-կ[ը]ն, բուր-գ[ը]ն եւ այլն:

Վանկերի վերը բերած հնարաւոր կաղապարների շարքէն պարզ է դառնում, որ «ՈԻ»ի երկբարբառային [ու] ([ow]) արտասանութիւնը անհնարին է այսպիսի բառերի մէջ, քանի որ այլապէս վանկի վերջում ի յայտ է գալու երեք բաղաձայն: Ուստի՝ **միակ հնարաւորը «ՈԻ» երկնիշ գրութեան մաքուր ձայնաւոր [ու] հնչումն է:**

Ինչը եւ պէտք էր ապացուցել:

Տրամաբանական այս եզրայանգմանը դժուար է որեւէ առարկութիւն դէմ հանել: Դժուար է հարցականի տակ դնել հայերէնի վանկային կաղապարների ակնյայ-տութիւնը: Այսպիսի պարագայում մնում է միայն ընդունիլ, որ ոսկեղաբեան երկնիշ «ՈԻ»ի տակ (ինչպէս եւ հայերէնի գրաւոր ողջ պատմութեան ընթացքում) թաքնուած է եղել պարզ [ու] ձայնաւորը:

Եզրայանգում

Հին հայերէնի [ու] ձայնաւորի երկտառ գրութիւնը, յունարէնի օրինակով, ոմանք անշուշտ թերութիւն կարող են համարել, բայց այդ թերութիւնը, ինչպէս տեսանք, միայն հայերէնինը չէ: Ի դէպ՝ [ու]ի երկտառ գրութիւնը միակ թերութիւնը չէ մեսրոպեան այբուբենի մէջ: Կարող ենք նշել նաեւ [ը] ձայնաւորը գրեթէ երբեք չգրելու փաստը. [ը]ն, ինչպէս եւ բոլոր այլ ձայնաւորները, իրաւունք ունէր արտայայտուելու գրի մէջ: Սակայն Մեսրոպ եւ նրա գործընկերներն ու աշակերտները այլ կերպ որոշեցին: Գուցէ եւ այն պատճառով, որ այդ

Ժամանակուան իրենց յայտնի որեւէ այբուբեն [ը] հնչիւնի համար տառ չունէր եւ այն չէր արտայայտում գրի մէջ³²: Մա այլ հարց է, որ այսօրուան խնդիրը չէ:

Անթերի այբուբեն չկայ աշխարհում: Մենք բնականաբար հիանում ենք Մեծն Մաշտոցի հայրենանուէր եւ իսկապէս տիտանական աշխատանքով եւ ոչ ոք իրաւունք ունի հարցականի տակ դնելու նրա հրաշագործութիւնը: Հայոց գրերի գիւտը աշխարհում եզակի երեւոյթ է, եւ հայոց այբուբենը աշխարհի լաւագոյն այբուբեններէն է: Նրա յորինումը Ե. դարում, երբ նոյնիսկ յունարէնի՝ հնչիւնաբանութիւնն էր թերի մեկնաբանուած, իսկապէս հրաշք պէտք է համարել:

Հայոց լեզուն արդէն հազար վեց հարիւր տարի է, որ կիրարկում է [ու]ի երկտառ գրութիւն եւ դրանից մեծ խնդիր երբեք առաջ չի եկել: Անձամբ մենք գտնում ենք, որ այս իրողութիւնը պէտք է ընդունիլ գիտակցաբար եւ մեր վերաբերմունքը հիմնել եղելութեան վրայ: Անիմաստ է ամեն գնով ձգտել «ՌԻ»ն համարել մեկ տառ, խցկել այն այբուբենի մէջ, գրաբարի դասագրքերում այն ներկայացնել որպէս երկբարբառ: «ՌԻ»ի երկնիշ (երկտառ) լինելն աներկբայ է, եւ մեր լեզուաբանական աշխատութիւններն ու մանկավարժական գործունէութիւնը մենք պէտք է հիմնենք ա՛յդ իրողութեան վրայ:

Michaelian Armen - About the Problem of the Pronunciation of the Armenien Double-Sign Letter "ՌԻ" in the 5th Century AD. - Most armenologists are of the opinion that the Armenien double-sign letter "ՌԻ" had a simple vowel sound in the 5th century AD, the time of the invention of the Armenien writing system, and which corresponded to the sound of the Greek "OY" or the Latin letter "U", that is, the same sound as in modern Armenian.

Nevertheless, some armenologists continue to propose the hypothesis that because Mesrop Mashtots wrote it down with two letters (signs), the "ՌԻ" must have had a diphthongal pronunciation [ow].

Next to various linguistic justifications for the simple sound of "ՌԻ", we present here another logical proof based on the patterns of ancient Armenian syllables. From the list of possible types of syllables, it follows that the pronunciation of [ow] is impossible and that therefore the only possible version is the monophthongal vowel sound.

Keywords: Letter "ՌԻ", Double-Sign Letter, Historical Phonetics, Vowel, Diphthong, Syllable, Syllable Patterns.

Микаелян Армен - О проблеме произношения армянской двузнаковой буквы «ՌԻ» в V веке н.э. - Большинство арменоведов придерживается мнения, что армянская двузнаковая буква "ՌԻ" в V веке н.э., т.е. во эпоху изобретения армянской письменности, имела простой гласный звук и соответствовала звучанию греческого

³² Երբայեցերէնի քերականական եզրոյթով՝ այդպիսի չգրուող բայց հնչող [ը]ն կոչում են «շվա», այսինքն՝ ոչինչ:

"ՕՄ" или латинской буквы "U", то есть тот же звук, что и в современном армянском языке.

Тем не менее, некоторые арменоведы продолжают выдвигать гипотезу о том, что, поскольку Месроп Маштоц записал его двумя буквами (знаками), то "Ու" должно было иметь дифтонгальное произношение [oʊ].

Наряду с различными лингвистическими обоснованиями простого гласного звука "Ու", мы представляем здесь еще одно логическое доказательство, основанное на моделях древнеармянских слогов. Из ряда возможных типов слогов следует, что произношение [oʊ] невозможно, и что следовательно единственно возможным вариантом является монофтонгальный гласный звук.

Ключевые слова: Буква «Ու», двузнаковая буква, историческая фонетика, гласная, дифтонг, слог, слоговые модели.

Միքայելյան Տիգրան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,

գիտաշխատող. mtigran2002@yahoo.com

Բանալի բառեր. անձնանուն, մուսուլմանական, միջնադար, հայկական, իսլամ, ընդօրինակված:

Հայտնի է, որ Հայաստանի բռնազավթումը մուսուլման տիրակալների կողմից VIII-XIX դդ.ուղեկցվում էր արաբների, քրդերի, պարսիկների, թյուրքալեզու քոչվոր և կիսաքոչվոր ցեղամիությունների, ցեղախմբերի ներթափանցմամբ և, համապատասխանաբար, հայ տեղացի բնակչության դուրս մղմամբ: Այս առումով հատկապես ողբերգական էին Սեֆյան շահ Շահ-Աբբասի տիրակալության տարիները, որի ընթացքում նրա կողմից օսմանյան սուլթանների դեմ «այրված հողի» մարտավարության կիրառման արդյունքում 1604թ.-ից սկսած Արևելյան Հայաստանը գրեթե ամայացավ՝ հայ բնակչության մեծ մասը քշվեց Իրան¹ և փոխարենը քաջալերվում էր ռազմատենչ թյուրքալեզու ցեղերի ներթափանցումը և ամրապնդումը Արևելյան Հայաստանում որպես ռազմական հենարան:

Ապրելով Հայաստանում բնակություն հաստատած և հաճախ իրենց նկատմամբ գերիշխանություն ունեցող պարսիկների, արաբների և թյուրքալեզու ցեղերի և ցեղամիավորումների ներկայացուցիչների շրջապատում՝ միջնադարից մինչև XX-րդ դարի սկիզբը հայերը հաճախ կրել են ընդօրինակված ոչ հայկական անուններ:

Այս օտար անձնանունների ծագմանը և ստուգաբանությանն անդրադարձել է Հ. Աճառյանը իր Հայոց անձնանունների բառարանում, բացի այդ, սույն հոդվածում մենք դիտարկել ենք նաև հայկական ձեռագրերի հիշատակարաններում և վիմական արձանագրություններում հանդիպող անձնանունները, մասնավորա-

¹ Տե՛ս Ա. Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1988, էջ 41-47:

պես, օգտագործել ենք Սեդրակ Բարխուդարյանի Դիվան հայ վիմագրության Վայոց Ձորին և Սյունիքին վերաբերող հաստորները²:

Ստորև ներկայացնում ենք արական և իգական անձնանունները և վերջիններիս ստուգաբանությունները: Ստուգաբանությունները մերն են, որոշ դեպքերում օգտվել ենք Հ. Աճառյանի բառարանից:

Արական անձնանուններ

Աբաս (արաբերեն է, պետք է լինի Աբբաս՝ «խստադեմ», ըստ արաբական ավանդության, առյուծի մականուններից մեկը), Աբուսահլ (արաբ. Սահլ՝ «հեշտ»՝ արբու՝ «հայր»), Աբդլմսեհ (արաբ.՝ Քրիստոսի «ստրուկ» կամ երկրպագող), Ազիզ (հաճախ հանդիպող անուն, արաբ. «հզոր», «թանկագին»), Աթապէկ (թրք. Աթա՝ «հայր», պրս. բեգ՝ «պարոն», «տեր»), Ամիրաթ (արաբ. «ամիրա», «տիրակալ, հրամանատար»), Ամիրբէկ, Ամիրխան (արաբ. «ամիրա» և պարսկ. կամ մոնղոլական լեզուներից սերող խան բառից՝ «տիրակալ» նաև ազնվական կոչում), Ասադ (արաբ. «առյուծ»), Ասլան (թրք. «առյուծ»), Ասլատ (արաբ. ասլի՝ «ազնվական ծագման» և պրսկ.՝ զադ՝ «որդի»), Արմանշահ (պրս.՝ «հայերի արքա»), Բաբաջան (թրք. «հայր» և պրսկ.՝ ջան՝ «հոգի»), Բաշարաթ (արաբ. «ավետիս»), Բարաթ (արաբ. «օրհնություն» արմատից), Բարաթշահ (արաբ. «օրհնություն» և պրս.՝ «շահ»), Գուլարխան (թրք.«ծաղիկներ» պարսկերենից փոխառնված «գուլ»՝ «ծաղիկ» բառից և «խան»), Գուլբէկ (պրսկ. «ծաղիկ» և բեկ տիտղոսը) Դամուր (թրք. «երկաթ»), Դարվիշ(պրսկ. դերվիշ՝ «մուսուլմանական սուֆիական եղբայրության անդամ»), Դովլաթպէկ (արաբ. դաուլա՝ «ուժ», «իշխանություն»), Եադյուբ (արաբ. Հակոբ), Եադութ (արաբ. յակուտ՝ «թանկարժեք քար»), Եռլակիրմադ (թրք. հավանաբար «ճամփա կարճացնող»), Եռլպէ (նշանակությունը պարզ չէ), Ետիկար (թրք. «նվեր»), Թաթար, (նաև իգական անուն է), Թարէթ (արաբ. «լուսաբացի աստղ»), Թաւաքալ (արաբ. «Աստծու վրա ապավինող»), Իմրան (արաբ. «առաքինի մարդ»), Հալիֆ (արաբերեն խալիֆ՝ «խալիֆա», «փոխանորդ» բառի թուրքերեն տարբերակը), Հօրմզ (պրսկ. Որմիզդն? Տ.Մ.), Մրվան (արաբ.մարուան՝ «կվարց», հավանաբար «փայլփլուն» բառից), Նասիպ (արաբ. նասիբ՝ «ազնվական»), Շահմելիք, Սուլթան (արաբ. «սուլթան», «աշխարհիկ իշխանություն ունեցող անձ»),

² Աձնանունները բերված են ըստ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450թթ.), կազմեց՝ Լ.Խաչիկյան, Երևան, 1955, էջ 665-800, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ մասն երկրորդ (1451-1480թթ.), կազմեց՝ Լ.Խաչիկյան, Երևան, 1958, էջ 453-587, Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1601-1620թթ.), հատոր Ա, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 764-811, Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիս, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, ՀՄՍՌ ԳԱ, Երևան, 1960, էջ 229-237, Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց Ձորի, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, ՀՄՍՌ ԳԱ, Երևան, 1967, էջ 407-420:

Աղոլ (թրք. «որդի», օգտագործվել թե՛ որպես արական թե՛ իգական անձանուն), Փոլատ (պրսկ. «պողպատ»), Քարամ (արաբ. «մեծահոգի»), Քարիմ (արաբ. «մեծահոգի», «լուսավոր», «թանկարժեք»), Ֆախրադին (պետք է լինի Ֆախրադդին, արաբ. «հավատքիփառքը»), Օգբէկ (թրք. հավանաբար «նետ» և «բեկ» բառերից), Փիրդուլի (պրսկ. «փիր» գրադաշտականությունից եկած էզր, նաև սուֆիական օրդենի անդամ, «սուրբ» և թրք. դուլի «ստրուկ»):

Իգական անձանուններ

Արուզ (արաբ. «հարս»), Դոփ (Դարբ) (նշանակությունն անհայտ է), Խաթուն (մոնղ/թրք. «տիկին»), Թաճեր(պրսկ. «թագ» բառից), Թուղթան(հավանաբար պրսկ. «խնդրանք» բառից), Խոշաք (պրսկ. «հաճելի», «դուրեկան»), Ազիզ-Խաթուն (արաբ.՝ «հզոր», «թանկագին» և մոնղ/թրք. «տիկին»), Ալամ-Խաթուն (արաբ.՝ «աշխարհ» և մոնղ/թրք. «տիկին»), Ահլի-Խաթուն (արաբ. «կին» և մոնղ.թրք. «տիկին»), Ահլի-Մելիք(արաբ. «կին» և արաբ. «իշխան»), Բուլդան (ըստ Աճառյանի ծագում է չաղաթայերեն բուլդան «կզնաքիս» բառից³), Գօզալ (թրք. «զեղեցիկ»), Գուլիշայ (պրսկ. վարդ և «շահ»), Գուլստան (պրսկ. «վարդանոց»), Գուլփաշայ (պրսկ. «վարդ» և թրք. «փաշա»), Գուլգուլ (պրսկ. «վարդ» բառից), Գուլ-Մելիք / Գուլմելեք (պրսկ. «վարդ» և արաբ. «տիրակալ»), Գուլշատ(պրսկ. «վարդ» և պրսկ. «ուրախ» բառից), Դինար(արաբ. դինար դրամական միավոր բառից), Դուխտար (պրսկ. «դուստր»), Դուխտար-Մելիք(պրսկ. «դուստր» և արաբ. «տիրակալ»), Դունիա-Մալիք(արաբ. «աշխարհ» և ար. «տիրակալ»), Դավլաթ / Դովլաթ (արաբ. «ուժ», «հզորություն»), Դիքուշատ (ըստ Հ.Աճառյանի՝ պրսկ. «սրտաբաց»⁴), Եագդութ (արաբ. սուքութ «լուրջություն» (?) բառից, Ըռադան (նշանակությունն անհայտ է), Թան-Խաթուն (թրք. «արշալույս» և մոնղ/թրք. «տիկին»), Թան-Մելիք(թրք. «արշալույս» և արաբ. «տիրակալ»), Թավրեզ և Թավրեզ-Մելիք (հավանաբար՝ Իրանի Թավրիզ քաղաք բառից և արաբ. «տիրակալ»), Թենեք (հավանաբար թրք. «արշալույս» բառից), Թելուն (նշանակությունն անհայտ է), Թուխթանգ (հավանաբար պրսկ. «խնդրանք» բառից), Թուրվանդա (պրսկ. «առաջին պտուղ, նուբար»), Իթլիշահ(թրք. «մտոտ»), Իլխաթուն (թրք. «ցեղ» և մոնղ / թրք. «տիկին»), Իմչա-Խաթուն (նշանակությունն անհայտ է), Լի-Հաթուն («Լի» բառի նշանակությունն անհայտ է, «հաթուն»-ը «խաթունի» թուրքերեն ձևն է), Խաթունշահ (մոնղ/թրք. «տիկին» և պրսկ. «շահ»), Խանգադայ (մոնղ.լեզուներ խան՝ «տիրակալ» նաև ազնվական կոչում և պրսկ. զադ «որդի»), Խեր-Խաթուն(արաբ. «բարիք» և մոնղ.լեզուներ խան՝ «տիրակալ» նաև ազնվական կոչում), Խութլու (չաղաթայերեն «երջանիկ»⁵),

³Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Ա., Ե., 1942, էջ 419:

⁴Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Բ., Ե., 1944, էջ 69:

⁵Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Բ., Ե., 1944, էջ 555:

Խութու-Խաթուն (չաղաթայերեն «երջանիկ»⁶ և մոնղոթք. «տիկին»), Խութու-Մելիք (չաղաթայերեն «երջանիկ» և արաբ. «տիրակալ»), Խուրմա-Խաթուն (պրսկ. «արմավ» և մոնղոթք. «տիկին»), Խամաթ (արաբ. «բախտ», «ղամաթ»), Մամա-Խաթուն (ըստ Աճառյանի հայերեն «մայր» բառից է և մոնղոթք. «տիկին»), Մինա-Խաթուն (պրսկ. «նախշ» և մոնղոթք. «տիկին»), Մլուք (հավանաբար արաբ. «արքաներ» բառից⁷), Նազ-Խաթուն (պրսկ. «նազ» և մոնղոթք. «տիկին»), Նարինջ (պրսկ. «նարինջ»), Նառուզ-Խաթուն (պրսկ. «նուրուզ տոնը» և մոնղոթք. «տիկին»), Նուկզար-Խաթուն (Նուզգարի վրացական արական անձանունից է, այն վարկածը, որ այս անձնանունը ծագել է պրսկ. նուր «լույս» և զար «ոսկի» բառերից մեզ կասկածելի է թվում), Նսեֆ-Խաթուն (ըստ Աճառյանի ծագել է արաբ. ինսաֆ «խիղճ» անունից⁸ և մոնղոթք. «տիկին»), Շամշա-Խաթուն (հավանաբար արաբ. շամս «արև» բառից և մոնղոթք. «տիկին»), Շահփաշայ (պրսկ. «շահ» և թրք. «փաշա»), Ուլու-Խաթուն (թրք. «մեծ», «երևելի» և մոնղոթք. «տիկին»), Ջհան (պրսկ. ջահան «աշխարհ» բառից), Սիրայ(ըստ Աճառյանի «կրճատ ձևն է Սիրա- երկվանկով սկսվող մի անվան, ինչպես, օրինակ Սիրամարգ, Սիրանույշ»⁹), Սիֆաթ (հավանաբար արաբ. սիֆա «առանձնահատկություն», «հատկանիշ», «որակ» բառից), Սուլթան (արաբ. «սուլթան», «աշխարհիկ իշխանություն ունեցող անձ»), Սուլթան-Խաթուն (արաբ. «սուլթան», «աշխարհիկ իշխանություն ունեցող անձ» և մոնղոթք. «տիկին»), Սուլթան-Մելիք (արաբ. «սուլթան», «աշխարհիկ իշխանություն ունեցող անձ» և արաբ. «տիրակալ»), Սուրաթ(արաբ. «պատկեր»), Փաշա (թրք. ազնվական, կառավարչական և ռազմական տիտղոս, կոչում), Քարամ-Խաթուն (արաբ. «մեծահոգի» և մոնղոթք. «տիկին»), Քուլափ-Խաթուն (հավանաբար պրսկ. «վարդաջուր» բառից), Օրդու-Մելեք (թրք. բանակ և մոնղոթք. «տիկին»):

Միջնադարում և հատկապես ուշ միջնադարում, ինչպես կարելի է դիտարկել, հայկական անձնանուններին կցվում էին «շահ», «փաշա», «խաթուն», «մալիք», «բեկ, բեկ, պեկ» բառերը, որոնք միաժամանակ կարող էին պատվավոր տիտղոսներ լինել, օրինակ՝ «խաթունը», որ նշանակում է «տիկին», օգտագործվում էր իզական անունների հետ, իսկ «շահ», «փաշա», «մելիք» կարող էին օգտագործվել թե՛ արական և թե՛ իզական անունների հետ, օրինակ՝ Ազիզ-Խաթուն, Ալամ-Խաթուն (իզական), Մուխթարամշահ (արաբ. «հարգանք վայելող»՝ արական), Գուլ-Մելիք (իզական), Մալի-փաշա (իզական), Ջան-փաշա/Ջանփաշա (արական), Փաշայ (արական), Շախփաշա (արական) և այլն:

Հայկական անունների շարքում կան, մասնավորապես, իզական աձնանուններ, որոնք նույնպես փոխառնվել են պարսկերենից կամ արաբերենից, սակայն

⁶ Նույն տեղում:

⁷ Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Գ., Ե., 1946, էջ 364:

⁸ Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Դ., Ե., 1948, էջ 98-99:

⁹ Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Դ., Ե., 1948, էջ 530:

այնքան են տարածված հայերի շրջանում, որ արդեն ընկալվում են որպես հայկական անձնանուններ, օրինակ՝ Գոհար, Գյուլնարա, Մեղա, Նաիրա, Արուս և այլն: Տղամարդկանց շրջանում այսպիսի անուններն ավելի քիչ են, օրինակ՝ Մելիք, Ղարիբ, Աթաբեկ, Ադիբեկ և այլն:

Արաբերենից, պարսկերենից և թուրքերենից ներթափանցած անունների մեծ մասը այլևս չի օգտագործվում մեզանում, սակայն, դրանց կարելի է հանդիպել տարածված հայկական ազգանունների հիմքում, օրինակ՝ Մելիքյան, Ասլանյան, Բեգլարյան, Աղազարյան, Ազիզյան, Ազիզբեկյան, Ասրյան, Շահնազարյան, Շահինյան, Խանզադյան, Ղահրամանյան, Մելիքսեթյան, Բարխուդարյան, Մուրադյան, Ալթունյան, Թավաքոյան և այլն:

Եթե արաբական տիրապետության շրջանում հայերի կողմից, բանակա-նաբար, ընդօրինակվել են միայն արաբական ծագման անձնանուններ, օրինակ՝ Հասան (արաբերեն՝ «լավ»), Աբբաս (արաբերեն՝ խստադեմ, ըստ արաբական ավանդության, առյուցի մականուններից մեկը), Աբլղարիբ, Մլքե, Մլեհ, Մրվան, ապա ուշ միջնադարում հայերը, որ արդեն ստիպված էին գոյատևել մի շարք ազգությունների պատկանող մուսուլման նվաճողների անմիջական հարևանությամբ և նրանց տիրապետության ներքո, ավելի շատ փոխառում էին պարսկե-րենից, թուրքական և մոնղոլական լեզուներից սերող անձնանուններ:

Ենթադրելի է, որ հայերը, միջնադարում լինելով հավատացյալ քրիստոնյաներ, պետք է, որ չընդօրինակեին անձնանուններ, որոնք քրիստոնյայի տեսանկյունից սերտորեն առնչվում են սուննի կամ շիա իսլամի հետ, օրինակ՝ Մուհամմեդ, Ալի, Հուսեյն, Ահմադ կամ Ահմեդ, Աբդուռահման, Աբդուլլահ/Աբդուլ: Մա ճիշտ է, որոշ բացառություններով: Մասնավորապես, Ալի անձնանունը հայոց մեջ հանդիպում է մեկ անգամ¹⁰, կան Ալի-Բեկ¹¹ (հայ իշխան), Ամիր-Ալի¹² ձևերը: Օգտագործվել են նաև Աբդըլբարիմ, Աբդիսադամ, Ավտուլ (XV-րդ դար, հավանաբար Աբդուլ կամ Աբդուլլա անվան աղավաղումն է), կա անգամ Նաջմադին (արաբ. պետք է լինի Նաջմ ադ-Դին «հավատքի կամ կոնի աստղ»), սակայն, մեր կարծիքով, իսլամի մասին սակավ գիտելիքների պատճառով դրանք հայոց շրջանում հավանաբար չեն ընկալվել որպես իսլամը խորհրդանշող անձնանուններ:

Հայերի մոտ մինչ այժմ տարածված է նաև մի սովորույթ, համաձայն որի, երբ ընտանիքում երեխաներ են մահանում, հաջորդ երեխայի անունը մուսուլմանական, կամ «թուրքի» են դնում, որ երեխան կենսունակ լինի, երկար կյանք ունենա: Այսպիսի անուններից են Սաբիր, Վազիֆ, Ռաշիդ և այլն, սակայն ոչ Մուհամմեդ, Ալի կամ Աբդուլլահ:

¹⁰Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Ե., 1942, էջ. 265:

¹¹Լ. Խաչիկյան, ԺԵ դարի..., էջ 668:

¹²Լ. Խաչիկյան, ԺԵ դարի..., էջ 670:

Հարց է ծագում, արդյո՞ք հայերի կողմից ընդօրինակված անունները նույն այն անուններն են, որ օգտագործվել են հարևանությամբ բնակություն հաստատած մուսուլման տարրի կողմից: Եվ այո, և ոչ: Կան անուններ, որոնք ընդհանուր են. դրանք կրել են և կրում են՝ թե՛ հայերը, թե՛ պարսիկները, թուրքերը, կամ ադրբեջանցիները (ովքեր լինելով շիա մուսուլմաններ մշտապես գտնվել են իրանական մշակույթի հզոր ազդեցության տակ) օրինակ՝ Գուլնարա, Դիշատ («ուրախասիրթ»), Սուլթան, Օրդու (ժամանակակից թուրքերենում «բանակ», կավարկած, որ բառը նշանակում է «հովիվ»), Քարամ («առատաձեռնություն», «մեծահոգություն»), սակայն, հայերի, ի տարբերություն մուսուլմանների, ինչպես նշեցինք, չեն կրել իսլամի հետ խիստ առնչվող անուններ, ինչպես, օրինակ Մուհամմեդ, Ֆաթիմա, Այշա, Աբու Բաքր, Հուսեյն/Հոսեյն, Մահդի և այլն:

Մուսուլմանների՝ հատկապես արաբների շրջանում միշտ էլ պատվավոր է եղել կոչվել զավակի անունով՝ «այսինչի հայր»՝ տղամարդու համար, կամ «այսինչի մայր»՝ կնոջ համար, օրինակ՝ Աբու Մուհամմադ («Մուհամմադ հայր»), Աբու Ալի («Ալիի հայր»), Ումմ Մուհամմադ («Մուհամմադի մայր»), Ումմ Ալի («Ալիի մայր»): Ի տարբերություն հայերի կողմից ընդօրինակված անձնանունների, մուսուլմանական անունները կարող են բարդ լինել և կազմված լինել մի քանի անուններից և դրան գումարվել է անձի *նիսբան* (ծագման վայրը, կամ ցեղային պատկանելություն ցույց տվող ածականը) օրինակ՝ Աբու ՚Լ-Բարաքաթ Սալիհ իբն Աբու Կասիմ կամ Ալամ ալ-դին Սանջար իբն Աբդառռահիմ և կամ Աբու Ջաֆար Մուհամմադ իբն Ջարիր իբն Յազիդ ալ-Տաբարի (հանրահայտ պատմիչ ալ-Թաբարին՝ (ծագում է Իրանի Թաբարիստան շրջանից) կամ Աբու Ջայդ իբն Սահլ Բալխի (Աֆղանստանի Բալխ շրջանից):

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ հայերի կողմից նման բազմաքանակ մուսուլմանական անձնանունների փոխառության գլխավոր պատճառը երկարատև մուսուլմանական տիրապետության տակ գտնվելն էր: Հավանաբար հայերը փորձել են ընկալելի դարձնելով իրենց անունները վերջիններիս համար՝ հնարավորինս կանխել մուսուլմանների կրոնական անհանդուրժողականությունն իրենց նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

- Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Ա., Երևան, 1942:
- Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Բ., Երևան, 1944:
- Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Գ., Երևան, 1946:
- Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Դ., Երևան, 1948:
- Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1988:

- Գ.Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981:
- ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450թթ.), կազմեց՝ Լ.Խաչիկյան, Երևան, 1955:
- ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ մասն երկրորդ (1451-1480թթ.), կազմեց՝ Լ.Խաչիկյան, Երևան, 1958:
- Հայ Ժողովրդի Պատմություն, Հ. 4., Խմբ. կոլ.՝ Աղայան Է. Բ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Ս., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Ս., Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ.: ՀՍՍՀ ԳԱ Պատմության ին-տ. Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972
- Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1601-1620թթ.), հատոր Ա, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974:
- Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիս, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1960:
- Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց Ձորի, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1967, էջ 407-420:
- Միքայելյան Ս., Կանայք Հայաստանի Հանրապետության տարածքի արաբատառ արձանագրություններում, «Կինը արևելքում» հոդվածների ժողովածու, պրակ 2, Երևան, 2023, էջ 167-181:
- А.Хачатрян, Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв., Выпуск I, Ереван, 1987.
- Khachatryan A., The Armenian Personal Names Borrowed from New Persian, Բանբեր հայագիտության, 2023 No.2 (32), pp. 175-189

Mikayelyan Tigran – Armenian Names of Muslim Origin in the Middle Ages. – After mass invasion of Muslims into Armenia and settling therein the Middle Ages and especially in Late Middle Ages, the Armenians found themselves living in proximity with Muslims. Now existing in the environment of Muslim migrants (Arabs, Persians, Turkic people, etc.), the Armenians started borrowing some of their personal names. If in the period of Arab conquest, the names were only of Arab origin (Hasan, Abbas, Abdigharib, Mlke, Mleh, Mrwan, etc.) later, during the period of Iranian and Turkic domination, the Armenians began borrowing the names of Persian, Turkic and even Mongol origin (some of the borrowed names still were of Arab origin as a large part of the non-Arab Muslims' names had Arabic roots). Examples of such feminine names taken by Armenians were Ahli-Melik, Bulghan, Gulpasha, Dinar, Dilkushat, Itlishah, Khutlu-Melik, Mama-Khatun, Tukhtang, Ulu-Khatun, Sifat, Sultan-Khatun, Pasha, Surat, Ordu-Melek, etc. Some of masculine names were, for instance, Aziz, Atapēk, Amirkhan, Asad, Barakshah, Damur, Dovlatpek, Eolakirmagh, Yetikar, Tarek, Tawakal, Hormz, Shahmelik, Awghul, Karam, Fakhradin, Armanshah, Ogbēk, Sultan, Najmaddin, Avtul, etc. As we can see, these second parts of the names or honorary titles like *khatun*, *shah*, *pasha*, *malik/melik*, *bek/bēk/pēk* were added to the personal names. While *khatun* was used for women, *shah*, *pasha*, *melik* could have been attached to both feminine and masculine names.

Most of the names borrowed from Muslim neighbors aren't in use by Armenians anymore, but they are met as part of the Armenian surnames (e.g. Azizyan, Aghazaryan, Asryan, Khanzadyan, Tavakolyan, Meliksetyan, etc.). Because Armenians are Christians it can be supposed that they should have avoided those Muslim names that strongly symbolized Sunni and Shiite Islam such as Muhammad/Mohammad, Ali, Husain/Hoseyn, Ahmad/Ahmed, Abdrahman, Abdulla, Fatima, Aisha, etc. This is true, with some minor exceptions (we meet Ali-bek (but not Ali) Amir-Ali, Avtul (should be corruption of Abdul), AbdalKarim, Abdusalam).

Until now the Armenians follow one interesting habit: when a child die in a family, the parents may name another newborn child with Muslim ("a Turk's") name such as Sabir, Rashid, Vagif, etc., but not Muhammad or Ahmad or other names underlining its connection with Islam. This is made to secure the child's long life.

Summarizing the author suggests that the main reason why Muslim names were borrowed by Armenians was a long Muslim domination, this also was an attempt to make themselves more perceptible by the neighboring Muslims and henceforth at the same time neutralizing their intolerance toward their Christian faith.

Keywords: Armenian, Personal Name, Muslim, Middle Ages, Borrowings.

Микаелян Тигран – Армянские имена мусульманского происхождения в средневековье. - Массовое вторжение представителей мусульманских народов в Армению и ее заселение ими началось после арабского завоевания в VIII веке и усилилось в средневековье и позднем средневековье. Теперь, живя в соседстве мигрантов-мусульман (арабов, персов, тюрок, и т. д.), армяне начали заимствовать у них мусульманские личные имена. Если в период арабского завоевания имена были только арабского происхождения (Хасан, Аббас, Абдугариб, Млке, Млех, Мрван и др.), то позднее, в период иранского и тюркского господства, армяне стали заимствовать имена персидского, тюркского или даже монгольского происхождения. Примеры таких женских имен - Ахли-Мелик, Булган, Гульпаша, Динар, Дилкушат, Итлишах, Хутлу-Мелик, Мама-Хатун, Тухтанг, Улу-Хатун, Сифат, Султан-Хатун, Паша, Сурат, Орду-Мелек. и т. д. Примеры мужских имен - Азиз, Атапек, Амирхан, Асад, Баракшах, Дамур, Довлатпек, Еолакирмаг, Йетикар, Тарек, Тавакал, Хормз, Шахмелик, Карам, Фахрадин, Арманшах, Огбек, Султан, Надждадин, Автул и т. д. Как видим, к личным именам часто добавлялись дополнительные имена *хатун*, *шах*, *паша*, *малик/мелик*, *бек/бек/беки* или же они были почетными титулами. В то время как *хатун* прибавлялось к женским именам, *шах*, *паша*, *мелик* могли использоваться как с женскими, так и с мужскими именами. Большинство имен, заимствованных у соседей-мусульман, больше не используются как личные имена армянами, но широко встречаются в армянских фамилиях (например, Азизян, Агазарян, Асрян, Ханзадян, Таваколян, Меликсетян и др.). Поскольку армяне христиане, то можно предположить, что они должны были избегать имен мусульманского происхождения, ярко символизирующих суннитский или шиитский ислам, таких как Мухаммад/Мохаммед, Али,

Хусейн/Хосейн, Ахмад/Ахмед, Абдрахман, Абдулла, Фатима, Аиша и т. д. Это верно, за некоторыми малыми исключениями (мы встречаем имена Али-бек (но не Али), Амира-Али, Автул (по всей видимости искажение имени Абдул), Абдулкарим, Абдисалам.

До сих пор среди армян практикуется интересная привычка: когда в семье умирает ребенок, родители могут назвать слудующего новорожденного ребенка мусульманским именем («именем турка»), такими как Сабир, Рашид, Вагиф и т. д., но не Мухаммадом, Ахмадом или подобными именами, явно подчеркивающие их связь с исламом. Это делается для того, что дать ребенку долгую жизнь.

Обобщая, автор предполагает, что главной причиной заимствования армянами мусульманских имен было долгое мусульманское доминирование, к тому же этим, армяне, по всей вероятности, имели целью сделать себя более воспринимаемыми в мусульманской среде и по возможности нейтрализовать нетерпимость соседей-мусульман к своей христианской вере.

Ключевые слова: Армянские, имена, мусульманский, средние века, заимствование.

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԻ (ՊԱՐԲԵՐԱՓՈՒԼ)

ԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

DOI: 10.54412/93055-2023-158

Մկրտչյան Գարիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՉԺՀ, Ֆոշան քաղաքի Դալիի միջազգային դպրոց.
mkrtchyangarik1983@gmail.com

Բանալի բառեր. միջին հայերեն, նախնյաց ռամկորեն, շրջանաբաժանում, պարբերափուլ, գավառական, ենթաշրջան, ժամանակագրություն:

Լեզուն նրանով խոսող ազգի՝ հասարակական որոշակի ինքնություն խմբավորման գոյություն է, որի լինելության կարևորագույն ցուցիչներից է ժամանակը և զբաղեցրած տարածքը: Հայերենի զարգացման միջին շրջանը, որի հայտնի է «միջին հայերեն» և «նախնեաց ռամկորեն» անվանումներով, հայերենի գրախոսակցական լեզվի զարգացման փուլերից է: Այն միջին դիրք է գրավում հնի ու նորի միջև:

Եթե միջին հայերենի այսպիսի բնութագրումը վիճարկման ենթակա չէ, ապա նրա ժամանակագրության վերաբերյալ չկա միասնական դիրքորոշում: Իմիջիայլոց, միջին հայերենի սահմանների տարածման հարցերի հստակեցումը ժամանակային և տարածքային կտրվածքում հայագիտության առաջնային հիմնախնդիրներից է: Սրանով պայմանավորված՝ սույն ուսումնասիրությունը նվիրված է միջին հայերենի պարբերափուլերի վերաբերյալ տարբեր ժամանակներում ի հայտ եկած իրարամերժ կարծիքներին ու դրանց առանձնահատկություններին:

Որևէ լեզվի, այդ թվում՝ հայերենի շրջանաբաժանման վերաբերյալ կայուն ու հաստատուն վերջնական շրջանաբաժանում չկա: Այն անընդհատ կարող է փոփոխվել՝ պայմանավորված լեզվական ու արտալեզվական նոր փաստերի ի հայտ գալով և հետազոտողների բացահայտումներով: Հայագիտության մեջ հայերենի շրջափուլերի մասին վերջին հետազոտությունը կատարել է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը: Նրա դասակարգումը ունի գիտական համարում, արդեն կես դարից ավելի է քննություն է բռնել, կիրառական մեծ գործածություն ունի և համարվում է եղած շրջանաբաժանումների մեջ կատարյալը՝ գիտականը: Մակայն Գ. Ջահուկյանն անձամբ է նշում, որ ոչ մի շրջանաբաժանում վերջնական ու բացառիկ չէ, և ժամանակի ընթացքում կարող են ի հայտ գալ նոր դիտարկումներ ու դասակարգումներ. «Գիտական շրջանաբաժանումը մեկընդմիջտ տրված բան չէ. Այն կարող է փոփոխվել ու լրացվել տվյալ բնագավառում նորանոր փաստերի կուտակման, գիտական նոր, ավելի ճիշտ տեսությունների առաջացման հետ միասին»¹:

¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969թ., էջ 25:

Միջին հայերենի շրջանաբաժանման և պարբերացման խնդիրները, ունենալով պատմահասարակական տարբեր հենքեր, քննարկման նյութ են դարձել տարբեր ժամանակներում, և դրանք դիտարժան են մինչ օրս: Միջին հայերենի պարբերափուլերի մասին տեսակետների խմնականում ներկայացվում են սուբյեկտիվ ու օբյեկտիվ, լեզվաբանական ու պատմահասարակական հայեցակետերով: Ըստ դրանց արժանահավաստության, իրարամերժության և հակասությունների՝ այդ տեսակետները ընդունված է համաել գիտական և ոչ գիտական:

Հայերենի զարգացման փուլերի հիմնախնդիրներով առաջինը զբաղվել են արևմտահայ և արևելահայ աշխարհաբարի ներկայացուցիչները՝ **Ա. Բագրատունին, Ղ. Հովնանյանը, Ա. Այտընյանը, Խ. Աբովյանը** և **Ս. Նազարյանը**¹, որոնց սկսած գործը հետագայում նոր հիմնավորումներով ընդլայնել են **Յոզեֆ Կարստը, Հր. Աճառյանը, Գ. Սևակը, Հ. Կուսիկյանը** և **Գ. Ջահուկյանը**:

Մխիթարյան միաբանության հայրերից խնդրի քննարկման հիմնադիրներն են **Արսեն Բագրատունին, Արսեն Այտընյանը** և **Ղևոնդ Հովնանյանը**:

Հայոց լեզվի պատմության շրջափուլերն աշխարհաբարականներն ի սկզբանե ներկայացրել են հայ գրականության զարգացմանը համընթաց: Դա պայմանավորված է եղել հայոց լեզվի պատմությունը հայ գրական լեզուների պատմության հետ նույնացնելու հանգամանքով: Կիրառվել են «համեմատական ծաղկման շրջան», «գրական ամլության և գրական լեզվի անկվածության շրջան» եզրույթները²: Լեզվի փոփոխությունն ընկալվել է գրաբարի աղավաղման պարզ գործընթաց: **Արսեն Բագրատունին** «*Հայերեն քերականություն ի պետ սզարգացելոց*» (Վենետիկ, 1852թ.) աշխատության մեջ մի այնպիսի դասակարգում է առաջարկում, համաձայն որի՝ հայոց լեզուն և հայ գրականությունն ունեն զարգացման *ոսկեդարյան, արծաթի, պղնձի, երկաթի, խեցիի* և այլ փուլեր: Լեզվի շրջանաբաժանման փորձերի այսպիսի բնութագրերը հետագայում հետադիմական են դիտվել և արժանացել քննադատության: Նրանցում բացակայում է օբյեկտիվությունը և լեզվի զարգացման բնական պատմականությունը:

Արսեն Այտընյանը հայոց լեզվի զարգացման խնդիրներին անդրադառնում է «*Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի*» (Վիեննա, 1866թ.) բացառիկ աշխատության մեջ: Հայ լեզվաբանության մեջ շրջադարձային հուն բացող այս աշխատությամբ Արսեն Այտընյանն առաջինն է գիտական շրջանառության մեջ դնում «գրաբար» և «աշխարհաբար» եզրույթները՝ դրանց

¹ Արևելահայ աշխարհաբարի տեսաբանների՝ Խ. Աբովյանի և Ստ. Նազարյանի խնդրո վերաբերող դիտարկումները հրապարակախոսական բնույթ ունեն և վերաբերում են հին և նոր հայերենների գրաբարի և աշխարհաբարի տարանջատման հիմնախնդիրներին: Այս առումով հրապարակախոսական բացառիկ արժեք ունեն Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպի «Յառաջաբանը» և «Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպատակների մասին» հրապարակախոսությունը (Խ. Աբովյան, Երկեր, Ե., 1984), Ս. Նազարյանի «Հանդես նոր հայախոսության» (Ս, Բ մասեր, Մոսկվա, 1857) աշխատության աշխարհաբարին նվիրված հրապարակախոսությունները:

² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 10-11:

հատկացնելով որոշակի ընդգծված գործածության տիրույթ: Հայոց լեզվի գրավոր պատմության բոլոր փուլերում մշակված գրական լեզուն, ըստ Ա. Այտընյանի, գրաբարն է, որից անջատ զարգացել է խոսակցական հայերենը՝ աշխարհաբարը: Ա. Այտընյանը էտալոնային «գրաբարին» որպես հակադրություն կիրառում է «աշխարհաբար», «ռամկօրէն», «գավառականներ» եզրույթները: «Գավառականները» առանձին տարածքային միավորներն են հանդիսանում, որոնք, ի դեպ, խոսակցական տարբեակ կարող են ունենալ կամ չունենալ, իսկ «աշխարհաբարը» և «ռամկօրէնը» գրական լեզվի, Ա. Այտընյանի տերմինավորմամբ՝ «գրաբարի» նույնաբնույթ խոսակցականներն են, որոնք, ըստ նրա, աստիճանաբարներ թափանցում են գրական լեզու և մատնանշում հետագա գրական լեզվի զարգացման ընթացքը: Այս համատեքստում «գրաբար» և «աշխարհաբար» եզրույթները, կարծեք թե, համարժեք միավորներ են հանդիսանում՝ դառնալով հայերենի տարբեր ժամանակների գրական առանձին տարբերակների տերմինային վերացարկումները: Գրական և խոսակցական լեզուների այսպիսի ընկալմամբ Ա. Այտընյանը կատարել է հայոց լեզվի պատմության՝ իր գիտական արդիականությունը մինչ օրս չկորցրած շրջանաբաժանում:

Հայերենի պարբերացման համար նա զանազանում է «գրաբար» (4-րդ և 5-րդ դդ.), «միջին դարեր» (6-ից 10-րդ դդ.), «ստորին դարեր» (11-ից 14-րդ դդ.) և «նոր ժամանակներ» (15-ից 19-րդ դդ.): Ա. Այտընյանի տարբերակած այս փուլերը ցույց են տալիս գրական ու խոսակցական հայերենների զարգացման ընթացքը: Մեզ հետաքրքրող միջին հայերենը, որպես լեզվական որակ, Ա. Այտընյանի տերմինավորմամբ «կերպավորեալ աշխարհաբար հայերենը» գործող լեզու էր արդեն 8-ից 10-րդ դարերում՝ ներկայանալով որպես «միջին դարեր» ժամանակային ընդգրկման երկրորդ էտապ, իսկ գրաբարը՝ արդեն «մեռեալ լեզու» էր: 11-ից 14-րդ դարերի համար կիրառած այտընյանական «ստորին» եզրույթը, կարծում ենք, պայմանավորված է այդ դարերում հայ գրականության զարգացման միտումներով՝ վայրէջքներով ու վերելքներով, որ Մխիթարյանների բանասիրական տերմինաբանության մեջ ներկայացվում էին «խեցիի դար», «երկաթի դար» ստորակարգայի նոր ակումներով: Հենց այս դարերում է, որ, ըստ Ա. Այտընյանի, նոր հայերենը հնից առանձնանում է և ստեղծվում է մատենագրություն «նախնեաց ռամկօրէն» և «աշխարհաբար» հայերեններով, իսկ գրաբարը շարունակում էր մնալ «գիտնոց» և «եկեղեցականաց» լեզուն³: Այս շրջանի համար նրա կիրառած եզրույթները հայտաբերում են տարբերություններ: Պարզ չեն դառնում նրա կիրառած «նախնեաց ռամկօրէն» և «աշխարհաբար» եզրույթների սահմանները: Այս առումով կարող ենք կատարել սույլ ենթադրություններ. «նախնեաց ռամկօրէնը» միջին գրական հայերենն է, իսկ «աշխարհաբարը» միջին խոսակցական հայերենը: Վիճարկման ենթակա չէ այն, որ

³ Ա. Այտընեան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866., էջ 146-161:

Ա. Այտրնյանի կատարած հայոց լեզվի պատմության շրջանաբաժանումը շրջադարձային է հայագիտության մեջ: Նա հստակ տարբերակում է գրական ու խոսակցական հայերենները, բայց նրանց միջև ճշգրիտ ժամանակային սահմաններ չի դնում: Ըստ ամենայնի, դրան խոչընդոտում են նրա կիրառած գիտական եզրույթների անհամակարգվածությունը և անհստակությունը:

Ղ. Հովնանյանը հայոց լեզվի պատմության պարբերացման խնդիրներին անդրադառնալիս հիմնվում է հայ մատենագրության հարուստ տվյալների վրա: Նրա դասակարգումը, ըստ էության, համակցվում է հայ գրականության զարգացման ընթացքին ու փուլերին: Ղ. Հովնանյանի տերմինավորմամբ՝ առանձնացվում է «միջին ճիւղի հայ գրականութիւն», որը «մեր հին (գրաբար) եւ նոր (արդի) լեզուին միջին օղակը կը կազմէ, բնական անցնք է միոյն առ միւսն»⁴: Միջին դարերի մատենագիտությունը նա բնորոշում է որպէս «ռամկօրէն» կամ «ռամկախառն» բարբառով ստեղծված «ռամկօրէն մատենագրութիւն»: Ղ. Յովնանյանը գրական և խոսակցական հայերենները տարբերակելիս ընդգծում է գրական հայերենի հիմքում խոսակցական հայերենի ընկած լինելը, որի համար կիրառում է «նախնեաց ռամկօրէն բարբառ» կամ «նախնեաց ռամկօրէն հայերէն» եզրույթները: Ըստ հայագետի՝ «ռամկօրէնի» կամ «գաւառականների» հետքերը տեսանելի են 7-րդ դարից սկսած⁵: Աստիճանաբար ավելի լայն գործածություններ ստացող հենց այդ «ռամկական բարբառով» են ամբողջապէս ստեղծվում ու թարգմանվում 12-րդ դարից մինչև 16-րդ դարի ստեղծագործությունները⁶:

Ղ. Հովնանյանը, այսպիսի ժամանակային սահմանագատում կատարելով, մոտավոր ակնարկում է, որ միջին շրջանի հայերենը հենց այս շրջանում է գրախոսակցական համընդհանուր համակարգ եղել: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, ինչպէս կտեսնենք, նույնպէս բուն միջին հայերենի տիրապետման սկիզբը դնում է 12-րդ դարում, որը համընկնում է Ղ. Հովնանյանի անհամակարգ դասակարգմանը: Ղ. Հովնանյանը միջին հայերենի ժամանակագրության մասին գրում է. «...այսու կարող ենք ցրել այն ոչ սակաւ մտաց մէջ արմատացեալ կարծիքն՝ թէ նախնեաց ռամկօրէնն յառաջեկած է պարզապէս գրաբարէն, որ յընթացս դարուց ի բերան ժողովրդեան ապականելով հասած է յայն վիճակ՝ յոր կը գտնենք մոտ ի վախճան ԺԲ դարուն»⁷: Նկատառելով, որ «յընթացս դարուց» ժամանակային ընդգրկումը վերաբերում է 5-րդ դարից հետո ընկած ժամանակահատվածին, նա զարգացնում է այն մտայնությունը, որ միջին հայերենի ժամանակագրությունը գրական լեզվի տեսքով իր կատարելությանն է հասել 12-րդ դարում, որից անկախ

⁴ Ղ. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, մասն Ա, Վիեաննա, 1987, էջ 47:

⁵ Ղ. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, էջ 12:

⁶ Ղ. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, էջ 48:

⁷ Ղ. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, էջ 1:

խոսակցականը, որպես լեզվական որակ, ավելի վաղ է գործել: Ղ. Հովնանյանն այդ խոսակցականի համար որևէ ստույգ ժամանակ չի նշում:

Օտարազգի միակ հայագետը գերմանացի **Յոզեֆ Կարստն** է: Նա միջին հայերենի գիտական ուսումնասիրության հիմնադիրն է «*Գիլիկյան հայերենի պատմական քերականություն*» (Historische Grammatik Kilikisch - Armenischen, Strasburg, 1901թ.) արժեքավոր աշխատությամբ: Ըստ նրա, միջին հայերենի շրջանն ընդգրկում է «մոտավորապես Ժ դարից մինչև ԺԵ դարը»⁸: Միջին հայերենի ժամանակային ընդգրկման շուրջ Յ. Կարստը ծավալուն վերլուծություններ չի կատարում և, ինչպես երևում է նրա լեզվաբանական աշխարհայացքից, նա գրավոր հուշարձանների տրամադրած փաստացի տվյալներով է տարբերակում միջին հայերենի ժամանակաշրջանը՝ վկայակոչելով հետևյալ հեղինակներին, ինչպիսիք են՝ **Մխիթար Հեթանոս** «*Ջերմանց Մխիթարությունը*» (1184թ.), «*Գիրք վաստակոց*» (ԺԳդ.), *Ասորահռոմեական դատաստանագիրքը* (ԺԳդ.), **Սմբատի** «*Ժամանակագրություն*» (ԺԳդ.) և «*Անսիզ Անտիոքայ*» (ԺԳդ.) աշխատությունները, **Մխիթար Գոշի** «*Դատաստանագիրքը*» (ԺԳդ.) և այլ արժեքավոր աշխատություններ: Հատկանշական է, որ Յ. Կարստի ընտրյալ հեղինակները հենց այն շրջանի ներկայացուցիչներ են, երբ միջին հայերենն ամբողջապես կազմավորվել էր և իր՝ որպես գրական լեզվի ծաղկման բուն ընթացքի մեջ էր: Յ. Կարստը գրում է. «Ճիշտ է, դասական հայերենը Ժ դարից շատ առաջ էր դադարել կենդանի լեզու լինելուց, բայց այն հաստատել էր իրեն որպես ընդհանուր, ավանդությամբ սրբագործված մի գրական լեզու, նաև որպես հայ ազգի ժառանգություն»⁹: Ըստ Յ. Կարստի, հին հայերենին հաջորդող նոր լեզվավիճակը, որը ստանում է «միջին հայերեն» անվանումը, որպես լեզվական որակ ավելի վաղ է ձևավորվել: Այդ սահմանը դնում է մոտավորապես 10-րդ դարը: Յ. Կարստը «ժողովրդի բերանում ապրող ժամանակակից լեզվի» «ժողովրդական գրականության» մեջ արտացոլվելու դարաշրջանի սահմանագիծը տեսնում է 12-րդ դարում, որը, ինչպես կտեսնենք, հետագայում Գ. Ջահուկյանն իր գիտական շրջանաբաժանման մեջ համարում է միջին հայերենի նորմավորման առաջին բուն շրջանը: Յ. Կարստը, ըստ էության, չի կատարում հայերենի զարգացման միջին շրջանի գրական և խոսակցական հայերենների տարբերակում՝ այդ շրջանի գրավոր տեքստերի լեզուն համարելով ժամանակի խոսակցական հայերենի արտացոլանքը:

Յ. Կարստի շրջանաբաժանումը չնչին տարբերություններով համընկնում է խորհրդահայ լեզվաբանության ականավոր պատմահամեմատաբանների՝ **Հր. Աճառյանի** և **Ս. Ղազարյանի** կատարած շրջանաբաժանումներին: **Հր. Աճառյանը** խնդրին անդրադարձել է «*Հայոց լեզվի պատմության*» երկհատորյակում (1940թ.,

⁸ Յ. Կարստ, Գիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 13:

⁹ Յ. Կարստ, Գիլիկյան հայերենի պատմական քերականություն, էջ 12:

1951թ.), իսկ **Ս. Ղազարյանը**՝ «*Հայոց լեզվի պատմություն*» (1954թ.), «*Միջին հայերեն*» (գիրք Ա, 1960թ.), «*Հայոց գրական լեզվի պատմություն*» (հատոր Ա, 1961թ.):

Հր. Աճառյանի ուսումնասիրություններում առաջին անգամ փորձ է արվում հակադրություն դնել հայերենի զարգացման միջին շրջանի գրական և խոսակցական տարբերակների միջև: Սա արդեն պետք է համարել մեծագույն ներդրում: Հր. Աճառյանը, որը միջին հայերեն պարբերափուլերի համար որոշակի շրջանաբաժանում չի կատարել, փաստում է, որ «գրական և ժողովրդական լեզվի տարբերությունը մեծ չափերի է հասնում ԺԱ դարից հետո, որ զուգադիպում է թրքական արշավանքներին և տիրապետության և միևնույն ժամանակ հայ պետական կյանքի քայքայմանը Հայաստանում»¹⁰: Գրական լեզվի՝ («գրաբար») խոսակցական («գոեհիկ, մթին լեզու, գեղջուկ բան, ռամկօրէն, սովորական խօսք, աշխարհական խօսք, աշխարհաբար») լեզվից աստիճանաբար աճող տարբերությունը Հր. Աճառյանը պայմանավորում է թուրքերենի ազդեցությամբ: Սա, պետք է նկատել, այնքան էլ ճշգրիտ գնահատական չէ և հակասում է հայերենի զարգացման ներքին օրինաչափություններին և աճառյանական տերմինավորմամբ՝ բնական «բարեշրջությանը»: Հր. Աճառյանը նույնպես գործածում է այս շրջանի հայերենի համար «միջին հայերեն» եզրույթը՝ հավանաբար այն փոխառելով Յ. Կարստից, որի քերականությունից օգտվել է անձամբ:

Չնայած նրան, որ Հր. Աճառյանը 460թ. մինչև 11-րդ դարի հայերենը կոչում է «հետ մեսրոպյան հայերեն»՝ նրա համար առանձնացնելով առանձին էտապներ, միջին հայերենով ավանդված լեզվական առաջին նմուշ է համարում Վահրամ սպարապետի որդի Գրիգորի պատմական դեղագիրը՝ վկայված 1037 թվականից՝ ընդգծելով, որ հայտնաբերված հնագույն հիշատակարանը «պետք չէ բնավ հասկանալ միջին հայերեն բանավոր լեզուն, որի ծագումը շատ ավելի հին էր, քան գրավորը»¹¹: Ըստ Հր. Աճառյանի՝ գրականության մեջ արտացոլվող լեզունները «խոսված ժողովրդական լեզվից են սկիզբ առնում և բնականաբար միշտ ավելի նոր են, քան այդ խոսակցական լեզուն»: Էական է այն, որ Հր. Աճառյանը նույնպես միջին հայերենի խոսակցական տարբերակի ծագումը տեսնում է ավելի վաղ դարերում, որը, սակայն, գրավոր արտահայտություն ցայտուն դրսևորումներ չունի:

Հր. Աճառյանը 9-ից 10-րդ դարից հետո եկած շրջանը մոտավոր համարում է միջին հայերենի մատենագրական անկախ զարգացման և հայերենի բարբառների առաջացման շրջան: Կարծում ենք՝ նրա այս տեսակետը կարևոր գործոն է խոսակցական միջին հայերենի մոտավոր ժամանակը որոշելու համար: Համաձայն Հր. Աճառյանի՝ միջին հայերենով ավանդված գրականությունը մեծ զարկ է ստանում 12-րդ դարի երկրորդ կեսից, որի ներկայացուցիչներ են հանդիսանում

¹⁰ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2-րդ, Ե., 1951, էջ 230:

¹¹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 234:

Ն. Շնորհալին, Մխիթար Հերացին, Սմբատսպարապետը, Ներսես Լամբրոնացին, Վարդան Արևելցին, Գրիգոր կթ. Անավարզեցին, Հովհ. Երզնկացին և այլք: Ինչպես տեսնումենք, գրեթե բոլոր լեզվաբանների շրջանաբաժանումներում միջին հայերենի գրային-գրական արտահայտության բուն շրջան է համարվում 12-րդ դարը:

Հր. Աճառյանը հստակորեն չի սահմանազատում միջին հայերենը նոր հայերենից որևէ ժամանակակետով՝ աշխարհաբարի հնագույն նմուշ հիշատակելով Ա. Այտընյանի վկայակոչած Բջնիի 1358թ. արձանագրությունը: Սա պայմանավորված է նրանով, որ Հր. Աճառյանը միջին դարերի համար տարբերակում է զանազան «միջին հայերեններ» կամ «աշխարհաբարներ», որոնցից միայն մեկը՝ Կիլիկյան հայերենն է բարձրանում գրական լեզվի աստիճանի Կիլիկյան հայկական թագավորության գոյության ժամանակահատվածում: Մեծ լեզվաբանի այսպիսի մոտեցումից կարող ենք եզրակացնել, որ նրա ձգտումը՝ կատարել գրական և խոսակցական հայերենների հստակ տարբերակում, մնում է անկատար և չճշգրտված. Միջին դարերում բազմաթիվ բարբառների առկայությունը և դրանց վերաբերյալ լեզվական փաստերի բացակայությունը, ժամանակակից բարբառներից քաղված վերականգնումների բացակայությունը խոչընդոտել են այդ տարբերակումը կատարել: Հր. Աճառյանը լեզվի փոփոխություններում որակական, ներքին անցումների վրա չի կենտրոնանում: Սրա հետևանքով լեզվաբանը կենդանի խոսքը ստորադասել է գրավոր-գրական լեզվին և կարևորել է բացառապես գրական լեզվի մեջ ի հայտ եկած փոփոխությունները: Գ. Ջահուկյանը Հ. Աճառյանի դասակարգման մասին գրում է. «Հր. Աճառյանի գործածած անվանումները և լեզվի պատմության տարբեր փուլերի առանձնացման փորձը զգալի չափով առաջ են անցնում նախորդներից և համեմատաբար ճիշտ են արտացոլում իրերի վիճակը: Սակայն Աճառյանը լեզվի շրջանաբաժանման որոշակի սկզբունքներ չի տալիս, միաժամանակ, ինչպես տեսանք, նեղացնում է լեզվի պատմության առարկայի սահմանները և լեզվական պրոցեսի ըմբռնման հարցերում ունի որոշ խոցելի կողմեր»¹²:

Հր. Աճառյանի տեսություններից անմիջապես հետո հրապարակ են գալիս **Ս. Ղազարյանի** արժեքավոր դիտարկումները: Նա ևս հայերենի զարգացման միջին շրջանի համար կիրառում է «միջին հայերեն» եզրույթը: Խոսելով միջին հայերենի կազմավորման մասին՝ Ս. Ղազարյանը միջին հայերենի ժամանակաշրջան է համարում «10-ից 17-րդ դարերի հայ գրականությամբ ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին»¹³: Ըստ Ս. Ղազարյանի՝ հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմահասարակական տեղաշարժերը «նպաստում են նաև 10-րդ դարից արդեն անհասկանալի դարձած գրական հին լեզվի՝ գրաբարի ֆունկցիաների նեղացմանը և հասկանալի գրական լեզվի պա-

¹² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 16:

¹³ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 2006, էջ 204:

հանջ են դնում: Հայոց լեզվի գրական այդ նոր տարբերակը ձևավորվում է ժամանակի համաժողովրդական խոսակցական լեզվի հիման վրա և դառնալով պաշտոնական լեզու՝ սկսում է մշակվել ու կատարելագործվել...»¹⁴: Ս. Ղազարյանի այսպիսի գնահատականից դժվար չէ կռահել, որ նա միասնաբար է ներկայացում հայերենի գրական ու խոսակցական լեզուների ժամանակագրական պատմությունը: Նրա բոլոր աշխատություններում գրական և խոսակցական հայերենների միջև որոշակի սահմանազատում չկա. «միջին հայերեն» եզրույթով նա հասկացել է թե՛ ժամանակի գրական, թե՛ խոսակցական լեզուն՝ ուսումնասիրության շեշտը դնելով գրական լեզվի ամբարած փաստերի վրա¹⁵:

Այս համատեքստում ուշագրավ է, որ նա ընդլայնել է միջին հայերենի ժամանակ իրնդգրկումը՝ հին հայերենի (գործածում է «գրաբար» տերմինը) և միջին հայերենի սահմանագիծը համարելով 10-րդ դարը, իսկ միջին հայերենինը և աշխարհաբարինը՝ 17-րդ դարը: Հատկանշական է, որ նրա բոլոր աշխատություններում միջին հայերենի ժամանակագրության այս կառուցվածքը մնացել է անփոփոխ: Ըստ էության, Ս. Ղազարյանը, ընդունելով 10-րդ դարը որպես միջին հայերենի սկզբնավորման ժամանակաշրջան, ի րտեսակետը՝ միջին հայերենի կազմավորման գործընթացը, պայմանավորում է հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական գործընթացներով՝ արաբական տիրապետության վերացմամբ, հայ պետականության վերականգնմամբ և հայ ժողովրդի տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացմամբ: Համարելով, որ «գրաբարը 10-րդ դարում արդեն սովորովի լեզու էր»¹⁶, Ս. Ղազարյանը միջին հայերենն ընկալում է որպես գրախոսակցական միասնական որակ: Նկատենք, որ Գ. Ջահուկյանը քննադատում է Ս. Ղազարյանի՝ միջին հայերենի ժամանակագրական շրջանակների ընդլայնման այս մոտեցումը: Ըստ էության՝ Ս. Ղազարյանն ավելի լայն կտրվածքով է խնդիրը քննում՝ լեզվի զարգացումը և փոփոխությունը տեսնելով պատմական ու լեզվական գործընթացների մեջ: Մինչդեռ, Գ. Ջահուկյանը, ինչպես կտեսնենք, անում է գրեթե նույնը, բայց նեղացնում է պատմական գործոնի դերը, շեշտում է նախնառաջ լեզվականը՝ անտեսելով 10-րդ դարում Բագրատունների թագավորության գոյությունը հայոց միջնաշխարհում, և կարևորում է միայն Կիլիկիայում հայկական թագավորության գոյության հանգամանքը: Սախոսակցական լեզվի՝ գրականության և պաշտոնական գրագրության լեզու դառնալու ընդունելի ժամանակահատվածն է:

Ժամանակակից հայոց լեզվի տեսաբաններից **Գուրգեն Սևակը** հպանցիկորեն է անդրադառնում դիտարկվող խնդրին: Կատարելով նոր հայերենի պարբերափուլերի շրջանաբաժանումը՝ Գ. Սևակն իր կարևորագույն աշխատություններում («Հայոց լեզվի համառոտ պատմություն», Ե., 1948թ., «Ժամանակակից հայոց լեզվի

¹⁴ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 208:

¹⁵ Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Գիրք Առաջին, Ե., 1960, էջ 91-93:

¹⁶ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 200:

դասընթաց», Ե., 1955թ.) իր տեսակետն է արտահայտել նաև միջին հայերեն լեզվավիճակի վերաբերյալ: Միջին հայերենը, ըստ նրա, առաջացել է 9-ից 13-րդ դարերում, որի ի հայտ գալու նախադրյալներ են հանդիսանում աշխարհիկ կյանքի ուժեղացումը, թափ առնող առևտրաշրջանառությունը և աճող քաղաքային բնակչության հոգևոր սնունդի պահանջները: Գ. Սևակը գրել է. «Այդ պահանջին չի կարողանում տալ գրաբար գրականությամբ, որի ոչ միայն լեզուն մատչելի չէր նրան, այլև բովանդակությունը մոտ չէր նրա սրտին: Այդ ժամանակ առաջ է գալիս աշխարհիկ գրականություն միանգամայն նոր բովանդակությամբ (առակներ, տաղեր, սիրային բանաստեղծություններ, ինչպես նաև՝ գիտական-գործնական ձեռնարկներ): Այդ գրականությունը գրվում է նոր լեզվով, որ միջին հայերենը նդհանուր անունն է կրում...»¹⁷: Ինչպես տեսանելի է, Գ. Սևակն իր նախորդների պես դարձյալ միասնաբար է ներկայացնում գրական ու խոսակցական միջին հայերենները, բայց նրա առանձնացրած ժամանակային կտրվածքը՝ 9-ից 13-րդ դարերը, ուշագրավ է այնքանով, որ մոտավոր ընդգծվում են խոսակցական և գրական միջին հայերենների ի հայտ գալու սահմանները:

Երբ հրապարակ են գալիս խնդրո հարցում ակադեմիկոս **Գ. Ջահուկյանի** ուսումնասիրությունները, վերոնշյալ շրջանաբաժանումները, անխոս պահպանում են իրենց գիտականությունը, բայց դադարում են հույժ արդիական համարվելուց: Ինչպես նշել ենք, ընդունված է գիտական համարել Գ. Ջահուկյանի տեսությունը. Նա ի մի է բերել եղած բոլոր դասակարգումները, ամբողջացրել է դրանք և առաջ քաշել հայոց լեզվի պատմության դասակարգման նոր սկզբունքներ ու չափանիշներ:

Գ. Ջահուկյանի առաջադրած շրջանաբաժանումը մինչ օրս ընդունում են տեսական և կիրառական լեզվաբանության ներկայացուցիչները: 1956թ. լույս է տեսնում Գ. Ջահուկյանի «*Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը*» ծավալուն հոդվածը, որում ականավոր գիտնականը ներկայացնում է իր տեսության հանգուցային դրույթները՝ հետագայում դրանք հղկելով ու ամբողջացնելով «*Հայոց լեզվի զարգացման փուլերը*» (Դասախոսություն, ԵՊՀ հրատ., Ե., 1964թ.), «*Очерки по истории дописменного периода армянского языка*» (1967г.), «*Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*» (1969թ.), «*Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*» (1987թ.) աշխատություններում: Գ. Ջահուկյանը հայոց լեզվի պատմության շրջանաբաժանում կատարած վերջին հայագետն է:

Մեզ հետաքրքրող միջին հայերենի վերաբերյալ Գ. Ջահուկյանի դասակարգման արդյունքները հանգում են հետևյալին՝ «Միջին շրջան» ընդգրկում է 12-16-րդ դարերը: Այս շրջանում հանդես է գալիս միջին գրական հայերենը՝ խոսակցական լեզվի հիման վրա, բայց նրա կողքին գործառական որոշ տարբերակմամբ որպես գրական լեզու գործում է նաև գրաբարը. Միջին շրջանի համար առանձնացնում է

¹⁷Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 2009, էջ 51-52:

երկու ենթաշրջան. ա) վաղ միջին կամ կիլիկյան նորմավորման՝ 12-14-րդ դարեր, բ) ուշ միջին կամ աշխարհաբարացման՝ 15-16-րդ դարեր»¹⁸:

Կարևոր ենք նաև, որ Գ. Ջահուկյանը միջին հայերենի խնդրին անդրադարձել է նաև «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում լույս տեսած «Միջին հայերենը որպես լեզվական որակ» (1993թ., համար 1) հոդվածում, որում ամրագրում և անփոփոխ է թողնում միջին հայերենի վերաբերյալ արտահայտած տեսական ու գործնական նշանակության բոլոր տեսակետները:

Հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման խնդիրներին անդրադարձել է նաև ռուսաստանաբնակ լեզվաբան **Հ. Կուսիկյանը** «Գրական հայերենի պատմական շարահյուսության ուրվագծեր» աշխատության մեջ¹⁹՝ գրեթե վերահաստատելով Գ. Ջահուկյանի դասակարգման սկզբունքները և ժամանակային պարբերացումները:

Նկատենք, որ հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման խնդիրներով զբաղված բոլոր հայագետները ձգտել են վերջնական խոսք ասել, բայց բոլորն էլ ընկել են որոշակի ծայրահեղությունների մեջ: Հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանման համարում ունեցող Գ. Ջահուկյանի տեսությունն իր ժամանակի մեջ եղել է շրջադարձային, անմրցելի գիտական ձեռքբերում, սակայն, կարծում ենք, տերմինաբանական կիառություններում վերջնական արդյունք չի արտացոլում: Գ. Ջահուկյանը հայոց լեզվի պատմության «միջին շրջանում» նեղացնում է միջին հայերենի ժամանակագրական ընդգրկումը՝ ժամանակային որոշ շրջան տանելով հին շրջան, և ընդլայնում աշխարհաբարինը: Նա, ըստ էության, նույնպես հանգում է միջին գրախոսակցական տարբերակի միասնական թյուր ըմբռնմանը՝ մոտավոր հստակեցնելով հայոց լեզվի գրախոսակցական համակարգերի սահմանները: Գ. Ջահուկյանը միջին շրջանի սկզբնավորման խոսակցական տարբերակի եզրային ժամանակաշրջանը հատկացնում է հին շրջանին՝ այդ ենթաշրջանը կոչելով «նախամիջին շրջան» (ընդգրկում է 8-ից 11-րդ դարերը), իսկ աշխարհաբարի սկզբնավորումը տեսնում է միջին շրջանում՝ այն կոչելով «ուշ միջին կամ աշխարհաբարացման» (ընդգրկում է 15-ից 16-րդ դարերը):

Բոլոր հայագետների, այդ թվում՝ Գ. Ջահուկյանի ձգտումն է եղել կատարել գրախոսակցական լեզվի միասնական շրջանաբաժանում: Եթե մինչջահուկյանական դասակարգումները դրանք անգիտակցաբար են կատարվել, ապա Գ. Ջահուկյանը՝ գիտակցաբար: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հայոց լեզվի իրական պատմությունը պետք է ընդգրկի հայոց լեզվի բոլոր տարատեսակների պատմությունը՝ «այն չպետք է վերածվի միայն գրական լեզվի կամ գրական լեզուների պատմության, որովհետև այդ դեպքում պարզ չի կարող լինել անցումը լեզվի մի փուլից մյուսին, և լեզվի պատմությունը չի կարող անհրաժեշտ չափով կապվել ժողովրդի պատ-

¹⁸ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 26:

¹⁹ И. Кусикян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1959.

մության հետ»²⁰: Որքան էլ լեզվաբանի այս մոտեցումը հիմնավոր է, այդուհանդերձ, կարծում ենք՝ հայոց լեզվի պատմության գրավոր շրջանի, ներառյալ միջին հայերենի շրջանաբաժանման հակասությունները պայմանավորված են հենց գրավոր-գրական և բանավոր-խոսակցական տարբերակների մեկտեղմամբ ու նույնացմամբ: Կարծում ենք՝ գրական և խոսակցական լեզուների միասնականության սկզբունքը, որին տուրք են տվել բոլորը, իսկ Գ. Ջահուկյանը գիտական բարձր նշաձողի վրա է դրել, արդարացված չէ: Հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը կատարելիս պետք է խոսակցական և գրական լեզուները հստակորեն տարբերակվեն միմյանցից:

Խիստ շոշափելի հակասություն կարող ենք համարել հայերենի զարգացման հին շրջանում Գ. Ջահուկյանի առանձնացրած «նախամիջին շրջան» ենթափուլը: Սա այն շրջանն է, որի մասին որպես միջինհայերեններ խոսել են հայագետների մեծ մասը: Եթե կա նախ «միջին» բնորոշումը, հետևապես դա չի կարող ընդգրկվել հնում, պետք է լինի «միջին հայերենի» տիրույթում: Ըստ էության, Գ. Ջահուկյանը «նախամիջին» եզրույթով ընկալում է հենց միջին հայերենի խոսակցական տարբերակը: Գ. Ջահուկյանի գործածած «նախամիջին շրջան» եզրույթը մոտավոր արտացոլում է միջին հայերենը հին շրջանի մեջ: Մեր տեսակետն այն է, որ միջին շրջանի բանավոր-խոսակցական փուլն ավելի վաղ է ժամանակագրվում, քան գրավորը: Գ. Ջահուկյանի կիրառած «նախամիջին շրջան» ենթափուլը պետք է հասկանալ հենց այս համատեքստում:

Կարծում ենք՝ հայերենի զարգացման փուլերի նոր շրջանաբաժանումը ենթադրում է բանավոր (խոսակցական) և գրավոր (գրական) լեզուների միջև հստակ տարբերակում: Այս պարագայում հստակորեն կտարբերակվեն նրանց ժամանակագրական սահմանները, որոնք ոչ այնքան մոտ են իրար, ոչ այնքան հեռու, իսկ եղած հակասությունները կկրճատվեն: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի ձգտումը՝ դրանք միասնաբար ներկայցնել, գիտական ծանրակշիռ ներդրում է, սակայն դա, ենթադրում ենք, վերջնական չի արտացոլում հայոց լեզվի զարգացման պատմության դասակարգման բուն էությունը:

Որպեսզի հիմնավորենք մեր այս գնահատականը, անդրադառնանք Գ. Ջահուկյանի դիրքորոշումներից մի քանիսին: Նա գրել է. «Որևէ շրջանում ժողովուրդը կարող է գուրկ լինել ընդհանուր լեզվից, սակայն եթե բարբառային տարբերությունները լեզվականի չեն վերածվել, և եթե այդ բարբառներով խոսողների գիտակցության մեջ չի կորել միասնության գիտակցումը, ապա լեզուն, ինչպես նշվել է, չի դադարում գոյություն ունենալուց որպես մեկ ամբողջություն (մեկ լեզու), այլ շարունակում է հանդես գալ բարբառների ընդհանրության մեջ (գրեթե ինչպես հայերենը 15-16-րդ դդ..)»²¹: 15-ից 16-րդ դարերը նա ընգրկում է միջին շրջանի մեջ՝

²⁰ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 27:

²¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 30:

«ուշ միջին կամ աշխարհաբարացման» շրջան եզրույթավորմամբ: Այս դարերը բնութագրելով որպես «բարբառների ընդհանրության մեջ» հանդես եկող հայերեն, մյուս կողմից՝ ձգտելով կատարել գրախոսակցական հայերենի միասնական դասակարգում, նրա դիրքորոշումը մնում է հակասական, իսկ հայոց լեզվի խոսակցական և գրական զարգացման փուլերի հարցը՝ չլուծված:

12-ից 14-րդ դարերի հայերենը Գ. Ջահուկյանը կոչել է «վաղ միջին կամ կիլիկյան նորմավորման»: Ակնհայտ է, որ լեզվաբանի այս գնահատականը հիմնվում է մեկ տարածքի լեզվական փաստերի հաշվառման վրա՝ հիմք ընդունելով, որ Կիլիկիայում Ռուբինյանների հայկական թագավորության և պատմական հանգամանքների պայմաններում հայերենը բարձրացել էր գրական լեզվի աստիճանի, իսկ ի՞նչ դրություն էր այլ տարածքներում մեկ-երկու դար առաջ, Բագրատունիների թագավորության գոյության հանգամանքը, մնում են առկախված: Կարծում ենք՝ հակասական են նաև «վաղ միջին...» կամ «ուշ միջին...» տերմինների կիրառությունները. Հարց է առաջանում՝ իսկ ո՞րն է բուն միջին հայերենը, եթե վաղ շրջանին վերագրվում է կիլիկյան նորմավորման շրջանը, իսկ ուշ շրջանին՝ աշխարհաբարացմանը: Սրանք հարցեր են, որոնց պետք է տրվեն պատասխաններ:

Պետք է լինի հստակ տարբերակում՝ ա) բանավոր-խոսակցական միջին հայերենի զարգացման փուլեր (բանավոր-խոսակցական միջին հայերենի պատմության շրջանաբաժանում), և բ) գրավոր-գրական միջին հայերենի զարգացման փուլեր (գրավոր-գրական միջին հայերենի պատմության շրջանաբաժանում): Մեր այս տեսակետը, որ միջին հայերենի խոսակցականն ավելի վաղ շրջանի երևույթ է, քան գրական տարբերակը, պայմանավորված է տարբեր գործոններով ու հանգամանքներով: Գրախոսակցական լեզվի ժամանակագրային միասնականությունը գրեթե հնարավոր չէ: Բանավոր-խոսակցական և գրավոր-գրական հայերենների ժամանակագրական ընդգրկման սահմանները տարբեր են. խոսակցական-բանավոր լեզուն իր մշակված ու անմշակ համակարգերով միշտ նախորդում է գրավոր-գրականին: Խոսակցական լեզուն չի կարող ավելի նոր կամ համաժամանակակից լինել գրավոր-գրական լեզվին: Ըստ ամենայնի, միջին հայերենի խոսակցականն ավելի վաղ է իր ծագմամբ, քան գրական տարբերակը:

Ամբողջ խնդիրն այն է, որ տարբեր համակարգերի միավորումից խառնափնթոր լաբիրինթ է առաջանում այնպես, ինչպես բազմաժանր գրքերի մեկտեղումը մեկ արկղում: Կասկածից վեր է այն, որ որքան էլ գրավոր-գրական լեզուն արտացոլում է կենդանի լեզվի համակարգերը, կենդանի-խոսակցական լեզուն այլ համակարգ է, գրավոր-գրական լեզուն՝ այլ: Կարծում ենք՝ այս տարբեր համակարգերի հայեցակետից դիտելիս հստակ տարբերակում պետք է դրվի նրանց միջև:

* Ի դեպ, մեր այս առաջադրած հիպոթեզը կարելի է կիրառել նաև հայերենի գրային զարգացման մյուս փուլերի համար: Այս դեպքում հնարավոր կլինի ստանալ ավելի համապարփակ, անխոցելի, մեծ հակասություններից զերծ շրջանաբաժանում:

Միջին հայերենի բանավոր-խոսակցական շրջանը ժամանակագրական ընդգրկմամբ պետք է նախադասվի գրավոր-գրականին՝ ճշգրիտ կամ մոտավոր, պայմանական սահմանագատմամբ: Այս հարցում էական է այն, որ փոխվել է գիտական չափանիշը կենդանի-խոսակցական լեզվին վերաբերող հարցերի նկատմամբ: 20-րդ դարի լեզվաբանության մեջ խոսակցական-բանավոր լեզուներն ունեին այլ գիտական արժեք, միշտ երկրորդական պլանում էին, գրեթե՝ անտեսված: Հավանաբար դա է եղել պատճառը, որ Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ առաջ քաշելով գրական լեզվի պատմությունը լեզվի պատմությունից տարբերակելու պահանջ, խնդրին տվել է այլ լուծում. Միավորել է դրանք ու ներկայացրել գրախոսակցական լեզվի միասնական դասակարգման սկզբունքը, որի հետևանքով էլ խոսակցական և գրական լեզվի սահմանները խառնվել են միմյանց, դարձել հակասական, տարընթերցումներով լի: Մեր ժամանակներում փոխվել է վերաբերմունքը բանավոր-խոսակցական լեզվի նկատմամբ, հետևաբար այս ուղղությամբ կատարվող դասակարգման հարցերը պետք է ընդգրկեն ոչ միայն ժամանակակից կենդանի-խոսակցական լեզուն, այլև նախորդ դարաշրջանների համարժեք համակարգերը:

Գ. Ջահուկյանի շրջանաբաժանման սկզբունքներն ամբողջովին որդեգրում և պաշտպանում են «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» երկհատոր աշխատության հեղինակները: Միակ տարբերությունն այն է, որ այս աշխատության մեջ միջին հայերենի և նոր հայերենի սահմանաբաժանը համարվում է 17-րդ դարը, այսինքն՝ նշյալ դարը ևս դիտարկվում է միջին հայերենի տիրույթում: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ Գ. Ջահուկյանի առանձնացրած միջին հայերենի երկրորդ ենթաշրջանի «էտապի առանձնահատկությունները շարունակվում են ընդհուպ մինչև 17-րդ դարի վերջը»²²: Հայոց լեզվի պատմության բոլոր շրջանաբաժանումները պայմանականությունների ամբողջությունն համարող այս աշխատության հեղինակները, կարելի է ասել, միջին հայերենի ժամանակագրության մեջ ներառելով 17-րդ դարը, զգալիորեն ընդլայնում են միջին հայերենի սահմանները, իսկ նրա 12-րդ դարում սկզբնավորելը, ինչպես Գ. Ջահուկյանի դասակարգման մեջ է, բացատրում են այս կերպ. «Նախ (որ ամենակարևորն է)՝ այս ժամանակահատվածում է, որ հասարակայնորեն գիտակցվում է նոր գրական լեզվի անհրաժեշտությունը և հենց այս անհրաժեշտության գիտակցմամբ էլ ժամանակի խոսակցական լեզուն՝ իր ուրույն համակարգով ստանում է գրավոր արտահայտություն: Մյուս կողմից, նախորդ շրջանում այդ համակարգի տարրերը գրավոր լեզվում դեռևս որակ չեն կազմում. Դրանք հանդես են գալիս որպես շեղումներ հին լեզվական ձևերից: Եվ չնայած այս հանգամանքին, որ 12-րդ դարում արձանագրվող լեզվի կառուցվածքի հիմնական տարրերը, անշուշտ, կային նախորդ դարի խոսակցական-բանավոր լեզվում, բայց քանի որ նրանք այդ ժամա-

²² Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, 1972, էջ 44:

նակներում ամբողջությամբ՝ որպես համակարգ, չեն արձանագրվում և չեն ստանում ընդհանուր ճանաչում, ուստի չեն կարող համարվել գրական լեզվի սկզբնավորության ժամանակի չափանիշներ»²³: Վերոբերյալ ծավալուն մեջբերումը ևս ցույց է տալիս, որ թե՛ «Ակնարկների...» հեղինակները, թե՛ Գ. Ջահուկյանը իր շրջանաբաժանումների ժամանակային սահմանագծերն առանձնացնելիս կարևորել են բացառապես գրական լեզվի պատմական գործառնության հանգամանքը՝ բանավոր-խոսակցական միջին հայերենին տեղակայելով ժամանակային այլ միջավայրում:

Լեզվաբան Լ. Հովսեփյանը 2008 թվականի «Ջահուկյանական ընթերցումներ» ամենամյա գիտական նստաշրջանում ներկայացրել է «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներն ու սկզբունքները» (107-122 էջեր) զեկուցումը: Այստեղ հեղինակը, նույնպես ընդգծելով Գ. Ջահուկյանի իշրջանաբաժանման բացառիկությունը, հույս է հայտնում, որ «հետագա ուսումնասիրությունները նույնպես կարող են բերել որոշ մանրամասներ ու հավելումներ հայերենի զարգացման ընթացքի ընդհանուր պատկերի մեջ»՝ ներկայացնելով այս ոլորտում առկա հիմնախնդիրները, ինչպիսիք են՝ գրական լեզվի պատմության՝ լեզվի պատմության հետ նույնացումը, բոլոր տեսակի շրջանաբաժանումների որոշակի պայմանական բնույթ ունենալը և այլն:

Մեր կատարած ուսումնասիրությունը, կարելի է ասել, լեզվի պատմության և գրական լեզվի պատմության արհեստական նույնացման խնդիրների լուծմանն ուղղված մի փորձ է՝ հայերենի զարգացման միջին շրջանի (այդ թվում՝ այլ շրջանների) բանավոր-խոսակցական և գրավոր-գրական զարգացման փուլերի և ենթափուլերի շուրջ մեր կատարելիք պայմանական դասակարգումը թողնելով ապագային:

Mkrtchyan Garik - The Scientific Understanding of Middle Armenian Periods (Periodical Stages). – The author examined the characteristics of the Middle Armenian periods, presenting in detail the non-scientific literature on the issue in Armenian linguistics (A. Bagratuni, G. Hovnanyan, A. Aitnyan, Kh. Abovyan, S. Nazaryan, Yozef Karst, Hr. Acharyan, G. Sevak, H. Kusikyan) and as well as scientifically known (G. Jahukyan) periodical divisions. Emphasizing the value of the existing divisions, the author noticed that Armenologists dealing with the issue tried to say the final word, but all of them fell into certain extremes. The main aim of all Armenologists has been to make a unified regionalization of the literary-spoken language. According to the author, while making a scientific division of the history of Armenian language, spoken and literary languages should be clearly distinguished from each other. In this case, their chronological boundaries will be clearly determined, which are not so close to each other, as well as not so far, and hereby the existing contradictions will be reduced. The author concludes that the spoken Middle Armenian has an earlier origin than the literary version. This phenomenon must be adopted by the newly differentiated division of period.

²³Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, էջ 43:

Keywords: Middle Armenian, Ancestor's Dialect, Period, Periodical Stages, Provincial, Subperiod, Chronology.

Мкртчян Гарик - Научное понимание циклов (периодичность) среднеармянского языка. - Автор рассмотрел особенности циклов среднеармянского языка, подробно представив ненаучную литературу по данному вопросу в армянском языкознании (А. Багратуни, Г. Овнанян, А. Айтнян, Х. Абовян, С. Назарян, Йозеф Карст, Хр. Ачарян, Г. Севак, О. Кусикян) и в научной литературе имеющие разделения (Г. Джаукян). Подчеркивая достоинства существующих разделений, автор отмечает, что решающее слово пытались сказать арменоведы, занимавшиеся этим вопросом, но все они впадали в определенные крайности. Стремлением всех арменоведов было сделать единую периодизацию литературно-разговорного языка. По мнению автора, при научном разделении истории армянского языка следует четко отличать разговорный и литературный языки друг от друга. В этом случае будут определены их хронологические границы, не столь близкие друг к другу, не столь далекие, и существующие противоречия будут уменьшены. Автор приходит к выводу, что разговорный среднеармянский язык имеет более раннее происхождение, чем литературный вариант. Эту реальность нужно закрепить в новой версии разделения.

Ключевые слова: Среднеармянский, провинциальный говор предков, цикл, периодичность, провинциальный, предпериод, хронология.

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՎԱԾ
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

DOI: 10.54412/93055-2023-173

Վարդանյան Արտակ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. artva@list.ru

Բանալի բառեր՝ ժողովրդական ստուգաբանություն, հնչյունափոխություն, անձնանուն, Եղիսաբեթ, Պոռո, Դեբորա, Հերիքնագ:

Նախաբան

Ժողովրդական ստուգաբանությունը, ինչպես հայտնի է, լեզուներում և բարբառներում առկա հնչյունափոխական երևույթ է, որտեղ բառիմաստը վերաիմաստավորվում է արտաքին հնչական հատկանիշների հիման վրա՝ առանց հաշվի առնելու տվյալ բառի պատմությունը, այլ լեզուների հնչյունական համապատասխանությունները և նույն լեզվի կամ բարբառի տարբեր շրջանների հնչյունական իրողությունները:

Ժողովրդական ստուգաբանություն եզրույթը (գերմ.՝ Volksetymologie) ներմուծել է գերմանացի լեզվաբան Էռնստ Ֆյորստեմանը 1852 թվականին¹:

Ինչպես այլ լեզուներում, հայերենում նույնպես առկա են ժողովրդական ստուգաբանության բազմաթիվ օրինակներ. արդի ժողովրդախոսակցական հայերենում՝ արդուկել («կարգավորել») > *հարթուկել* («հարթեցնել»), Վանի բար-բառում՝ պղպջակ («փուչիկ») > *պողոճակ* («բզեզիկ»), Ճահուկ-Վայքի միջբար-բառում՝ պարկապզուկ («փողային նվագարան») > *պարգապուրուզ* («պարկի կույտ») և այլն:

Դիտարկումներ

Հայերենի բարբառներում ժողովրդական ստուգաբանության են ենթարկվում նաև որոշ հատուկ անուններ, մասնավորապես՝ անձնանուններ, և դրանք երբեմն այնքան են հեռացած լինում բնօրինակ ձևերից, որ նախնական ձևի վերականգնումը կամ ստուգաբանությունը դժվարին կամ գրեթե անհնարին է դառնում:

Օրինակ, Ճահուկ-Վայքի միջբարբառում բավական կիրառական է *Յեղսապեռթ*, անձնանունը, որը աստվածաշնչյան *Եղիսաբեթ*² անվան բարբառային փոփոխակն է: Բնօրինակ լեզվում «Աստված է երդումը նրա» իմաստն ունեցող

¹ E. Förstemann, Ueber Deutsche volksetymologie.– Zeitschrift für vergleichende Sprachforschung auf dem Gebiete des deutschen, griechischen und lateinischen, Berlin, 1852, L. 1-25.

² Աստուածաշունչ, Աւետարան ըստ Ղուկասու, Ա. 5, Կոստանդնուպոլիս, 1896, էջ 1153:

անձնանունը³ բարբառում ստանում է միանգամայն այլ՝ «յուդերի բերդ» իմաստը, նույն ձևով՝ եբրայերենում «խաղաղ» նշանակությամբ *Սոդուէ*⁴ անձնանունը բարբառում ստացել է «ազնվամայր» նշանակությամբ *Սոդուէր* ձևը, «Սանատրուկի դուստր» նշանակությամբ *Սանդուխտ* անձնանունը՝ *Սանդուդ* «սնդուկ, զարդատուփ» իմաստը:

Քրդերենից փոխառյալ *Ավիսար* (*ava sar*՝ «պաղ ջուր, սառնորակ ջուր») անունը կիրառական է եղել Տարնում և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում: Սակայն, Արևելյան Հայաստանում անձնանունը ժողովրդական ստուգաբանությամբ ստացել է *Աբիսակ* ձևը՝ պահպանելով արական անվան նշանակությունը, թեև աստվածաշնչյան *Աբիսակը* իգական անձնանուն է: Ըստ երևույթին, հնչյունափոխությանը նպաստել է նաև *Միսակ*, *Միսակ* անձնանունների հետ համաբանությունը կամ *Աբիսոդոս* անվան կրճատ ձև դիտելը:

Թերևս ժողովրդական ստուգաբանությամբ հնչյունափոխված անձնանունների շարքին կարելի է դասել հատկապես ԺԳ-ԺԶ դարերի Հայաստանում բավական կիրառված *Պոռո* (Պոռո, Պոառ, Պոռո) անձնանունը, որը Հ. Աճառյանը համարել է անհայտ ծագման անուն⁵: Սակայն հակված ենք անձնանվան նախնական ձև համարել իրանական *Պերոզ* (պրսկ. Peroz («հաղթող») անձնանունը, մանավանդ որ այն հայերի կողմից կիրառվել է նաև առավել վաղ ժամանակաշրջաններում, և հայտնի է նաև *Պերոժ* տարբերակից ածանցյալ *Պերոժաւր* անձնանունը⁶: Կարծում ենք, որ այն ուշ միջնադարում է ժողովրդական ստուգաբանությամբ ստացել *Պոռո* ձևը («շուրթ, եզր, ափ» նշանակությամբ):

Համանման հնչյունափոխության ենթարկված ամենահետաքրքիր անձնանուններից է Հյուսիսային Նախիջևանում և Վայոց ձորում ժամանակին գործածված *Դերորա* աստվածաշնչյան անունը, որը եբրայերենում ունի «մեղու» նշանակությունը⁷ և տեղական բարբառում՝ Ճահուկ-Վայքի միջբարբառում ստացել է «փետուր» նշանակությամբ *Թեփուր* (*Թերուր*, *Թերուր*) ձևը⁸: Փաստորեն, քրիստոնեական աշխարհում բավական տարածված, իսկ անցյալ դարից հատկապես Միացյալ Նահանգներում և Անգլիայում խիստ կիրառական անձնանուններից մեկը դարձած՝ հինկտակարանյան *Դերորա* մարգարեուհի-դատավորուհու անունը⁹ անճանա-չելիորեն փոխվել և ստացել է վերոհիշյալ ձևը. միջբարբառի հնչյունափոխական կանոններով *Դերորա* անձնանվան նախ բառավերջի *ա*-ն է ընկել (ինչպես Թամարա-*Թամար*, Լաուրա-*Լավուր*), երկու ձայնավորների միջև *բ*-ն *փ* է դարձել

³ Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 166:

⁴ Նույն տեղում, էջ 511:

⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 4, Ե., 1948, էջ 262-263:

⁶ Նույն տեղում:

⁷ Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 134:

⁸ Ա. Վարդանյան, Վայոց ձորի միջբարբառը, Ե., 2004, էջ 34:

⁹ Աստուածաշունչ մատեան, Դատաւորաց, Դ.4-14, Կոստանդնուպոլիս, 1896, էջ 295-296:

(ինչպես *Թագուհի-Թաքօհի*, *Թաղուս-Թաթիվու*), ապա *վ*-ի ազդեցությամբ *դ*-ն դարձել է *թ* (ինչպես *գդակ-քրթակ*, *գունել-քրթնիլ*), այնուհետև՝ *ր*-ից առաջ *օ*-ն դարձել է *ու* (ինչպես *Օրբել-Ուրբել*, *Հոռում-Հուռում*): Այսպես, *Դեբորա > Դեբոր > Դեբուր > Դեփուր > Թեփուր* հնչյունափոխության շղթայի արդյունքում վերջնական ձևն ու իմաստն է ստացել ժողովրդական ստուգաբանությամբ:

Հետաքրքիր է, որ համանման ձևով հնչյունափոխվում են նաև հայոց մեջ վաղուց ի վեր կիրառված անձնանունները: Օրինակ, իրանական ծագմամբ *Վահրիժ* (պրսկ.՝ Vahriz («բարեհոս, լավ հոսող») անունը Կոտայքի Մշո խոսվածքներում դարձել է *Վարիչ* («ղեկավար, կառավարող»):

Նախիջևանի և Վայոց ձորի տարածքի բարբառներում համանման հնչյունափոխությունների են ենթարկվել նաև բնիկ հայկական անձնանուններ՝ *Յուղաբերը* («յուղ բերող») դարձել է *Յեղապեղ* («յուղի պետ»), *Լուսաբերը* («լույս բերող»)՝ *Լուսապեղ* («լույսի պետ»):

Անձնանունների այս շարքին կարելի է դասել նաև հայկական ավանդական *Հերիքնազ* անձնանունը¹⁰: Թեև Հ. Աճառյանը այն ստուգաբանել է որպես «հերիք ինչքան նազ ես անում» բառակապակցության ամփոփված ձև¹¹, այնուամենայնիվ, հնարավոր ենք համարում անձնանվան ծագման այլ վարկած:

Նախ, հայկական անձնանուններում զգալի թիվ են կազմում ուղղակի *նազ* արմատից և որևէ ածանցից կազմված անձնանունները՝ *Նազիկ*, *Նազե*, *Նազելի*, *Նազենի(կ)*, *Նազան(ի)* և այլն, որոնցով հայ աղջիկներին դարեր շարունակ անվանակոչել և այսօր էլ անվանակոչում են նրանց մեջ հենց նազելիություն, կանացիություն, հմայք տեսնելու ակնկալիքով, իսկ *նազ* արմատը դրանցում ընկալվել և ընկալվում է միայն դրական իմաստով:

Ինչ վերաբերում է *Հերիքնազ* անձնանվան ստուգաբանության առավել հավանական վարկածին, ապա դա առաջարկելու առիթ է ընձեռում հենց մեծ հայերենագետի կողմից *նազ* արմատով մի ամբողջ շարք անձնանունների ստուգաբանությունների նախադեպերը: Հ. Աճառյանը, օրինակ, *Մելեքնազ* անձնանունը ստուգաբանում է որպես «հրեշտականազ»՝ բխեցնելով արաբերեն *melek* («հրեշտակ») և պարսկերեն *nāz* («նազ», «նազանք») բառերից¹², *Գուլնազը*՝ որպես «վարդի նման նազելի», պարսկերեն *gol* («վարդ») և *nāz* բառերից¹³, *Սալվինազը*՝ որպես «նոճու նազ(անք) ունեցող», պարսկերեն *sarv* («նոճի») և *nāz* բառերից¹⁴, *Արեզնազը*՝ «արևի նազ(անք) ունեցող»¹⁵, հայերեն *արեզ(ակ)* և *նազ* բառերից և այլն: Պարսկերենում

¹⁰ Ա. Վարդանեան, Ա. Խաչատրեան, *Հերիքնազ անձնանունի ստուգաբանությունը*, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 2023, 1-12, էջ 67-72:

¹¹ Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 3, Ե., 1946, էջ 86:

¹² Նույն տեղում, էջ 239:

¹³ Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 1, Ե., 1942, էջ 505:

¹⁴ Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 4, Ե., 1948, էջ 347:

¹⁵ Նույն տեղում, էջ 271-272:

նույնպես առկա է *նազ* արմատով իզական անձնանունների մի ամբողջ շարք՝ *Մահնազ* Māhnāz՝ «լուսնի նազ(անք) ունեցող», māh («լուսին») և nāz արմատներից, *Գոլնազ*՝ «վարդի նազ(անք) ունեցող», gol («վարդ») և nāz արմատներից, *Փարինազ* Parināz՝ «փերու նազ(անք) ունեցող», pari («փերի») և nāz արմատներից, *Շահնազ* Šahnāz՝ «արքայական նազ(անք) ունեցող», šāh («արքա») և nāz արմատներից և այլն¹⁶:

Այս կազմությունները հիմնավորապես հուշում են, որ *Հերիքնազ* անձնանվան նախնական արմատը ամենայն հավանականությամբ եղել է *հիրիկ* ծաղկանունը: Անձնանունը նախապես ունեցել է *Հիրիկնազ* («հիրիկի նազ(անք) ունեցող») ձևը, այնուհետև ժողովրդական ստուգաբանությամբ *Հերիքնազ* է դարձել և մեկնաբանվել վերոհիշյալ «հերիք ինչքան նազ էս անում» իմաստով: Մա տեղի է ունեցել *հիրիկ* ծաղկանվան նախնական իմաստը դարերի ընթացքում մթագնվելու և ժողովրդական լեզվում *զամբեղ* (Վան), *բարբուսնակ* (Մուշ), *լալազար* (Արցախ-Սյունիք), *սէվ լալա* (Վայոց ձոր), *հազարաշարիք* (Նախիջևան) և այլ տարբերակներով փոխարինվելու պատճառով:

Այս վարկածն է հաստատում նաև այն հանգամանքը, որ *հիրիկ* ծաղկանունը վկայված է հին հայերենում¹⁷, միջնադարյան ձեռագրերում առկա է նաև *Հիրիկ* (*Հիրիկ*) անձնանունը¹⁸, որը ավանդաբար ներառվել և այսօր էլ ներառվում է հայկական անունների ցանկերում:

Անձնանվան ստուգաբանության այս վարկածի օգտին են զարմանալիորեն խոսում նաև *h > hu* հնչյունափոխություն ունեցող՝ Վանի¹⁹, Խոյի²⁰, Ջուղայի²¹, Մարաղայի²² բարբառներում *հերիք* («բավական») բառի *խերիք*, *խերիք*, *խերիչ* ձևերի կողքին անձնանվան բացառապես *Հերիքնազ*, *Հերիքնազ* ձևերի, իսկ Ջուղայի բարբառում՝ առավել խոսուն *Յերիկնազ* ձևի առկայությունը:

Ի դեպ, Ջուղայի բարբառը հայերենի միակ բարբառն է, որը պահպանել է հին հայերենի *հիրիկ*-ը՝ *յերիկ* ձևով, այն *հերիկ* ձևով առկա է նաև զազայերենում²³, որը հավանաբար փոխառություն է հայերենի Դերսիմի բարբառից:

Այսպիսով, հայկական ավանդական *Հերիքնազ* անձնանունը, որը Հ. Աճառյանը ստուգաբանել է որպես «հերիք ինչքան նազ էս անում» բառակապակցության ամփոփված ձև, դարձյալ ժողովրդական ստուգաբանությամբ հնչյունափոխված անձնանուն է և հիմքում որևէ աղերս չունի *հերիք* («բավական») բառի հետ:

¹⁶ Персидско-русский словарь (руководитель подготовителей – Ю. Рубинчик), т. 2, М., 1970, с. 783-787:

¹⁷ Նոր բառգիրք հայազեան լեզուի, հ. 2, Ե. 1981, էջ 100:

¹⁸ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմեց Լ. Խաչիկյանը), հ. Գ, Ե., 1967, էջ 159:

¹⁹ Հ. Թուրշյան, Բառարան Վանի բարբառի (աշխատասիրությամբ Հ. Մեսրոպյանի), Ե., 2018, էջ 85:

²⁰ Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962, էջ 218:

²¹ Հ. Աճառյան, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Ե., 1940, էջ 373:

²² Հ. Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, Ե., 1926, էջ 408:

²³ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 96-97:

Եզրակացություն

Փաստորեն, բարբառակիր ժողովուրդը իրեն անհասկանալի իմաստ ունեցող անձնանունները երբեմն ժողովրդական ստուգաբանությամբ վերաիմաստավորում և ընկալում է այլ՝ հասկանալի իմաստներով, թեև նոր իմաստը կարող է այնքան անճանաչելիորեն հեռացած լինել բնօրինակ ձևի իմաստից, որ այն վերականգնելը կամ ստուգաբանելը դժվարին կամ գրեթե անհնարին դառնա:

Vardanyan Artak – Personal Names Modified by Folk Etymology in Armenian Dialects. – Some Armenian personal names, subject to the laws of alternation of dialect sounds, by folk etymology are sometimes so removed from the forms of the originals that the restoration or etymology of their original form becomes difficult or almost impossible.

The biblical personal name *Deborah*, which in Hebrew means “bee”, in the Dzahuk-Vayk interdialect received the form *Թեփուր T'epur* – with the meaning “feather”. The personal name *Uuñղուխո Sanduxt* (“daughter of Sanatruk”) became *Uuñղուղ Sandut* (“chest, casket”). The name of Iranian origin *Վահրիճ Vahrič* (“benevolent”) in the Kotayk dialects of the Mush dialect turned into *Վարիչ Vahrič* (“leader, manager”). The Armenian traditional personal name *Հերիքնազ Herik'naz*, which R. Acharyan, although interpreted as an abbreviated form of the phrase “stop being capricious”, previously had the form *Հիրիկնազ Hiriknaz* – with the meaning “having the tenderness of an iris flower”, but later became clouded in In Armenian folk versions, the meaning of the name of the flower is *հիրիկ hirik* (“iris”), and the personal name received the form *Հերիքնազ Herik'naz* by folk etymology.

In fact, people who speak the dialect sometimes reinterpret personal names that have meanings incomprehensible to them with folk etymology and perceive them with other, understandable meanings.

Keywords: Folk Etymology, Alternation, Personal Name, Elizabeth, Prosh, Deborah, Heriknaz.

Варданян Артак – Измененные народной этимологией личные имена в армянских диалектах. – Некоторые армянские личные имена, подчиняясь законам чередования звуков диалектов, народной этимологией иногда бывают настолько удалены от форм оригиналов, что восстановление или этимология их первоначальной формы становится затруднительным или почти невозможным.

Библейское личное имя *Дебора*, имеющее на иврите значение “пчела”, в междиалекте Джаук-Вайка получило форму *Թեփուր T'epur* – со значением “перо”. Личное имя *Uuñղուխո Sanduxt* (“дочь Санатрука”) превратилось в *Uuñղուղ Sandut* (“сундук, шкатулка”). Имя иранского происхождения *Վահրիճ Vahrič* (“доброжелательный”) в котайкских говорах Мушского диалекта превратилось в *Վարիչ Vahrič* (“руководитель, управляющий”). Армянское традиционное личное имя

Հերիքնազ *Herik'naz*, которое Р. Ачарян хотя и толковал как сокращенную форму словосочетания "хватит тебе капризничать", ранее имело форму Հիրիկնազ *Hiriknaz* – со смыслом "имеющая нежность цветка ириса", но в дальнейшем затуманился в армянских народных вариантах смысл названия цветка *հիրիկ hirik* ("ирис"), и личное имя получило народной этимологией форму Հերիքնազ *Herik'naz*.

Фактически, народ, говорящий на диалекте, иногда личные имена, имеющие непонятные для него значение, переосмысливает народной этимологией и воспринимает их с иными, понятными значениями.

Ключевые слова: Народная этимология, чередование, личное имя, Элизабет, Прош, Дебора, Эрикназ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կատվայան Վիկտոր - Հայերենի ը ձայնավորի մասին	5
Մխիթարյան Գայանե - Գոյականի սեռի քերականական կարգին առնչվող իրողություններ հայերենում	11
Հովհաննիսյան Լավրենտի - Ղարաբաղի (Արցախի) բարբառի գործիական հոլովի շուրջ	19
Դիլբարյան Նարինե - Իրավագիտական և կրոնական եզրույթները Դավիթ Վարդապետի «Կանոնական արեւնսդրութիւն» երկում.....	21
Այվազյան Սարգիս - Անվանական հիմքը և անշեշտ դիրքում ձայնավորների սղումը ուրարտերենում	43
Բարսեղյան Վարդուհի - Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի աւետարանի» երկի գրաբարյան դարձվածքները.....	53
Գրիգորյան Սուսաննա - Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մի շարք իրավական հասկացությունները հայերենի բառարաններում	58
Զաքարյան Հովհաննես - «Փոքրավոր» և «ձագ» իմաստներով մի քանի բառերի ստուգաբանություն	68
Թադևոսյան Հասմիկ - Դիտարկումներ միջնադարյան բժշկարաններում կիրառված որոշ իմաստային դրսևորումների վերաբերյալ	78
Խաչատրյան Վալենտին - Բարբառային բառեր Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում.....	87
Հակոբյան Ֆրիդա - Corpus Linguistics in the Study of Old Armenian.....	104
Հմայակյան Հասմիկ - Խեթերենից հայերենին անցած որոշ փոխառությունների շուրջ	111
Հովհաննիսյան Լավրենտի - Ղարաբաղի (Արցախի) բարբառի ցուցական դերանունները	121
Հովհաննիսյան Նազիկ - Նորակազմ բառեր XII- XIII դարերից ավանդված ձեռագիր բառարաններում	123
Մարաշլեան Յարութ, Խալիկեան Զեփիր – Արևմտահայերեն խօսքը Հայաստանի մեջ.....	133
Միքայելյան Արմեն - «ՈԻ» երկտառ նշանագրի ոսկեդարեան արտասանության խնդրի շուրջ	137
Միքայելյան Տիգրան - Մուսուլմանական ծագման հայկական անձնանուններ.....	149
Մկրտչյան Գարիկ - Միջին հայերենի շրջափուլերի (պարբերափուլ) գիտական ըմբռնումը.....	158
Վարդանյան Արտակ - Ժողովրդական ստուգաբանությամբ հնչյունափոխված անձնանուններ հայերենի բարբառներում	173

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Արևշատյանի

Խմբագրական խորհուրդը պատասխանատվություն չի կրում
հեղինակների տեսակետների, մոտեցումների համար: